

8915344

Բնագր

1937

Երկրորդ

Լարի

24



4/10/11 1997

digitized by A.R. @

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.—Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Առաջին լեզուն
6.—ՎԱՐԱՆԴ	Կարօտներ
9.—Թ. ԶԻՖԼԵԱՆ	Գրաւապահը
24.—Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Աշնան կերպարանափոխումները
26.—ՇԱՀԱՆԴՈՒԿՏ	Ըլիսունի...
40.—Մ. Ռ. ԱՐՈՒՍԷՖԵԱՆ	Տարիքս
41.— * * *	Ձրիավարժ պսակադիրներ...
42.—Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը
63.—Յ. ՕՇԱԿԱՆ	Սիրելի Սասունի
66.—Ս. Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Նիկողոս Սաքաֆեան բանաստեղծը
73.—Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Մեծ Եղեռնը եւ սուրիական արձակը
85.— * * *	Երկրորդ Ապրիլ 24
92.— * * *	Շնչաւոր որոմներ
101.— * * *	Կրկնակ ամօթ Վշտունեան...
105.— * * *	Սեւ ցուցակին մէջ...
111.—Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Իմ ծնունդ թիւը
112.— * * *	...«Արժէ գրել»...
115.—Ն. ՏԵՐԵԱՆ	Նամակ գրականագէտին
117.—Դ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	37ի գոհերին
118.— * * *	«Առասպել»ի մը առասպելը...
121.—Ն. ԶԱՐԵԱՆ	Մոայլ առասպել
140.— * * *	«Ի լուր ամէնքի»...
144.—Ն. ԶԱՐԵԱՆ	«Ես մերկացրեցի»...
151.— * * *	Անգոր յարալէզներ...
154.—Յ. ՇԻՐԱԶ	Անկողութեան յուշարձան

digitised by

A.R.A.R.®



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ ԵՍՏՈՒՄՆԵՐ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 ԱՇՈՒՆ 1997 ԳԵՅՐՈՒԹ

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԼԵԶՈՒՆ...

Կանգնած Կրիֆիթ Փարքի աստղադիտարանի պատշգամին վրայ, Արմեն աչքերը կը լեցնէր հսկայ քաղաքին լուսադարձնումով: Մուկը իր աղջամուղջային սաւանը սկսած էր վերցընել վարի տեսարանին վրայէն, քողազերծելով լոյսերու ծով մը, որ կը փորձէր մըցիլ զինք եզերող խաղաղականի անհունութեան հետ:

Տարի մը առաջ, անակնկալ դէպքեր զինք նետած էին Լիբանանի ընտանի ափերէն հեռու, շատ մը ուրիշներու պէս, որոնք շուարած թռչուններու պէս տարտղնուած էին Նոր Աշխարհի դանազան շրջաններու մէջ՝ նոր բոյն մը շինելու յոյսով:

Տարիէ մը ի վեր այս արտակարգ քաղաքը դարձած էր իր քաղաքը, իր բնակավայրը: Սակայն գոհունակութիւնը անխառն չէր: Երբեմն՝ ամէնէն չապաստուած մէկ պահուն, ուրիշ քաղաքի մը պատկերը կը յաճախէր յիշողութիւնը եւ զինք կը կշտամբէր խարուած ու լքուած սիրուհիի մը պէս:

Արմեն նայեցաւ ժամացոյցին ու արագ քայլերով ուղղւեցաւ դէպի ինքնաշարժը եւ, բլուրին դարձդարձիկ ճամբէն, խառնուեցաւ այդ անվերջանալի հոսանքին, որ լոյսի գետերու կը վերածէր այս ութբազուկեան քաղաքին պողոտաները:

«Մասիս» ճաշարանը կը գտնուէր Հովիվուտ պողոտայի կողմնակի փողոցներէն մէկուն վրայ: Ճաշարանը շատ ընդարձակ չէր, այնպէս որ, մէկ ականարկով անկիւնի սեղանին առջեւ տեսաւ Հերրի, որ պարբերաբար մը կը թղթատէր:

—Այս ճաշարանին ներկայ տէրը յոյն է,—ըսաւ Հերրի, բայց հայկական ճաշեր ալ կը պատրաստէ: Վրաս պիտի խնդաս, եթէ ըսեմ, որ սիրտէն աւելի ստամոքսն է, որ մարդը կը կապէ իր անցեալին, իր արմատներուն:

Արմէն աչքէ անցուց ճաշացուցակը եւ ապապրեց իրեն ընտանի կերակուրներ:

—Ընտրութիւնը քեզի ձգեցի, որովհետեւ նոր եկած ես երկրէն եւ ճաշակդ չէ խաթարուած այստեղի Ֆեւստ ֆուտբոլով,—ըսաւ Հերրի:

Ընթերիչ եւ սուրճը խմելէ ետք, դուրս ելան:

Հովիվուտ պողոտան կը լողար լոյսերու մէջ: Կանգ առին ցոլակի մը լոյսին տակ: Հերրի, որ ծնած ու մեծցած էր այս քաղաքին մէջ, Արմէնին չափ չէր զգար այն մղձաւանջը, որ կը ճմլէ աղքատին սիրտը, երբ կ'անցնի մեծահարուստի մը փարթամ ապարանքին առջեւէն: Արմէն գլանիկ մը հրամցուց Հերրիին եւ, նայելով պողոտային վերի կողմը՝ խօսեցաւ.


—Ներկայիս մեզի սպառնացող վտանգը մեծ ոստաններու շուայած լոյսերն են, որոնք կ'ընդարմացնեն, կը չէզոքացնեն, կը լուծեն ամէն դիմադրողական ուժ: Մըքան աւելի քաղաքակրթութեամբ ու արդիականացած է երկիր մը, այնքան շուտ կ'իւրացնէ մեզ: Մենք, որ դարեր ապրած ու գոյատեւած ենք նախնական ու պարզակենցաղ ժողովուրդներու մէջ առանց կորսնցնելու մեր ինքնութիւնը, շուտով կ'այլասերինք այս ապահով, խաղաղ, հեշտաբոյր, բայց վտանգաւոր մթնոլորտին մէջ:

—Այդ ճիշդ է: Բայց հիմա, ժամանակները փոխուած են, եւ անոնք, որ քայլ չեն պահեր իրենց դարուն հետ, ո'չ միայն կը կորսնցնեն իրենց ինքնութիւնը, այլեւ՝ իրենց գոյութիւնը: Կեանքի օրէնքները անգուրջ են եւ անդրդուելի: Բնութիւնը հսկայ ուժ մըն է, որ սիրտ չունի: Յաւիտեանական պայքարին մէջ տկարները տեղի կու տան, կը ջնջուին, կ'անհետանան: Ազգի մը ճակատագիրը կ'որոշուի իր գոյութեան առաջին օրերուն իսկ:

—Բնութիւնը սիրտ ունի, ապա թէ ոչ՝ տիեզերքը կը մնար քառս: Մեր գոյութիւնը երեք հազար տարուան կեանք ունի: Ասիկա կը նշանակէ, որ մենք տկար ազգ մը չենք:

—Յրուիլը տկարութեան նշան է արդէն:

—Ֆիզիքական տկարութիւն միայն, որ ժամանակաւոր է եւ պարագայական: Կարեւորը հոգեկան ուժն է, գոյատեւելու



20556-264

digitised by A.R.A.R.®

145-2001

կտրեցին կողմնակի փողոց մը:

—Այստեղէն կը սկսի ասադերու թագաւորութիւնը: Հին երկիրները ունին ասպետներու, հերոսներու, բանաստեղծներու պանթէոնը, այս երկիրը ունի դերասաններու եւ դերասանուհիներու աստղազարդ մայթերը: Իսկ սրբութիւն սրբոցը՝ ահա՛ այդ շէնքն է, որ կը կոչուի Զինական թատրոն:

Խառնուեցան բազմազգեան ամբոխին, որ ազա՛հ աչքերով կը դիտէր պեթոնին մէջ կաղապարուած հռչակաւոր գերասանուհիներու ձեռքերուն եւ ոտքերուն հետքերը: Քիչ մը անդին, փողոցներուն անկիւնը, կարճ փէշերով մանկամարդուհիներ, անցորդներուն աչքերուն մէջ նայելով, սիրոյ հրաւերներ կ'ընէին: Ոմանք, արժեւորելու համար իրենց մարմիններուն հըրապոյրները, կը կրէին թափացիկ ներքնագգեստներ, որոնց տակէն երեւոյր սպիտակ գլխտերը հեշտանքներ կը խոստանային: Դրան մը վերը, լուսաւոր քառանկիւնի մը մէջ, թեւաւոր մանկիկ մը շնաշխարհիկ մերկութիւններ կը խոստանար:

Հինգ տուար վճարելով՝ կարելի էր ժամերով գիտել մօրէ մերկ կիներ, բոլորն ալ գեղեցիկ եւ հրապուրիչ: Անոնք քանի մը անգամ կը տողանցէին բեմին վրայ, արուեստական լոյսերու շոյանքին տակ, կը պարէին, կ'առնէին դրզուիչ կեցւածքներ, որպէսզի յայտնուին իրենց մարմիններուն մտերիմ ծալքերը: Խարտեաչ եւ կաթնաթոք մորթով անկրօնաբաններուն կը յաջորդէին ճկուն մարմինով եւ երեսոսեան մորթով ափրիկեցիներ եւ սեւ աչքերով ու թաւշային գիտերով լատին ամերիկացիներ: Եւ այս բոլորը հինգ տուարի միայն: Մինչդեռ ժամանակին, մարդիկ օրերով կ'երազէին, եթէ պատահաբար տեսնէին գեղեցիկ կնոջ մը ո՛չ թէ գիտը, այլ՝ ոտքերուն ծալքը:

—Ո՛չ մէկ ըղձանք կրնայ իտէալ մնալ, երբ կրնաս քանի մը տուարով դիտել գեղեցիկ կնոջ մը մերկութիւնը: Ներկայ քաղաքակրթութիւնը կը դաւաճանէ իր սկզբունքներուն, որովհետեւ ան կրնայ գոհացում տալ մարդուն մարմնական պահանջներուն միայն:

—Մարմինն ալ պէտք ունի հոգածութեան:

—Բայց մարդ արարածը մարմին չէ միայն: Ան նաեւ միտք է եւ հոգի: Այն բոլոր բաները, որոնք դիւրամատչելի են, կը յղիացնեն մարմինը, բայց չեն բաւարարեր միտքն ու հոգին:

—Բոլոր մարդիկը չունին մտային եւ հոգեկան նոյն կարողութիւնը: Փաստաւ կը սահմանէ կեանքի երեք մակարդակ. մարմնական, մտային եւ հոգեկան: Մարդոց մեծամասնութիւնը կը գոհանայ առաջինով: Միայն ընտրեալները կը ձգտին հոգեկանին:

—Ընդհանրութիւնները մէկդի դնենք եւ զբաղինք մեր

«փոքրիկ ածու՝ Աղբիւրները կ'ըսեն, որ Սփիւռքի հայու-
թեան թիւը մէկ միլիոնը կ'անցնի, բայց անոնց քանի՞ հատը
հայ կը զգայ եւ հայերէն կը խօսի:

—Կը կարծե՞ս, որ եթէ հայ մը, անջատուելով մայր հա-
մայնքէն, դառնայ ամերիկացի կամ ֆրանսացի, մինչեւ
կեանքին վերջը կ'ապրի դժբախտ եւ ապերջանիկ:

—Այո՛, եթէ իր մէջը սպաննած չէ հայու հոգին: Բնութեան
օրէնքները անյեղի են, եւ ան, որ կ'ոտնակոխէ զանոնք գի-
տակցաբար, կը պատժուի ուշ կամ կանուխ: Առնենք օրինակ
մը: Մարդ մը իր երկրէն կը բերէ մատղաշ տունկ մը, մայրիկ
տունկ մը եւ զայն կը դնէ այս օտար հողին մէջ: Տունկը
հասակ կը նետէ ու կը դառնայ ծառ: Ո՛չ որեւէ ծառ՝ կաղնի,
հացի կամ ընկուզենի, այլ՝ մայրիկ, լիբանանեան մայրիկ: Այն-
պէս որ, երբ հայ մը կը հաստատուի օտար հողի վրայ,
պէտք է ծաղկի, ուռճանայ եւ մնայ իր էութեան հաւատա-
րիմ:

—Մի՛ մոռնար, որ մարդ արարածը ծառ չէ. ան կ'ենթար-
կուի իր շրջապատի ազդեցութիւններուն, ըլլան անոնք կեն-
ցադի, լեզուի կամ բարքերու: Ի՞նչ կրնաս ընել, երբ ինկած
ես մարդկային այս ովկիանոսին մէջ եւ չես կազմեր պատ-
կանելի զանգուած մը՝ տոկայու համար սառցահալին:

—Մարդը անկենդան սառցալեռ մը չէ: Ան ունի հոգեկան
ուժեր, որոնք կ'արգիլեն սառցահալը՝ Նո՛յնիսկ անոնք, որ
կ'ուզեն մէկ կողմ նետել իրենց ինքնութիւնը, դեռ կապուած
կը մնան մայր արգանդին անտեսանելի թելերով: Կարելի չէ
հաւատալ, որ անոնց հոգիին մէջ երեք հազար տարիներու
ընթացքին կուտակուած հայեցիութիւնը ցնդի մէկ օրէն միւ-
սը:

—Ասոնք տեսութիւններ են: Տեսութիւններուն պաշտօնն է
պարզաբանել եւ հարթել դժուարութիւնները: Մինչդեռ
կեանքը այնքա՛ն բարդ է: Եւ յետոյ՝ ո՞վ ըսաւ, որ ամէն
մարդ հոգի ունի: Ժամանակի ընթացքին մարդոց մէջ կը
նօսրանայ այն կապը, որ գիրենք կը միացնէր իրենց անց-
եալին...

—Այդ կարպը, սիրելիս, չուան չէ, որ փրթի, այլ մի՛ս
է, մկան, երակ եւ ջիղ: Փրթելու պարագային կը բանայ
վէրք մը, որ եթէ նոյնիսկ ամոքուի, կը ձգէ անջնջելի սպի
մը: Այն հայը, որ երես դարձուցած է իր ազգէն, զաղտնա-
պէս կը տառապի: Ան կը զգայ անդամահատուածներու ան-
բացատրելի ցաւը:

—Ես կը ճանչնամ հայեր, որոնք շատոնց փոխած են իրենց
անունը եւ ազգութիւնը, բայց երկվայրկեան մը իսկ չեն տա-
ռապիր, չեն խղճահարիր եւ շատ հանգիստ քուն կը քնանան:

—Այդպիսիները մէկդի կը նետէ...

Այսպէս կը գրուցէին Լոս Անճելըսի մայիթերուն վրայ ճեմող երկու հայ երիտասարդներ, երկու հիւլէներ՝ կորսուած Նոր Բաքերոնի ծովածաւալ լոյսերուն մէջ, եւ միայն անհունութեան մէջ պլպլացող աստղերը կը լսէին անոնց ձայնը եւ կը հասկնային անոնց խօսած լեզուն...

Մեծ քաղաքներու պողոտաները կախարդանքներու ցուցասրահներ են...

ՃՈՒՄԵՆՔ, վայելելով հանդերձ Նոր Բաքերոնին բարիքները, մտքով կը բացակայէինք յանկարծ, կը վերադառնայինք անցեալի մութ, ցաւատանջ, բայց սիրելի վայրկաններուն, մեր հոգիները կենսաւորելու համար՝

Մայիթերը կը նմանին գրամեքենաներու ժապաւէններուն, որոնց վրայ խրաքանչիւր անցորդ կը գրէ իր կեանքին պատմութիւնը, իր անկատար երազները:

Լոս Անճելըսի մայիթերուն վրայ քալող երկու հայ երիտասարդները կը խօսէին լեզու մը, որ կու գար Արարատի փէշերէն, լեզու մը, զոր կը խօսէր Առաջին զոյգը Եդեմի ծառերուն տակ...

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Փաստօրէն,
15 Սեպտեմբեր 1991

ՎԱՐՈՏՆԵՐ

ԿԱՐՕՏՆԵՐ

Ա.— ԱՐՆԱԳՈՅՆ ԿԱՐՕՏ

Ծիրան իրիկուայ ծուէնների տակ
Կարօտել եմ այն շէկին քաղցրակաթ
Ու նուր արեւի կեղեւ-շերտում տաք
Միւսի բոսոր շրթերը ակաթ:

-Եարտտել եմ, եարտտել եմ, եարտտել եմ...

Սուրմայ գիշերուայ գծերում անտակ
Կարօտել եմ այն սեւին սաթափատ
Ու լուսնի արծաթ փայլերում յստակ
Այն մթին, որ ձիգ շուք է միգապատ:

-Կարօտել եմ, կարօտել եմ, կարօտել եմ...

Ողջ գիշեր այսպէս քայլելուց յետոյ,
Այսպէս արթելուց, երազից այսքան,
Արտիս տեղ տո՛ւր է արդ կրծքիս ներքոյ,
Որով կտրել եմ անցեալ-ապագան:

-Արնոտել եմ, արնոտել եմ, արնոտել եմ...

Բ.— ԻՐԻԿՆԱՅԻՆ ԿԱՐՕՏ

Կ'ուզենայի արդ քեզ հետ
Զուր թափառել փողոցով,
Իրիկնային զովը ինձ
Հասնէր աչքիդ մեղմ բոցով:

Կ'ուզենայի չունենալ,
Ոչ հանգրուան, ոչ հասցէ

Ու սպառել ժամը մեր
Անկապ-անկից զրոյցով:

Կ'ուզենայի քիչ մըսել
Ու սարսուղ զովից թաց,
Պատրուակել, մօտենալ
Ու ջերմանալ քո ծոցով:

Կ'ուզենայի... խաբէ՛ս ինձ
Չքմեղանաս, չփոթուես,
Չարշարուէի ես մի քիչ
Կասկածանքի նուրբ խոցով:

Կ'ուզենայի փորձել ինձ,
Թէ որքա՛ն եմ կենդանի
Ու դեռ որքան եմ խայթում
Մէջս նիրհած խանդ-օձով:

Կ'ուզենայի լքել քեզ,
Տարակուսել, փոշմանել,
Ընդունէիր ինձ նորից
Թեթե ու փոքձ մի լացով:

Կ'ուզենայի թեթեանալ,
Զգալ շունչը գիշերուայ,
Թեթեութիւնս կշռել
Կոճակներիդ փակ-բացով...

Եւ կ'ուզէի խոնջանալ,
Մտնել տունդ ջերմ ալնքան,
Ուր դղեակի է նման,
Իմ «սեփական» բազմոցով...

Կ'ուզենայի արդ քեզ հետ
Զուր թափառել փողոցով...

Գ.— ԽՈՐՀՐԴԱԲՈՐ ԿԱՐՕՏ

Մի խորհրդատու կարօտ է հիմա սիրտս ներխուժում,
 Ես եմ ու մի կին, որի աչքերն են սևորակ մուժում,
 Ու մենք քայլում ենք երկար մայրերով, սակայն չենք
 շարժում:
 Այդ կարօտը ինձ նուազեցնում է, բայց նաև բուժում:
 Այդ մայրերն երկար աշխարհն են մեզ հետ դարձնում
 ու քաշում,
 Մենք զուգահեռ ենք քայլում, բայց նաև իրար ենք
 դաջում:
 «Երկու զուգահեռ զիծ հանդիպում են միայն լաւերժում,
 Ուստի մենք քայլում ու անհուններն ենք կօշկի տակ
 մաշում:

Պողոտան գնում, սակայն տարածքը ասես մեզ կաշում,
 Զատում է ամէն քառուղու վրայ ու նորից խաչում,
 Դրա համար էլ ոչ մեղք ենք զգում եւ ոչ մեղանչում,
 Անսահման տուժում, բայց սահմանները երբեք չենք
 ջնջում:

Մի խորհրդատու կարօտ է հիմա
 սիրտս ներխուժում...

Դ.— ՍՏՈՒԵՐՈՏ ԿԱՐՕՏ

Ինչպէ՛ս զանգեցիր՝
 ես տանը չէի:
 Ինչպէ՛ս զանգեցի՝ պատասխան չեղաւ:
 Այդպէս օրերը փոխուեցին պահի,
 Յոյսիս ապակին
 պատեց գորշ եղեամ:

Մեզ բաժանում էր լոկ մի քառուղի,
Սակայն այդպես էլ
Հանդիպում չեղաւ.
Հիմա կապում է մեզ
ուղին տողի,
Որն աւարտում է մէկ քառով –«աւա՛ղ»:

Արդ, ինձ է նայում
Կիսադէմը քո,
Լուսանկարիդ
Ստուերի միջից.
Ասես ասում են շրթերդ ճեքով.
–Մաքրիր այս տողը յուշերիդ էջից...

Իսկ ես նայում եմ
Միւս մութ կէսին,
Որ ինձ են կանչում
շուքե՛ր, ստուերնե՛ր.
Առաջին անգամ մերժում եմ լոյսին
Ու երազում եմ
կորա՛ծ այն գիշեր,
Երբ դու զանգեցիր՝
ես տանը չէի.
Երբ ես զանգեցի՝
չեղաւ պատասխան.
Այդպէս ամիսը
Վերածունց պահի,
Իսկ պահը՝ դատարկ

...յաւիտենութեան:

ՎԱՐՆՆԻ

Թ. ԶԻՖԼԵԱՆԳՐԱԽԱՊԱՀՐ

Ինչպէ՞ս կարելի է նկարագրել հալէպցի Չամսոն:

Ոմանք կ'ըսեն, թէ ան տէրվիշ մարդ է: Ոմանք՝ խենթ, ոմանք՝ խելացի, ուրիշներ՝ քիչ մը թոռկ, քիչ մը ճարպիկ, տակաւին ուրիշներ՝ երդում-կտոր կը պնդէին, որ բնատուր փիլիսոփայ մըն է ան...

Իսկ Չամսո բնաւ մտահոգուած չէր, թէ ուրիշներ ինչ կը մտածէին իր մասին:

Ուր տարի առաջ, եղբայրը՝ ոսկերիչ Աստուր,- կեանքը բարօրելու հա-մար- ծննդավայրը՝ Հալէպը ձգելով հաստատուած էր Սիտնի:

Ան շուտով կրցեր էր համակերպիլ արեւմտեան քաղաքակրթութեան տնտեսական ու հասարակական կեանքի բոլոր գրաւիչ հակասութիւննե-րուն ու, շնորհիւ իր լեզուանի բնատրութեան, քանի մը տարիէն յաջողած էր գործի տէր դառնալ, ընկերային շրջանակ ստեղծել, յետոյ՝ մայրն ու քոյրը քովը բերելով, իր ընտանեկան պարտականութիւններուն մէկ մասը ամբող-ջացուցած կը համարէր:

Հիմա միայն եղբայրը՝ Չամսոն, մնացեր էր Հալէպ:

Իսկ Չամսո, հակառակ իր մեծ եղբորը պնդումներուն, բնաւ չէր ուզեր ծննդավայրէն հեռանալ: Եղբորը գրած նամակներէն մէկուն մէջ, ան յայտ-նած էր իր մտքերն ու առարկութիւնները, որոնք գաղթելու վճռական որո-շում մը առնելու նախօրեակին՝ հոգեկան պատմել չէր քաշած էին իր պար-զունակ մտքին մէջ:

Խառնուածքով տարբեր՝ շինականի կարեկից ոգի ունէր Չամսոն:

–Աստուր եղբայր,- կը գրէր ան կարօտով,- վերջին նամակիդ մէջ կը պատմես երկրին գեղեցկութեան, գործերու առատութեան, կարգ-կանոնի մասին եւ կ'ըսես, թէ լաւ դրամ կը շահիս ու կը յանձնարարես, որ տունը-տեղը ծախսեմ ու Սիտնի հաստատուիմ:

«Իշմարիտը ըսելով, Աստուր եղբայր, ամէն առտու կ'արթննամ՝ քովդ հաստատուելու մտադրութեամբ, բայց չեմ գիտեր ինչո՞ւ... կէսօրուան մօտ տրամադրութիւնս կը փոխուի: Կը շիջիմ մեր տան մէջ սենեակէ սենեակ, սիրտս կծկուած՝ ծանրութիւն մը կը ճնշէ հոգիս: Կը մտածեմ ու հարց կու տամ ինքզինքիս, թէ ինչպէ՞ս պիտի կարենամ ծախել մեր այս հօրենական օճախը, որ Տէր-Զօրէն հրաշքով ազատուած գերդաստանի մը ապաստանը եղաւ, որուն ամէն մէկ անկիւնը խօսում է յիշատակներով:

«Արդեօք կը յիշե՞ս, ձմրան այդ առնաշունչ օրերուն, բոլորս թոնիրին շուրջ հաւաքուած, որքա՞ն հետաքրքրութեամբ կը լսէինք Սրբուկ ճեմէին վիշապներով-պարիկներով լեցուն հեքիաթները, որոնք միշտ աղքատին ու հերոսին յաղթանակով կը վերջանային:

«Հապա մեր օրհնուած սեղա՞նը, որուն շուրջը կը նստէինք ծալապատիկ ու կ'ուտէինք նոյն պնակէն...

«Միջօրէին կ'իջնեմ փողոց՝ նպարավաճառ Ապու Նիկողոսին հետ *թաւի* խաղալու: Կը քալեմ ճամբուն մէջտեղէն ու կը ճշմարեմ, Աստուր եղբայր, որ այս փողոցը տակաւին կ'ապրի մեր յիշատակներով: Հոս, այս փողոցէն ներս, ուր խունկի հոտը անապակաս է, մենք ու մեր ընկերները իրարու հետ պատուհանէ պատուհան պոռալով-կանչելով, կեանքի իրողութիւններէ հեռու, անհոգ ու հաճելի օրերը ապրեցանք: Աստուր եղբայր, այս փողոցը չէ՞ր, որ մեզի հայ պահէց: Ինչպէ՞ս կարելի է հեռանալ այս վայրէն...: Մարդ ո՛ր որ ծնի, պէտք է հոն մեռնի:

«Ես հոս կը մնամ ու կը պահեմ պապնական մեր այս օճախը, մինչեւ որ վերադառնաս: Եթէ կրնաս, դիպէ ինձի երկու հազար տոլարի գումար մը, որ պէտք եղած կարգ մը նորոգութիւնները կատարեմ: Եղբայրդ՝ Չամսոն»:

Երեք շաբաթ ետք, Չամսոն նամակին պատասխանը ստացաւ: «Եթէ շուտով չի գաս, մայրդ կ'աղօտէ պիտի մեռնի... մեղքը վզիդ»:

Նամակը շատ ցնցեց Չամսոն: Մտածեց երկար-բարակ, ինքն իրեն առաւ-տուաւ ու քանի մը շաբաթ այսպէս...: Մօրը հանդէպ ունեցած սէրն ու ազգային սկզբունքները անդադար երկընտրանքի տակ դրած էին զինք: Եւ Չամսոն, մտամոլոր, քանի մը շաբաթ այսպէս աջ ու ձախ գնաց-եկաւ, քիչ մը ծխեց, քիչ մը խմեց եւ օր մըն ալ, յանկարծ, փակագիծ մը բանալով մտքին մէջ, որոշեց. «Կ'երթամ... միայն պատելու: Ճշմարիտ»:

Եւ իրաւ, ինքն ալ զարմացաւ... եւ ինքզինք շնորհատրեց, թէ ինչպէ՞ս այսքան լաւ ու տեղին որոշում մը կրցեր էր առնել: Եւ ուրախութենէն սուկելով իջաւ փողոց՝ խանութպան Ապու Նիկողոսին հետ թալի մը նետելու:

*
* *

Երբ Չամսոն Միտնի հասաւ, հետը ունէր ձեռքի պայուսակ մը միայն, որուն մէջ գետեղած էր քանի մը գիրք, գուլպայ եւ սպիտակեղէն: Ուրիշ ոչինչ:

Քսանվեց տարեկան էր ան:

Ու երբ ոտքերը դպան օղակայանին չոր ու կիզիչ կուպրին վրայ, ճիշդ այդ պահուն անդրադարձաւ, որ թակարդի մը մէջ էր ինկած: Տաւազին դող մը անցաւ մէջէն: Անբացատրելի նախզգացում մը սկսեւ էր կրծել հոգին:

Օղակայանէն դէպի եղբօր տունը՝ Չամսոն, երագուն, դիտեց աչքին առջեւէն փախչող տեսարանները: «Այս ի՞նչ անկենդան գեղեցկութիւն է ասանկ. այս ի՞նչ շինծու քաղաք է, - Աստուա՞ծ իմ», կը մրմնջէր ան քիթին տակէն, «զարմանալի», փողոցները պարապ մարդ-մարդասանք չկայ: Տեղ մը, ափ մը հոգ չես տեսներ: Ամէն կողմ կանանչ խոտ է: Խայո, այս երկրին մէջ ցելս չկա՞յ», - բացազանչեց ինքն իրեն, ջղազոգութեամբ:

Նոյն օրը, երեկոյեան, Աստուրին տունը քարեկամներով լեցունեցաւ: Չամսոն էր եկեր Հալէպէն՝ Աստուրին եղբայրը. եւ այնպէս՝ հալէպցին ու լիբանանցցին, քեսապցին, յորդանանցցին ու պարսկաստանցցին շաբան-շաբան եկան-իմկան բարեգալուստ մաղթելու: Ջերմ ու հարազատ էր մթնոլորտը: Կերան-խմնցին ու պարպեցին օդի շիշերը, յետոյ քանի մը քաջալերական խօսք ըրին Չամսոնին, մէկը առաջարկեց իրեն գործ գտնել, միւսը՝ տուն-տեղ, ուրիշ մը խոստացաւ, որ եթէ Չամսոն ուզէ՝ հարսն ալ պատրաստ էր: Սիայն Չամսոն հրամայէր...

Ու երբ գլուխները տաքցան, քանի մը հաստ ալ թրքերէն երգ թնդացուցին:
Եւ Չամսօ, իրաւ, շատ ուրախ էր: Ուրեմն հոս՝ հայրենիքէն հազարատը մղոն հեռու, Սիտնիի մէջ ալ կային իրարու սրտակից-կարեկից ընկերներ: Անոնցմէ մէկը՝ ոսկերիչ Կարայիս, անհամբեր, կարծես կը մրցակցէր, որ ինքը ըլլար առաջինը այդ սովորական հարցումը ընողը:

– Էէէէ՛, Չամսօ, ըսէ տեսներք, հաւնեցա՞ր մեր քաղաքը...

Ու Չամսօ հագիւ կրցաւ զսպել իր խեղդուքը:

– Հող չկայ,– պատասխանեց ան չոր ու կտրուկ,– ամէն տեղ կանանչ խոտ է: Փողոցները՝ ամառի: Դուք կեանքը փողոցներուն մէջ չէք ապրիր:

Այս ակնարկին վրայ բոլորը սկսան լիաթոք խնդալ:

– Հող, շա՛տա՛տ կըրքը,– ըսաւ մէկը ետեւէն կէս-զինով,– քիչ մը *փաթա* չինէ... տես քեզի որքա՛ն մեծ հող կը գտնենք:

Վա՛յ... վա՛ւայ... վա՛ւաաա՛յ: Պատասխանը տագնապեցուց Չամսօն: Միտը սկսաւ թրթռալ: Դաւկահար, պահ մը աչքերը փակելով ինքն իր մէջէն երկու անգամ կրկնեց տենդագին. «Անսասան... Անսասան...»:

Այս ջերմ եռուզեղը շարաթ մը տեսց: Եւ Չամսօ այդպէս կը նկատէր, թէ բոլոր անոնք, որոնք եկեր էին իրեն բարեգալուստ մաղթելու, բոլորը ինկեր էին ինքնախաբէութեան ճոյն ճահիճին մէջ եւ արդարացնելու համար այս գոյավիճակը, իրենց շուրջը կը փնտռէին մեղսակից մը ճոյն ողբերգութեան:

Շարաթ մը ետք, բոլորը ոտքերնին քաշեցին ու Չամսօ ինքզինքը սկսաւ մինակ զգալ ու փնտռել իր ծննդավայրը, փողոցը, ակումբը, եկեղեցին, տունը, ընկերները եւ իր թաւիի ընկերը՝ Ապու Նիկողոսը:

Քանի մը շարաթ յետոյ գործ մը գտան իրեն, եղբօրը ոսկերիչ բարեկամներէն մէկուն՝ Երուանդին քով, իբրեւ «մըխլայըմի»: Կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով Չամսօ ոսկերիչի քով կ'աշխատէր: Եշմարիտ, ան կը փորձէր լուսագոյնը, սակայն հակառակ իր թուր ջանքերուն, խէրն անի-ծած աղամանդները... տեսարար կը փշրուէին ու կը թռչէին իր մտեղ մատնէրու ծայրէն...

Չամսօ, Պարոն Երուանդին մօտ աշխատեցաւ քանի մը ամիս, եւ իրօք, փորձեց թափանցել ոսկիի ու աղամանդի գրաւիչ աշխարհը: Փորձեց այդ աշխարհէն ներս գտնել բան մը, որ իրեն կապէր զինք: Զգտաւ:

Օր մը, աշխատած սեղանին ափսէն (որուն մէջ ոսկիի փոշիները կը հաւաքուին) մաքրելու ելաւ ու զայն տանելով՝ աղբամանին մօտ, պզտիկ աւելով մէջի փոշիները սկսաւ բծախնդրութեամբ մաքրել-աւել եւ, կարծես այդ չէր բաւեր, մէյ մըն ալ ափսէն ինքն իր վրայ սապէս... դարձուց ու... թառախ... քանի մը անգամ ալ ուժգին գետին գարկաւ: Զըլլայ որ փոշիի հատիկ մը մնացած ըլլար մէջը...

– Ծօ Չամսօ՛,– որոտաց Պարոն Երուանդ աշխատանքին միւս ծայրէն,– ծօ ու՛ր կը թափես կոր այդ փոշին. ծօ ոսկին կը թափե՞ն. դուն ե՞րբ ոսկին արժէքը պիտի գիտնաս,– յետոյ գլուխը աջ-ձախ շարժելով քթին տակէն մրմնջաց,– թու՛րու՛... տասը տոլարնոց ոսկին աչքիս առջեւ թափեց ու զնաց...

Բարկութենէն Չամսօյին սեւ-գոուզ մազերը տնկունեցան: Ջղայնութենէն ինքզինքը կորսնցնելու վրայ էր, երբ կոպերը ամուր մը փակեց ու «Անսասան... Անսասան...» կրկնեց ինքն իր մէջէն երկու անգամ, որմէ ետք զարկաւ գետին՝ փշրեց ափսէն: Ամուր: Յետոյ դառնալով վարպետին, որ յիսունի մօտ ճաղատ մէկն էր, որոտաց.

– Թքեր են ես քու ոսկիիդ, փոշիիդ, աղամանդիդ, խանութիդ ու ծակ աչքիդ մէջ, որ կշտանալ չի գիտեր: Թքեր են այս գործիւն մէջ, որ խելք ու տարեր է քեզ եւ դուն թաղուեր-կորստուեր ես ոսկիին մէջ ու մոռցեր, թէ ո՛վ ես, ուրկէ՞ եկած եւ ու՞ր կ'երթաս: Զու գործի՛դ ալ... ոսկիի փոշիիդ ալ... ու զարմելով փակեց արհեստանոցին դուռը, ետին ձգելով զարմացած-քաշացած ոսկերիչ Երուանդը:

Եւ Չամսօ գործը ձգեց:

Աջէն ու ձախէն հայրենակից-քարեկամ եկան զինք համոզելու, որ գործին վերադառնայ: Բայց անդրդուելի մնաց ան:

Եւ իրօք, Միտմիի մէջ Չամսոյի առաջին եւ վերջին գործը եղաւ այդ:

Տարի մը ետք, մայրը՝ Տիկին Բերկընտիւն, մահացաւ: Եւ այդ մահը տարտամ ու անձայն քան մը փրցուց-խորտակեց Չամսոյի էութենէն: Կարծես կեանքը որոշ իմաստ մը կորսնցուցած՝ հին կապերը, խառնափրճ-թոր յուշերը վերստին սկսեր էին արթննալ ու իրեն կանչել:

Պապական ինքնին սփոփելու եւ փարատելու համար ներքին այս կանչը, Չամսօ նետուեցաւ ազգային գործունէութեան ասպարէզ: Ուր որ գործ կար՝ ինք հոն էր: Երիտասարդական, մշակութային ձեռնարկներ, քաղաքական ցոյցեր, քէֆի սեղան, կռիւի սեղան, ժողով, բանակում, ամէն տեղ էր ան: Շնորհիւ իր ընկերային ու հեզ քննադրութեան, բոլորին կողմէ սիրուած-փնտռուած հեղինակութիւն մը դարձեր էր զաղութէն ներս:

Տարիները այսպէս անզգալիօրէն սահեցան, ու Չամսոյին կարօտը համեմատաբար պղտորեցաւ կարծես: Այլ չէր խօսեր իր ապրումներուն մասին: Ան կը ժպտէր միայն, երբ հարց կու տային իրեն...

– Էէէէ՛..... Չամսօ... Ե՞րբ պիտի վերադառնաս Հալէպ...

*

* *

Օր մը չես գիտեր ուրկէ միտքը ինկաւ, ուզեց քաղաք՝ Բիթ Սթրիթ իջնել ու այցելել քանի մը ոսկերիչներու, որոնց հետ ժամանակին բարեկամութիւն հաստատած էր:

Բիթ Սթրիթը քաղաքին այն շրջանն էր, ուր մօտ եօթանասուն հայ երիտասարդներ՝ շէքի մը լայնատարած յարկաբաժիններու մէջ քով քովի հաստատուած, ոսկերիչներու խումբ մը կազմած էին: Ամէն մէկը իր արհեստով միւսը կը յրացնէր:

Հոն էր Օրիժինալ Անդրանիկը, Բաթ-Բաթ Հրաչը, Ժան Պալման Կարոն, Մըխ-Մըխ Թօթիկը, Գորվէրդ Թաթուլը, Հայհոյիչ Գրիգորը, Չեւառիկ Զաւէնը եւ շա՛տ մը ուրիշներ: Բոլորը պանդուխտ՝ ինկեր էին այս անժամօք ափերը, բոլորը ինքնակամ կարեկցութեան մը փնտռութիւն անձնատուր...

Հոս, արհեստանոցէ արեւի, զաղթակայան մըն էր:

Քանի մը շաբթուան ընթացքին Չամսօ բոլորին հետ բարեկամացաւ ու սկսաւ քիչ մը կատակերգութեամբ, քիչ մը միմոսութեամբ ու շաղակրատելով ժամանակը անցընել իրենց հետ: Ի միջի այլոց, անոնց առօրեայ սովորութիւններուն եւ ապրումներուն վերաբերեալ որոշ տպաւորութիւններ եւս սկսեր էր կազմել:

Օրինակի համար, ձիարշաւի տենդագին մոլութենէ վարակուած այս խումբ մը երիտասարդներուն ղեգերումները Չամսոյի համար շատ հետաքրքրական երեւոյթ մըն էր:

Ժամանակը հասած էր, որ Չամսո հակազդեր համաճարակ դարձած այս եիւանդագին երեւոյթին...

Եւ յետոյ օր մը, հատ ու կտոր, հրաշալի անդրադարձում մը ունեցաւ: «Ծօ՛՛ այս երկրին մէջ ես ի՞նչ պէտք ունիմ աշխատելու,– համոզեց ան ինքնզինը,– քաղաքին մէջ այսքան ոսկերիչ... այսքան հարստութիւն... ալ ես ի՞նչ պէտք ունիմ աշխատելու»:

Եւ անգամ մը եւս զարմացաւ, թէ ի հարկին, կրնար որքա՛ն տեղին որոշումներ առնել: Ու խանդավառութեամբ ինքզինը շնորհատրեց:

Շաբաթ մը ետք, Երեքշաբթի օր մը, թեկն տակ գիրք մը սեղմած՝ մտաւ ոսկերիչներու շէնքէն ներս, մատները լեզուին տակ՝ սուր զննացող աչլ մը արձակելով: Իր ներկայութիւնը անմիջապէս խանդավառ եռուզեռ մը առաջացուց:

– Վառա՛յ... եղբայր Չամսոն է եկեր...
– Լա՛ւ որ եկար, Չամսո... ճանճրացած էինք... սիրտերնիս կը նեղուէր...
– Եկուր, Չամսո... եկուր մեզի ճո՞ք մը պատմէ...
– Ակա՛մ, դուն ու՛ր մնացիր... ծօ կարօտցանք... ի՞նչ է... մէջտեղէն կորսուեցար նորէն:

Փաղաքշական այս խօսքերը շինականին դէմքին վրայ ժպիտ մը արթնցուցին:

– Ողջոյն ձեզ, իմ պուրճ համուտցի, հալէպցի, քեսապցի, պոլսեցի, յորդանանցի եղբայրներս, ոսկիին *առունճ* քանի՞ է այսօր:

– Ոսկիին առունը երէկ ինչ էր նէ, այսօր ալ նոյնն է, – պատասխանեց Բաթ-Բաթ Հրաչը ետեւէն,– ի՞նչ է այդ թեկդ տակինը, չէ՞նէ Սուրբ Գիրքը առած հետդ կը պտտցնես:

Նուաղուն ժպիտ մը պարզուեցաւ Չամսոյի խոր ու խոշոր աչքերուն մէջ:

– Չամսո, որոտաց Գորվէրդ Թաթուլը ետեւէն,– եալա՛ւ նայիմ... սապէս շրտացուած քանի մը ճոք պատմէ, կուշտ ու կուտ խնդանք:

– Այսօր ճոք պատմելու օր չէ,– պատասխանեց Չամսո՝ լայն ժպիտով մը: Յետոյ, աղեղնաձեւ յօճքերը բարձրացնելով՝ շարունակեց,– տղա՛ք, առաջարկ մը ունիմ, կ'ուզեմ ձեզի ներկայացնել ու...

– Ծօ Չամսո՛, այդ ի՞նչ տեսակ խօսակցութիւն է անանկ, ծօ ինքզինքդ ժողովի մէ՞ջ մը կը կարծես կոր, ակամ, հոս առաջարկ-մառաջարկ չի քալեր,– պատասխանեց Օրիժինալ Անդրանիկը նստած տեղէն ծիծաղով մը:

– Նախ՝ մտիկ ըրէք առաջարկս, եթէ չհաւնիք, մի՛ ընդունիք, ձեզի ստիպող չկա՛յ:

– Ըսէ՛ նայինք, տեսնենք նորէն ինչ պիտի ածես մեր գլխուն,– վրայ տուաւ Հայիոյիչ Գրիգորը, խորհրդատու նայուածք մը նետելով իր շուրջը:

– Իմ սիրելի պուրճ համուտցի, հալէպցի, քեսապցի, պոլսեցի, յորդանանցի եղբայրներս: Այսօր՝ Երեքշաբթի, ձիարշալի օր է: Եկած եմ քորթիդ գործը դիւրացնելու: Ձեզ կը վստահեցնեմ, որ շնորհիւ իմ նախածեռնութեանս, ձեզմէ իրաքանչիւրը այսօր կէս ժամ պիտի խնայէ: Բնա՛ւ չարչարելու պէտք չունիք: Հոս, դրամները կը հաւաքեմ, Թի-Էյ-Պի կը տանիմ, ձեր նախընտրած ձիուն վրայ գրաւը կը դնեմ, արդիւնքները կը ստուգեմ, եթէ շահած էք՝ յաջորդ օրը ձեր շահաբաժինները ետ կը յանձնեմ: Համաձա՛յն էք: Կա՛յ որեւէ առարկութիւն...

Արհեստանոցէն ներս կասկածելի լռութիւն մը տիրեց: Բոլորը գիտէին, որ երբ Չամսո նոր քան մը առաջարկէր, վերջնական հաւանութիւն մը տալէ

առաջ, պէտք էր այդ առաջարկը հազար անգամ չափելն ու չափափելին...

- Այդ բոլորը շատ լաւ հասկցանք, եղբայր Չամսո,- ձայնեց Մըխ-Մըխ Թոթիկը քրմային շեշտով մը,- ամմա, ընկեր իմ, բան մը կայ, որ տակաւին սա հաստ գլխուս չի մտներ... քսէ մայիմ... Ի՞նչ է քու շահդ այս բոլորէն...

- Շա՛հս. ինչ է իմ շա՛հս,- կրկնեց շինականը՝ ճակատը շերտ-շերտ կծկուած,- ասոր մէջ ես ի՞նչ շահ կրնամ ունենալ. պարզապէս օգնել կ'ուզեմ ձեզի: Այսքան:

Ու այն օրէն սկսեալ, Չամսո քաղաքի բոլոր հայ ոսկերիչներուն գրասալահը դարձաւ:

Ամէն երեքշաբթի, ամենայն կարգապահութեամբ, ան Բիթ Սթրիթի հայ ոսկերիչներէն դրամները կը հաւաքէր, գրաստոմները կը գնէր ու յաջորդ օրը, նոյն կարգապահութեամբ, շահաբաժինները կը յանձնէր:

Քանի մը շաբթուան ընթացքին, ան յաջողեցաւ բոլոր տղոց վստահութիւնն ու համակրանքը սիրաշահիլ: Ու տղաքը սկսեց էին զարմանալ, քէ... սա Չամսոն... իրաւ... որքա՛ն ճշդապահ, ազնիւ ու ծառայասէր մէկն է եղեր...

Եւ Չամսոյի ներկայութիւնը սկսած էր հաճելի ու անհրաժեշտ դառնալ ոսկերիչներուն համար: Բոլորը իրենք զիրենք իսկապէս բախտատու կը զգային, որ իրենց կողքին Չամսոյի պէս կատակասէր, զուարճախօս... սապէս... կէս մը թոռկ... *զախմ* մը կար:

Օրերը, ամիսները սահեցան ու Չամսո ո՛չ տուն, ո՛չ ընտանիք, ոչ ալ գործի տէր դարձաւ: Թափառեցաւ խանութ խանութ, ժամանակը հայ ոսկերիչներուն հետ արժեւորելով:

Օր մը, սակայն, տարօրինակ բան մը պատահեցաւ: Չեռքին մէկը ականջին վրայ, կէս-պատռած գիրք մը թելին տակ, ան ներս մտաւ տղոց շէնքէն ու... ճակատաբա՛ւա՛ւ աջ սկսաւ ելզեղով բարձրանալ դէպի վեցերորդ յարկը, ոսկերիչներուն արհեստանոցը:

*Եսսս՝ քու դիմէքն չի՛ իրի՛իմ գիդի՛
Ջիվահիր քարի նըր՝ ըման իս՛սս
Տեսնողին Մէջում կու չի՛ ինի՛իի՛իս
Էէյի՛ դիդարի նըր՝ ըման իս...
Ասասա՛շխարհումս իմն դու՛ ուռ՛ն իս
Բէմուրվարք իս մուրվաա՛ւաք չունիս:*

Ու ան ոտքը հազիւ արհեստանոցի նախադռնէն ներս դրած էր, ճաթընտած պոռչտուք մըն էր փրթաւ:

- Վասա՛ւ, եղբայր Չամսոն է եկեր...

- *Խապիպի*, ու՛ր մնացիր, կարօտցեր էինք ձայնդ...

- Այս ո՛ր հովը փչեց այսպէս...

- Շօ, սուրճ մը բերէք...

- Աթոռ մը տուէք, թող նստի, մեղք է՝ չնիհարնայ...

Ըստ սովորականին, շինականին դէմքին վրայ նուաղում ծալիտ մը պարզութեամբ:

- Ողջոյն ձեզ, իմ պուրճ համաւոցի, հալէպցի, քեսապցի, պոլսեցի, յորդանանցի եղբայրներս, ոսկիին ամուսը քանի՞ է այսօր:

Բաթ-Բաթ Հրաչը, որ շաբաթ մը ի վեր այս առիթին կը սպասէր՝ խորունկ նայուածքով մը պատասխանեց.

– Ակամ... ոսկիին աուսըը հելէ մէկ կողմ դիր հիմա ու ինծի ըսէ, թէ իմ քսանհինգ տղարս սո՞ր գնաց: Անցեալ շաբաթ, ձիս առաջին եկած ու երկու հարիւր քսանհինգ տղար շահած էի: Իսկ դուն ինծի միմիայն երկու հարիւր տղար վերադարձուցիր...

Չամնոյի երեսը բարկութենէն ալլայեցաւ: Ջղայնութիւնը ակնյայտ էր: Խոր ու կլոր աչքերը լայն բացած՝ դէմքին վրայ ծանր թախիծով մը թնդաց.

– Խայրո Հրաչ, բերնէդ ելածը թող ականջդ լսէ՛, հա՞, ես քու դրամիդ ձեռք չե՛մ դպցուցած:

– Ինչպէ՞ս թէ ձեռք չես դպցուցած, հապա քսանհինգ տղարը ու՞ր գնաց...

– Եսաս... քու... դրամիդ... ձեռք չեմ դպցուցած,– կրկնեց շինականը ձայնին շեշտը տաստկացնելով,– այդ որ դուն շահեցար, քու դրամդ չէ՛ր: Այն դրամը, որ ճակտի քրտինքովդ չես շահիր, քեզի չի պատկանիր: Հիմա ըսէ տեսնեմ, ես քու դրամին ձեռք դրե՞ր եմ, թէ ոչ:

Արհեստանոցէն ներս խնդուք մըն էր փրթաւ:

– Ծօ Չամնօ,– վրայ տուաւ Կարոն ետեւէն,– ծօ մեր վրայ հալեպցիի հաշի՛ւ կը կարդաս կոր...

Ձեռտիկ Ջաւնը, որ բաւական ատենէ ի վեր ակնածանքով կը դիտէր Չամնոն, շանթարգելի նման խօսակցութեան միջամտեց՝ հարցին միջին եզր մը գտնելու համար:

– Տղաք,– ըսաւ ան՝ մծեղի պէս բարակ ձայնով մը,– պակսածը՝ շահին հարիւրէն տասն է: Այս հարցը ա՛յ մի երկարէք՝ հոս փակենք: Հրաչ, ակամ, ձեռքդ լման երկու հարիւր տղար անցաւ, տակաւին ի՞նչ կ'ուզես: Եթէ Չամնոն չըլլար, ճիշտն ալ շահէիր, ա՛ն ալ ձեռքդ չէր անցնէր:

– *Միսքը թէ՛ն փէր սէնք* Չամնօ,– պոռաց մէկը ետեւէն:

Բոլորը սկսան քահ-քահ խնդալ:

– Ասկէ վերջ մեր շահին *թէ՛ն փէր սէնք* Չամնոյին կու տանք. բոլորդ համաձայն էք,– հարցուց Գորվէրդ Թաթուլը, իր թափանցող հայեացքը շրջելով բոլորին վրայ:

– Համաձայն ենք, այն պայմանով, որ քանի մը ամիսէն տասնհինգ փըր սէնքի յրաժրանայ,– առարկեց Օրիծինալ Անդրանիկը ետեւէն:

– Ընկերներ, ճշմարիտ Աստուած, ես ձեր ճակտին քրտինքով շահած դրամին վրայ աչք չունիմ,– ատելցուց Չամնօ՝ ընտանի ձայնով մը:

– Ակամ Չամնօ,– կանչեց Օրիծինալ Անդրանիկ նստած տեղէն շեշտակի թափով մը,– այս հաւաքած դրամներդ ու՞ր կը պահես կոր, ըսէ նայինք, ով գիտէ պարտեզին ո՞ր մէկ կողմը ցանած ես...

– *Օլան* անի մի՛ խօսիք նայիմ,– ընդմիջեց Ձեռտիկ Ջաւնը՝ խոր-հըրդատր շարժումով մը,– տղան Հալեպ պիտի երթայ, ամուսնանայ ու տուն-տեղ չիմէ. անշուշտ դրամի պէտք ունի:

Շինականին դէմքը լրջացաւ:

– Դրամի պէտք ունի ամմա,– մէջ մտաւ Ժան Պալճան Կարոն ,– աչքեր-նիդ բացէք... մեզմէ անի կը շահի:

Այս յիշեցումը իրականութիւն էր:

Ընդհանուր եռուզեռի ընթացքին, Չամնօ, երեսին վրայ ջերմեռանդ ժպիտ մը՝ գաղտագողի նայուածքներ նետելով մտիկ կ'ընէր:

– Խայրօ, այնպէս մը կը խօսիք, որ կարծես ձեզ կողոպտելու ելելու եմ,– բողոքեց ան,– տղաք, ձեր շահը իմ շահս, ձեր վնասը իմ վնասս է: Ես ձեր հետն եմ:

- Օլան Չամսո՛ւ,- բացագանչեց Հայկոյի Գիրգորը՝ գլուխը աջ-ձախ փարտելով,- ա՛յն քու այդ լեզուդ ...

- Չամսո,- Տոբթոր Յարութն էր, սենեակին մէկ անկիւնէն,- ալա՛մ, այդ թելիդ տակինը ի՞նչ է. չէ՛նէ Փէլլադը առած հե՛տդ կը պտտցնես... վա՛սա՛յ, անամօթ, վա-յ... հէլէ մէյ մը բեր քովերնիս, որ մենք ալ դիտենք ու առտու կանուխ քիչ մը ախորժակնիս բացուի:

Մանկունակ ժպիտ մը պարզունցաւ Չամսոյի շրթներուն վրայ:

- Ասիկա ,- պատասխանեց ան գիրքը ձեռին խիճդ արտայայտութեամբ մը,- Դանիէլ Վարութանին գործերէն մէկն է:

- Ո՞ր մէկ Վարութանն է սա, ոսկերի՞չ է, ու՞ր կ'աշխատի,- ծայրեց Ժան Պալճան Կարոն՝ լեզուն բուշին մէջ, հագիւ գապելով իր ծիծաղը:

- Ծօ լակո՛ւտ... ծօ այդ ծակ աչքդ կտոր մը ոսկի տեսաւ ու հիմա ելեր Դանիէլ Վարութա՞նը կը ծաղրես: Ծօ շան լակոտ, ես քու *քօրք...* քու երեսիդ շնորհը... ծօ տակալին քանի մը տարի առաջ հայութիւն ըսելով կը մեռնէիր... քառասուն կտոր կ'ըլլայիր... քիչ մը գրպանդ լեցունցաւ ու հիմա ելեր մարդու չես հաւնիր, հա՞...
 Չամսոյի ունգերը լայնցած՝ ժպիտը սկսեր էր ցամքիլ, ստանալ կծու կերպարանք մը:


- Եղբայր Չամսո, մի նեղուիր, ալամ, մի նեղուիր, կատակ էր ըրածս: Խայյօ՞, դուն բնաւ կատակէ չե՞ս հասկնար,- վրայ տուաւ Ժան Պալճան Կարոն խակ ձայնով՝ չեղորացնելու համար Չամսոյի քարկութիւնը:

Երեսիկները, ջղային բռունցքները սեղմելով՝ աչքերը պահ մը փակեց ու մտքին մէջէն տեմդով մը երկու անգամ կրկնեց. «Անաստան... Անաստան», որմէ ետք, կրկին՝ մանկունակ ժպիտ մը պարզունցաւ կլոր դէմքին վրայ:

- Լաւ ուրեմն, մտի՛կ ըրէք,- ըսաւ ան աշխուժութեամբ,- այսօր փոխա՛նակ ճոջ պատմելու, Դանիէլ Վարութանին «*Լոյսը*» պիտի կարդամ... մտի՛կ ըրէք ...

Եւ շինականը խրոխտ ու ինքնավստահ ներշնչուով մը սկսաւ կարդալ ու նոյն թափով շարունակեց մինչեւ վերջը.

«... Չգիտե՛մ ես - միայն թէ, ո՛վ եղբայրներ,
 Ո՛վ խաչ հանող եղբայրներ,
 Թողուցէք զիս ճամբորդութեանս մէջ միմակ,
 Այնքան միմակ եւ այնքան լուռ, որ լսեմ
 Տրոփը սրտիս, որ ընկրկած նրագաւ է
 Նրագներուն մէջէն քիւր
 Արեւով լի եւ արեւները փանող
 Ուղիս վրայ մի՛ սքփռէք
 Ձեր շուքը, մոայլ թևի մը պէս ուրուրի:
 Եւ ոչ ալ զիս կանչեցէք
 Խընճոյքներուն չեք զըւարթ:
 Ուր բողբոջներ կը զարնէ նուագարան:
 Ընդունա՛յն է խոսքանալ
 Սրտիս կոյսեր -սիրտս սափորն է դադարի,
 Ու ես կ'երթամ դէպի աղբի՛ւրը Լոյսին»:



Ընթերցանութիւնը վերջացնելէ ետք, ան հապճեպով գլուխը քարճրա՛ցուց ու չորս դիմ միամտօրէն դիտելով՝ վրայ տուաւ...

145-2001

- Էէէէ՛... ինչպէ՛ս էր, տղաք, համեցա՞ք...

Բայց ան չկրցաւ վերջացնել նախադասութիւնը: Յանկարծ անդրադարձաւ, որ բոլորին հայեացքները սեւեռաբիր՝ ակնածանքով մը իր վրայ կենդրոնացեր էին: Բան մը ցնցեց շինականը: Կոտործին տակէն անհասկնալի, սակայն վշտոտ բան մը սկսաւ արթննալ...

Մշուշի նման խորհրդատուր ու ճնշիչ լռութիւն մը իջած էր արհեստանոցէն ներս:

Ու այս անբաժանցելի, սակայն խօսում լռութեան մէջէն բոլորը վերադարձեր էին դէպի աղօտ անցեալն ու ծննդավայրը մանկութեան, եւ պահ մը ապրեր էին ցնորքովն այդ անփոխարինելի օրերուն:

Հայեոյիչ Գրիգորը արհեստանոցին մէջտեղ ոտքի վրայ սառած՝ ձեռքի գործիքը անփութօրէն սեղանին վրայ նետելով, մթնոլորտը փոխելու համար՝ թաւ ձայնով մը ըսաւ.

- Իմացա՞ք, տղաք, Չամսօ կ'ուզէ եղեր երթալ... դէպի աղբիւրը լոյսին:

Փնտռէ նայիճք եթէ գտնես այդ աղբիւրը, լոյր տուր, մենք ալ հետդ կու գանք:

- Խայյյո՞ւ Չամսօ, ակամ, աս ի՞նչ լեզու ունիս եղեր դուն՝ եսինու՛ն, կանչեց մէկը ետեւէն:

- Պապա՛, սա բերան չէ, խորան է, խորա-ն,- անելցուց ուրիշ մը:

- Եկուր, Չամսօ... քեզի աղջիկ մը գտնենք ու կարգենք... գոնէ հոս կը մնաս,- վրայ տուաւ Մինասը:

- Առանձնութենէն սատկիմ, նորէն հոստեղէն աղջիկ չեմ առներ,- պատասխանեց շինականը վճռական:

- Ծօ Մինա՛ս... ծօ նախ դուն ինքզինքիդ բան մը կարգադրէ ու յետոյ ուրիշին նայիր,- ըսաւ Վարուժ՝ սուրճի գաւաթը ձեռին,- Չամսն Հալէպէն աղջիկ պիտի բերէ... չէ՞ մը ակամ...

Շինականը թախծերես՝ չպատասխանեց: Անցնալի փշրուած-թաղուած յուշերը վերսկսեց էին վերագարթնով իր գիտակցութեան մէջ, ու ան, մտամոլոր, ամուր, մտքէն երկու անգամ «Անաստան... Անաստան» կրկնելէն ետք, հանդարտօրէն արհեստանոցէն դուրս ելաւ:

Շաբաթներ ու ամիսներ յաջորդեցին իրարու եւ Չամսօ, «Գրաւապահի» պատասխանատուութեան կողքին՝ սկսաւ նաեւ շաբաթը մէկ-երկու յաւելեալ այցելութիւններ տալ քաղաքի հայ երիտասարդ ոսկերիչներուն, երբեմն երգելով ու արտասանելով, երբեմն ալ ազգային ու պատմական դրուագներ պատմելով զուարճացնել զանոնք:

Չամսոյի ներկայութիւնը անհրաժեշտ պահանջք մը դարձած էր ոսկերիչներուն համար, իսկ անոնց տրուած այցելութիւնը՝ կեանքի իմաստ իրեն համար, ինքնամոռացութեան կենսական միջոց մը:

*

* *

Միտքի յատուկ՝ խոնար-լալկան օր մըն էր: Բիթ Սթրիթի ոսկերիչները, մտածումներու մէջ թաղուած, աշխատանքի մէջ էին, երբ Ժան Պալճան Կարոն խզեց լռութիւնը.

- Տղաք,- ըսաւ ան շէն երանգով մը,- եկէ՛ք Չամսոյին բարիք մը ընենք:

- Դուն ինքզինքիդ նայէ,- պատասխանեց Մըխ-Մըխ Թոթիկը,- շատ մի մեղքնար... մեղքնալիք կ'ըլլաս:

- Է՛է՛է, ըստ ճայինք, Չամմո՛, ուտելիք ի՞նչ ունիս այդ տոպրակներուն մէջ,- հարցուց Յովիկը ախորժակով:

- Ի՞նչ ուզէք՝ կը գտնէք, հաց, լոլիկ, պանիր, վարունգ, ձիթապտուղ, ապուխտ, իսկ կոկորդի ցաւի համար,- շարունակեց ան մէկ աչքը կիտելով,- հետս օղի ալ բերած եմ:

- Վա՛սաա՛յյյ... Չամմոն հետը օղի ալ բերեր է. խմենք ու քիչ մը տաքնանք,- բացագանչեց Պետիկ՝ սենեակին մէկ անկիւնէն:

Մինչ այդ, Հայիոյիչ Գրիգոր հեռաձայնի վրայ մէկու մը հետ զաղտագողի՝ տաք խօսակցութեան մը բռնուած էր:

Չամմո կողովները ուտելէն վար իջեցուց, տոպրակէն ստուարաթուղթ պնակները հանեց ու անոնք հաւասարաբար լեցնելով սկսաւ տղոց քածնել:

- Ատէք-կերէք, Չամմոյի պնակն է զարդարուն,- կատակեց մէկը ետեւէն գողտուկ:

- Չամմո՞... այս պնակը մեզի քանի՞ տոլարի պիտի նստի, ակամ,- հարցուց ուրիշ մը:

- Քանի տոլարի՞,- պատասխանեց շինականը խորհրդաւոր շեշտով մը,- ոչինչ. այսօր քէֆի օր է, դրամի մասին մի մտածէք, դուք կերէք՝ էս ալ Դանիէլ Վարուժանէն քան մը կարդամ, որ լաւ մարտէք:

- Կարդա՛ ճայինք, կարդա՛, որ երթանք դէպի աղբիւրը լոյսին,- վրայ տուաւ Ժան Պալման Կարօ ծիծաղով:

Ու Չամմո սկսաւ արտասանել խոճաւ ու ջինջ շեշտով մը.

*Միջօրէի դադարն է գնհեմամունն զործարան.-
Ինչպէս վիշապ մը քըմրած՝ կը նիրհէ հնոցը տիպան,
Բուխերիկին կլափին մէջ պահ մը ծովին է խեղդուէր
Ներսը գլանները արշաւ, եւ անիւներն ընդհողով
Յանկարծ կեցեր են՝ իրենց ընթացքին մէջ խոկալով
Այդ անդորրին մէջ միայն կարծես կ'ըլլան լրսելի
Մեքենական նախրանքին յոգնած հեւքերն ահռելի:
Ընկե՛ր, քոյլ տուր շողշողայ երկաթներուն զագաթին
Բանուորներուն քիւրն առաք, գոհարն իրենց նակարին
Թոյլ տուր որ ներս մացառուող արևուն մէջ քըռչեպուն,
Ջըմրուիսք նանձերը բըզզան՝ հեզնելով կեանքը մարդուն,
Կանգնե՛ դուն մայր-դրան քով.-*

Սենեակէն ներս, ջաղացքի նման փշոռ կզակները մէկ առ մէկ անշարժացան: Բոլորը ուշադիր հայեացքներով սկսեւր էին իրարու հարց տալ, իսկ Հայիոյիչ Գրիգոր գլխահակ՝ կը փորձէր անհամադարտ աչքերը տեղ մը հանգչեցնել:

-Եալլա՛, խմենք կենացը մեր հանճարեղ բանաստեղծ Դանիէլ Վարուժանին,- առաջարկեց Նազօ՝ անդորրութիւնը խախտելու միտումով:

Հազիւ բարձրացուցեր էին գաւաթները, երբ նազելի նայուածքով, գեղադէմ աղջիկ մը արհեստանոցէն ներս մտաւ: Միջահասակ էր ան, շագանակագոյն մազերը մերկ ու սահուն ուտերուն վրայ տարածուն, նուրբ ու լեցուն շրթներով, դէմքը հարուստ, ճերմակամորթ, մէջքը բարակ գեղեցկուհի մը, որուն կուրծքերը, քալած ատեն՝ վէտ-վէտ կը շարժէին: Ըա՛տ

սովորականին, ոսկեղենի ցուցափեղկեր կամ շողշողուն ծածկոցներով յարդարուած սեղաններ: Հրափրեալները, անակնկալի եկած՝ կը մտածէին, թէ արդեօք խա՞ղ մըն էր եղածը: Եթէ ոչ, ու՞ր էր Կոլտֆինկը: Ինքն ալ մէջտեղ չկար:

Յանկարծ, հաստատ քայլերով Չամմօ դուռնէն ներս մտաւ, մինչ ներկաներուն միջեւ անգայելի ճիչ մը բարձրացաւ:

– Ծօ Չամմօ՞օօ... Ծօ խնդ աճիծեմ, ո՞ր էիր մինչեւ հիմա, ու՞ր կորսուեցար, երկու ամիս է փնտռուքի մէջ էինք...

– Հրաշք է, հրաշք: Կորսուած էր՝ գտնուեցաւ...

– Հէլէ կեցիր... Թովմաս առաքեալին պէս մէյ մը սա մատս դպցնեմ ու վստահ ըլլամ, որ դուն ես:

– Ծօ Չամմօ, դուն հոս ի՞նչ գործ ունիս...

Եթէ անցեալին նման փաղաքշական խօսքեր Չամմոյի դէմքին վրայ անմեղ ժպիտ մը կ'արթնցնէին, այսօր այդ ժպիտը կորսուած էր: Շինականը խաղաղ էր ու լուրջ:

– Ողջոյն ձեզ, իմ պուրճ համուտցի, հալէպցի, քեսապցի, պոլսեցի, յորդանանցի եղբայրներս: Այսօր ձեզի փոխանցելիք լաւ լուր մը եւ սրտաբուխ քանի մը խօսք ունիմ:

– Ծօ Չամմօ, հիմա ճառախօսելու ժամանակ է: Կոլտֆինկը կոչուած վաճառականի մը հրաւերով հաւաքուած՝ գործի համար եկած ենք հոս, տեղեկացուց մէկը...

– Այդ հրաւերները ձեզի ուղարկողը ես էի,– ըսաւ Չամմօ ինքնամփոփ: Բոլորը ապշած՝ Չամմօն կը դիտէին:

Մթնոլորտը պրկուած էր:

Շինականը մօտեցաւ գրականին առջեւ, ուսերը կախ՝ վրան-գլուխը ժողվեց, սեւ ու թափանցող մայրածըր... սապէս... մէյ մը շուրջը բոլորելէ ետք, սկսաւ խօսիլ:

– Ծննդավայրս ձգելով եկայ հաստատուելու այս չոր ու ցամաք քաղաքը: Առաջին օրէն իսկ խորթ էր այս միջավայրը ինծի համար եւ մինչեւ օրս խորթ կը թուի ըլլալ, այնքան՝ որքան խորթ են ձեր ապրումներն ու առօրեայ կեանքը: Միշտ կը մտածեմ ու կը հարցնեմ ինքզինքիս, թէ հոս գաղթելով իրաքանչիւրիս հոգեկան աշխարհէն ներս ի՞նչ անեցաւ... Այս հիւրընկալ երկինքը ինծի խորթ կը թուի: Այս կղզիին վրայ ինքզինքս բանտարկուած կը զգամ: Ես կարօտցեր եմ իմ ծննդավայրիս: Ես Կարօտցեր եմ իմ մտերմիկ ու ցեխոտ փողոցին, հօրենական իմ խլիւլած խրճիթին, իմ ընկերներուն, եկեղեցիին, դպրոցին, հողին, ջուրին, ձիւնոտ զիշերներուն եւ իմ թաւիի ընկերոջ՝ Ապու Նիկողոսին: Հիմա կը հասկնա՞ք, թէ ինչու կ'ուզէի միշտ վերադառնալ...

Դէմքին վրայ ծանր թախիծով մը վերջացուց խօսքը ու երկշոտ մայրածըր շրջեց բոլորին վրայ: Մենեակէն ներս բացարձակ լռութիւն կը տիրէր: Մտած էին դէմքի արտայայտութիւնները, բոլորը սնքած էին տեղւոյն վրայ:

Միայն Չեառիկ Ջաւէնն էր, որ կրցաւ բերանը բանալ:

– Չամմօ... ընկեր... եղբայր... քու ցափղ ու տառապանքիդ մէջ մի՞նակ չես: Մենք ալ նոյնպէս կը զգանք ու կը տառապինք ծննդավայրի կարօտէն...

– Թո՛ւչքս... Դեկտեմբեր 13, ժամը չորսին է,– ըսաւ Չամմօ ու տարտամ քայլերով դուրս ելաւ:

*
* *

Կահ-կարասի ինչ որ ունէր՝ Կիլուպիի հայ ընտանիքներուն միջեւ բաժնեց: Քովը մնաց քանի մը գիրք, ձեռքի նոյն պայուսակը, որ Հալէպէն հետը բերած էր, որուն մէջ կային քանի մը գուլպայ ու ճերմակեղէն: Այդքան միայն: Երբ թոյլքի օրը հասաւ, պայուսակը առաւ թեւի մէջ ու օդակայան գնաց:

Շա՛տ զարմացաւ, երբ օդակայանին մէջ իր շուրջը հաւաքուած տեսաւ բարեկամ ոսկերիչները, որոնք զինք ճամբու դնելու եկած էին: Տխրութիւնը քանդակուած էր բոլորին դէմքին վրայ : Ա՛լ չէին կատակեր, ոչ ալ կը հայիոյէին իրարու: Ժամ Պալման Կարոն էր, որ պրկուած լոտֆիւնը խզեց: – Է՛էէէ՛է՛, Չամմօ, կ'երթաս կոր, հա՛, միշտ կը խօսէիր երթալու մասին, բայց օր մը մտքես չէր անցներ, որ իրապէ՛ս մեզ ձգելով կ'երթաս...

Չամմօ չպատասխանեց: Մելամաղձոտ ժպիտ մը կար շրթներուն վրայ: Կաշկանդուած քայլերով սկսաւ յառաջանալ դէպի օդակայանի պաշտօնեան, ձեռակերպութիւնները աւարտելու համար:

– ՉԱՄՄՈՕՕՕՕՕՕՕ... – պոռաց Բաթ-Բաթ Հրաչը յանկարծ բոլորին ընդմէջէն, – ՉԱՄՄՈՕՕՕՕՕՕ... կ'երդնում պատուոյս վրայ... նահատակուած պապուս վրայ... եթէ միտքդ փոխես ու հոս մնաս... եթէ միայն... շաբաթը երկու օր մեզի այցելես, կարդաս, երգես կամ քանի մը ճոջ պատմես... եթէ միայն մեզի հետ քանի մը ժամ անցընես... կը խոստանամ, որ ասկէ ետք հէ՛շ աշխատելու-մաշխատելու պէտք պիտի չունենաս:

– Եօ Չամմօ, մտիկ ըրէ՛... հայուն խոստումը բերմէն չ'ելեր, սիրտէն կը քիսի: Եթէ վազ անցիս երթալէն, եթէ մեզի հետ մնաս, կը խոստանամ, որ քաղաքին մէջ մեզի մօտ յարկաբաժին մը պիտի վարձեմ բեզի...

– Եթէ ուզես, ես ալ ամէն շաբաթ տարբեր... – Գրիգորն էր խօսողը...

Շինականը պահ մը, միայն պահ մը վարանեցաւ: Ապա՝ ժամացոյցին նայեցաւ ու ըսաւ.

– Տասը վայրկեան մնաց: Թոյլքս ժամը չորսին է...

Մարտի 18, 1997
Միլոնի-Աւարայիս


ԹՈՐՈՍ ԶԻՆԼԵՆ

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա
Շ
Ն
Ա
Ն
Կ
Ե
Ր
Պ
Ա
Ր
Ա
Ն
Ա
Փ
Ո
Խ
Ո
Ի
Ս
Ն
Ե
Ր
Ը

Սաւառնակը կը թռչէր,
արեւին մէջ՝ կը լողար:

Սաւառնակին հետ ճուղուած՝
մենք խորացանք աշնան մէջ:
Բլուրներուն, դաշտերուն,
անտառներուն ծաւալուն՝
հրաբուխի պէս ժայթքած
կ'իջնէր աշունը անսամա...
Բոսոր ծառեր բոքոքած՝
կ'այրէին լուռ, անհրդեհ:
Պղնձագոյն ու խանձուած տերեւներ
կը հոսէին լաւայի պէս անարգել...
Կախարդած էր աշունը՝
դիւքանձով սեւ, կործանիչ
եւ կը տանէր մեզ իր հետ
հմայճով խոր, վարակիչ...



Ճիւղերէն վար ու անդին
կը ջրվիժէր իր ոսկին:
Օ՛, մութ ոսկին աշունի.
ոսկիին պէս հանքերու՝
արծած քրտինք ու արին:
Խոստովանանքն էր գուցէ
ոնիրներուն մեր դաժան՝
այստեղ պեղուած, յայտնուած:
Գուցէ վայրն էր հատուցման:
Ջրվէժին տակ աշունի
կը լողային մտացիր՝
մեր այսերէն հալածուած:



Եղանակները նախկին՝
դարձած օշինդր ու օշնայ,
մեզ ձգեցին առանձին
յուշերուն դէմ անխնայ...
Մենք խորացանք աշնան մէջ,





Թէ մեր ներքին տարածքին...
Սաւառնակը շուք կը ձգէր
շարժական-

բազէ մըն էր գիշատիչ,
որ անցեալէս կը ճշդէր,
նշգրտութեամբ մը դաժան,
թիրախը իր տատանող.
կը սլանար, վար կ'իջնէր,
կը բզկտէր գոհը իր,
կը ձգէր զայն կարեւոր...

Հրդեհներուն մէջ աշնան
կը ննմանքին մեմ անձայն:
Թռիչքները մեր ներքին՝
կը վերածուն անձկալից
գահավիժման սարսափի:
Պոռթկումին դէմ աշունի
միշտ կը մնամք անպաշտպան...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

ԸԼՀԱՌԻՆԻ...

Հրաւեր ունի՞մք երգահանդէսի մը ներկայ ըլլալու: Մեր քնակարանային սահմաններէն դուրս վայր մը կը գտնուի հանդիսասարահը. Արեւմտեան Պէյրութ, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի հոլ», կամ՝ «Չեփըլ» կոչուած հանդիսասարահն է: Խելահասութեան մեր տարիներէն խուած անուն մը, որ հրապուրած է բազմահազար հանդիսականներ ամէն անգամ, որ մակարդակ արտայայտող հանդիսութիւն մը սարճուած է հոն: Երգահանդէսներ, նուագահանդէսներ, դասախօսական կարեւոր հանդիպումներ, եւայլն: Ընտրանի հասարակութեան մը ժամադրավայրը դարձած էր «Չեփըլ»: Մայրաքաղաքի մերձաւոր ու հեռաւոր շրջաններէն, արուարձաններէն արուեստասէրներ, գեղեցիկիմ պաշտամունքը ունեցող լիբանանցիներ: Հոն ներկայ կ'ըլլային ճայնայէն մեր երկրին մէջ քնակութիւն հաստատած դիւանագէտներ, քաղաքագէտներ կամ գործարար անուանի մարդիկ, որոնք քայտը կ'ուսնեցային հանդիպելու Պէյրութ ժամանած հոշակաւոր արուեստագէտներու, վայելելով անոնց տաղանդին արգասիքները:

*
* *

1975 Ապրիլէն 1997 Մարտ ամսուան միջեւ մօտաւորապէս 22 տարիներու տարածութիւն մը կը սաւառնի: Ահաւոր քաղաքիւն մը մեզ քաժնած է անցեալի գեղեցիկ ու յիշարժան օրերէն: «Չեփըլ» մնացած էր մայրաքաղաքի արեւմտեան շրջանին մէջ, ենթակայ լիւածութեան: Արտասահմանէն արուեստագէտներ չէին ժամաներ: Մշակութային թէ ընկերային միութիւններ չէին կրնար ձեռնարկներ կազմակերպել: Կանգ առած էր՝ Լիբանանեան պատերազմին ահաւոր ու անպաւնելի բռնկումներէն: Որքան ալ խուսափիմք «պատերազմ» քառը յիշատակելու փորձութենէն, մօտաւոր պատմութիւնը կը պլլուի մեր սրունքներուն, մեր քաղուկներուն, անկարելի դարձնելով շարունակութիւնը վկայութիւններու, կրակով գրուած ճակատագրին:

Ստիպուած ենք անգամ մը եւս յիշատակելու ճայն չարաքաստիկ քառը, որպէսզի կապած չըլլանք ոտքերը մեր յառաջընթացին, եւ կարենանք շարունակել մեր ճամբան դէպի Ամերիկեան համալսարան, 22 տարիներու մշուշոտ անցեալ մը նեղելով:

*
* *

Օրիորդ Ազնիւին հետ ժամադրուած ենք. ինքնաշարժը ինք պիտի վարէ: Անոր պարտականութիւնն է նախօրօք ստուգում մը կատարել մայրաքաղաք առաջնորդող մարմաներու «հագեցեցման» մասին: Անշուշտ, մարմաներն ալ ունին իրենց նախատագիրը: Անոնք ենթարկուած են մարդոց որոշումներուն, քննարկներուն, նաշակին ու հետանկարային դատողութեան: Պատերազմը շատ քանիք քանդեց մայրաքաղաքին մէջ. ո՛չ միայն քանդեց հոգիները մարդոց, այլեւ քակեց մարմաներ ու կամուրջներ, այրեց-փշրեց առեւտրական հաստատութիւններ, շուկաներ, հրապարակներ, մատուցեց տրուող վաճառատուներ, հանդիսասրահներ, շարժակարի սրահներ, մշակութային կեդրոններ, արուեստի տուներ, եւայլն...

Ազնիւ հարցուց իր դպրոցի տնօրէնութեան, քանի մը պաշտօնակիցներու, որոնք իրմէ առաջ գուցէ մէկ-երկու անգամ նեղեց ըլլալու էին Պէյրութի արեւելեան շրջանէն դէպի արեւմտեան շրջան առաջնորդող կիսաւեր մարմաները: Տեղեկ էին պատահմամբ կամ անձնական փորձառութեամբ, թէ կարելի էր նաւահանգիստը եզերող լայնիկի մարման օգտագործել, անցնելու համար «Պապ Իսրիս»էն, ապա՝ յառաջանալու դէպի «Հաուզ Սաաթէ», ետէր՝ «Մըհաւաթա Տիէ», ու քիչ ետէր արդէն հասած կ'ըլլանք Ամերիկեան համալսարանի դարպասը:

Քիչ մը իր քաղած ցուցմունքներէն, մասամբ՝ խոտոր դար առաջ ապրուած փորձառութիւններէն՝ իբրեւ Լիքանանի քաղաքացի, Լիքանան, որուն աշխարհագրութեան ծանօթ էինք երկուքս ալ՝ հարաւէն հիւսիս, Շուֆէն՝ Քեսրուն: Ինչո՞ւ կորսուէինք սա ասի մը հողին վրայ...

*
* *

Ինքնաշարժ նստած ենք Պուրն Համուտէն, մեր ուղղութիւնը առած ենք դէպի «Քարանթինայի «օթոսթրատ»ը, հոնկէ քայլ մը անդին արդէն նաւահանգիստն է:

Մեր աջին ծովն է, չենք կորսուիր, ըսաւ Ազնիւ՝ իրեն յատուկ հանդարտութեամբ: Այս հանդարտութիւնը ինքնին մեծագոյն վստահութիւնն է. ինչո՞ւ կասկածիլ, թէ կրնաս մարման կորսնցնել: Իրար անցնելու ոչ մէկ պատճառ...: Օրիորդ Ազնիւին հանդարտութիւնը վստահութենէն վեր քան մըն է: Այդ հանդարտութեամբ կրնաս մոյնիսկ դժոխք երթալ իրեն հետ, միշտ հաւատալով, որ դժոխքն իսկ դրախտի կը վերափոխուի Ազնիւին ուղեկցութեամբ...

Բարեկամուհիս, մարեգրի փառքները կարդալով՝ կը յառաջանայ, առանց մոռնալու, թէ մեր աջին ծովն է...

Ահաւասիկ, հոս գրուած է «Ինչու Ռիստ Սալի»-ն մեք պէտք չու-

նինք այդ կողմը շեղելու: Մեր ձայնը պետք է առնենք, առանց հեռանալու ծովուն դրացնութենէն:

—Այս կողմերը «Հաժ Տառու» սրճարանը պետք էր ըլլար, — յիշեցուցի Ազնիւին, որ, ըստ երեւոյթին, ծանօթ չէր իրեն: Ճիշդն ըսելով ես ալ միայն անունը գիտէի այդ սրճարանին, քիչ մը հեռուէն տեսած էի անոր ծովափնեայ դարպասը, ուր մօտեցողը արդէն կը լսէր արեաց մոռուչը...

—Կը կարծեմ, որ «Պապ Խորիս»ը անցանք...

—Դաշտի վերածուած է: Ո՞ւր են համբաները հիմ օրերու, — ըսաւ Ազնիւ այնպիսի շեշտով մը, որմէ վախ կը ծորէր, բայց ինք զգաց, որ իր այդ յայտարարութիւնը կրնար կասկածի շեղը մը փայլեցնել միտքիս մէջ, ամփոջապէս խնդալով անիցուց:

—Ձեռք կորսուի, մի վախճար, սա ափ մը հողմ է: Ահա այս մոր փլաճը, — ըսաւ ինքնաշարժին կշռոյթը թուլցնելով, — «էր փոքր»:

Ջարմանա յայտնեցի ամփոջական հակազդեցութեամբ:

—Բայց ինչո՞ւ օղակայանին ցուցատախտակը հոսկէ սկսած են: Արդեօք համբա՞ն շեղեցինք անգգալարար...

—Մի վախճար, դեռ ժամը եօթուկէս է: Միմչեւ ժամը ութ աշխարհը կը չափենք:

Լոնցի. ճշմարտութիւնն էր, բայց վստահութիւնս՝ Ազնիւին հանդարտութեան, ճեղք մը կը բանար, հաթոտութի պէս բան մը, որ գուցէ շուտ միանար:

Ազնիւ անդրադարձաւ, թէ դէպի ձայն մեր թեմումը երկար տեսած է: Փոքր հրապարակ մը տեսանք, բոլորակով մը համբաները չորս-հինգի բաժնող: *Ջլէշներէն մէկը ցոյց կու տար Եռւնիկըրսիժի:* Ահաւասիկ, Ամերիկեան համալսարանին ցուցատախտակն է. մօտեցանք...

—Վերջապէ՛ս, — ըսի լայն շունչ մը փաշելով, — գտանք մեր համբան: Դարպասն ալ ձեւը չէ փոխած: Արդեօք արտօնուած է մերս մտնել ինքնաշարժով:

—Քանի անգամ ըսի քեզի, որ չվախճաս, չենք կորսուիր...

Ձէի վախճար, բայց կրնայինք համերգին ուշանալ: «Ձեփըլ»ի պատասխանատուները ճիշդ ժամանակին կը գոցեն սրահին դուռները: Հին օրերուն այդպէս էր օրէնքը: Հոս ճշդապահութիւնը կը յարգուէր: Եթէ ուշանայինք, այս ցուրտ օրուան մէջ դուրսը կը մնայինք առնուագն տալը վայրկեան, միմչեւ մէկ-երկու երգի կատարում:

—Սա գիտէի, որ չէինք ուշանար. այդ պատճառով ալ կանուխ համբայ ելանք: Այս ալ փորձառութիւն մը եղաւ. գիտե՞ս ինչ կը նշանակէ 22 տարի ետք հոս հանդիպիլ իրարու, հին բարեկամներու, հին օրերու պէս:

*

* *

Արդէն կանգնած ենք «Ձեփըլ»ի մուտքի դրան դիմաց շարուած երեք-չորս սանդխատներու մօտ:

—Ոչինչ փոխուած է: Նոյն սանդուխները: Նոյն դռնակները՝

digitised by A.R.A.R.®

կողմնակի բացումը: Մադթանք մը ըրէ, Ազնիւ, քաղծանք մը արտա-
յայտէ...: Կարծես հեռաւոր երկրէ մը վերադարձած ենք 22 տարի
ետ, ու ըսել, թէ հագիւ չորս-հինգ քիլոմետր տարածութիւն մը մեզ
կը բաժնէ այս գօտիներէն:

—Մադթանք, քաղծանք,— կրկնեց Ազնիւ մեղմ կերպով, մինչ դը-
րան առջեւ կանգնած հիւրընկալ երիտասարդուհիներ յայտագրի թեր-
թեր կը յանձնէին մեզի:

Յառաջացանք դէպի պատմական սրահը: 150 տարուան կեանք մը
ունեցած ըլլալու է այս «Զեփըլ»ը, Ամերիկեան համալսարանի ժողո-
վարան—մատուռը, աղօթավայրը: Հին կառոյց մը, կամարակապ, ինք-
նուրոյն ճարտարապետական ռեմով, որուն համար կ'ըսէին, թէ սքան-
չելի *աքուսթիք* ունի, ամէնէն մեղմ ձայնն իսկ կը հասնի մինչեւ
ետեւի նստարան:

Նստարանները կարծես նորագուած են բազկաթոռները: Կը նըս-
տինք կողք կողքի: Կը նայինք գմբէթաւոր առաստաղին, կամարներուն,
քեմին: Միեւնոյն կառոյցն է, բայց կարծես նոր ներկուած, գունէ այդ-
պէս թուեցաւ մեզի: Այնպիսի զգացում մը ոգողած էր մեր էութիւնը,
որ կարծես կը սմբեցնէր մեզ, մեր հոգին կը ճզմէր, հին-հին օրերու
դէմքերը վերյիշելով: Որքա՛ն գեղեցիկ պահեր, հրաշալի հանդիպումներ
եկած ու անցած են այս սրահէն, անոր խորհրդաւոր կամարներուն
մէջէն: Կարծես իւրաքանչիւր խորշ խօսք մը ունի արտայայտուելիք...:
Հոս երգած են մեր յաւագոյն երգիչները, երգչուհիները, սփիւռ-
ճահայ արուեստագէտներ հիւրընկալուած են այս քեմին վրայ, նոյն-
պէս՝ հայրենական արուեստագէտներ: Այսօր եկած ենք ունկնդրելու
անոնցմէ մէկը, արժանաւոր մը, «սփրանօ քոյրաթուրա» մը...

—Ինչեք յիշեցուց այս սրահը: Մի մոռնար, որ 22 տարի անցած
են հին օրերէն: Ինքզինքն կարծես ծերացած կը զգամ: Նոյն ատեն
այն ապրումը ունիմ, թէ մեռած էինք եւ յարութիւն առինք...: Ողջ
ենք այսքան գոյութեն ու ջարդերէն, մահասփիւռ փուլումներէն
ետք...: Աստուած օգնեց մեզի, Ազնիւ: Հրաշքի համագոր է այսօր
մեր հոս ներկայութիւնը: Ինքզինքն երիտասարդացած կը զգամ...

—Ես ալ նոյն զգացումները ունիմ,— ըսաւ Ազնիւ,— տեսա՞ր, որ
քեզ ողջ-առողջ քերի այս սրահը. վախճ անցա՞ւ...

Ճամբան կորսնցնելու վախը չէր իմա, այլ այն միւս սարսափը,
գոր կը ստեղծէ ինչ ծննդավայրիդ անճանաչելի դարձած ըլլալու
պատկերը: Պարն չկար, «Պապ Իտրիս» չկար, սինէմա «Ռիվոլի» կամ
սինէմա «Մեթրոփոլ» չկային: «Սըրսոք»ի հողային տարածքէն անցած
ենք ու անտեղեկ...: «Օթմաթիք»ը չկար...: Կորուսած էինք մեր
երկրին մէջ: Յիշատակներն ալ փուլ եկած էին: Ես կը փնտռէի յի-
շատակներ՝ «Ռիւ Ֆոշ»ի, «Բլեմանսօ»ի, «Ռիւ տը Ֆրանս»ի փոշիներ-
ուն ներքեւ: Անուններ կան մեր միտերուն մէջ, բայց տ՛ր մնացած
են ճամբաները երբեմնի, պողոտաները՝ խորհրդաւոր ու հմայիչ:
Կողմնակի տեսանք Քափիւսէններու եկեղեցին, «Սուր Սըրսոք»ի հնա-
մենի մզկիթը: Պահպանած են զանոնք իբրեւ խորհրդանշ համակեցու-
թեան, իբրեւ նոյն Աստուծոյ հաւատացող ժողովուրդի աւանդութիւն...

*
* *

Սրահի մէջ կը ապաստենք յուզումնախառն հիացումով, զարմանքով ու տարօրինակ զգացողութեամբ, որոնց մէջ տիրապետող մեր ռոջ մնացած ըլլալն է՝ 17 տարիներու յաջորդական փութումներէն ետք...

«Ուշացան. ժամը ութ տասը վայրկեան անցաւ արդէն: «Ժամադրութիւն» ըմբռնումը խախտում արձանագրած է...: Ինծի այնպէս թուեցաւ, թէ նամբան կորսնցնողները քաղաքիւ եղած են...

Կարճատեւ լռութիւն մը: Մեր աչքերը կը դարձնէինք սրահին աջ ու ձախ կողմը, կը զննէինք քեմը, որմէ քաւական հետու տեղ մը յատկացուցած էին մեզի: Մենք՝ սովորական, «շարժային» հանդիսականներ, նկատուած էինք. հիւրերը, պաշտօնական դէմքեր առաջին կարգի աթոռներուն տէրերն էին: Կը դիտէինք մոր հասնողները, անունները կու տայինք տեղացի դիւանագետներու, քաղաքական դէմքերու, կուսակցականներու: Բացակայներու անունները կը յիշէինք. այսինչը չկայ, այնինչը ինչո՞ւ չեկաւ...: Ու դարձեալ մեր միտքերուն սլաքները կը հետանային ներկայէն ու կանգ կ'առնէին անցեալի շփոթ ու երանելի օրերուն վրայ:

«Գիտե՞ս ինչ յիշեցի սա պահուն:

Ազնիւ հետաքրքրութեամբ կեդրոնացաւ ըսելիքս վրայ:

«1973 կամ 1974 թուականներուն կը վերաբերի ըսելիքս: Երիտասարդ երգիչ մը ունէինք, Կիրանանի երաժշտանոցի դասական բաժնէն շրջանաւարտ *պարիթոն* մը: Երգահանդէս մը պիտի ներկայացընէր, ու այս սրահը լեցուած էր արուեստասէր հանդիսականներով: Է՛հ, այդ օրերուն արուեստը արժէ՛ր ունէր, արուեստագետը՝ յարգելի անձնաւորութիւն:

«Իսկ այսօ՞ր,» հարցական ընդմիջեց Ազնիւ, անշուշտ ափսոսանք մը դրսևորելով:

«Այսօ՞ր...: Այսօր միևնույն իսկ տասնչորս տարեկան իսկ տղան կը ծափահարենք, անոր չգիտցածը, սգիտութիւնը եւ ամօթալի ելոյթները, ու իրրեւ քաջախիղճ՝ առաջնորդելով զայն պատկերասփիւռ ային քեմերը, ռըկէ կը արտրոնջայ, կը բզկտէ իր փողը, թէ սիրած մը ունի, որ հեռացած է իրմէ:

«Տասնչորս տարեկան եւ կորսուած սիրուի՞ր կը փնտռէ...: Աստուած իմ...

«Ճիշդ ա՛յդ է հարցը. եթէ յետէ մէկը համարձակութիւնը ունի ամօթը մէկ կողմ դնելու, ծիծաղելի ըլլալէ չվախնալու, կ'ընէ ռեզածը, զարմացնելով շրջապատը: Ծափահարողներն ալ քարոյական սնանկութեան մասնուած են. չեն կրնար զանազանել ճիշդը՝ սխալէն, օգտակարը՝ անօգուտէն, հանելին՝ տհաճելիէն եւ, վերջապէս՝ մարդկայինը՝ անմարդկայինէն:

«Բայց մի մոռնար, որ երգիչի մը երգահանդէսին մասին պիտի խօսէիր:

«Իրաւ որ մեր աս շուկայի շփոթաւարները մեզ պիտի խեղ-

թեցնեն: Վերջապես, խենթերու շրջանակին մէջ ապրողները կրնան վարակուիլ...: Ըսեմ, թէ հանելի օր մը, երեկոյ մը ապրելու յայտով եկած էի ես ու բարեկամուհիս, Պուրն Համաւտէն մինչեւ «Ձեփըլ»: Երիտասարդ երգիչը ելաւ բեմ, ծափահարեցինք, խրախուսեցինք...: Երիտասարդ որ կ'ըսեմ, չկարծես թէ տասնութ-ժամ տարեկան էր: Շրջանաւարտ էր Պէյրութի Պետական երաժշտանոցէն, մօտ հինգ-վեց տարուան բեմական փորձառութիւն ալ ունէր: Յայտով էինք, թէ հանելի երգահանդէս մը պիտի ըմբռնէինք...

Երգիչը բեմ եկաւ, ծափահարեցինք, երգեց առաջին երգը, որ արեւմտեան երաժիշտի մը մէկ ստեղծագործութիւնն էր: Ետանդով երգեց, խանդավառ էր, ներկաները լաւ ծափահարեցին, որպէսզի յաջորդ երգը ըլլայ առանել փայլուն ու ռզնւոր: Երկրորդն ալ երգեց, բայց երգի վերջին ձայնակները խախտուեալ արձանագրեցին, շեղեցան իրենց սահմաններէն ու ինկան անորոշին մէջ: Երիտասարդը բեմէն գնաց Բուլիս, «Ինքինք հաւաքելու», թէ այլ հարց մը լուծելու: Վերադարձաւ բեմ: Կրկին ծափահարութիւն...: Ներկաները հարցական կը մայէին իրարու: Արդեօք ինչո՞ւ համար հագիւ երկու երգ երգած հետագայ բեմէն, կարծես թաշկինակ մը մոռցած ըլլար Բուլիսներուն մէջ կամ այլ հրահանգ մը փոխանցելու հարցը կար: Շտկուեցաւ, դիրքաւորուեցաւ, նայուածքը դարձուց դաշնակահարին, գլխու թեթեւ թեթուեցաւ հրահանգեց անոր, թէ կրնար սկսիլ երրորդ երգը: Երգիչին ձայնին մէջ թուութիւն մը կար. չէր կրնար գիշտ ձայնը արտաբերել: Նոր գիշ մը եւս, ու ձայնը յամառեցաւ խլանալ, խեղդելի, հանգուցաւորուիլ: Երգիչը, լուռ ու շշմած՝ կը մայէր սրահին մէջ զարմանքով զինք դիտող ներկաներուն: Բայց կարծես աղէտը պատահած էր: Գիշ մը եւս երկարեց ու դաշնակահարին օգնութեամբ հետագայ դէպի Բուլիս: Երկու վայրկեան սպասողական շփոթ վիճակ տիրեց, ապա՝ բեմին վրայ յայտնուեցաւ «Ձեփըլ» սրահի յանձնախումբէն երիտասարդ մը, որ յայտարարեց.

–Երգիչը տրամադիր չէ երգելու. անհանգիստ է...

Կողքիս նստած հասուն տարիքի հանդիսական մը, փորձառու մարդու եւ իրազեկի ինքնավստահութեամբ՝ ըսաւ.

–Խթանիչ դեղ առած է, որպէսզի առանել ետանդուն ու ռզնւորուած երգէ, բայց ըստ երեւոյթին, «տօգ»ը անելի առած է...

Հանդիսականները, յաւաքեցին՝ մէկիկ-մէկիկ դուրս եկան սրահէն, պատմական երեկոյ մը ապրած ըլլալու տրտուեալ փորձառութիւն մը իրենց ուսերուն վրայ ծանրաբեռն...

Ազնիւ մտիկ ըրած էր պատմութիւնը Բաներեմ-Բանդարս տարի առաջ, միեւնոյն սրահին մէջ պատահած: Ու զարմանքով կը կըրկնէր.

–Ինչե՞ր յիշեցի...: Թուամք այսօր նման բան չի պատահիր:

–Ձեմ կարծեր, Աստուած մի արասցէ...

–Ճիշդ ես. Աստուած մի արասցէ...: Դաններկու տարի ետք մայն Բաղաֆի բնակիչ ըլլալով՝ հագիւ կարողացանք մեզի շատ հարազատ այս սրահը հասնիլ, ու եթէ այդ էին օրուան տեսարանը կրկնուի,

յուսահատութիւն կու գայ մեր վրայ, երեկոն կը խանգարուի, մեր հոգիները կը պղտորին...: Եկանք որ վայելեմք այս երիտասարդ երգչուհին, որ մեր հայրենիքէն ժամանած է...: Կարծես թէ պիտի սկսկին վերջապէս:

*
* *

Յաջող էր ձեռնարկը. աւանշելի *թորրաթուրա* մը, ջութակի ձայն արտաբերող նկուռ նիչեր: Գոհար Գասպարեանը կը յիշեցնէր: Դադարին՝ Ազնիւ կարծիքս հարցուց:

—Հոյակապ ձայն, մաքուր, նուրբ: Կեկորդին մէջ կը խաղայ ձայնը, կարծես փոքր գնդակ մը ըլլար իւրաքանչիւր նոթ կամ ձայնանիշ: Ուզած տեղը կը նետէր զայն, դէպի առաստաղ, դէպի պատերը, դէ պի մեր ականջները, մեր սիրտերը: Արուեստ է անկասկած: Արուեստով ստեղծագործուած նիշ, ակադեմական խնձոյք: Մասնաւորաբար օտար *օփերան*ներու *արիան*ները կը մեկնաբանէ կատարեալ:

—Տեսնեմք յայտագրին երկրորդ քաժինը ինչպէս պիտի անցնի. «*Սայաթ-Նովա*» կայ, «*Կիլիկիա*» կայ, արդեօք կը պատշաճի՞ն իր հագագին: Կանաչեանի «*Օրօր*»ը պարզապէս զգացումներու խորձ մըն է, կարծես մոմի տրցակ ըլլար, պատրաստ՝ բռնկելու եւ լուսաւորելու: Անուշ բուն կը քերէ մօր ու մանկան...

Լսելէ ետք յայտագրին երկրորդ մասն ալ, Ազնիւ ըսաւ.

—Պիտի ուզէի, որ յանկարծ սրահ մտնէր Օֆելիա Համբարձումեանը, կատարելու համար գոնէ Սայաթ-Նովայի «*Դու է՛ն դիմէ՛ն*»ը: Վերջին հաշուով մեր Սայաթ-Նովան օվերա չէ, այլ՝ արտի ու մտքի, հոգիի ու կեանքի երգ, սիրոյ ու ցաւի երգ, հայու երգ...

—Մեկնաբանութիւնը կը շարունակեմք վերադարձի ճանապարհին,— ըսի Ազնիւին ու գոհունակ տրամադրութեամբ ուղղուեցանք դէպի ելքի դուռ, մեզի հետ դուրս հանելով հին-հին յուշերու ծանր պարկը մը՝ մեր ուսերուն ընդունած անծանօթ քաղուկներու զօրութեամբ...

Նյանք սրահէն, անցանք համալսարանի պարտէզները իրարմէ քաժնող կածանային անցքերէ, դարպաս հասնելու համար:

Արդէն մօտեցած ենք ճամբեզրին կայք «հաստատած» մեր կառէին: Անձրեւը մաղ-մաղ կը շոյէր մեր մազերը եւ թեթեւ բամի մը իր ակունները ցոյց տալու փորձեր կը կատարէր, մեր ականջներուն մէջ փափսալով սաստկացող ցուրտին արագասոյր հեւքը:

—Անձրեւը պիտի սաստկանայ, բամին կը սպառնայ,— ըսի Ազնիւին, որ առանց կարեւորութիւն տալու հետզհետէ խստացող կլիմային՝ իր հանդարտութենէն ոչինչ կը զիջէր, արագ շարժումին ոչ մէկ խլրտում:

—Թող անձրեւէ, բամին ալ թող փչէ: Անապարելու բնաւ պետք չունինք:

Բարեկամուհիիս այս հանդարտ շարժումները եւ մտածումները
իմծի յիշեցուցին երգ մը, գոր մընջեցի։

*Թող փչէ քամին, պաղ-պաղ՝ երեսիս,
Վերէն՝ ամպերէն, սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ ուզէ թող փչէ՝ հիւսիս,
Յուսով եմ, վաղ-ուշ, գարուն պիտի գայ։*

–Այդ երգը ուրկէ՞ որ յիշեցուցիր,– ըսաւ Ազնիւ, որ վերջապէս
ս քացած էր կառքին երկու դուռները...

–Ներսէ տաքուկ է եղեր...։ Իրաւ որ օդը խստացաւ...

–Հոգ մի ընէր, եթէ կ'ուզես՝ վառարանն ալ քանցեցնիմ։

Ես լուռ հետեւեցայ նոր ճամբայ ելող ինքնաշարժին ուղղութեամբ։
Դիմացի ապակիին վրայ անձրեւի կաթիլները կը շարունակէին ուլունքի
նման։

–Կը տեսնե՞ս, ճիշդ ժամանակին գտանք մեր տեղերը։ Տասը վայր-
կեանէն կը հասնինք Պուրն Համուտ, մանաւանդ այս ժամերուն ցամ-
քաները քաց կ'ըլլան։

Հագիւ քանի մը մեքր յառաջացած էինք, դիմացէն վերադարձող
կառքի մշմարեցիմք։ Մեր առջեւէն սուրացող ինքնաշարժներ կը վե-
րադառնային «տըմի թուր» մը շրջանցելով։

–Բայց ինչո՞ւ կը դառնան. ուրեմն գոց է «Բիմանս» տանող ճամ-
բան։ Մենք ալ պէտէ է դառնանք,– ըսաւ Ազնիւ ու դէկը դարձուց,
ուղղութիւնը շրջեց, յառաջացանք դէպի այն կէտը, ուրկէ ճամբայ
ելած էինք։ Ազնիւ կը մտմտար՝ ուղղութիւնը գտնելու համար։

–Քսաներկու տարի ետք ճամբաները փոխուած են. նորերը քաց-
ւած, հինները՝ փակուած...։ Եթէ ձախտ առնեմ, արդեօք ո՞ւր կ'ել-
լենք...

Ազնիւը մխիթարելու հերքը իմն էր հիմա։

–Մտահոգուելու պէտք չկայ. կը գտնենք ճամբայ մը։ Նախ՝ պէ-
տէ է ձախ թեքիս, միանաւ «Համրա»յի ծայրին, գտնելու համար «Ռիւ
Մասամ Բիւրի»ն։

Ազնիւ տրամաբանական գտաւ թելադրանքս, մտաւ ձախ, ու
ինքնավստահ յառաջացանք։ Անձրեւը սաստկացած էր արդէն ու
ճամբաներուն, մայրերուն վրայ կային շատ քիչ ինքնաշարժներ ու
անցորդներ։

–Եթէ քիչ մըն ալ առաջանաս, Հանրային պարտէզին կը մօտենաս,
ուրկէ քանի մը քայլ անդին կընանք տեսնել «Մըր աշտարակը», ապա
կը հանդիպինք «Ռիւկ»ի կամուրջին եւ գետնուղիին։

–Մի վախճար, սիրելիս, Պէյրուսի մէջ չենք կորսուիր։ Եղածը
քանի՞ մեքրնոց քաղաք է որ...։ Շատ-շատ քիչ մը պտտած կ'ըլլանք,
մանաւանդ որ լուսաւոր են ճամբաները։ Որքա՞ն փոխուած է
մայրաքաղաքը։

–Իրաւ որ շատ փոխուած է,– կրկնեցի Ազնիւին կարծիքը եւ իմ
կողմէ հաստատում մը եւս կատարելով, արժեւորեցիմք լայն քացուած

համբաները՝ ելեկտրական լոյսերով ողողուած: Ճամբագրին ցուցատախտակները լուսանշաններով կը յայտնէին համբաներուն անունները, քառուղիներու ուղղութիւնը: Տեղ-տեղ բոլորակները համալս-բաժիններով նիւղաւորուած:

Ինքզինքն օտար երկրի մը մէջ կը գգամ: Կարծես Փարիզի լուսառդող պողոտաներէն կ'անցնինք, կամ՝ Հոռմի հրապարակներէն: Ուրեմն բաւական փոխուած է մեր քաղաքին պատկերը: Փլատակները չեն երեւիր, անոնց տեղ կան բաց դաշտեր յիշեցնող հրապարակի վերածուած տարածութիւններ...: Հրաշալի մօրութիւններ էին պարզապէս: Հոն կարսութիւն՝ շա՛տ քնական...

Որքան փոխուած է մայրաքաղաքը...: Այսօր տարբերութիւն հին ու նոր օրերու միջեւ, զարմանալի է: Բայց յիշատակներ եւս քանդուած են, սիրելի Ազմիւ, այս շուկաներուն, պողոտաներուն եւ քնակարանային շրջաններուն մէջ: Ո՛ւր մնացած են երբեմնի համապարհները, որոնք օղակայան կը տանէին մեզ: Կամ՝ դէպի ժողովրդները, ծովեզերեայ լայնահուն պողոտաները, որոնք հեմելու ախանջելի վայրեր էին:

Մովեզերքի ժողովրդները գրեթէ նոյնն են մնացեր. կ'ըսեն, թէ հոն ամէն առաւօտ շատ կանուխ ժամերու քայելու մարզանք կը կատարեն քաղաքացիներ: Փոփոխութիւնները ներքին տարածքին վրայ են, Պուրնէն մինչեւ «Համրա», անցնելով «Պապ Խորիս»էն, «Բլեմանսօ»էն, «Ռիւ Պըշարա Խուրի»էն, «Ռիւ տը Տամաս»էն, «Ռիւ տը Սիրի»էն դէպի Ազգային թանգարան համապարհը եւս ահագին փոփոխութեան ենթարկուած է կ'ըսեն: Ու ամիս մը առաջ, երբ անցայ այդ կողմերէն դէպի Սուրբ Նշան, Ռիստի օրուան ներկայ ըլլալու, նկատեցինք անհամաչափ դարձած Պէյրութ մը, Պուրնէն քիչ անդին Պանդոկներու պողոտային ներկայութեամբ միայն համաչափ «Ռիստ Սուր» հրապարակին վրայ Սուրին արձանը թռած-շոգիացած է, միայն պատուանդանին բոլորակը կը վկայէ, թէ հոն արձան մը կար, հայրենասէր այդ մեծ մարդուն յիշատակը պանծացնող: Կար...

Խօսելով, յիշելով, մտմտալով, անցնալի գեղեցիկ օրերու թաւշեայ քաղաքներուն մէջ թաղուած՝ կ'երթայինք դէպի «Պըրժ Էլ Մըր»՝ ընդոստ գարթօնք մը խոր քունէ, ըսի Ազմիւին:

«Մըր աշտարակը» դեռ չտեսնեմք...: Այսօր ժամանակ պէտք է ը տրամադրէինք անոր հանդիպելու համար: Այդքան հեռանալը շատ էր. խօսքով տարուեցանք...: Յուշերը լաւ վկայութիւններ կը բերեն, բայց կարծես մոլորեցանք, Ազմիւ: «Ռիստ»ն ալ չտեսնեմք...

Մի վախճար, ըսի Քեզի...: Եղածը ափ մը տարածութիւնն է...: Կլոր կը դառնանք ու կը հասնինք տեղ մը...

Ձեմ վախճար, սիրելիս, բայց ժամը 11ին կը մօտենայ, օդը՝ անձրեւոտ: Խանութներ ալ չեն երեւիր հոս, քնակավայրեր ալ չկան...: Ինչո՞ւ ուշադրութիւն չըրինք...

Կեցիր քիչ մը, ըսի թէ վախճալիք բան չկայ: Ահաւասիկ լուսաւոր ցուցատախտակ մը: Ի՞նչ գրուած է...

Ազնիւ դանդաղեցուց ինքնաշարժը, մօտեցաւ մայթին ու կարդաց փրանսերէնով եւ արաբերէնով գրուած ցուցանակը, ալաքներով ճիւղաւորուած: Անծանօթ շրջանի մը անունն էր, Ազնիւ ոչինչ հասկցաւ, շփոթեցաւ, մտահոգուեցաւ: Այս անգամ եւ խրախոյսով մը միտք-թարեցի զինք:

«Վախճալիք բան չկայ, սիրելի Ազնիւ...: Կլոր-կլոր կը դառնանք եւ տեղ մը կը հասնինք, ելք մը կը գտնենք...»:

Քիչ մը եւս յառաջացանք լուռ, հետեւելով լուսաւոր ճամբաներու եւ մեր ժովէն արագ սուրացող ինքնաշարժներու, որոնց թիւը կը համրուէր:

Ազնիւ անգամ մը եւս աչքերը թաղեց լուսաւոր ցուցատախտակի մը վրայ, ուր նշուած տեղանունները անծանօթ ուղղութիւններու հասցէներ կը նշէին: Տրտմութիւնը պատեց հոգիս ոչ այնքան կար-սըւած ըլլալու ճախողութենէն, որքան սա երկրին տարտղմուած վիճակէն, անճանաչելիիմ յանձնուած ըլլալու անոր դիմափոխութե-նէն:

«Այսքան ալ կը փոխուի եղբր Պէյրութի նման եռուզեռով ճաղաք մը,» ըսի մտովի, բայց կը թուի, թէ միտքերս քարձրածայն ըսած եմ, որովհետեւ Ազնիւ անդադար կը կրկնէր իր պատասխանը.

«Կը փոխուի եղբր, ամէն ինչ կը փոխուի եղբր...: Մնայուն ոչինչ կայ այս կեանքին մէջ...: Քաղաքը դեմք ու գոյն կը փոխէ...: Մարդիկ նկարագիր եւ դիմագիծ կը փոխեն, հոգեկան զօրութիւնը կ'ընթերցեն...: Կիները գոյն կը փոխեն. երէկուան սեւ մազերով կիներ յանկարծ դիմացդ կ'ելլէ խարտեաշ կամ շէկ գլուխով, ու կը ժպտի հեզնա-կան: «Ճանչցա՞ր զիս, Թագուշն եմ»...: Յետոյ երկար կը մտածես կորսուած հայ թագուհիի մը մասին, որ իր հայրու գոյնը, նմանելու համար արեւմտեան դեղնաւուն կնիք, որուն հետ դուր ու կեղծ մըր-ցակցութեան բռնուած կը ճգնի ինքզինք պարտադրել չես զիտեր ինչ գոյնի այրերու...»

Մեր մտածումները մեզ քիչ մը եւս հեռացուցած էին մեր ուղղութիւններէն: Սթափեցանք անգամ մը եւս, որովհետեւ կրնայինք այս ընթացքով գէշ անակնկալի մը դիմաց գտնուիլ: Կը նկատէինք, որ ինքնաշարժներու երթեւեկը կը նօսրանար, ու մենք գիշերաշրջիկներու պէս կը թափառէինք լուսաւոր, բայց անծանօթ պողոտաներու վրայ, որոնք սկսած էին մթագնել նոյնիսկ Ազնիւի հանդարտ ու առերեւոյթ անտարբեր տրամադրութիւնը:

«Այսպէս չ'ըլլար, սիրելիս: Քառասունհինգ վայրկեան եղաւ Ամե-րիկեան համալսարանի դարպասէն մեր դուրս գալուն, ու տակաւին... գիշեր ատեն հինգ-վեց վայրկեանէն պէտք է հասնէինք Նահրի կա-մուրջը: Ո՛չ «Մըր աշտարակը» տեսանք, ո՛չ «Ռիկկ»էն անցանք, ոչ ալ ուրիշ ծանօթ ներքնուղի մը...: Ինքնաշարժը կեցուր հօս, մայթին կողմը կենանք, անցորդ վարորդի մը հարցնենք, թէ ո՞ւր կը գլու-նընդհինք:

Ձուլացաւ ինքնաշարժ մը: Ազնիւ ճշակը քանի մը անգամ հնչե-ցուց: Կանգ առնող ինքնաշարժին մէջ կային երիտասարդ մը եւ երի-

տասարդուհի մը. չմտածեցիմք անոնց ինքնութեան կամ գիշերային գրադումներուն մասին: Ազնիւն ու ես միաձայն հարցունքինք:

—Այս համբան ո՞ւր կը տանի մեզ, պարոն...

Երիտասարդը ժծիծաղ մը ունեցաւ, անկասկած խղճալով մեր անգիտութեան ու ըսաւ ծիծաղախառն շեշտով, անշուշտ՝ արաքերէ նով.

—Գիտե՞ք թէ ուր կը գտնուիք:

—Ոչ,— ըսաւ Ազնիւ:

Իսկ ես անպիտան.

—Կորսուած եմք *հախալի* (եղբայրս), չեմք գիտեր, թէ Պէյրութի ո՞ր կողմն եմք...

—Հոս Ուզայի է...: Ո՞ւր պիտի երթաք:

—Տորա,— ըսինք կարն ու կրտուկ, դէպի Տորա ուղղութիւնը գըտնելու յոյսով:

—Տորա...: Ինչո՞ւ այսքան հեռուները եկած էք...

Պահ մը լռութիւն տիրեց: Ըստ երեւոյթին, երիտասարդը կը մտածէր մեզի օգտակար ըլլալու համար, մինչ Ազնիւ ինքն իր շշուշէն.

—Ազնիւ մէկը կ'երեւի: Բովն ալ աղբիկ մը կայ...

—Կինն է կ'երեւի...

—Ինչո՞ւ: Թերեւս սիրուհին է. մարդոց պոռոյտը խանգարեցինք:

Երիտասարդը բաներ մը թելադրեց մեզի ու ըսաւ.

—Սա դիմացի «Իմն փուէն»էն ձախ դարձէք, ետքը աջ թեքում մը ըրէք, յետոյ բռնեցէք օղակայանի համբան եւ յետոյ...

Երիտասարդը զգաց, թէ չէինք կրնար ըմբռնել իր մանուածապատ ցուցմունքները, ու ըսաւ արագ.

—*Ըհհհհհ...* (հետեւեցէք ինծի):

—Իրաւ որ ազնիւ է եղբր տղան,— ըսի,— մարդուն պոռոյտը խանգարեցինք:

—Սիրուհին հետ է, քիչ մը երկար կը շրջին,— ըսաւ Ազնիւ, իսկ ես տրտմեցայ այս ակամայ կատակին համար, որ եթէ իրաւ հաստատում մը իսկ ըլլար, չարութիւն պիտի նկատուէր մեզի համար: Մարդը մեզի օգնէ, իսկ մենք ամբաստանեմք զինք, թէ ապօրինի պըտոյտ մըն էր կատարածը: Թերեւս նշանածն էր, կամ՝ կինը, որ կը վերադառնային ճաշարանէ մը, կամ երգահանդէսէ մը, կամ ընտանեկան այցէ մը...

*
* *

Լիբանանցի երիտասարդը կը չէր իր ինքնաշարժը, մենք կը հետեւէինք իրեն, հանդարտ եւ ուշադիր: Ինք եւս կը վարէր կառքը գրեթէ դանդաղ եւ զգոյշ, որպէսզի իր հետքը չկորսնցնէինք:

Մօտ հինգ վայրկեան յառաջանալէ ետք, մօտեցանք բոլորակի մը, ուրկէ համբարածանի Գիւղատուումներ կը նշուէին սլաքներով եւ տեղանուններով:

—Այլևս մի կարդար այդ ցուցատախտակը, Ազնիւ. տղուն հետեւեալ...: Ժամը տասնմէկ եղաւ...: Գիշերը մայրաքաղաքի փողոցներուն մէջ չմնալ: Եթէ ցերեկ ըլլար, հարցը կը տարբերէր: Շաբաթ մը առաջ, օր-ցերեկով, հայ կիներ կորսուած էին մայրաքաղաքի ծովագերեայ պողոտաներուն մօտ, պանդոկի մը ճաշարանը փնտռելու միջոցին: Անոնք եւս շատ հեռացած են իրենց փնտռած սահմաններէն ու գօտիներէն՝ նախանշի մը ներկայ ըլլալու համար: Նախանշա՞ որ ըսի, ճիշդը չըսի. ձեռնարկին բուն անունը «Պրան» էր. մամուլով այդպէս յայտարարուած էր: Այս բառին իմաստը շատեր չէին հասկըցած, եւ ալ չէի հասկցած: Բառարանը քացինք, կարդացինք, թէ «ուշ ժամու նախանշ» կը նշանակէ եղեր: Իսկ մեր կիները մեծ մասամբ նորօրինակ ձեռնարկ մը կարծած են: Բայց հարցը հոգ չի վերջանար: Պանդոկ «Մարիոթ»ը գտնելու համար հայ կանայք կորսուած են իրենց ինքնաշարժներով, ու փոխանակ ձեռնարկին նշուած ժամը տասին ճաշարան հասնելու, հոն մուտք գործած են ժամը տասններկուէնսին, ուզուածը, պահանջուածը հաստատելով. այսինքն՝ ուշ ժամու նախանշ...: Բայց շատեր ամէջած են «կորսուեցանք, մամուլները փոխուած են ու այս կողմերը տարիներէ ի վեր չենք եկած, նորութիւններէն տեղեկ չենք ըսելու», ստած են, թէ մամուլն շատ խճողուած էր, խառն «թրաֆիք» մը կար, ինչ որ պատճառ եղած էր իրենց երկուքէնս ժամ ուշանալուն: Բայց ճաշարանատէրը ըմբռնած է էշրէֆիէն, Անթիլիասէն եւ նոյնիսկ Պարսէն Համուտէն «ղարպիէ»ի նորակառոյց ճաշարանը առաջին անգամ այցելելու գալիք յաճախորդներուն վիճակը, դասական ախորժալուր երաժշտութիւն ելնչեցուցած է, եւ սպիտակ ձեռնոցներով սպասեակները լեղի սուրճ հրամցուցած են բարձր դասու ազնուափայլ մեր կանանց...

Մեզ առաջնորդող տղան ինծի կը թուէր հեռաւոր անապատներու այլն արաբը, այն ազնիւ մարդատէրը, որ ցեղասպանութեան օրերուն աւազներու կրակին մէջ կորսուած հայու բնկորները, որքերն ու կիները կը փրկէր, գանձէր իր տունը կամ վրանը առաջ-նորդելով...

Ինծի այնպէս կը թուէր, թէ Սուէտական Արաբիոյ, Մեքէի թագաւորին մէկ թոռն էր մեզ առաջնորդողը. Հիւսէյն Իպն Ալի վեհապետին մէկ յետնորդը, որ իր մեծ հօրմէն ժառանգած է բարեարտութիւնը, կորսուածը առաջնորդելու, լեհալիւ տէր դառնալու ազնուական խառնուածքը: Ինքզինքն կարծեցի ըլլալ աւազներու քամիներուն եւ անծանօթին սարսափին յանձնուած մէկը, որ կը յուսադրուի յանկարծ, երկինքէն առաքուած բարի արաբի մը ուղեկցութեամբ, մէկ բառով սիրտ տալով շուարած հայուն. «Ըհաուսի»... (հետեւէ ինծի):

Անապատներուն մէջ եւս, ջարդերու անդորմ տարիներուն, արաբը նոյն բառը գործածեց անշուշտ. «Ըհաուսի»...: Ու մենք չսխալեցանք՝ հետեւելով անապատի ազնուական ուղտապանին, հաւատացեալ արաբին, որուն Ալլահը ռզորմածաբար գրաց նաեւ մեզի ու մենք փրկուեցանք ի սպառ քնաջնջումէ, ապրեցանք բնկորներով, մնացորդացով...

Երիտասարդը՝ ինքնաշարժը կեցուց մայթին աջ եզրին, որովհետև մեկն էր կանգ առած էին՝ Ազնիւի խոհեմ դեկլարութեան շնորհիւ։ Երիտասարդը հարցուց․

– Հիմա գիտե՞ք ուր կը գտնուինք, ռ՞ը մամբուն վրայ։

– Ոչ, – ըսինք, ու կրկնեցինք մեր անհուն շնորհակալութիւնը իր ազնիւ աջակցութեան համար, – *վալլահի մամ'նասարէֆ* (ճշմարիտ, չենք գիտեր)...

– Հոս «Բորնիշ էլ Մագրաա»ն է, – ըսաւ տղան ու կրկնեց առաջին քառը, – *Ըհհաուհի... պաստ շուէշ...* (Բիշ մը եւս հետեւեցէք ինծի)։

– Տեսա՞ր ուր հասեր ենք...։ Ո՛չ «Պըրթ էլ Մըր», ո՛չ «Իիկ»։

– Ինչ լաւ եղաւ որ կարտեցանք. մեկն ալ պտտեցանք քիչ մը. յազմած էինք...

– Մտահոգութեամբ պտոյտ կ'ըլլա՞յ, սիրելի Ազնիւ։ Երկու աղջիկ, ուշ գիշերով...։ Բայց համաձայն եմ, որ այս ազնիւ արաբին հանդիպեցանք...։ Ինքզինքն անապատին մէջ կը կարծէի...։ Ուղտերը փոխարինուած են հիմա ինքնաշարժներով...։ Բայց արարը մոյնն է. մեծահոգի, ու աստուածավայր։

Ազնիւ կը հետեւէր աշալուրջ։ Հեռուէն նշմարեցինք պարսպապատ տարածութիւն մը, յուսաւոր դաշտ մը ըլլար կարծես։

– Ձիարձակարանին մօտեցանք...

– Չիշոյ ես, արդէն կը նշմարուին թանգարանի սիւներուն գլուխները...

– Օ՛հ, վերջապէս, փրկարար թանգարանը, մեր սահմանը, հինքներէն ժառանգուած ուղղութիւն մը, հին–հին բարձրը արուեստի գործերուն հետ ծրարած ու յետմորդ սերունդներուն յանձնուած բարձրութիւն փառապանծ կոթող մը։ Այս թանգարանը փրկարար դեր խաղաց 17 տարիներ տեւած պատերազմին. մայրաքաղաքն ու անոր ժողովուրդը թէն րաժմեց իրարմէ, բայց մոյն ատեն եղաւ ամուր կապը, անկախութիւն խորհրդանշիչը, ի վերջոյ միացնելով երկիրն ու ժողովուրդը, ամուր գօտիով, որուն հիւսիսը լիբանանցի մախնիներուն մատնեմով ամրացած էին։

Թանգարանին սիւները, անոր դիմաց բարձրացած հին հռոմէական ճարտարապետութեան գլուխ–գործոցներէն «Փշրանք» մը հոս ցուցադրուած կը մնայ, իրրեւ վկայարան հեթանոսական շրջաններէն մինչեւ 20րդ դար փոխանցուած արուեստի, ճաշակի, ճեղքման արժեքն անկորնչելի գանձ, անկողոպտելի վկայարան, որուն մայրը տակաւին հպարտօրէն կը նայի Պալատէի արեւներուն, երկնուղէշ ու փառապանծը ճակատին...

*
* *

Մեմուհէք, ես խալի, քուլէք զօ՛ւ, (Շնորհակալ ենք, եղբայր, ճաշակաւոր ես), – ըսի բարձրաձայն՝ պատուհանին ապակին անվախօրէն բանալով, անտեսելով հեղեղային անձրեւն ու քուէր...

—Արեֆթո... հոն Մաթհաֆ... (նանչցա՞նք... հոս Թանգարանն է. ահա սիւները կիբանանի...: Մասսեղեմի (երթա՞նք քարով):

Միեւնոյն մաղթանքը ըրինք մենք ազնուական զոյգին...: «Տըմի թուր» ըրաւ երիտասարդը, շրջեց ուղղութիւնը դէպի արեւմուտք: Հագիւ բաժնուած՝ աստուանք մը ապրեցայ հոգեւին: Ըսի Ազնիւին.

—Երանի՛ր՝ թէ երիտասարդին հասցէն, հեռաձայնի թիւը առնէինք, վաղն իսկ փունջ մը ծաղիկ կ'ընծայէինք իրեն, պարզ մակագրութեամբ.

«Կորսուած հայուհիներուն կողմէ, մարդասէր արաբ մեր եղբոր»:

—Լաւ կ'ըլլար, քայց մոռցանք,— պատասխանեց Ազնիւ,— հիմա տուն երթանք ու աղօթենք, որ կորսուած էինք ու գտնուեցանք...

—Ուրեմն վախճեր էիր, Ազնիւ: Դուն՝ որ անդադար «չենք կարուիր, մի վախճար, հոս Պէյրուս է կ'ըսէիր»...

—Ձէի վախճար, քայց... չէի գիտեր, որ Պէյրուսը այսօր մեծ տարածութեամբ նորոգուած մայրփաղակ մըն է, իսկ մենք այս երկրին փաղակացին:

—Ձկորոսուող փաղակացին...

Ապրիլ, 1997
Պէյրուս

ՇԱՀԱՆԴՈՒՆՏ

ՏԱՐԻՔՍ


Հոսում են պահերը,
Հոսում են ժամերը,
Օրերս այսպէս հոսում են, զնում,
Տարիքս դարձել է խաղալիք հոսանքին,
Քշում է հոսանքն այդ տարիքս դեռ չապրած:

Որքան շատ բան է տարիքը տալիս
Ու որքան քիչ ենք մենք այն հասկանում,
Մեզ դեռ թուում է ամէն ինչ գալու է,
Ամէն ինչ առջեւում է ու մեզ է սպասում:
Անփոյթ ու հանգիստ
Նայում ենք հոսող տարիքին մեր ժիր,
Յաճախ քամում ենք ուժը նրանից,
Յաճախ սպանում այդ ուժը ներսում,
Յաճախ օգտում նրա թոյլքից,
Յաճախ անտեղեակ մեր ուժի թափից՝
Գլորում ենք ցած թոյլք իսկ չարած
Ու միշտ սպասում ենք
Այն երանելի պահին դեռ գալիք,
Որ տարիքն ու մենք հանդիպենք իրար,
Իրար ճանաչենք, իրար հասկանանք,
Որ իրար հետ լուրջ գործարքի մտնենք
Ու իրար հետ միշտ խաղաղ ընթանանք,
Որ մէկս միւսից անտեղեակ չապրենք,
Որ մէկս միւսից առաջ չընթանանք:

Ու թողնում ենք որ տարիքը հոսի
Ու հոսանքին մենք հակառակ գնանք
Ու գնանք այնքան՝ մինչեւ հասկանանք,
Որ պայքարը մեր անգոր է ետ տալ
Այն, ինչ վաղուց ենք հոսանքին տուել...

Յուլիս 1, 1994

ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈՒՍԷՖԵԱՆ



ԶՐԻԱՎԱՐԺ ՊՍԱԿԱԴԻՐՆԵՐ

Գրականության խոտոր ճամբաներու մէջ զառածածմներու երեսօյթին ակնարկելով, երեսնական թուականներուն, իր «Գրականութեան համար» տեսութեան մէջ, Օշական կը գրէր.

«Անոնց զառածումին մեն չափով պատասխանատու են երէցները նորէն, որոնց մէջ ոմանք ուխտ ըրած ըլլալ կը թուին ամէն սկսողի մէջ նորածագ հանճար մը, առնուազն տաղանդ մը ողջունելու»:

Բունի մը տող անդին կը պարզուի, որ «երէցները» Աֆիւռէի այն օրերու «ըդջ Զմեպատմներն» են, որոնք, արագ անցումով մը ըսեմք, յետ ստալինեան տասնամեակներուն փոխադրինուցեան Լուսաւորչի աստղին տակ գրիչ շարժող շնորհաբաշխ այն գործօններով, որոնց առատութեան առջիւրմներէն ի՛նչ շնորհներ ըսնս չտեղացին ու չեն տեղարկայակոյս, մէքտեզ դրուած գործներուն յարաբերական արժէքները արդար կշիռներու մէջ գնահատելու փորձերէն աւելի՝ երեսնյի եւ աներեսյոյ կասկերու հիմամբ գտլէք հիւսելով կասկածելի արժանիքներու, երկուստեք աղետալի:

Ամուշ քուրի լուրորդներուն կամ նոյն քուրով ուշ մկրտածներուն հասցէին այնքան առատածեմն եղան ոմանք, որ հայ մարդը ապշեցաւ՝ մնաց թոյլ տրուած անպատասխանատուութեամբ զիմաց: Յանկարծ տեսնուեցաւ, որ «հմուտ հաղափազեղներ» ունին մեր շուրջն ու հեռուն, «հմուտ գրականագէտներ»՝ մեր շուրջն ու հեռուն, «ազգանուէր չտեսնուած գործիչներ» ու «մեծավաստե՛կ» ու «ամենայնորամիտ» գրողներ՝ մեր շուրջն ու հեռուն: Ենթականներուն համեստ վաստակներուն համը եպարախտ ըլլալու ոչ մէկ պատճառ ունինք մենք, քայց վստահաբար արժէքներու թելադրանքէն տարբեր պատկաններու դրդումներ ունեցած պէտք է ըլլան մարդիկ, երբ նուիրագործուած չափանիշներուն յարգ ընծայելու փոխարէն՝ հանդիսատեսութեամբ հանդէս կու գան...

Նայն պատճառով է, որ երբ դեռ մօտիկ անցեալին կը մայինք, կը նկատեմք իսկոյն, որ թղթային ամօթայի ժառանգութեան մը տէր ենք, եւ հօ է թոյլ տամք նոյն անանգութիւնը շարունակող ճրիպարժ պատկաղիւրներուն առջեւ ձեռնպահ մնալ, վաղը պիտի ստիպուինք երէկուան ամօթայի ժառանգութեան յար եւ մտն ժառանգութիւններու առջեւ զարճեալ կարմրիլ...

Բարեկամութիւններուն՝ քարեւ, չափանիշներու պաշտպանումը՝ քարեկամական կասկերէն վեր...

Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՄԱՐԴ ՄԸ, ՈՐ ԱՐԱՐԱՏ ՀՈՒՆԻ
===== ԻՐ ՀՈԳԻՈՅՆ ԽՈՐԸ =====

Գ.) Ծահնուր կը խարդախէ՛ նաեւ, երբ իր ողջ գրականութեամբ ու հրապարակագրութեամբ կը ջանայ իր անօրինակ, իր անարդարանալի նահանջականութեան աղտոտ երեսին դնել իմաստութեան, տրամաբանութեան եւ ամբոյսավարութեան դէմ ընդ-վըզումի կեղծաւոր դիմակ մը: Նահանջականութիւնը միշտ, մարդկային պատմութեան հետաւոր ժամանակներէն մինչեւ այս որոտընդոստ տարիներուն շեմը՝ անկեալ, տեղատուութեան մէջ եղող ուժերու վարդապետութիւն մը եղած է: Յեղափոխական նահանջականութիւնն իսկ, որ գիտակցաբար կը հրաժարի քայ-քայման, նեխումի ու ապաստման գործողութեան մէջ յառա-ջացած վարչաձեւի մը վերջին մահացու հարուածը տալ, որ երբեմն կը ջատագովէ ձեռնպահութիւնն ու դասալքութիւնը, որ-պէս պայքարի եղանակ, երբեք ու ոչ ուրեք երիտասարդ ու մա-կընթաց մարդկութեան լրիւ յարումին արժանի եղած է: Այլ Ծահնուրի մը նահանջականութիւնը հետաւոր կապ ս'իսկ չունի այս երեւոյթին հետ: Երբ յեղափոխական անհատը կը մերժէ քաղքենի պետութեան հրաւերին պատասխանել՝ դրօշակի եւ զէնքի տակ երթալու համար, ինչի՛ կը համապատասխանէ իր արարքը —վճռական մերժումի մը անկեալ քաղաքակրթութեան մը պատասխանատուութիւնը բաժնելու: Արդար ու ազատ կեանքի մը աղաղակն է, որ անհատը կը նետէ ճնշող ու հարստահարող դասակարգի մը երեսին: Այս դասալքութիւնը, իր էութեան մէջ դասալքութիւն ըլլալէ չի դադրիր անշուշտ, այլ իր շարժա-ոթիւններով եւ հետապնդած նպատակով տեսակ մը անհատական ընդվզումի ձեւ կը ստանայ: Այլ ինչո՛ւ յառաջընթաց մարդկու-թիւնը երբեք հաճութեամբ չէ դիտած այս *յեղափոխական նա-հանջականութիւնն* իսկ, որովհետեւ յաճախ դժուար է ճշդել ան-հատին ներքին շարժաոթիւնը, որովհետեւ երբեմն վատութիւնն ու երկիւղը կ'ապաստանին խոշոր թառերու նտին՝ ծածկելու հա-մար իրենց տգեղ երեսը, որովհետեւ յեղափոխական կամ այլ գաղափարները յաճախ վարագոյր կը ծառայեն լոկ՝ պայծառ

կերպարանք մը տալու համար մարդոց է՛ն ստորին ու է՛ն բարբարոս ախորժակներուն, է՛ն գարշելի երկիւղներուն եւ է՛ն անարդարանալի ձեռնպահութեանց: Երբեմն նոյնիսկ բնախօսական երկիւղն ու վատութիւնը եւ խոհեմութիւնն ու իմաստութիւնը, ողջմտութիւնն ու նման բոլոր հանդիսաւոր ութիւնները, որ դարերէ ի վեր յանուն ծուլութեան ու ծերութեան կը ջանան կասեցընել մարդուն խոյանքը, այնքան սահմանակից են, որ մարդ կը դժուարանայ որոշել, թէ ո՛ր կը սկսին առաջիններն ու ո՛ր կը վերջանան երկրորդները:

Անշուշտ բարձրասլաց գագաթներուն դրացի են խորունկ վիհերը: Անշուշտ երբեմն կեանքի է՛ն մոլեկան ու վայրագ սիրահարները՝ սիրահարներն են նաեւ մահուան: Ու մարդկային կեանքը ճօճանակի մը պէս կը տատանի լրիւ բողբոջման, ծալ-բազոյն ներուժութեան եւ անէութեան զոյգ թելոններուն միջեւ: Անշուշտ իրաւունք ունի Թովմաս Մանն՝ գերման քսոտրական ու մեծատաղանդ գրագէտը, երբ տեղ մը կը բացատրէ, թէ արւեստը անըմբռնելի է առանց մահուան ներկայութեան, թէ՛ արւեստի լաւագոյն գործերուն ներքին հէնքին վրայ կը ծածանի աղօտօրէն մահուան դրօշակին ստուերը: Ու չկայ նահանջակա-նութեան աւելի բացայայտ արտայայտութիւն մը, քան թէ անկեղծ ծարաւը մահուան: Կը թոյլ գէթ առաջին ակնարկով: Անշուշտ կարելի է Տոսթոեւսկիի ողջ գրականութեան մէջ դի-րութեամբ գտնել՝ մարդուն քայքայուող, տարրալուծուող, բա-րոյնագուրկ եղող ուժերուն բոլոր ախտանշանները: Անշուշտ գարշելիօրէն հայհոյական տողերը, որ Ծահնուր անօրինակ լկտիութիւնը ունեցած է նետելու Նարեկացիի յիշատակին՝ ի-րենց պատրուակը կ'որոնեն ճիշդ այս երեւոյթին մէջ: Պատրուակը միայն: Վասնզի երբ մարդ մօտէն քննէ այս կեանքի մշտնջենական խնդիրը, անմիջապէս կը հանդիպի իր գուգահեռին: Անմիջա-պէս պարտաւորուած կ'ըլլայ իր տառապեալ ափերով շօշափելու *կեանքի բարձրագոյն ձեւի մը խորին արտայայտութիւնը*: Ար-դարեւ, շարունակելով օրինակը, Տոսթոեւսկիի՝ ստիպուած չե՞նք միթէ հաստատելու գերմարդկային ճիգ մը մարդը ազատ արձա-կելու իր ներքին բռնակալ ուժերէն: Ստիպուած չե՞նք միթէ հաստատելու, թէ խուզարկուող մարդկային հոգւոյն ստորերկրեայ ու դիւային անկիւններուն՝ նաեւ զանոնք լուսաւորել է: Ու այն-քան դժուա՞ր է միթէ, հակառակ այս մեծահաճաք վիպողին գործին խրթնութեան, զգալ այսուհանդերձ ընդհանուր ուղղութիւն մը կեանքի, հետեւաբար յաղթանակը կեանքին՝ քայքայման ու-ժերուն վրայ: Առանց յիշելու, որ այդ ընդհանուր ուղղութիւնը երբեմն ազգային գետնի վրայ: Առանց յիշելու, որ այդ ընդհանուր ուղղութիւնը երբեմն ազգային գետնի վրայ կը յանգի ճշգրիտ բանաձեւումներու (համասլաւականութիւն, վերադարձ դէպի ուղղափառ հաւատարմութիւն, շեշտում ոռոս ինքնեկ արժէք-ներու):

Աւելորդ է նույնիսկ Նարեկացիին գործը այս լոյսին տակ քննել: Յետին գիւղացի քահանան անգամ, եթէ չկրնայ ալ բանաձեւել, կը զգայ աշտարակումը Մեծ Մոնազնին հոգւոյն՝ երկրի ամբողջութեան դէպի յաւիտենականութիւն, լոյսի ընդհանուր ժայթքումը, որ մարդուն մարմինը արժանի կ'ընծայէ կեանքին, ներքին որոտալի ալեկոծութիւնը, որ կեանքն իսկ է եւ որ կը դիմէ իր ծայրագոյն ներդաշնակութեան —աղօթքի ու վերացման: Մարդ բաժնէ կամ ոչ, կեանքի այս աշտարակումը, այս գերագոյն պրկումը՝ դէպի ուրիշ կեանք մը՝ աւելի շողշողուն ու արփաւէտ, աւելի բարձր՝ չի կրնար թխտել ո՛չ միայն զօրութիւնն, այլեւ՝ հոյակապ վայելչութիւնը ժայթքումին, պատկառելի ու շքեղ քանդակումը արուեստի այս պատուանդանին, որ դեռ 1939ին մարմարեայ կոթողի մը պէս կը ցցուի մեր ճամբաներուն վրայ: «Նարեկը ալեկոծութիւն մըն է», կ'ըսէ Մեծարեմնոյն Ու ալեկոծութիւնը կեանքն է: Ու կը յարէ,—բայց բոլոր այս խաւարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու յորձանքներուն ետին, յաւիտենական, երջանիկ, անշիջանելի գաղափարը կայ պահուած»:

Արդ, կարելի՞ է որեւէ քաղաքական եզր գտնել մարդկութեան մեծահաճաք զաւակներուն, այս խորունկ զգայնութեան հետ, որ մահէն կու գայ եւ եղկելի նահանջականութեան մը միջեւ, որ երբեմն մեղաշնորհն է պզտիկ տաղանդներով գրագէտներու, վաղի խոց, վաղի դատարկեալ կեանքէն: Անողնայար ու անամորձիք տղոց՝ որ հազիւ կեանքին ամբողջ ելած, ըստիպուած են կանգ առնել իրենց ծունկներուն յոգնութեան պատճառաւ, որ ընդունակ իսկ չեն բանաձեւելու իրենց նահանջականութիւնը, որ փոքրիկ ու անզօր ցայտքերով աղտոտել միայն գիտեն իրենց սաւաճները: Ուրեմն վայրկեան մը զանց առնելով այս ընկեցիկ գրագէտին նահանջականութեան բուն աղբիւրներն ու երակները՝ ջանաճք բանաձեւել զայն, հաւաքելով ասդիւն—անդիւն իր մտքի խղճալի փշուրները: Ահաւասիկ թէ ի՛նչ կը ստանանք:

Ա) Հայոց ազգը, որ ազգ իսկ չէ, այլ՝ ժողովուրդ, գուցէ ժողովուրդ իսկ չէ, այլ՝ վաշկատուն մարդոց խումբ մը, *դրական ո՛չ մէկ մեծութիւն ցոյց տուած է իր պատմութեան ընթացքին*: Ծահնուր ըստած կոյուղիի ճճին այս եղելութիւնը ուրիշ ձեւով գրի առած է սեւով ճերմակի վրայ: Ու տարիներ ամբողջ՝ ամէն յետին դէպքի, հայ կեանքի է՛ն աննշան երեւոյթին առթիւ՝ յանգած է միշտ այս եզրակացութեան: Արուեստի կալուածին մէջ մասնաւորապէս այս սնանկութիւնը ամէն կասկածէ վեր է: Ազգ մը, որ ո՛չ մէկ ինքնատիպ գեղեցկութիւն կրցած է խլել իր հոգիէն ու իր հողերէն: Հայը հայ նկարչութիւն —չունի: Հայ երաժշտութիւն —չունի, գուցէ երբեմն կրցած է հետեւիլ: Այլ այս

անչափահաս ազգին հետեւորդութիւնն իսկ, Շահնուր կը գտնէ միջակ, անարժան ուշադրութեան(*):

Բ)Պարզ է հետեւաբար, որ հայ մեծ արուեստագէտներ, հայ մեծ քանաստեղծներ, հայ մեծ երաժիշտներ, հայ մեծ ճարտարապետներ չկան ու չեն եղած բնաւ: Գալով մեր շրջանին՝ նահանջի տարիներ են: Ու իր առաջին գրքին խորագիրն իսկ ծրագիր մըն է ամբողջ, — Նահանջ մը, առանց երգի: Ու երգը հոս՝ էութիւնն իսկ է կեանքին, յոյսն իսկ է կեանքին: Հայ ազգը նահանջի մէջ է, առանց արքայական յոյսի:

Մտածելու այս եղանակը այնքան մաս կը կազմէ իր էութեան, որ երկրորդ գրքով աւելի կը շեշտէ իր դիտումը: Կ'ըսէ *Յարալէգնէր* կային, այսինքն՝ սուտ աստուածներ ու օտարէն փոխ առնուած աստուածներ, որ պէտք է կեանքի կոչէին Արա Գեղեցիկը, այսինքն՝ հայուն ամուլ հոգին — այլ այդ յարալէ գներն անգամ դաւաճանեցին: Ընթերցողին կը մնայ եզրակացնել, թէ հայուն հոգին արժանի իսկ չէր յարութեան, վերընձիղման: Վասնզի էութեամբ եղկելի էր, ամուլ, անպտղաբեր:

Մեկնելով այս գոյգ *Ժողովուրդներէն*(*), կը յանգինք հետեւեալ եզրակացութեանց կամ հետեւեալ ընդլայնումներուն.

Ա)Ո՛չ միայն ամուլ է հայուն հոգին, ո՛չ միայն անոր անցեալը գորկ է իրական փառքէ, այլեւ երիցս խղճալի է իր ներկան: Այս ժողովրդին թեկորները ապականած են՝ կուսակցական ու քաղաքական խմբաւորումներու չարագործ ազդեցութեան տակ: Կասկածելի է, որ այս հիւանդ կազմին մէջ երբեւիցէ կարելի ըլլայ գեղեցկութեան ու մեծութեան շունչ մը փչել: Արդէն իրական մեծութիւնն ու գեղեցկութիւնը զարգանալու համար պէտք ունին յարմար կլիմայի, ենթահողի, բնական հարստութեան: Ապառաժներու վրայ հանգչող հողի թարակ շերտէ մը՝ հաւրիւրամեայ ու վիթխարի ծառեր չեն բարձրանար: Հայուն դա-

*) Ձեռն ուզեր տաժամելի օրունակ աշխատանքէն յետոյ՝ անհրաժեշտ հումքի ծաւերէս գողցուած այս իրապէս վիսաւեցուցիչ աշխատանքաւ աւելի ապերաշխ ընծայել՝ տարիներէ ի վեր իր մրուտած էներգիան մէքէն հաւաքելով այն թոյրը զազիր տուելով, որ այս պարունը եզակի յանդգնութիւնը ունեցած է, գրի առնել հայ ազգին հաղաթափութեան դէմ իսկ: Իր ողջ գրականութիւնը կարելի է մտանցնել լրտեսական տնտեսագրի մը, որ Հայ խափշները սովորութիւն ունէին տալու օտար բռնակալութեանց — մոյ՛մ վառջը — ինչ յամառութիւնը խաբարելու դէպքերը, մոյ՛մ դիմակէ կամակորութիւնը ամարգութեան, սուտի եւ զրպարտութեան մոյ՛մ անելութիւնը դէպի թոյրը ազնիւ զգացումները, Կը գոհամար ըսելով՝ որ էքեր կան, որ կարելի է կարդալ ու հասկնալ միայն՝ մամշեալէ յետոյ այս աղտեղի եսկը:

*)Կը ցատիւ, որ ստիպուած եմ երբեմն օտար բռնորդ գործածել, ճնշելու սակ ո՛չ մէկ աշխատանքի գործիք ունենալով: Կենսի՛ք գուցէ երբեք ժպտ չէ յաջողած ըլլալ ցարդ՝ ուրիշ ճրիւէ հայկական սերունդի ետո: Այլ աշխատաւ լաւ է գուցէ՝ որպէսզի մեր հաւատարմութիւնը անկի գործը ըլլայ: Ըն աւելի արժանի մեզի:

րաւոր կերպով ամուլ հոգին, նոյնիսկ Ծահնորի մը արարչական շունչին տակ, յեղակարծ կերպով չի կրնար յղփանալ որոտուն յայտնութիւններով. հետեւաբար Ծահնոր կոչուած Քերիսթեճին վերջին կարապն է՝ առանց երգի նահանջին վերջին երգին:

Բ)Ի՛նչ որ եղած է անցելուն մէջ ու ի՛նչ որ կայ ոչինչ է՝ եթէ փորձենք զայն բաղդատել միջազգային արժէքներու հետ: Բառեր կան, որոնց հանդէպ անվերծանելի ատելութիւն ունի Ծահնոր: Այդ դժբախտ բառերէն մէկը չափանիշն է, մա՛նաւանդ երբ տգէտ գրչակներ անոր կը կցեն Հայկական ածականը: Վաւանգի ի՛նչ կը նշանակէ հայկական չափանիշով բացատրութիւնը: Արուեստը մէկ չափ ու մէկ կշիռ ունի: Ի՛նչ որ մեծ է՝ մեծ է ամէն կլիմայի տակ, ի՛նչ որ գեղեցիկ է՝ գեղեցիկ է ամէն ազգի մէջ: Հայ ազգը մեծ չէ ու հայ ազգը գեղեցիկ չէ: Ու անոնք, որ դեռ կը հաւատան այդ մեծութեան ու այդ գեղեցկութեան՝ կը բաժնուին երկու դասակարգի: Առաջին — Լիքսէնպուրկի ողբալի պահպանները, որ պահպանելիք ոչինչ ունին եւ որ ոչի՛նչ կրնան պահպանել, այսինքն՝ Արշակ Զօպանեանները: Այս դասակարգին հանդէպ Ծահնոր վերաբարձ ու լուռ արհամարհանք մը ունի: Պատճառը լոռութեան՝ ապրելու պարզ խնդիր մըն է ու ո՛չ աւելին: Պատճառը այս լոռութեան՝ շարունակել հայոցնէլ կարենալու խնդիր մըն է ու ոչ աւելի՛: Երկրորդ — Հ.Յ.— Դաշնակցութիւնն ու յեղափոխական մտաւորականներն ու գրագէտները մասնաւորապէս: Վասնզի այս դասակարգը ընդունակ է ժողովրդին արթուն մասը իր դրօշակին տակ պահելու ու մոր շարագործութեանց մղելու զայն: Վասնզի Հ.Յ.— Դաշնակցութիւնը ինքնապահպանման ու իր սեփական փառքին գործիք դարձուցած է այդ թէական մեծութիւնն ու անգոյ գեղեցկութիւնը:

Եթէ քիչ մը աւելի փորենք վերոյիշեալ կէտերուն ենթահողը՝ կրնանք յանգիլ նաեւ հետեւեալ հաստատումներուն.

Գ)Նման տուեալներու ներկայութեան ի՛նչ եզրակացութեան կրնայ յանգիլ տրամաբանական հայ էակը — Աստիճանական ընկլուզման ու կորստեան: Պատմութիւնը անհրաժեշտութիւնը կը տեսնէ՝ միթէ նման առանց գեղեցկութեան ու առանց մեծութեան ազգի մը յամառ չապաղումին կեանքի դատաստաններուն վրայ: Ասպարէ՛զ հզօրներուն, մեծերուն եւ գեղեցիկներուն: Հայ ժողովրդին կը մնայ՝ համեստ բարեւ մը տալ պատմութեան ու կորստիլ՝ հանգիստ ձգելու համար անոնք, որ կ'ալեկոծին ըստեղծագործական տուայտանքներով: Այնքան ճիշդ է այս մեկնութիւնը, որ տասը տարիներէ ի վեր, որ գրիչ կը շարժէ այս տխեղձ հոպիտը, մէկ հատ իսկ դրական միջոց չէ առաջարկած ի խնդիր հայ ազգին վերանորոգման, քայքայման տասը քրիչի հարուածի փոխարէն մէկ հատ կենդանի միտք չէ յղացած խա-

փանելու համար չարիքը: Յարուցած թուր խնդիրներուն՝ մէկ հատ դրական լուծում չէ առաջարկած:

Ազգ մը չի՞ կրնար ապրիլ առանց երկրի ու առանց հայրենիքի — ոչի՛նչ, Ծահնուր կը յայտարարէ, թէ վերջին հայը պիտի ըլլայ, հարկ է, Հայաստան ոտք չկոխելու համար^{*)}:

Ազգ մը չի՞ կրնար ապրիլ առանց ազատութեան — ոչի՛նչ, Ծահնուր կը շարունակէ իր ռիսերիմ թշնամիները համարել ազա-տութեան թուր ջատագովները:

Ազգ մը չի՞ կրնար սլաքի մը պէս որեւէ նպատակի դիմել առանց կազմակերպութեան — ոչի՛նչ, ան կը շարունակէ աղէտ համարել թուր կազմակերպութիւնները, անարգել զանոնք:

Այո՛, հայ ժողովրդին կը մնայ, վերջին ասորիներուն պէս՝ հաւաքել իր քուրջերը, իր վերջին նշխարներն ու ցկատարած աշխարհի հրաժարիլ մեր բարձրամանդակէն:

Ազգ մը չի՞ կրնար իր հոգւոյն գեղեցկութիւնը ծաղկեցնել՝ առանց բարենպաստ պայմաններու, առանց խանդավառութեան, առանց անհրաժեշտ վստահութեան՝ իր սեփական ուժերուն վրայ առանց հաւատքին՝ իր արդարութեան, իր արժէքին — ոչի՛նչ, Ծահնուր կը շարունակէ փալփայել ջանալ ի՛նչ որ դեռ կանգուն է, կը ջանայ ցամքեցնել խանդավառութեան ամէն աղբիւր: Գա-լով հաւանական վերելքի մը հաւանական գործաւորներուն, զրքի ու մտքի աշխատաւորներուն, զանոնք կը յայտարարէ մը-տածմամբ աւուր հացի կարօտ:

Դ) Հետեւաբար ահա՛ հայ անհատին, — աղուոր իմացականու-թեամբ մը օժտուած, զինուած տրամաբանութեան կայծակներով, բարձր ճակատագրի մը արժանի հայ անհատին ողբերգութիւնը: Ստիպուած ըլլալ մաս կազմել զնշունքուն նման խաժամուծի մը: Զգալ իր ոլորներուն վրայ՝ այս դարաւոր մտաւորական աղքա-տութեան շղթաները, ուսերուն վրայ՝ այս դարաւոր ձորներուն բերք: Զգա՛լ, թէ կրնար գուցէ լեռները խախտել իրենց ար-մատներէն, եթէ ֆրանսացի ու արքայական ծնած ըլլա՞ր, Փա-րիզի մէկ գողտրիկ արուարձանին մէջ, հոգ չէ թէ լուացարարուհիի մը արգանդէն, այլ միայն կոշուէր Տիւպուա, Լը Վասէօր կամ Տիտէի: Ահա՛ արժանաւորութիւն մը, ահա՛ կեանքը սկսելու իրական մեկնակէտ մը: Վասնզի կարելի՞ է միթէ հանդուրժել այս հայոց ազգին, այս Հոռոփիկ տոտուններուն ու Կարապետ ախպարներուն, այս Համբարձումներուն ու ասոնց իբր թէ զար-գացած օրինակներուն — մտածմամբ աւուր հացի կարօտ, չոր

^{*)} Բառացիօրէն ամնապէս ըսած իմա՝ վերջին կարասմի կազմութեամբ օրերուն, արիւմտաւորածի ամբարկելի ծաւաճութեամբ մը, — ի՞նչ Հայաստան: Այս էակը ոչ մէկ Հայաստան ունի իր հոգւոյն խորը: Ան ի վերջոյ մարդու մը կեանքին մէջ, իր յօստուն կամ գրած լեզուն. կրնայ արկած մը ըլլալ: Ան ի վերջոյ իրական ընկերակցի կամ կեանքի մէջ՝ չես գիտեր ուրիկ՝ շահուած:

աւուր հացի կարօտ: Կարելի՞ է միթէ առանց հեզմութեան, առանց զայրոյթի ապրիլ այս մտքով բորոտ, այս ամուլ, այս անօրինակ կերպով խղճալի էականերուն հետ, որ չեն ուզեր ընդունիլ իսկ իրենց անվերադարձ սնանկութիւնը, որ չեն ուզեր ընդունիլ իսկ, թէ ոչինչ էին իրենց հայրերը, թէ ոչինչ են իրենք ու ոչինչ պիտի ըլլան իրենց զաւակները: Ոչինչ պիտի ըլլան իրենց զաւակները:

Ոչինչ պիտի ըլլան իրենց զաւակները —այս է այն յոյսի դոշակը, որ Ծահնուր կը ներկայացնէ մեր վտարանդի բազմութեանց: Ոչինչ էր քու պատմութիւնդ,— այս է ժամանակներն ու ազգերը դատող այս աստուածառաք ու մեծապանծ մարդուն դատաստանը, որ կը քաշէ մեր անցեալէն, գօտեպնդելու համար մեր ժամանակաւոր ստրջանքը: Ու ոչինչ է ներկադ —այս է քաջայեւրութեան ու խանդավառութեան ճոկանը, որ կը ներկայացնէ մեզի՝ ճամբայ բանալու համար աքսորի գիշերուան խորէն:

Վերստին ջանանք մոռնալ այս զագրելի նահանջականութեան բուն աղբիւրները, վերստին ջանանք մոռնալ, թէ ո՞վ է զայն բանաձեւել ժպրհող էակը —թէն ամէն մարդու տրուած չէ դատախազ կանգնիլ իր իսկ ազգին դէմ ու աշխատինք ո՛չ թէ քծնիլ, այլ կշռել միայն այս վերջնական թուող ու արհամարհական տուեալները: Առնե՛նք առաջին կէտը —Հայոց ազգը ո՛չ մէկ իրական մեծութիւն ցոյց տուած է իր պատմութեան ընթացքին: Այս անըմբռնելի ու սահմոկեցուցիչ տարազը մերն է: Ան քիչ մը կոկոսած ու քարեկիրթ ձեւն է շահնուրական հայհոյութեանց, որոնց քով կրօնական յանդիմանութիւն իսկ չեն մեր լեզուին խորութիւնները: Ծահնուր կ'ապաստանի, իր գրքին մէջ, զգուելի պոլսեցի լակոտի մը, որ զգուելի չէ պոլսեցի ըլլալուն համար, այլ միայն այս ապերասան ընկեցիկին երեւակայութենէն թխած ըլլալուն պատճառաւ— սապէս բանաձեւելու համար իր միտքը.

—հայը ամուլ է, անծիւն, անպտուղ, հայը դատարկ է, փուճ, ունայն, սնոտի:

Ու տակաւին— Ներքինիներ են մեր բոլոր պապերը, անոնք ոչինչ կրցեր են քանդակել մեր միսին վրայ՝^{*)}

Աւելի՛ն.

—Որքան որ մտածուես ետեւ տանիմ, հայերը կը տեսնես միշտ այնպէս ինչպէս որ են այսօր, պզտիկ, գաճաճ, տխւեղ:

^{*)} Հետեւաբար պոռնիկներ են մեր մայրերը: Մեր մայրերը մեզ շահած են ասկէ-անկէ՝ Քամի որ այսուհանդերձ ընդհանուր ուշադրութեամբ արժանի զատկներ տուած է Հայաստան: Թող չըսուի, թէ լոկ գրական բացատրութիւն մըն է սակեալ: Երբ փրամասցի արժապակումը զայրոյթի բորձումէն շրջումէն կ'անտրոգէ իր երկիրը ու կ'ըսէ, թէ Հանրապետութիւնը աղին մըն է, գիտեմք, թէ ամ պատրաստ է արեւմտ մէջ խողով ապուր: Մարիամը: Մանկուր Քաջ գիտէ իր հայհոյամբին տարողութիւնը: Հայ մայրութիւնը աղին է. ամոք հոգին՝ շուայտութեամբ դաշտ յաղթականներու: Ան այս բոլորը մեր մերժիմի պապերուն ակնարկին տակ:

Արդ, այս հասարակ, այս եղկելի, այս գոեհիկ մտքի փշրանք-
ները, որպէս մտածման բարձրագոյն գոհարներ հրամցուած մե-
զի, ողջ հայ մտաւորականութիւնը մտածամբ աւուր հացի կա-
րօտ, չքաւոր ներկայացնող պարոնի մը կողմէ՝ ինքնատարութեան,
նորութեան չնչին շնորհն իսկ չունին: Ասիկա լեզուն է բոլոր
նորացողներուն, բոլոր դաւանանքներուն, բոլոր դասալիքներուն,
բոլոր վատերուն: Ասիկա լեզուն է բոլոր դաւանափոխներուն:
Երբ մեր ազգին անարժան զաւակներէն ոեւէ մէկը՝ գողութեան
ու խարդախութեան բոլոր ձեւերը օգտագործելէ յետոյ, փոքրիկ
հարստութիւն մը կը դիզէ ու կը ջանայ ուրիշ ազգայնութիւն մը
ընդգրկել՝ ուրիշ լեզու կը գործածէ կը կարծէք: Երբ օտար
երկրի մէջ՝ անարի հայ մը կը սկսի նեղուիլ իր ծագումին պատ-
ճառաւ, կը կարծէ՞ք, թէ անմիջապէս կ'ըսէ տեսակը իր աղտեղի
վերքին, օտարին ցնցոտիներուն արժանի ըլլալէ առաջ, ո՛չ նը-
քեք, այլ կեղծաւոր դառնութեամբ մը կը սահեցնէ՝ մեր ժողո-
վորդը պզտիկ ժողովուրդ է, եղբայր: Անյիշատակ դարերէ ի
վեր է, որ հայ ազգին ապերախտ ու վատթար զաւակները կը
գործածեն այս լեզուն, պարզապէս արդարացնելու համար ի-
րենց տեղատուութիւնն ու նահանջը, ծածկելու համար իրենց
հոգւոյն տգեղութիւնը, ազատելու համար դեռ հաւատարիմ մնա-
ցած քաղաքացիներու վրէժխնդիր դատաստանին: Անգլիա կրնայ
սխալիլ, կ'ըսէ միւսը, այլ՝ Անգլիան իմ երկիրս է: Մարդ իր ազգն
ու իր երկիրը կ'ընդունի իր սխալներով իսկ: Ո՞ր է մեծութիւնը
անհատին, երբ ան կ'ընդունի միայն փառքն ու զեղեցկութիւնը
իր հայրենիքին: Չկայ հայրենիք մը երկրի վրայ՝ որ յանկուծէ
մը վիրաւոր չըլլայ, չկայ ազգ մը երկրի վրայ՝ որ լիովին գո-
հացուժ տայ իր մեծ զաւակներուն մեծութեան ստոյգ պապակին:
Չկայ մայր մը երկրի վրայ՝ որ արարչօրէն մարմնացնէ մարդուն
զեղեցկութեան լրիւ ծարաւը: Ո՞րն է այն երկիրը, որ իր պատ-
մութեան ընթացքին գէթ մէկ անգամ չէ անցած Նահանջի սեւ
ճամբաներէն: Ըսինք արդէն, թէ կեանքը վերք է ու ապրիլ չա-
ճախ կը նշանակէ վիրաւորուիլ: Տկարներն ու վատերն են միայն,
որ կը կարծեն, թէ կողկողանքն ու ստոր հայհոյանքը կը բաւեն
կապելու համար վերքերը, ուրկէ արիւն կը հոսի: Ու հոս թող
չառարկուի մեզի, թէ մեր առարկութիւնները արգելք կը հանդի-
սանան ախտաճանաչութեան ու ինքնաքննադատութեան: Ա-
մէն ազգ ընդունակ է իր ծոցէն հրապարակ նետելու վրէժխնդիր
ու հրաբիբ մարգարէներ, որ խարազան ի ձեռին կը մտրակեն
ամբարիշտները: Ու անոնք, որ տգեղ են հոգւով ու անոնք, որ
պատրաստ են դասալքութեան՝ առաջին վտանգին առաջին ազ-
դանշանը տրուածին պէս: Ծահնուր կը պատկանի այս երկրորդ
դասակարգին: Ծահնուր անոնցմէ է, որ երբեք պիտի չներեն
իրենց ազգին որպէս Ծահնուր զիրենք աշխարհ ձգած ըլլալու
պարագան: Ծահնուր անոնցմէ է, որ միայն իրենց էութեան
հայելիին մէջ կրնան դիտել իրենց ազգին կերպարանքը: Եթէ

զայն այդ աստիճան տգեղ ու այդ աստիճան կեանքին անարժան կը գտնեն՝ որովհետեւ տգեղ է իրենց հոգին: Չկայ ազգ մը երկրի վրայ, որ չունենայ իր մարմնին վրայ, Ծահնուրի նման վերքեր: Այլ ո՛ր օրէնք կայ ու իշխանութիւն, այլ ո՛ր կեանքը կը թաւալի իր բնական հունով՝ այդ վերքերը աննշան սկրթութենքն ու կը վերածուի, մինչդեռ մեր մէջ Ծահնուրները պալար կը կապեն, կը թարախոտին, կը թունաւորեն մեր վեց դարերու ստրկութեան ու պանդխտութեան իսկ պատճառաւ արդէն տկարացած մարմինը: Ի՞նչ անպատկառ, ի՞նչ զարշ խեղկատակութիւն: Ազգ մը նախապատմութեան գիշերին մէջ՝ ելեր է երկրին ակօսներէն, կուտակուեր է ինքն իր վրայ, որոնք է իր արարչութիւնն ու իր լոյսը, կեանքին ընծայած թոյր կարողութիւններով պրկուեր է՝ հպատակեցնելու համար երկիրը իր լոյսին ու իր ներքին հարստութեան: Երկրին ուրիշ ծագերէն ուրիշ հաւաքականութիւններ սկսեւր են իրենց շարժը, չառաջացեր պատմութեան քեմէն ու հասեր են մինչեւ մեր բարձրամակարդակին ստորոտը՝ խառնելու համար իրենց երգը բնիկներու երգին: Ու ցարդ հակառակ բազմաթիւ գիտուններու յամառ, տքնաջան, կամակոր, երկարատեւ աշխատանքին՝ դեռ ծանօթ չենք այդ գործողութեան թոյր տարրերուն, այդ ի մի ձուլման թոյր կերպարանափոխութեանց: Այլ կրնա՞նք միթէ առանց յուզումի երեսակայել պատմութեան այն վայրկեանը, երբ առաջին անգամ ըլլալով Ծոփաց աշխարհէն մինչեւ Տայք ու Պոնտոսի եզերքներէն մինչեւ Սիւնիք այդ հաւաքականութիւնը յաջողեր է կեանքէն ելլել իր լեզուն, յետոյ իր գիրը ու ինքնագիտակցութիւնը իր էութեան, իր խորին միութիւնը ու նետեր է աշխարհի չորս ծագերուն *Հայք, Հայոց աշխարհ, Հայաստան* բառերը⁹: Մեր շուրջն իսկ ուրիշ մարդկային խմբաւորումներ երբեք չեն հասած այս կայքին, քաղաքակրթական այս աստիճանին ու որպէս չարակից տարրեր քաշքշած իրենց գոյութիւնը՝ հզօր խմբաւորումներու թիկունքին վրայ, հազիւ մերթ ընդ մերթ փոքրիկ ցնցումներով ջանացած սեւեռել իրենց ինքնութիւնը: Ազգ մը ելեր է, կ'ըսեմ, պատմութեան ակօսներէն ու ի՞նչ դաժան, ի՞նչ ապերախտ պայմաններու մէջ: Ու ի՞նչ դաժան ու ի՞նչ ապերախտ երկրի վրայ: Ու զարմանալի, հրաշալի քաղցրութեամբ մը դարերով աղուոր, սրտառու յանդգնութիւնը ունեցեր է գեղեցիկ գտնելու այդ երկիրը: Դարերով այդ ազգը, պատմութեան է՛ն սեւ ժամերուն, երկրի է՛ն երիտասարդ ու է՛ն բարբարոս ուժերուն դէմ կուրծք ցցեր

⁹ Այս բոլորը հասարակ ու պարզ կը թուին Ծահնուր ըստած իշուն, այլ կը հրաւիրենք, որ ժամ մը հետաքրքրուի ազգի մը Յակատագրով, որ դեռ կը գոյարի երկումէի ցանքով, կ'ակնարկեմ պիւժ ազգին, Բաղաշակում ու վարչական միութիւնն ու ազատութիւնն իսկ չիմ բաւեր՝ Փլամաններու եւ վալսմներու զայգ խմբաւորումներն իրապէս միացեալ ազգի մը վերջնական ծագումը ողորմելու համար: Ազգը ինքը մեծութիւն մըն է, իմէջինքին հետ ամեաշտ փայտն պիւժն ու վալսմ պիւժը կը գցամ ասիկա: Նոյնը իրաւաբանութեւ, սոցիոլոգիայ եւ սերգիքու համար: Այլ Ծահնուր չի գիտեր այս բոլորը:

է ու զրահուեր՝ պաշտպանելու համար մագիլներով երկրէն խլած իր գեղեցկութիւնը, զարկեր է ու զարնուեր, իջեր է մինչեւ հաւաւային տաք ասիւն, մինչեւ Միջերկրական՝ իր յաղթանակի օրերուն, յետոյ վերստին արծիւներու պէս թռներ իր լեռներուն վրայ։ Անմիջապէս որ կարելի եղեր է ասիկա՝ իր ծերպերուն կշտին նետեր է խրոխտապանծ վանքեր բարձրանալու համար դէպի լոյս ու իր դաշտերուն մէջ տարածելու համար քաղցր բառերը յաւիտենական եղբայրութեան։ Իր խոսքան ցեղային երակներէն ջանացեր է զտել արիւնը, ողբերգական յամառութեամբ մը, որոնցով իր միութիւնը։ Առաջինը, խորին խանդաղատանքով, սեղմեր է իր լեռնական կտրծքին վրայ՝ Նազովրեցին, իր նոր Աստուածը, որ Աստուածն է դեռ երկրի մեծ ազգերուն, մեզի հաճոյ թուի թէ ոչ ու ո՛չ ուրեք չէ լքեր զայն։ Իր մէկ հատ վէրքին փոխան, այն է հարկ եղած վայրագութեամբ չպաշտպանել իր գեղեցկութիւնն ու իր զաւակներուն արիւնը՝ տասը առաքիւնութիւն ցոյց տուեր է։ Ու իր վէրքն իսկ «ռազմի քանի» դաշտերու մէջ, ծառանալով ու կատաղելով, արտասուելով յուսահատութենէն՝ իր վատ որդւոցը համար, չէ գրոհեր իրմէ զօրեղ, իրմէ աւելի սպառազէն վոհմակներու վրայ։ Կարելի է ողջ կեանք մը սպառել, կարելի է ամբողջ մտաւորական հոյի մը կեանքը սպառել՝ ուսումնասիրելու համար այս բնախօսական տկարութեան պատճառները, քննելու՝ թէ ինչու ընդվզումի, ըմբոստութեան, ազատագրութեան այնքա՛ն զօրեղ ճիգեր չեն կրցած խափանել վատութեան էջքը մեր անդերեւ։

Ազգ մը ելեր է պատմութեան ակօսներէն ու իր հողի յետին բունծին համար արիւն թափեր է դարերով։ Անսալով ներքին տարբեր ձայներու՝ իր մարմնէն բեկոր մը խզուեր է ու հասեր Միջերկրական՝ նոր լոյս ու նոր արդարութիւն որոնելու։ Ու հոն եւս չղկեր է քարերը, քարձարացուցեր է իր պալատները, շէնցուցներ քաղաքներ ու վերստին արիւն թափեր է, անընդհատ, իր մարմնին բոլոր ծակոտիկներէն, պաշտպանելու համար իր սրբութիւնը։ Ու եթէ այսօր հին քաղաքակրթական հետքեր կան այդ երկրին մէջ՝ որո՞ւն կը պատկանին ատոնք, եթէ ոչ հայուն։ Ու միայն երկրի այս մասին մէջ՝ իր մշակոյթին, իր կենցաղին, իր ինքնեկ գեղեցկութեան պատմութիւնը գրելու համար ողջ կեանք մը չի բաւեր։ Կարելի՞ է միթէ ազգի մը երեսին նետել նման սրբապիղծ բառեր, երբ իր զաւակները դեռ երէկ, չես գիտեր ի՛նչ հրաշքով, թառած էին Զէյթունի կտրծքին ու պահած արտասուվոր ինքնատպութիւն մը «բարբառ մը, որ արժէք մըն է, պարո՞ն Եահնուր։ Տասնեակ վոհմակներ քառասմբակ արշաւեր են իր սահմաններէն ու այդ բոյնը մնացեր է անխախտ։ Այս ազգին է՛ն պզտիկ բեկորներուն մէկուն Սուէտիոյ փոքրիկ ժողովրդին կեանքը բաւած է Ֆրանց Վերֆէլի՝ երգելու համար հոգւոյն մեծութիւնն ու գեղեցկութիւնը հայոց ազգին, Սուէտիոյ խրոխտ ու մանիշակ լեռները բաւած են՝ որպէսզի իր խելացի

ու զգայուն հրէի գլուխը խոնարհէ Ֆրանց Վերֆէլը, — որ անցեալները Փարիզ պատուի էր ու պատուի՝ Արակոնի պէս ապերասան գրողներու կողմէ: Ազգ մը ելեր է պատմութեան ակօսներէն, կ'ըսեմ ու ապրեր է, ստեղծագործեր, կոտեր ու արիւն թափեր է դարերով:

Ու ան, այդ ազգը, մատենագրութիւն մը ունի, սկսելով Աստ-ւածաշունչի թարգմանութենէն, որուն քննական ու վերջնական, որուն գիտական ու բաղդատական լրիւ հրատարակութիւնը դեռ գոյութիւն չունի, որուն աղբիւրներուն, ծագման, զարգացման, իր շրջանի միւս մատենագիտութեանց հետ յարաբերութեան կարեւոր խնդիրներուն շուրջ թղոր ճիշդերը դասաւորուած չեն՝ որպէսզի դուն, գոնջ գլուխի ոջիւ, լուրջ կարծիք մը կարենաս ունենալ: Թէեւ, զինուած ամբողջ քու լոխորտանքովդ, մերծելով կը մերժեմ քեզի, յետին ընկեցիկ, այդ մատենագրութեան շուրջ կարծիք յայտնելու իսկ իրաւունքիդ ու ահա՛ պարզ ու այս անգամ, շատ տրամաբանական հետեւեալ պատճառով: Լիկէտնի վերջին գրասեղաններուն վրայ լատիներէն այբուրենը հազիւ սորված պատանին՝ եթէ համարձակի ամբողջ Լատին մատենագրութիւնը դատել քուկիցիդ նման վերամբարձ անպատկառութեամբ մը, ի՛նչ կ'ըլլայ իր ստացած պատասխանը — հոմերական խնդուք մը: Արդ, դուն ճիշդ ու մեր սերունդէն շատեր ու ես առաջինը, այդ պատանին դիրքին մէջ ենք միայն: Պէրպէրեանի գրասեղաններուն վրայ սորված կիսկատար գրաբարդ կը բաւէ՝ միթէ, թշուա՛ռ, այդ մատենագրութիւնը ուսումնասիրելու եւ լրիւ կարծիք մը կազմելու համար: Դո՛ւն՝ որ *Եղծ աղանդոցի* կարգ մը էջերը անընդունակ ես աշխարհիկ հայերէնի վերածել, դո՛ւն՝ որ անընդունակ ես Զօհրապի մէկ էջը, օրինակ, գրաբարով վերստին գրել, ինչպէս ըրած է ողբացեալ Տիգրան Ե՛ւրթեմեան (*Պարտիք պարանոցի — Զիտին պարտքը*), դո՛ւն՝ որ չես կրնար ու ճիտէդ բռնելով է, որ ասպարէզ կը կարդամ քեզի, որեւէ պարկեշտ ատեանի առջեւ առանց ստելու պնդել, թէ իրապէս կարդացած ես այդ մատենագրութեան գլխաւոր մասը՝ իրաւունք չունիս միմոսի կարծիք մը բանաձեւելու ո՛չ միայն ողջ հայ ժողովրդին, այլ նոյնիսկ անոր Ոսկեդարու մատենագրութեան *քաղաքակրթական մայրուն արժէքին շուրջ*՝ Վասնզի ամէն դատողութիւն, որ չ'ընդգրկեր ճիշդը, լոկ մասնակի է ու անկատար: Երի՛ցս թշուառ, տարիներէ ու տարիներէ ի վեր, Հիւսշմանի պէս օտար գիտուններ, Մեյէի պէս զմայլելի իմացականութիւններ, որուն պայծառութեան առջեւ յարգանքի կը կենան քառասուն ազգի հմուտ ու իրենց ողջ կեանքը մագաղաթներու վրայ մաշեցուցած զաւակները, Հ. Յակոբոս Տաշեանի նման զմայլանքէ արբացեալ հերոսական մտքի աշխատատուներ, Եղիշէ Դուրեան

պատրիարքի նման՝ հեզահամբոյր գրական վաստակատուներ^(*), Հրաշեայ Աճառեանի պէս հմտութեան ու համբերութեան հսկաներ, զաւակներ՝ անպարագրելի սիրոյ, որուն *Արմատական բառարանը* գերագոյն ապտակն է, որ ազգ մը կրնայ տալ քեզի պէս աղիճ զաւկի մը ու քանի՜ հարիւր, քանի՜ հարիւր գիտուններ, տարիներէ ու տարիներէ ի վեր, Մխիթարեան Հայրերն ու հայ եկեղեցւոյ գիտուն վարդապետները, Պուլտ Խաչատուր Միսաքեան ու Հ. Արսէն Բագրատունի, Յովհ. Տէրոյենց պատուելի ու Հ. Ղեւոնդ Ալիշան, Մանուկ Աբեղեան ու դասախօս Աստ. Խաչատուրեան, Ստեփան Մալխասեան ու Հ. Գաբրիէլ Մենեվելեան —այլ ո՞րք յիշել ու ո՞րք մոռնալ, վասնզի այդ մատենագրութեան վրայ աշխատանք ու աչքի լոյս թափող հայ ու օտար մտքի աշխատանքներու քաղմութիւնը կրնայ փաղանգ մը կազմել — քարին 4. Արսէն Ղազիկեան ու Հորոյ ու բոլոր անոնք, որ ողջ են այսօր, որ դժբախտաբար կարճ ժամանակի մը համար կրնան դեռ կանգուն պահել ատրուշանը^(*), հասեր են ծերութեան ափերուն ուսումնասիրելով, լոյսին հանելով այդ մատենագիտութիւնը —իսկ դուն, որուն կողղանքը դեռ խալըն չէ հասած, դո՛ւն՝ որ անհրաժեշտ գործիքը անգամ չունիս ընդհանուր գաղափար մը կարենալ կազմելու համար, կը պատգամես, հազիւ հասած Փարիզ՝ դպրոցական գրասեղաններէ ու շլացած ուրիշին հարստութեան առջեւ, շլացած միայն, վասնզի քանի մը կեանք անհրաժեշտ է այդ հարստութիւնը խորաշափելու համար, կը պատգամես, կ'ըսեմ, ընդհանուր ու մեղսակից լռութեան մէջ.

—Հայը ամուլ է, անծիճ, անպտուղ. հայը դատարկ է, փուճ, ունայն, սնոտի:

Ուսումնասիրութեան ընդարձակ դաշտի մը առջեւ, որուն սահմաններուն հասնելու համար ողջ կեանք մը չի քաւեր՝ այս անպատկառ հապճեպն ու անպատկառ կեցուածքը՝ արդէն ա-

^(*) Ու միայն այս օրիմակը կը քաւէ Քեզ ցկեանս անարգութեամ սիւնին զամեռս համար: Ահա՛ աստուածային մարդ մը, որուն յշակութային արժէքն ամուրաւանի է, մահաւանդ նշուարէն վերջին հրատարակութեանց շարքէն յետոյ եւ որուն մահի պաշարին առջեւ կրնաս ծանկի գալով ու սալաշատակը պահմելով խոնարհիկ, որ Քեզմէ եւ ինձմէ տալը անգամ անկի լաւ գիտեր փրամական գրական լեզու իմ էմ ծածուկ մըրութիւնները (վկայ Լեւոնք տը Լիլեն իր մէկ եղակի թարգմանութիւնը), որ մեծ ըմբռցող մըն էր ու շատ զգայուն բանաստեղծ մը, որ պոլսեցի էր ու Գաշնակցութեամբ բարեկամ մը, Գ. Ջոնսոպի մահն, —մեռաւ զրիշը իր խումկէ մասմերուն մէջ, ծառայելով այդ մոյմ մատենագրութեան: Բաղդասեկ ասիկա Քու հայիւյամբներուդ հետ:

^(*) Այս տերուղին աստիճանական անհետացումը՝ հայ ժողովուրդը կը դնէ հայ լեզուի պահպանման հիմնական խնդրին առջեւ: Որովհետեւ լեզուն կենդանի եւրփուն մըն է ու մատենագրութեան մէջ չի պահուիր միայն, Մեր տերուղին անոնք, որ կրնան աշխատելով՝ գուցէ օր մը փոխարինել մեզմէ քաժնուտները՝ մտաւ վրայ կը համարւին: Անհրաժեշտ է հայ մտաւորականներու կրիզները ստեղծել՝ ստեղծելով հայ մտաւորականներ կոչումներ, ուր մտքի աշխատանքը ըլլայ կեանքի միակ նպատակը ուր կարելի ըլլայ ազգայն գիտումներու աշխատանքի լրիւ գործիքներ հայտնաբերել: Եթէ հայ ազգը չ'ազգեր ի սպառ կը կորսուի, ուշ կամ կանուխ, պարտաւոր է լուծուի մը տալ այս խնդրին:

ռաջին օրէն իսկ ցոյց կու տային անըջութիւնդ։ Այլ շարունակենք, ցոյց տալու համար, թէ այս առընչութեամբ յայտնած բոլոր կարծիքներդ չեն կրնար երբեք վէճի միտք ըլլալ։ Ցոյց տալու համար, թէ քեզի նման հոսպիտը ցկատարած աշխարհի իրաւունք պիտի չունենայ ոտքի կենալու ազգի մը դիմաց, անոր անցելոյն ու ներկային, անոր դարաւոր մշակոյթին դիմաց ու լեզու ցոյց տալու, առանց հետեւելու անոր կտրած ճամբուն պատմութեան ակօսներէն, առանց չափած ըլլալու անոր կտրած *Թրածէն* ժամանակին ու տարածութեան մէջէն^Պ։

Այո՛, այդ ազգը ո՛չ միայն մատենագրութիւն մը, այլեւ քեզի հաճոյ թոյի կամ ոչ, ճարտարապետութիւն մը ունեցած է, որուն փառաւոր կոթողներէն մէկ քանին դիմացած են ժամանակի աներին, դեռ կիսականգուն են իրենց չքնաղ փառքովը։ Մինչդեռ իր շուրջը ուրիշ ազգեր, գուցէ անլի հզօր, գուցէ անլի ստեղծագործ հոգւով՝ կորսուած են ի սպառ, այդ ազգը հրաշք տղաքներ ազատ կ'արձակէ դեռ իր երանքներէն ու իր արուեստի կոթողներուն շուրջ իսկ։ Ո՞վ է մեղաւոր, եթէ քու սօցիալութիւնդ չ'ուզեր ըմբռնել, թէ միջազգային համբաւի տէր Ստրիկովսկի մը կրնայ տարիներ աշխատիլ՝ այդ ճարտարապետութեան էական գծերը կապտելու համար, դասախօս Նիքոլա Մատ հայոց լեզուն սորվիլ ու տարիներ պեղումներ կատարել։ Ի՞նչ փոյթ, թէ տասնեակներով օտար ու հայ գիտուններ արժանի կը համարեն այդ ճարտարապետութիւնը ուսումնասիրութեան։ Իո՞ւն՝ որ նախատարերքն իսկ չես գիտեր՝ կարենալ մերձենալու համար այդ համբարելի աներակներուն, դո՛ւն՝ որ այդ արուեստին տարրական կանոններուն ծանօթ չես՝ կարծիքի ստուեր մը բանաձեւելու համար, դո՛ւն՝ որ հասարակ շէնքի մը *փլան*ին նախագիծը չես կրնար կարդալ —չես ուզեր ըմբռնել, թէ ուրանալու համար հայ ճարտարապետութիւնը, գէթ պէտք է քաջ գիտնալ արաբական, քիւզանդական ճարտարապետութեանց պատմութիւնը, ծանօթ ըլլալ ասոնց յաջորդող միւս դպրոցներուն, —ոռմանականին ու գոթականին, կարդացած ըլլալ գէթ մէկ դոյզն մասը՝ այն ամբողջ գրականութեան, որ կայ հայ ճարտարապետութեան ու միւսներուն շուրջ —տարտամ գաղափար մը կազմելու համար։ Թշուա՛ռ, երբ ամբողջ ազգի մը քաղաքակրթութեան շուրջ, տաւը տարիներէ ի վեր, նման վատթար քիմախդրութեամբ մը լորձուց կը հեղուս —յիշէ՛ գէթ, որ հազիւ թէ ողբալի երկրորդական ուսում մը ունիս, Պոլսոյ երկրորդական ըստած վարժարաննե-

^Պ Ամառապոյս անլի պարկեշտ էին, այն յետ պատերազմեան մերմակ-կտուց տղաքը՝ որ կ'ուզէին հրդեհել աշխարհի բոլոր մատենադարաններն ու բոլոր քանդակները՝ ստեղծագործել կարծաւոր համար, Գաֆի որ այս կեցւածքը՝ խոստովանած մըն էր, թէ իրենք ընկճուած կը գտային իրենց պատիկ անձերը Մարդկային անեղծագործութեամբ հոյակապ շէնքի տակ։ Արդարեւ, որպէսզի մահնուրը մէջը ըլլայ հայոց պատմութեան մէջ՝ իսրիկ է որ կարենամք սպունգի հարուածով մը սրբել հայոց ողբ ճաղաճակրթութիւնը, ծանկը կ'ըսէ.—ոչխար չգտնուած տեղը՝ մարդիկ այնքա՛ն Ապսիւրոսման Ձեռքով կը կոչեն։

րէն մէկուն մէջ ստացուած, յիշէ՛, թէ երբ գրել սկսար՝ ուղղագրական սխալներ կ'ընէիր դեռ, յիշէ՛, որ բարձրագոյն ուսումը ստացած ես Փարիզի ծառուղիական թերթերուն մէջ ու թէ երբեք պարկեշտ ինքնուս մը չես եղած: Մտքի ամբողջ կալուածներ կան, ուր տգիտութիւնդ կասկածի նշոյլը չի վերցնէր: Կը կրկնեմ, քաղաքակիրթ մարդկութիւնը այսօր ծայրագոյն զգուշութեամբ մըն է միայն, որ ազգերու շուրջ, անոնց իրական քաղաքակրթական արժէքին շուրջ ընդհանուր կարծիքներ կը բանաձեւէ, քննելէ յետոյ ընդարձակ, երբեմն ամբողջ կեանքի մը ընթացքին հազիւ հասունցող աշխատութիւններու մէջ: Ու այդ պարագային ալ խնդրոյ առարկայ ազգին պատմութիւնն ու քաղաքակրթութիւնը կը բաժնէ զօտիներու, շերտերու, շրջաններու: Գիտութիւնը այսօր քաղմաթիւ ճիւղերով կը յառաջանայ՝ կապտելու համար ճշմարտութիւնը ազգի մը շուրջ: Հնէաբանութիւնն ու մարդկային աշխարհագրութիւնը, ընկերաբանութիւնն ու քաղաքատնտեսութիւնը, իրաւունքի ու պետութեան վերաբերեալ բոլոր գիտութիւնները, բանասիրութիւնն ու լեզուագիտութիւնը, քաղաքական գրականութիւնն ու մարդաբանութիւնը, պատմութիւնն ու պատմութեան փիլիսոփայութիւնը ու թոյր թարոյական գիտութիւնները՝ դժուար կը յաջողին սեւեռել ազգի մը գծած շառաւիղը՝ պատմութեան մէջ: Իսկ դուն, կը հասնիս Սկիտառէն, ուսիդ նետած գիտութեանդ խղճալի պարկը ու կը գոչես.

—Ներքիցիներ ե՞ն մեր պապերը, անոնք ոչինչ կրցեր են քանդակել մեր միսին վրայ:

Ներողութիւն, ձիու՛ ճանճ, ըսէ՛,—ոչի՛նչ կրցեր են քանդակել իմ միսիս վրայ:

Կ'արժէ՞ միթէ շարունակել ու խօսիլ հայ զարդանկարչութեան, հայ երաժշտութեան շուրջ, կրկնելու համար նոյն հիմնական առարկութիւնները, որ կը համառօտագրուին հետեւեալ բառով՝ *—անձեռնհասութիւն*։ Ըմբռնէ վերջապէս, թէ երկրի մէջ Արամ Երեսնան մը ու գաղութներու մէջ Հրանդ Բալտեան մը կը բաւեն, ու լայնօրէն՝ այն բոլոր իշութիւններով, որ կը գործեն իրենց չհասկցած ճիւղերուն շուրջ: Ի վերջոյ մեր ուշադրութիւնը իրաւունք ունի գանգատելու ձեզի նման բոլոր համբակներէն, որ գլուխ կըեն, կը հասկնա՞ս: Կրնամ ամբողջ հարստութիւնս եղող երկու պայուսակներուս վրայ գրաւի գալ, թէ երբեք քաջութիւնը չես ունեցած, օրինակ, Լինչի ստուար *Հայաստանը* կամ *Մաղաքիս Արք.* Օրմանեանի *Հայապատումն* ու *Ազգապատումը* կարդալու: Քաջութիւնը չես ունեցած հայոց գրականութեան ու պատմութեան շուրջ գէթ Ֆրանսերէնով գոյութիւն ունեցող քննական աշխատութիւնները կարդալու— ալլ պիտի շարունակես, որքան ատեն որ *Ապագայ* մը գտնուի՝ անարգանքներդ հիւրընկալելու համար, հայհոյանքը շրթունքիդ թափառիլ հայ մամուլին մէջ՝ թոյր ուրանալու պատրաստ վատերուն՝ դասալքութեան պատրուակ մը հայթայթելու, բոլոր սրիկաներուն՝

իրենց ժողովուրդը արհամարհելու իրաւունք պարգեւելու, քոյր ապաստաններուն՝ արդարացման սկզբնաւորութիւն մը շնորհելու համար —դո՛ւն՝ որ ուրացում ես ու դասալքութիւն:

Պատասխանը՝ քու հիւանդ սրիկայի լրբական կարծիքներուդ —*Հայոց ազգը* ինքն է: Պատասխանը՝ *Հայոց մատենագիտութիւնն* է: Մեր *երգերն* են՝ որ ինչքա՛ն ալ աղաւաղեալ ըլլայ հոգիդ ու որքան ալ ծանր ըլլայ հոգւոյդ լսողութիւնը, պիտի լսես օր մը, խորին մեղանշումով մը՝ վերջին ժամուն —երբ մարդ ստիպւած է ակնարկ մը նետել իր կեանքին վրայ, երբ խորունկներէն՝ յիշատակները կ'ելլեն, զարնան երկիրը՝ պատռող առաջին ցորեններուն պէս, պատասխանը մեր ամբողջ քաղաքակրթութիւնն է՝ հիւսիսէն հարաւ ու արեւելքէն արեւմուտք եւ որուն քննութիւնը կարելի չէ սեղմել ո՛չ թէ միակ յօդուածի մը, այլեւ միակ կեանքի մը սահմաններուն մէջ: Ու ականջիդ օդ ըրէ ասիկա,— հայ ժողովուրդը ուրիշ զաւակներ ունի, որ չեն վարանիր տարիներ սպառել իրենց կեանքէն մեր չափաբերութեան շուրջ ստուար աշխատանք մը տալու համար: Ու դուն կ'ուզես, որ քեզի հետ վիճի՞նք՝ քու անոպայ, քու անպատկառ, քու ապերասան սրիկայաբանութիւնդ:

—Որքան որ մտածումս ետեւ տանիմ, հայերը կը տեսնեմ միշտ այնպէս՝ ինչպէս որ են այսօր, պզտիկ, գաճաճ, տխւեղծ: Պզտիկ են, գաճաճ են, տխւեղծ են՝ ի՞նչ առնչութեամբ, ի՞նչ յարաբերութեամբ, կրնա՞ս ըսել միթէ: Ո՛չ միայն պատմական երեւոյթները դժուարաւ բաղդատելի են իրարու հետ, վասնզի ոչ ի՞նչ նոյն պայմաններուն մէջ կը կրկնուի, այլեւ՝ ազգերն ու անհատները: Անշուշտ գեղեցիկ չէ հայկական չափանիշով բացատրութիւնը, այլ մեծ առաքինութիւն մը ունի, այն է՝ մեզ հրաւիրել զգոյշութեան: Այն է՝ մեզ յիշեցնել, թէ ոչինչ կարելի է դատել օդին մէջ, թէ՛ ոչնչի շուրջ կարելի է բացարձակ կարծիք մը յայտնել, առանց խնդրին շուրջը պտտելու, սպառելու զայն: Ո՞վ է իրապէս մեծը, ո՞վ է իրապէս ստեղծագործողը —պատասխանել կարենալու համար անհրաժեշտ չէ՞ միթէ ողջ տիեզերքին վրայ երկարատեւ ակնարկ մը ձգել:

Այո՛, պատմութենէն իրաւագրկուած ազգեր կան, որ չեն դադրիր մեծ ըլլալէ: Չեն դադրիր մեծ ըլլալէ՝ որովհետեւ իրենց լաւագոյն զաւակներուն հոգւոյն խորը անմահ կրակներու պէս կը բոցավառի *բարձրագոյն գեղեցկութեան մը ծարաւը*, կեանքի բարձրագոյն ձեւի մը յաւերժական կարօտը: Հոս է մեծութեան իրական գաղտնիքը: Ազգ մը իրապէս կորստեան կը դիմէ, երբ իր զաւակները կը կորսնցնեն ազատ ու գեղեցիկ կենցաղի մը ճաշակը, երբ անդառնալիօրէն կը հաշտուին՝

Նահանջականութեան հետ, որ կ'առաջնորդէ ձուլման ու կորստեան:

Դիւրին լուծումներուն հետ, որ խղճի խայթն են մարդուն: Ծովութեան, յղիւմի, դիւրին վայելքներու սէր:

Քաղաքական ստրկության հետ, որ գերեզմանն է ազգերու: Յուսահատության հետ ու իր վատթարագույն ձեւին՝ քաղաքական դասալքության, որ հոմանիշ է ազգի մը համար կեանքէն հրաժարումի:

Ինքնավստահության պակասին հետ, որ ամէ՛ն էութեան ներքին ուտինն է, որ յամրաբար կ'ոչնչացնէ է՛ն աղուոր խոյանքները:

Ինքնաժխտումին հետ, որ վաղը պատրուակ պիտի հայթայթէ ուրացման, դաւաճանութեան, ամօթալի փախուստի:

Ու դուն է՛ն տխուր, է՛ն արհամարհելի ասպետներէն մէկն ես մեր ինքնաժխտումին: Գրիշ շարժելէդ ի վեր՝ գրականութեանդ ու հրապարակագրութեանդ ներքին ամբողջ մեքենականութիւնը ուղղուած է միայն այս նպատակին— ազգային ինքնաժխտման: Ու հոս ժամը հասած է, որ երեսիդ նետեմ քու չորս ճշմարտութիւններդ, ինչպէս կ'ըսէ ֆրանսացին, քեզի հաճելի ու քիչ մը հասարակ, այլ զուարթ զայրոյթով մը: Կը խոստանամ պարզութեամբ ըսել մնացեալը, կը խոստանամ աշխատիլ՝ ըսել զայն առանց զայրոյթի, այլ ոչ առանց արհամարհանքի անձիդ հանդէպ, որ այլեւս զարշաք կը պատճառէ միայն ինձ: Ու սկսինք քու առաջին գրքէդ: Ու սկսինք առանց նախաբանի:

Ի՞նչ է քու գիրքդ, որ կը կոչուի *Նահանջը առանց երգի* եւ որ յոխորտալից ու պալգաքեան երկրորդ խորագիր մը ունի: Ան թերթօճանին պատմութիւնն է ո՛չ թէ թուն հայ ժողովուրդին, որ այս ափերուն վրայ, առաջին օրէն իր էութեան պահպանումին համար կոխ մղել սկսաւ ուժերու դէմ՝ որոնց սարսափելի զօրութեան առջեւ, երբեմն տկարութիւն կը զգան է՛ն զօրեղներն իսկ, այլ այն շուկայիկ ու դիրին հաճոյքներու ետեւէն սուրացող պոլսեցի թեթեւոյիկ տղոց, որ երբեք եւ ո՛չ իսկ Պոլիս՝ չէին ներկայացներ իրական հայութիւնը: Պզտիկ ու լաւ հագուած, երբեմն սնգուրուած տղաք էին ասոնք: Անոնց ճակատագիրը՝ պարասրահն էր, անոնց ճակատագիրը՝ դիրին աղջիկներն էին, անոնց ճակատագիրը՝ առաջին դիրին շահերն ու սեռային սանձարձակութիւնն էր: Երբեք իրապէս խորունկ ոչինչ եղած է անոնց կեանքին մէջ — ո՛չ գաղափարի նման բաները, որ կը ջանաս անոնց շրթունքներուն վրայ դնել, ո՛չ անոնց սէրերը, ոչ ալ անոնց տառապանքները: Ու ձգենք վէպդ վայրկեան մը: Անոնք, որ ողջ են այդ տղաքներէն— հանգիստ ու հաստ մարդիկ են: Կիրակի օրերը ֆրանսացի կիներ իր ետեւէն կը քաշէ զանոնք, իսկ իրենք ալ՝ իրենց կնոջ շնիկը: Ու մինչ այդ տղաքը քու գրքիդ պզտիկ ցաւերը կը տառապէին, իբր թէ՛ փարիզեան դիրին աղջիկներու եւ աղտեղի լուսանկարներ լոյսին հանող ծերերու հետ, ի՞նչ կ'ընէր մեր թուն ժողովուրդը: Դուն ո՛չ միայն երբեք ծանօթ չես եղած հայոց իրական պատմութեան, այլեւ չես ճանչնար իսկ ֆրանսահայ գաղութը: Քու չնչին հերոսներուդ պէս՝ կկոցի պէս գացած-եկած ես միշտ պանդոկի սենեակէ մը

ճաշարան ու ճաշարանէն սրճարան: Քու տիեզերքդ տարիներէ ի վեր թաղ մըն է միայն ու այդ թաղին մէջ անկիւն մըն է միայն: Օ՛, անշուշտ Պալգաք եւս, երիտասարդ՝ քաշուած կ'ապրէր կեանքէն, այլ՝ Պալգաք հանճար ունէր, իսկ դուն չունիս զայն՝ շատ պարզապէս, կոկոզավիզ բարեկամ: Լուսանկարաչատուն մը, պանդոկ մը եւ ճաշարան մը ու ճաշարանի ճամբուն վրայ պարտէզ մը՝ կը բաւեն գուցէ փոխադրանքի մը աշխարհը չափելու համար, այլ չեն բնաւ բաւեր հայ երիտասարդ գրագէտի մը՝ իր *ազգին տառապանքը կշռելու* համար: Դուն մեզի հետ չես անցած նուաստութեան սեւ ճամբաներէն՝ չելուզակներու տականքներու ճոկանի հարուածներուն տակ, երկրի ամայութիւններէն, կոնակ դարձուցած գարնան ու հայրենիքին՝ կարենալ զգալու համար անշէջ ծարաւը մեր ազատութեան: Դուն մեզի հետ քար չես կըրծած, դեռ մատղաշ, ապատներու եւ անապատներու եզերքը, դժոխային քաղցի խաբելու համար: Դուն սարսափի անափ գիշերներուն՝ ուժաբեկ մարմնիդ յետին բջիջներով առաւօտեան լոյսին չես սպասած, առանց Աստծոյ, առանց մօր ու առանց սիրոյ՝ զգալու համար մեր աներեւակայելի գորովը, որ մեր մատներէն կրակի պէս կը վազէ ի տես հարազատ հայ մանուկի մը: Դուն քար չես կտորած ճամբաներուն վրայ, յետոյքդ հովին ու աստղի փշուրներ աշքերուդ մէջ՝ ակօսի մը եզերքը չես պառկած՝ զգալու համար զարթօնքի աղմուկն ու ուրախութիւնը հայոց աշխարհին: Դուն չես գիտեր, թէ ո՛ր է Կոտայքը, դուն եթէ ականջներդ փակես՝ չես կրնար լսել ստահակ շեշտը կիւմրեցի հայ մանուկին, խոպան առգանութիւնը քեւաւորի խզանման գիւացիին՝ որ չի դողար, այլ կը սարսի, թէ եւ իր գլխուն վերեւնուրբ շրշիւններով սարսած հայոց աշխարհին մսկոտ ցարասիները: Դուն եթէ ականջներդ չորս բանաս վերստին չես լսեր՝ հաւաքարցի հայ կիներուն յամեցող ձայնը կամ Հաճնոյ մեր աղիւծ տղոց *խշտում* ու *չիշտում*: Դուն չես կրնար լսել անգամ թեքերտաղցիին *ձէն* ու իզմիրցիին *ժան*, վասնզի լսողութիւնդ լարուած չէ հայ ազգին տառապանքին ուղղութեամբ: Երբ վանեցին կ'երգէ *Տըլէ՛ համան, կեամին հկաւ չուր ծովու կէս*, դուն կրնաս լոկ լրբօրէն հեզնել, վասնզի դուն մեզի հետ երբեք չես երգած մեր *անտունի*ները: Դուն, մեզի հետ՝ Բերիոյ ժամուն սալաչատակներուն վրայ, ոջիլ չես քթուած, ոչ ալ տատաւկի մը ետին՝ կթոտ ծունկերով ծռած ջուր տալու համար մանուկի մը, դուն չես գիտեր խօսիլ զանգեզուրցիի մը հետ: Դուն չես գիտեր, թէ ուր է Գորին ու երբ պատահիս պարսկահայ տղոց, որ Իրանի դանդաղութիւնը ունին իրենց ձայնին մէջ ու այթերուն վրայ, — կ'ըսես պարսկերէն կը խօսին: Դուն չես գիտեր, թէ ինչպէ՞ս հայ կինը լաչակ կը կապէ ու ինչպէ՞ս կ'երգէ իր սէրը: Դուն մեզի հետ երբեք չես երգած մեր Սալեաթ-Նովան ու չես գիտեր, թէ ամրան անուշ իրիկունով մարդ կրնայ երեւանէն գլուխը առնել ու Աշտարակ երթալ: Դուն Սանահին՝ չես ծռած

երկրին վրայ ու պապերուդ հողը համբուրած, դուն կթոտ ծունկերովդ չես ելած Դսեղ ու երբ տարերքը կը խարազանէին թիկունքներդ ու գայլերը կ'ոռնային Գեղամայ լեռներուն վրայ՝ չես ճեղքած հայոց ձիւները: Ո՛չ մէկ մանուկ քեզի ըսած է, — *Հայոց* ոչ. դուն մեզի հետ երկաթ չես ծեծած ուռհայեցի տղոց հետ, որ Մծբնայ հայրապետին ժամանակակից հայերէնով մը կը պատասխանեն մանկութեանդ: Դուն մեզի հետ գիշերով ու ցեխին մէջէն Պուա-քոլուն չես եկած, երբեմն անօթի, պատանիներու հետ հայոց աշխարհը գովելու համար, դուն ո՛չ մէկ դպրոցի պատերէն ցատկած ես՝ ուշ գիշերին ուր քիլոմէթր կտրելու եւ Կարցանի հանքերը բարձրանալու համար, դուն օրերով ու տարիներով բանուորներու հետ չես նստած՝ որպէսզի հասկնաս անոնց լեզուն, դուն մեզի հետ՝ գործարանային ծանր աշխատանքէ յետոյ՝ տարիներով մեր զաւակները չես հաւաքած: Դուն քու տիեզերքդ ես ու քու տիեզերքդ՝ քու հիւանդութիւնդ է:

Ահա՛ թէ ինչու քու գիրքդ՝ *Նահանջը առանց երգի*, թերթօն մըն է քանի մը հէք տղոց կեանքէն, փարիզեան թեթեւ վէպ մը, աչդ վէպերուն ամբողջ պայմանադրականութեամբը: Արկածը, որ կու գայ ճիշդ ժամուն, փարիզեան փուճ աղջիկները, որ իրենց գօտին կը քակեն, ճիշդ այն պահուն՝ երբ ընթերցողը կը սպասէր ասոր: Պզտիկ յուսահատութիւնները, որ հաշտութիւնը կը պատրաստեն — այս բոլորը ֆրանսական թեթեւ վէպին մնայուն *թրիւքներն* են, մնայուն կարասիները: Ո՛չ մէկ հօգօր զգացում կը բխի քու գրքէդ, այլ՝ դիրին գոեհկութիւն մը, որ պոսական է եւ որ հետզհետէ կը զարգանայ յաջորդ գործերուդ մէջ: Այս է քու գիրքդ ու այս է ճշմարտութիւնը քու գրքիդ շուրջ: Ու դիտողական ստույգ ձիրքը, որ ունիս եւ վիպախաղը զարգացնելու ընդունակութիւնդ՝ արդարեւ կը յարմարին նիւթին: Մինչդեռ ի՛նչ որ կը սպասենք մենք արուեստէն՝ ներքին փոթորիկն է, քնարական ելքն ու կեանքի նորոգ բաբախիւնը: Ի՛նչ որ կը սպասենք արուեստէն՝ գեղեցկութեան նոր ու ինքնուրոյն ձեւեր են ու ո՛չ թէ ֆրանսական թեթեւ վէպին մէկ սիրուն պատճէնը:

Ու դո՛ւն՝ որ կը պնդես կարդալ գիտնալ, գիտցի՛ր կարդալ նաեւ այս տողերը: Այժմ կը զարմանամ, թէ ինչպէ՛ս կրցանք տարիներով կրել մեր թիկունքին վրայ այս աղտեղի վէրքը, որ դուն ես: Մեր ցաւը աւելի խորունկ էր, քան թէ մարդիկ կը կարծէին: Մեր ցաւը կը կոտորար՝ ամէ՛ն անգամ որ նո՛ր լրբութիւն մը կը քշէիր հրապարակ: Անշուշտ սրիկաներ կային, որ կը կարծէին, թէ քու երեսօթական փառքդ էր, որ մեզ անհաճօխտ կ'ընէր: Այդ փառքը ամբողջովին թո՛ղ քուկդ ըլլայ ու դարձ ի դար: Ու նաեւ այն ամբողջ փառքը, որ երբեւիցէ հայ գրականութիւնը կրնայ պարգեւել հայ գրողի մը, — ա՛յս եւս թող քուկդ ըլլայ ու դարձ ի դար: Մեր ցաւը այլուր էր: Ինչպէ՛ս բացի մեզմէ, երիտասարդներէս, ո՛չ ոք կը յաջողէր իրապէս կարդալ

այդ գիրքը, որ գարշելի նահանջականության մը հայհոյական մէկ արտայայտութիւնն է, երբ կը դադրի ֆրանսական թեթեւ վէպ մը ըլլալէ, ինչպէ՞ս մեր երէցները չէին կրնար զգալ, թէ այդ տողերուն ետեւէն կը սուլէր՝ դեղին ստահակ մը, որ ո՛չ մէկ սրբութիւն ունէր, ո՛չ մէկ իրական փառք ու ո՛չ մէկ իրական մեծութիւն ունէր իր հոգւոյն խորը Գէթ դուն քաջ գիտես, թէ ոչ ոք, ո՛չ ոք կրցած է շրթներէս բառ մը ելլել ի նպաստ այդ ողբալի գրքին: Ինչպէ՞ս մեր երէցները չէին ըմբռներ ներքին հէնքը այդ զազրելի պատմութեան, քու ներքին շարժառիթներդ, որ հետզհետէ հիւանդագին բնոյթ ստացան: Ու ճիշդ այդ վայրկեանէն սկսեալ՝ սկսար քու աններելի ու տմարդի *շանթաժ*: Հիւանդ էիր: Ու ո՞վ կրնայ դպիլ հիւանդի մը: Տաղանդաւոր գրագէտ մը, որ հիւանդ է: Որ հիւանդ է, կ'ըմբռնէ՞ք այս երկու բառերը: Այս երկու բառերը իրաւունք կու տա՞ն միթէ մարդու մը՝ կեանքի հրապարակներէն անցնիլ հայհոյութիւնը շրթունքին: Ոչ բնաւ, այլ քու սնոտի քարեկամներուդ յանկերգը մեր քուն-քերուն դուռը կը ծեծէր, թէն ո՛չ ոք այնքան գոյգոյրանքի, այնքան դրական օժանդակութեան առարկայ եղած է, որքան դուն: Ուրիշ հիւանդներ ալ կային ու ոմանք կը մեռնէին իսկ-այլ դուն երբեք քաջութիւնը չունեցար հպարտութեամբ հիւանդ ըլլալու: Երբ Փանայիթ Սթրասի մեռաւ ու վրէժխնդիր յօդուածիկ մը գրեցի՝ աշպանելու համար այդ ստոյգ գրագէտը, որ վատ մարդ մըն էր- չզգացի՞ր միթէ, որ քիչ մը քեզի կը մտածէի: Տասը տարիէ քեզ դիտելով է, որ հոգւոյս խորը հասած եմ ճերմակ ափունքի մը- խորին ցանկութեան՝ արժանաւորութեամբ մեռնելու: Ի վերջոյ ո՞վ ես դուն հայոց ժողովրդին պատմութեան դիմաց, որպէսզի իրաւունք ունենաս ապաստանած հիւանդութեանդ՝ *թապուշ* վերածուելու համար մեր կեանքին մէջ: Այս անգթութեան ծնուցիչը՝ քու անորակելի վատութիւնդ է, որով տասը տարիէ առնուազն կը շահագործես կեանքիդ այդ ա-դէտը: Ազնիւ մարդիկ մեռան այս տարիներու ընթացքին ու ա-մէն անգամ ի՞նչ ալ ըլլար մեր վերապահութիւնը՝ յարգանքով ծոցցինք մեր գլուխները, այլ իրապէս չենք կրնար հրաժարիլ մեր մարդկային արժանաւորութենէն՝ վերստին զոհ երթալու համար քու *շանթաժ*ի: Լոտրեամբ ու արժանաւորութեամբ մեռնիլ՝ ահա՛ ինչ որ կը ցանկամ այժմ, այս գէշ տարիներուն, եթէ մեկնելու ժամը հնչէ: Խրոխտ քաջութեամբ մը աւարտել այս կեանքը՝ ահա՛ ինչ որ կը ցանկայ հոգիս: Ու եթէ տարիներով, ուղտի յամառութեամբ մը սպասած եմ, այս տողերը գրելու հա-մար, որովհետեւ զօրեղ էր մէջս հայոց քարոյականը ու զօրեղ է ցարդ: Ծոխ՝ վիրաւոր եղբօր վրայ ու ոտքի կեցնել զայն: Ու այս էր նաեւ կեցուածքը՝ քեզ շրջապատող բոլոր տղոց: Այլ քու գէշ հոգիդ երբեք չհասկցաւ մեր վեհաճնութիւնը: Դուն զայն մեկնեցիր, որպէս բնախօսական տկարութիւն մը, որ կը խոնարհի չաղթականին առջեւ: Վասնզի ինքզինքդ միշտ մեծ

յաղթական մը համարած են՝ հայոց գրականության անդերուն մէջ։ Ու միւսներուն վրայ նայած են բարձրէն։ Ու եթէ երբեք չեն սիրած Հրաչ Զարդարեանը, որովհետեւ չեն կրցած անոր հետ ալ խաղալ աչդ կատակերգութիւնը։ Ու եթէ երբեք չեն կրցած ինձ հանդիպիլ, առանց դիմելու ինքնապաշտպանութեանդ սովորական զէնքերուն— այն է՝ սնտոյի պատմութիւններ ու սուտ ուրախութիւններ, որովհետեւ երբեք *սպահովութեան մէջ չես եղած ինձ հետ* Գիտցած են, թէ հիւանդ հոգւոյդ է՝ աննշմար ալիքներուն կը հետեւիս ու կը տեսնեմ, թէ ուրկէ՞ կու գաս ո՞ւր երթալու համար։ Հանդիպում մը չէ եղած՝ որմէ խուլ թշնամութեամբ մը չելլենք դուրս։ Ամէն անգամ ու վերստին խորին գութով սեղմած եմ ձեռքդ ու ամէն անգամ նո՛յն անօգուտ ճիգը, նո՛յն անօգուտ պրկումին նշոյլը նշմարած աչքերուդ խորը— դեռ ընդունակ եմ յարձակելու։ Ի՛նչ որ հոգիդ երբեք չէ կրցած ըմբռնել հետեւեալն է։ Այս եօթը տարիներու լուսինն ու աքսորը ամէն անձնական փառքի տենչ աւլած եմ հոգիէս։ Այժմ միայն հաւատարմութիւնը յարգանքի արժանի կը թուի ինձ, այժմ միայն ծառայութիւնը՝ գորգուրանքի արժանի կը թուի ինձ։ Որքա՞ն փոքր էր հոգիդ։ Երբեք չէիր զգար, թէ պէտք չունէիր նման աղտեղի յարձակումներու դիմելու՝ ցոյց տալու համար, թէ հիւանդ մարմնիդ խորը հոգիդ արթուն էր։ Քիմախնդրութիւնն ու յամառութիւնը՝ անարգութեան մէջ, կեանքի նշան չեն երբեք։ Այլ այս զգացումն իսկ քեզի վերագրելը վերջին վեհանձնութիւն մըն է, որուն արժանի չես բնաւ։ Վասնզի ամէն ինչ քայքայուած է ի քեզ։

Վասնզի ամէն ինչ կու գար երկու աղբիւրէ ի քեզ— ոսկրային հիւծախտէն, որմէ կը տառապիս եւ որմէ մարմինդ տառապած է միշտ, անոր յայտնութենէն առաջ, քեզ զրկելով իրերուն ու կեանքին գեղեցկութենէն, քեզ զրկելով ապրելէ ու հասարակ վրէժխնդրութենէ մը, որ հետեւութիւնն իսկ է ներքին փուլզումիդ— աշտուհանդերձ յաղթել, ի՛նչ գնով ալ որ ըլլայ անիկա։ Ատենութիւնը, որ պորտիդ եօթը կարելի սերուղներով պիտի տածես, մինչեւ մահդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դէմ, ատենութիւն մըն է ուղղուած առողջութեան դէմ,—կեանքի եւ զգացումներու, գաղափարներու եւ խոյանքներու։ Զարհուրելիօրէն կը վախճաս մահէն, որովհետեւ մաքուր չէ ակնարկդ, որովհետեւ մահը ի քեզ է արդէն ու կը զգաս, որ ան գարշ կը հոտի։ Երբեք էութիւնդ չէ զգացած, թէ ուրիշ մահ մը կայ, քիչ մը տրտում՝ ինչպէս թուոր հրաժեշտները, այլ քաղցր։ Վերջին ակնարկի մը մէջ՝ կապտել երկրին գեղեցկութիւնը ու ժպտիլ օրուան, որ կը հանգչի։ Պիտի ծաղկին, պիտի ծաղկին վերստին մեր երկրին յորդակոհակ ջրերը ու մեր ճամբաներէն ուրիշ հրաշք տղաք պիտի ելլեն՝ արշաւելու համար դէպի սէրը։ Սիրով ու յաղթութեամբ բաբախուն գրքեր պիտի գրուին ու կեանքը մեր աշխարհին

մէջ պիտի թաւալի վերստին նոր որոտումներով, նոր ալեկոթիւններով:

Ո՞վ եմ ես ու ո՞վ ես դուն՝ հայոց պատմութեան ու դարձի դիմաց: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ երբ կը բարձրաորակէ կտրին ու լաղթահասակ առաջնորդ, իր ազգին ծո Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն՝ երբ կը քալէ ճակատէն, աջինը՝ ընդունելով բոլոր բեռերն ու բոլոր պատասխանատւութիւնները: Առաջինը ընդունելով ծառայութեան բոսոր դրօշ: Այսպէս կը բարձրանան դէպի աստղերը, կ'ըսէ լատինական անունը: Մարդը մեծ կրնայ ըլլալ միայն խոնարհելով իր սլա հասակը տառապանքին վրայ, ճակատելով մահը, խրոխտ հպտութեամբ մը, ի խնդիր ազատութեան: Մարդը մեծ կրնայ ըլլալ երբ բարձր կը բռնէ արուեստին ու արդարութեան դրօշա Դուն մարդ մը եղար, որ դրօշակ չունէր: Մահդ լոկ արկած պիտի ըլլայ, վասնզի կը զգամ, որ մեռած ես արդէն ու թաղ եմ քեզ հոգւոյս խորը ու գրած տապանաքարիդ վրայ, — Ա կը հանդիսին հիւանդ ոսկորները հայու մը, որ Արարատ է նէր իր հողւոյն խորը:

(Շար. 5 եւ վերջ)

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵ

Ռուսն-
Տասնվեց Փետրուար 1939

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻՈՆ



ՍԻՐԵԼԻ ՍԱՍՈՒՆԻ,

Շնորհակալ եմ գիրքէդ: Ունիմ շատ բախլիքներ, որոնք նամակէ մը հասկնալի է, որ յորդին: Ուրեմն ձգելով ատոնք լաւ օրերու, որոնք կրնան չգալ, անմիջական տպաւորութիւններս:

ա)–Անբաւական է յառաջաբանը: Նկատի ունիմ Սասունցի Դաւիթին կշիռը նմանօրինակ ստեղծագործութեանց հետ բաղդատուած: Առնուազն «Ընծանատր»-ը պարտ էիր մերձեցնել մերինն ու բարձրանալ մեր հոգիին հիմնական քանի մը նուաճումներուն արտահանումին: Չեմ բաժնեք Աղբալեանի կարծիքը, գերութեան complex-ի մը կապելու գործին այս ձախողանքը: Մտածեք եմ ժողովրդական եւ գրական յորինումներու: Հիներու (մեր) փըշ-րանքներէն թելադրանքներն ալ կը նետեմ կշիռի: Ունիմ գտածը, ան՝ որ մեր ժողովուրդը խորապէս քնարական, գրեթէ անհաղորդ է գտնուած դիւցապներգականին: Իր պատմութիւնը կը նպաստէ իմ տեսակէտին: Մեր կոփւնքը երբեք յարձակողական՝ ներքին վկայութիւններ են հայ հոգիի ամէնէն յատկանշական կերպարանքին: Չունէինք գրոհ մը, մեզմէ դուրս, գրոհի սիրոյն: Իջեր ենք մարտի դաշտը, ուրիշ բանէ արգիլուած ըլլալու, երբ պիտի սիրէինք մեր տարրերը, մեր բնութեան յոյսերը արժեւորել, այսինքն՝ էապէս քնարական խառնուածքի փաստեր են, մեր արուեստին ամէնէն իրաւ յաջողութեանքները: Թերեւս ցեղը իր հեռաւոր, նախապատմական շրջաններուն անցեր է քրոջէն: Բայց ժամանակը փոխած է այդ կողմերը մեր հոգիին: Յառաջաբանը ամփոփ մօտենալու էր այդ հիմնական հարցին: Արեւելքի մեզ դրացի ցեղերուն իսկապէս ժողովրդական յորինութեանքներէն ո՛ւր եւ ինչով կը տարբերի Սասունցի Դաւիթը: ահա՛ հիմնականը:

բ)–Անշուշտ սրբապղծութիւն պիտի ըլլար բնագիրը յապաւելու, սրբագրելու, ճոխացնելու, գրականացնելու ամէն փորձ: Տուածդ բնագիրն է: Ու շնորհակալ ենք ատոր համար: Բայց մանուկն իսկ կը գգայ, թէ այդ բնագիրը որքան նուաղումներ, տկարութիւններ, նոյնիսկ անհեթեթութիւններ կը բովանդակէ: Յառաջաբանիդ մէջ փափաք մը, այդ ամէնը տեսնելու, հրաւէր մը առանց բնա-

գիրին տպելու՝ նուազումները՝ անհատական պատասխանատվություն տակ սրբադրելու, գործին զուտ գրական կերպարանք մը ճարելու, - կը խորհիմ, թէ կրնային օգուտով անդրադարձնել ունենալ: Սասունցի Դաիթ հում նիւթէն բարձրանալ հայ խականն էրօսին, ինչպէս ըրած է Վազնէր Նիւալլուններէն:

գ)-Բնագիրը սեւեռելէ վերջ գրական մեծ կարողութեան մը պէտք չեմ գտար..... Սասունցի Դաիթ մը ոտքի նետելու:

դ)-Բնագիրն կշռոյթը միշտ չես յարգած:

ե)-Տուի տղու (տասնմէկ տարեկան), որ կարդայ Ու գտայ, որ մէկ շունչով աւարտել է: Հեքիաթին ուժն ու... տկարութիւնը:

զ)-Առիթ մի փախցնէք հպարտանալու ժողովրդական այդ յօրինումին կարելիութիւններովը: Վաղը սիննան անկէ կը հանէ հարազատ, հոյակապ գլուխ-գործոց մը, պայմանով, որ գրական շատ փորձ, թափանցուն կարողութիւն մը լրացումները գործադրէ բնագրային նուազումները դարմանելով:

է)-Վաղը մեր երաժշտութիւնը անկէ ունի հանելի իր ամէնէն իրաւ ստեղծագործութիւններէն մէկը:

ը)-Բոլոր ժողովրդական յօրինումներուն անսահման կարելիութիւնները օժտուած այդ գործին քու բերած սա քիչ նպաստն իսկ արժանի կը նկատեմ գնահատման:

թ)-Քու բնագրին վրայէն դիւրին է ճամբան ամէն հարազատ արուեստագէտի, որ մարդկային մեծ թեմաներու օգտագործումը պիտի հետապնդէր առասպելին վրայէն: Ծէյմս ձոյս եւ Էօփէն Օ'Նէյլ, Պերնիթայն եւ Ժիրոնաու այդ հրաշքը իրագործեցին, հեքիաթը արդիացնելով՝ Վակներէն եւ ռոմանթիքներէն վերջը: Ծոյսը մեր օրերու գերագոյն իրաւն է, իր Ողիստէսին ընդմէջէն:

Սիրով՝

Յ. ՕՇԱԿԱՆ

Ս. Ն. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԵԱՆ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՈՒՆԱԿԸ

Ն. Սարաֆեանի գրականության հիմնահարցերն մեկն է արեան կանչը։ Արիւնը, որ զինք կը մարդեղինացնէ, կը բարձրացնէ, կատարելության կը մղէ։ Սարաֆեանի համար արիւնը միայն հայկականութիւն, ազգային պատկանելիութիւն ու հոգեւոր մշակոյթ չէ, այլ համամարդկային իտէլաներով տոգորուած՝ աշխարհը կարգաւորելու, իմացական ու հոգեւոր սանդղակներէն դէպի արարման խորհուրդը բարձրանալու թռիչք է, կեանքի մէջ մարդն ու ընկերութիւնը կերտելու արարողութիւն ու պատարագ է։ Մարդը արիւնն է, իսկ արիւնը՝ մարդը։ Այս մեծ խորհուրդին արգասիքն է «Տասնչորս»ը, որ ազգային արեան համամարդկային պարունակին էապէս արձագանգող սարաֆեանական հաւատամքն է։

«Տասնչորս»ը կը բաղկանայ 14 արձակ բանաստեղծութիւններէ, որոնք յօրինուած են Յուլիսի 14ի փրանսական ազգային տօնին առիթով, առանց սակայն այդ տօնին ձօնուած գործ մը ըլլալու։ Ֆրանսական տօնախմբութիւնը պարզապէս պատրուակ մըն է, որ բանաստեղծը իր սփիւռքեան իրականութեան մէջ քիչ մը աւելի փնտռէ ինքզինք՝ եւ իբրեւ մարդ, եւ իբրեւ հայ։

«Անջրպետի մը գրաւումը» եթէ նոր աշխարհին մէջ համբարդութիւնն է, զայն նուանելու նպատակով, «Տասնչորս»ը սակայն ետդարձ մըն է դէպի անանդական, հոգեմշակութային արմատները հայ մարդուն, որ իր սեփական արեան ձայնին ականջալուր, իր տեղը կ'որոնէ ազգերու եւ համայն մարդկութեան պարունակին մէջ։ Անով կը բացուի հոգեկան տրամը Սարաֆեանին, որ ախորժով մը իրեն պարտադրուած տաքաշխարհի մը մէջ կանգնած, կը մտորի զինք սփիւռքացնող մականտազրին մասին։ Անցեալ-ներկայ-ապագայ եռանկիւնն է, որ իր մտասեւեման առարկան կը դառնայ, առանց երբեք մնալու անհատական սահմաններու մէջ, որովհետեւ «Տասնչորս»ը իր աստիճանական զարգացումով անհատականէն կը բարձրանայ դէպի համամարդկայինը։

Քերթողագիրքին բոլոր հատուածները կը բացուին «կարելի չէ, կարելի չէ չիշել ինչ ո՛ր արիւն» զգայացումը մախադասութեամբ, որ յաճախանքի կշտոյթով կ'անցնի հատուածէ հատուած, որոմէ, օղակաւորով իրարու, գործին կու տան երկարաշունչ պոեմի մը բնոյթը:

«Տասնչորս»ը մանաւանդական է իր ժողով եւ յեզուական միջոցներով: Արեւմտահայ բանաստեղծութեան դասական աւանդները կը շարունակուին պոեմին մէջ, յաճախ յիշեցնելով Թէքէնեանի զսպուածութիւնը, Վարուժանի յեղափոխական շունչը, Մեծարեցի քնարականութիւնը: Պատմողական իր բնոյթով, պոեմը աւելի հաղորդական է, կը կրէ յուզական շեշտ, որ բոլոր հատուածներուն մէջ կ'երեւի: Իրեն ինքնակրթութիւն միջոց, բանաստեղծը կը հասնի սովորական գրոյցի: Առանց թերագնահատելու պոեմին գեղարուեստական արժանիքը, կարելի է ըսել, որ անիկա չէ յուզած հեղինակը՝ գրական երկ մը յօրինելու միջոցով պլանայ, որքան ինքնաբերական պոեթ-կամ մը թուրքին յանձնելու մտահոգութեամբ: Այս բոլորը յատկապէս կ'երեւին մեզի, երբ քերթողին հետ ինչ առ ինչ կը յառաջանանք առաջին հատուածէն մինչեւ վերջինը: Տասնչորս քաղցրեմնայն ալ մերթիւն շարադրութեամբ մը հիւստիւստեմ եմ իրարու, հետզհետէ խորացնելով Սարափեանի մտածումներն ու նորերը յայտնաբերելով, որոմէ տրամադրական ընթացքի մը ներքին կառոյցին կը հպատակին:

«Տասնչորս»ը կը բացուի տօնախմբութեան արտաքին նկարագրութեամբ, երբ փրանսացի ժողովուրդը լոյսերու, պայթուցիկներու հրավառութիւնը կ'ապրի: Բայց, առաջին իսկ հատուածով, հեղինակը մտածում մը կը գործադրէ, որուն դիմաց կարելի չէ անտարբեր մնալ: Ան լոյսին մէջ սուրբազան ամբողջները կը դիտէ իրեն գոհեցող նոր դաստիարակութեան մը, նոր պատերազմի մը, որ անշուշտ ունի իրաւական երկարաշունչ: Բանաստեղծը տօնախմբութեան կը մասնակցի՝ փրանսացի ժողովուրդին ամբողջ պատմութիւնը վերաբերելով, ինչ որ ան մտահոգ է մարդկութեան իրաւականութեան հաշտութեամբ: Պրանսական իրերայաջորդ յեղափոխութիւնները, իրենց ընկերակցական գաղափարներով, եղբայրութեան, հասարակութեան եւ ճշմարտութեան մշակութեանը յուզած եւ ամբողջ մարդկութիւնը: Բայց բանաստեղծը կը տեսնէ, որ անգամ ալ մշակութեաններու քաղցրին գոհաբերուած մանատակները չկրցան նոր ժամանակներու մարդկութիւնը առաջնորդել իրենց երազած իտեալ ընկերութեան մը ստեղծումին, որովհետեւ «նոր թոյներու պատրաստութեան այս մեծ» մեքենայութիւնները փաստօրէն կը շարունակուին: Գաղափարական Սարափեան կարծես կը նախատեսէ գալիք չարիքը, երբ երկրորդ գլուխին մէջ կ'ըսէ. «Անհեշտութեան, յառաջագոյն մեքենական այս աշխարհին/հարիւր խաւար/ չարիք մ'արդէն մետաղալիքիւր արմատներ կը նետէ»:

Առաջին երկու հատուածներուն մէջ հեղինակը չի միջամտել իր անձնական փորձառութեամբ, այլ՝ տարաշխարհի ժողովուրդին ապագային մասին հաստատումներ ընելով կը գոհանայ: Երրորդ երգին մէջ, բանաստեղծը կ'անջատուի ամբողջէն եւ թմրուկներու ձայնէն «Քառատորոփ», յուշերու գարթումը կը զգայ իր հոգիին մէջ: Ո՞վ է ինք, ինչո՞ւ եկած է հաս, երբ չի կրնար նոյն «թերութեամբ» մասնակից դառնալ շրջապատի ուրախութեան: Եւ անա՛ տրամը, որ նոր պատուհան

մը կը բանայ Սարաֆեանի միտքերուն. «Ա՛հ, կ'երեւայ որ ես տարբեր, /տարբեր տարբեր /ու տարուբեր նժդեհ մըն եմ, /բեկոր մըն եմ ես՝ յարածուփ, այս լոյսերուն մէջ դժխեմ»։ Այս երկու տողերը բաւարար են, որ ինքնութեան հարցը սեւեռուի պոետին մէջ։ Սարաֆեան գիտակից է վտարանդի մը ըլլալուն, քայց «տարբեր» ըլլալը «այնու քանաստեղծի վաւերական անդրադարձը պիտի ծնէր անվրէպ»։ Այս անդրադարձը, գիտակցումը՝ որ կը յարակցուէր ստեղծումի մը, ինքնութեան ռիթմական քացայայտման մը գործարկումին, կը յենուի գլխաւորաբար մեր նորագոյն պատմութեան շուրջ խորհրդածութեան մը վրայ եւ յի, կրկնեմ, առեւակական էութեան մը թէական խորհուրդին»¹⁶։

Սփիւռքի մարդուն վաւերական ստեղծումով է, որ քանաստեղծին ոտքերը «պարապութեան մը մէջէն կ'երթան աշխարհ մը օտար»։ Իր միտքերուն հետ տարուբեր այդ վիճակը նոր չէ Սարաֆեանի համար։ Ըսինք, որ նաու մը մէջ ծնած ըլլալու համգամանքը կարծես ցաւաւորական դեր մը խաղացած է քերթողին նաեւ ստեղծագործական կարողութեանց վրայ։ Միտքերու մէջ տարուբերող Սարաֆեան կ'օրորուի նաեւ հակասական զգացումներու մէջ, երբ յայտն է կ'անցնի դէպի յուսարեկում. «Յոյս մը արագ /եւ յանկարծ խոր յուսաբեկում մ'ու ընդվզում մը՝ ամբողջ /ուրախութեան, ճոխութեան մէջ այս չըջական»։ Քերթողը չի կրնար ներդաշնակուիլ շրջապատին հետ, քանզի ան «տարբեր» է անոնցմէ։ Այս հատուածը կ'աւարտի իմացական նոր ֆառագայթումով մը, երբ քանաստեղծը կեանքին հանդէպ իր նայուածքը կը քացայայտէ.

Մ'ընտրեալն.

*ինչպէ՞ս կրնամ պախարակել աներեւոյթ քու թելերէդ
կախուած այս խեղճ ու սեթեւեթ
ուրախութեան խամածիկները՝ իրենց
խոր կիրքերուն համար բոլոր,
երբ կեանքն ամբողջ յօշոտում եւ քայքայում մըն է մեծ,
երբ ամէն օր
զոհեր պէտք են եւ զանոնք փարատող բիրտ երախներ։*

Նորունկ ընկալում մը կեանքի, որ կու գայ քերթողին հոգեմշակութային ժառանգէն։ Անշուշտ ինք մէկն է այդ գոհերէն, արեւմտի իսկ ժառանգուած, Եղեռն ու գաղթ տեսած ու տարաշխարհի մը մէջ ինքնութեան հաստատման նամբուն վրայ մտորող հայ մարդուն, որ կը հեցնէ քաղաքակրթութեան բիրտ օրէնքները բոլոր։

«Տասնչորս»ին չորրորդ գլուխը նկարագրական է. գինուորներու տոգանցք, դրօշներու ծածանում, փառաբանում մտեղներու, քայց նաեւ շրջապատին հետ բախում. «Մինչ իմ ձայնը կը խեղդուէր, /կը գալարուէր կուրծքիս ետին»։ Ապա, քանաստեղծը կը մղուի

¹⁶ Գ. Բիրքեան. «Ն. Սարաֆեան. Զագահայ երկեր», էջ 484.

պատմութիւնը դատելու փորձութեամբ. «Դատաստանի օր էր այսօր»։ Այն դատաստանին, որում առջեւ դաւադիր մարդկութիւնը պիտի դատուի հայ նահատակներու կողմէ. «Կարօտ մըն էր, տրտում, հզօր... /կը ցանկայի ցցուի/, ճշայ՝ /գլուխներուն ծովածաւալ՝ առջիւ ձգած անգիւղիկներ մեր մեռելները բողբոջ»։ Արիւնն է, որ կը բարբառի, իր ազգին արնաթաթախ տեսիլներուն ու անբուսած հողերուն յուշերու տողանցումով։ «Ինչպէ՞ս կարելի է մոռանալ անցեալը, ի գուր եւ անարդարօրէն թափուած արիւնը։ Նրա աչքերի առաջ յայտնուած են արիւնոտ տեսիլներ, անմարդկային, դաժան արարքներ, որոնք նրան դարձնում են մոռալ ու տխուր, հեզմոդ ու ըմբոստ, յուսալքուած, բայց եւ յուսացող։ Իր փոթորկուող հոգին ինքն էլ գուրալուած չի տեսնում, այլ՝ «Քառս մը» «պեկոծուած՝ վշտագալար կարօտներով», իր երգերը համարում է «փշրած երգեր», հայրենիքի նկատմամբ իր սերը՝ «արմատ, հլու»¹⁶։

Դատ մը ունի հայ բերքողը, ու այդ դատը անարգանքի սիւնին կը գամէ համայն մարդկութիւնը։ Այս թեման անյի խորունկ կերպով պիտի զարգանայ վեցերորդ հատուածին տակ, զոր կարելի է համարել բերքողին երկուստեան ցուցանիշը՝ հայը եւ մարդը։ Բանաստեղծը իր երակներուն մէջ կը զգայ օտար թոյնի մը անցումը, զոր պծգանքի մը զգացումը կը յորդեցնէ իր ներսիդին. «Քարացընող պծգանք մը կար /սրտիս վրայ/ հողիներուն այդ քառսին»։ Հոս է, որ կը պատկերուի «Քառս»-ը, որ Սարաֆեանի հոգեվիճակը կը պարզէ։ Դուխը ամբողջ պատում մըն է մեր ժողովուրդին անցած ճամբաներուն, մտնողը յիշեցնող երեսօյններու, անապատի աւազներուն վրայ «բզկուած միւսերուն» եւ «խնդուէր բիրտ թշնամիին ճայճայող մեզ»։ Բայց նաեւ կայ փնտռումը, սպասումը մեր օրերու Արտաւազդի մը։

Պիտի դա՞յ,
օր մը, մէկը մեր որբերէն պիտի ճա՞յ,
թշնամիին արօրին տակ ցցուող անմեղ ոսկորին պէս,
օր մը մէկը՝ փոսորափալլ ու հրրաւեայ՝
պիտի կանգնի՞ ապագայ
մարդկութեան դէմ,
ատելութեան դէմ ընդհանուր՝ որ մեզ խաբեր է ու տանջեր։

Հարցադրումը կը շարունակուի սովորական զրոյցի մը պէս։ Ընդվզում՝ նակատագրի դէմ, մեզ խաբող թշնամի կեցածքներուն դէմ։ Բայց ազգային ցաւի կոտորածը նայնքան բաւում ու ընդվզեցուցիչ է նաեւ համամարդկային բովանդակութեան մէջ։ Մասնակիւն դէպի ամբողջը յղուող այս տագնապն ու քառային վիճակը հարցերէն մէկն է եւ, թերեւս, գլխաւորը՝ Սարաֆեանի բերքողութեան։ Մարդկութեան ցաւերով կը բռնուի ան՝ մեկնած իր ինքնութենէն։

Քառսը կը շարունակուի ուրբերող հատուածին մէջ, այս անգամ ամբողջ սերունդի մը, Սարաֆեանի՝ սերունդին անկումային հոգեվիճակը

16) Վ. Գալստիսեան. «Միլիտարայ գրականութիւն», Երևան, 1997, էջ 88։

դրսեւարելու համար. «Քառս մը ես՝ աշեկոծուած՝ վշտայար կարօտներով»... «Մեր ճիգերը անցան ի գուր, ջրատուեցան, /մեր հողերը ընկղմեցան հրակործան», ապա՝ Սղեռն ու Սղեռնին յաջորդող գաղթականութեան ու ախարի տարիներ, որոնք ընկնեցին ո՛չ միայն հայ հագին, այլեւ՝ ապրելու կորովը ամբողջ սերունդի մը, որ վկան եղաւ այն տխուր իրականութեան, երբ «Հայը հայուն եղաւ թոյն, /նահանջներու փոթորկոտ թշուառութեան ճամբէն վար՝ /ծիծաղելի՝ մեր զօրքը հերոսը եղաւ /թատրերգութեան մը տրմոյն»:

20րդ դարու մեր ազգային կեանքի վերիվայրումներուն, բաղաժանան ձախողութիւններուն ու հայ ժողովուրդին զաւակներուն միջեւ բարձրացած արհեստական ու թշնամական պատերու ակնարկութիւններ կան հոն, ինչպէս նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան փլուզումն ու հոն, Խորհրդային Հայաստանի մը ստեղծումով՝ «Դժբախտութիւնը մեզ քամեց /եւ մեր կորովը կեանքի, որ ոչ մէկ բիրտ արշաւանք, մահացու ոչ մէկ հարուած/ կրցաւ քանդել դարերն ի վեր մթազին՝ մեր կորովը յարանորոգ՝ սմբեր՝ արդէն, ներքինացեր է խեղճօրէն»:

Այս բոլորէն ետք, ի՞նչ կը ներկայացնէ ի՞նչ՝ քանաստեղծը.

*Քառս մը ես՝ մուկ, անթափանց,
կազմուելու դեռ անկարող,
եւ անկարող ժայռի մը պէս կուրծքս տալու մեր ցաւերուն՝
կ'երազէի կրտոր մը շող,
եղբայրութեան առաքինի քիչ մը հուր,
համախմբում մ'ընդհանուր:*

Ինքնամեղադրում, թէ իտեալ ընկերութեան մը երազին անողոք ոչնչացումը. թերեւս երկուքն ալ, որպէսզի քիչ ետք, յաջորդ երգին մէջ քանաստեղծը այս մտածումը արձանագրէ. «Ա՛հ, ինչ դառն է անցնիլ միմազ, երկտասարդ՝ ուրախութեան մէջէն, որուն կարելի չէ ա՛յլ մասնակցիլ»: Միմակութեան գաղափարը տարբեր երանգ կը ստանայ տասնմէկերորդ գլուխին տակ, ուր յստակօրէն կ'ընդգծուի իտեալի մը աներաժեշտութիւնը, այն իտեալին, որուն շնորհիւ քանաստեղծը վերստին պիտի կապուի կեանքին: Իսկ ճակատագրի մէկ անողոք յաղով ինք կապուած է ա՛յն ժողովուրդին, որ այսօր կ'արբեմայ իր մախնիներու հերոսական յուշերով, պատմութեամբ, առանց երբեք ի՞նչ հերոսամայութեան փորձ մը կատարելու: Քանաստեղծը կ'ափսոսայ զինք բռնադատող ճակատագրին իրատես ըլլալով. «Ա՛հ, ինչ ծանր է անցնիլ մէջէն ժողովուրդի մ'որուն հաւտալ, /կարիւլ ալեւս դուն չես կրնար», բայց կայ նաեւ միւս իրականութիւնը, զոր կարելի չէ անտեսել. «Ու չես կրնար կտրել կապերդ բոլոր /որ հիւսուեցան հոն՝ հեռուէն, պատահական յոյսերով», արիւնի՝ մը բոլոր գաղտնի ու լուսաւոր կապերով, որոնք կը հիւսեն «ե՛ս»ը մարդուն մէջ, առեւտական երակներու անտեսանելի ցանցով մը, որ գոյութիւնն իսկ է:

Սարաֆեան, որքան ալ իրապաշտօրէն քննարկէ հարցերը, ընէ պատումը իր ազգին, տաքաշխարհի ժողովուրդին թէ համայն

մարդկության, կը մնայ հաւատարիմ իր մերձին պայծառութեան, որ լաւատեսութեան ջիղը աւելի եւս կը պրկէ բանաստեղծին մէջ: Ներքին աստուածներու երկրպագումներն են բանաստեղծները, իսկ Սարաֆեան աւելի քան տենչացողն է այդ աստուծոյն, որպէսզի միշտ հրահրէ իր մէջ երագելու, տեսիլներ հիւսելու, պայծառ հորիզոններ ուրուագծելու հաւատքը: Այսպէս, տասներկուերորդ գլուխը լաւատեսութեան ծնունդ կու տայ: Զարի ու բարիի քախումբն, վրէժի վերածուած պոռթկումն ու անգորութեան դէմ ծառացումն ետք, փիլիսոփայական աշխարհի մը դուռները կը բացուին կարծես, եւ Քերթազին մտածումները հուրի-փերիներու կախարդական քայլերով կը յաջողեն իրարու, յատկապէս երբ անձնական տուայտանքը ախորեպիւն կ'առնէին այնքան, որ ցաւը կը կորսնցնէ իր իմաստը եւ քաղցրութեամբ կը համակուի: Հագիի բարձրացման, ինքնակերտումի, ինքնահաստատման ու մարդկային կատարելութեան ձգտում մը կայ հոս անպայման, որ Սարաֆեանին կը պարգեւէ՝ կուտակուած, ամբարնուած եւ բեկուած տագնապները արհամարհելու կորով, եապէս ինքզինք ըլլալու հրամայականը, քանզի *«փիւնիկն հուրէն կը ծնի: Ծառերն աղբէն կը ծաղկին: Եւ ինչո՞ւ ծառն է փոթորիկի օդի նման, կուրծքը լեցուն՝ աղմուկներով՝ ուռող, պատուող հողի նման: Ի՞նչո՞ւ է ցաւը, դառնութիւնը անսահման, կախարդանքը, որ կը տանի զիս աշպէս»*: Փիւնիկը կը ծնի վերստին, այս անգամ կեանքի մեծ օրէնքին, գոյատեւման գործընթացին առնչուող խորհրդածութիւններով, որոնք տասներեքերորդ հատուածը կ'ընեն եապէս թրթռում ու նոր մտածումներով հարուստ:

Մինչեւ այս գլուխը, կարելի էր յաճախ հանդիպիլ գաղափարներու կրկնութեանց, նկարագրական մոյմօրիմակ էջերու եւ մոյմատիպ պոռթկումներու: Վերջին երկու հատուածները այլ որակ կը կազմեն: Անոնք կը տարբերին առաջիններէն իրենց առաջադրած ծրագիրով, կեանքին հետ քայլ պահելու եւ առաջ ընթանալու տրամադրութեամբ:

Նախավերջինին մէջ հեղինակը իր կենսափորձին ու մարդկութեան մշակութային ժառանգութեան հիւքը կը քամէ կարծես, երբ մարդկային արիւնին գոյատեւումը կը գտնէ քաղաք անոնց մէջ, որոնք աշխարհէն կ'անցնին քայքայուած, «նեխած յուշեր»ով ծանրաբեռնուած, *«ո՛վ տըւած է ինքզինք մահուան», «ո՛վ աներկիր է ու նժդեհ»*, որովհետեւ քայքայուածը կեանքէն յուսալու առիթը ունի, մահուան գացողը՝ պոռթկալու կարողութիւնը, իսկ նժդեհը՝ սէրը զգալու, «դէպի քարին» հասնելու հաւատքը ունի, թէ՛ *«պիտի ծընի իւրօր կրկին՝ /խաղաղութեան ծիածանի»*: Տառապանքէն, պայքարէն ծնելու, ազնուանալու, աւելի եւս մարդկայնանալու հրաւեր մըն է սա՝ համայն մարդկութեան հասցեագրուած, աշխարհի կարգն ու սարքը նոր դասաւորումի մը ենթարկելու, «քառս»ը կարգի բերելու: Բան մը, որ աւելի յստակ քանածեւում մը պիտի գտնէ *«Մակընթացութիւն եւ տեղատուութիւն»* գործին մէջ:

Նախավերջին երգին առաջին տողերէն հոսող «Լուսարաց»ի շողերը խորհուրդ մը կը փոխանցեն, որ վերջինին մէջ իր լրումին կը հասնի: Մինչեւ տասներկուերորդ գլուխ, մօթ ու խաւար գիշեր մըն էր, տօնա-

խըմբութիւնը տեղի կ'ունենար խաւարի մէջ: Տասներեքերորդով՝ լոյսի բացավառ շերտերով կը դարձնուի մարդու գոյատեւման «համգանակ»ը, իսկ «արիւն»ը կը դառնայ «միսիթարանք», «կախարդ հա՛նք», «քնա՛գդ» ու «ազդու փաստ» ու «գայլը վանող ազդու կրակ»: Յ. Քիւրքնեանի իսկ հաստատումով, «արիւնը մարդկային ընդհանրական արիւնն է», որով «մարդը մարդ» կը դառնայ «եւ կ'ըսէ «ես՝ իրապէս»:

Տասնչորսերորդ հաստուածը կ'աւարտի տիեզերքի մէջ մօր ծնող ու կազմուող «հսկայ աստղ»ի մը արտասովոր շունչով, զոր կը գգայ Սարափեանի սիրտը, մինչ քանաստեղծին «միսերն ի վար» կը հոսի «զադոս ու շինարար» ձայնը նորաստեղծ այդ աստղին, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ քերթողին հաւատէն քիսած իտէպ ու կատարեալ ընկերութեան մը խորհրդանիշը: Եւ, վերջապէս՝

*Սիրտըս կը զգայ, որ կը վարեն զինք հեղեղներդ՝
արի՛ արիւն,
նպատակի մը հեռաւոր ամերոուն
եւ ի գուր չեն, ի գուր չեն
խլրտումներն, տատանումներն իր այսքան,
իւր սուզումներն յուզումներուն ընդմէջէն:*

Տիեզերքի մեծ գաղտնիքին տիրանալու առնական իր կեցուածքին մէջ, Սարափեան այս կեանքին մէջ նպատակ մը տեսնելու պահանջը կը դնէ: Ան կը հաւատայ, որ մարդկութիւնը զուր տեղը չէ, որ կը խլրտի, կը սուզուի, կը տատանի. անպայման՝ որ, այս բոլորին ետին նախախնամութիւնը նպատակ մը սահմանած է, որուն իրագործումը մարդկային արեամբ կը կատարուի, ի խնդիր անբերի ու կատարեալագործուած ընկերութեան մը հաստատման:

(Շար. 2)

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՒ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

ՖԷՅՍԱԼ ԽՈՒՐՊՈՇ ԵՒ ԻՐ ԱՐԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սուրիական եւ արաբական մէկէ աւելի զրական մրցանակներու արժանացած Ֆէյսալ Խուրդոշի «Պզտիկ փաշային համառօտ պատմութիւնը», «Գիշերուամ ու յասմիկին քերթերը» եւ «Զէյթուն խամ» անուն վէպերը, որոնք կը փակեն շղթային օղակները սուրիացի արձակագիրներու «Հայկական գործեր»ուն, նախորդ էջերուն ներկայացուած գործերուն վրայ կը զուժարեն ամբողջականօրէն Հայկական ծրագիրի մը իրականացման նուաճումը եւ ընդհանուրէն կ'անջատուին Հայկական ինքնութեան ներքին եղանակներուն ու բնորոշիչ յատկանիշներուն մէջ առանկագոյնս խորանալու իրենց յանդգնութեամբ:

1991ին, «Աճ-Նագէտ» ամսագիրի երիտասարդ վիպագիրներու Համարարական մրցանքի դատակազմի հնահատանքին արժանացած «Պըզտիկ փաշային համառօտ պատմութիւնը»³² վէպի էջերուն ձեւաւորուած

32) «Աճ-Նագէտ» ամսագիրի արար երիտասարդ վիպագիրներու 1989-1990 տարուան մրցանակակիր վէպերու կողքին, դատակազմը յատուկ գնահատման արժանացուց ներկայացուած 51 վէպերէն բանի մը հատը, որոնցմէ մէկն էր Ֆէյսալ Խուրդոշի «Պզտիկ փաշային համառօտ պատմութիւնը»: Հետագային մրցանակակիր եւ ուշագրաւ վէպերը յոյս տեսան թիւատ ել-մայեւ գիրքեր» երատարակչատան «Վիպային մատնանշար»էն: Խուրդոշի վէպին մասին յաւելեալ ծանօթութեան համար տեսնել Ճանաճ Ճաստէմ Հալլաուիի «Պատմութիւնը կը կերտեն... կորուսած մանրամասնութիւնները» խորագրեալ գրախօսականը, «Աճ-Նագէտ», 1991, Յուլիս, թիւ 4 (թիւ. 37):

Հայկական միջնորդությամբ, չորս տարի ետք, ինքզինք կը կատարելագործէր եւ կը բարձրանար մինչեւ ուղնուծուծը Հայկական ոլորտներ, երբ այս շնորհալի արձակագիրը 1894ին լոյս կ'ընծայէր միմիայն Հայկական տրամին վրայ Հիմնուած «Գիշերուամ Եւ յասմիկին Թերթերը» անուն իր խիստ հետաքրքրական վէպը՝ առաջին վէպի էջերուն գիծ եւ նկարագիր ստացած Հայուհի Մարիամի (Էմ Ճամիլ) կերպարը զետեղելով ժամանակն ու վայրը ընդգրկող իր լայն շրջանակին մէջ։ Այլ խօսքով՝ «Պզտիկ փաշային...»-ի Հայ Հերոսները (Մարիամն ու իր որդի Յարութը) կարծես կ'ըլլային աստիճան մը, որպէսզի «Գիշերուամ Եւ յասմիկին Թերթերը» վէպին միջոցաւ հեղինակը բարձրանայ իր ամբողջական ժրագիրի աշխարհը եւ Հատորի ամբողջ տեւողութեան, դրուագ առ դրուագ ու հոգեվիճակ առ հոգեվիճակ, աղամանդեայ խտութեամբ զսպանակէ առաջին վէպի էջերուն տարողունուած Հայկական Հորիզոնները, գեղարուեստական կուռ կառույցի մը մէջ ի մի խմբէ ճողողած Հայութեան արեան ողբերն ու հեքիաթները, զանոնք երկնագրէ թախծաշէտ կարօտին եւ արթնութեան թանձրացող երազներով եւ դառնայ ո՛չ միայն կոտորակուած Հայութեան, այլեւ՝ անիրաւուած զղաւթութեան Հատու ձայնը։

Շնորհիւ այս որակական անցումին՝ տառապանքի եւ կոտորածներու մռայլ պատկերներով ծանրաբեռնուած «Պզտիկ փաշային...» Մարիամը իր երկրորդ կեանքը, իմա՝ Զարդակոտոր ցեղին յարութիւնը կ'ապրի «Գիշերուամ Եւ յասմիկին...» Մարոյի վերածաղկեալ կեանքին մէջ, առաջին Հատորի Ճամիլ-Յարութի հոգեկան եղբայրացումը իր լի՛նելութեան ոլորտները կը նուաճէ երկրորդ երկի Յալիլ-Մկրտիչ ամբողջական միաձուլումով, եւ զգացական հոսքի, ցնցիչ տեսարաններու, նպատակաւորաց երեւակայութեան եւ պատմական ու փաստագրական տարրերով կառուցուած «Գիշերուամ Եւ յասմիկին Թերթերը» իրաւամբ կը դառնայ արաբական դրականութեան զուտ Հայկական առաջին վէպը՝ իր առաջին նախադասութենէն մինչեւ վերջին բառը։

Բայց այս ուշագրաւ դործին վրայ կանգ առնելէ առաջ, կը կարծենք, հարկ է ամենաանդժ տողերով անդրադառնալ զայն նախապատրաստած «Պզտիկ փաշային...», որ, այնուամենայնիւ, նուազ հետաքրքրական դործ մը չէ։ Արաք երիտասարդ վիպագիրներու գլխաւոր յաղթանակներէն Հանդիսացող «Պզտիկ փաշային համառօտ պատմութիւնը», վէպին գլխաւոր հերոս Ճամիլի ընդմէջէն՝ կը Զանայ ներկայացնել Համապատկերը քառասունական թուականներուն սկսող եւ մինչեւ 1907ի արաբեւթսրայէիան պատերազմ. երկարող ճակատագրական վերիվալտումներուն, Առաջին եւ Երկրորդ Աշխարհամարտներու պատմական իրադարձութիւններու լոյսին տակ։

Դաժան մանկութեան անջնջելի յիշատակներով, մշտաբորբոք կաթօտներով, զառն փորձառութիւններով եւ տագնապալի ներկային անձկութիւններով ձեւաւորուած աշխարհ մը կը բացուի «Պզտիկ փաշային...» էջերուն, ուր ախպարները կ'ապրին իրենց կանխահաս Հասուն-

նացումը: Կեսնքի ամենաբիրտ խարտոցներուն զարնուած հերոսներ են անոնք, որոնց արկածախնդրութիւններուն եւ արեան պատմութեան զոյններով ու գիծերով Ֆ. Յուրդուշ կը կերտէ այլին ինքնուրոյն դիմանկարը: Իր հայուն հորթ մօր՝ Մարիամի կողմէ «Պզտիկ փաշա» փաղաքշական կոչումին արժանացած ճամիլի կենսագրավէպը հանդիսացող «Պզտիկ փաշայիմ համառօտ պատմութիւնը», փաստօրէն, տա-կաւ առ տակաւ կը դառնայ մանուկ հասակին որդեգրուած հայուն հի Մարիամի որդեգրութեան գիրքը, երբ անջնջելի անցեալը, յուշ առ յուշ, իբրեւ անյաղթահարելի ճակատագիր եւ զոյութեան իմաստ՝ կը դարպասէ ճակատագրի պարտադրանքով Հիւսէյն էլ-Շամիի հետ ա-մուսնացած հայուն հիօթի դառն ու մռայլ ներկան:

Այսպէս, անխուսափելի մահէն իրենց զաւակները փրկելու նպա-տակով՝ զանոնք պետեւիններու գութին վստահած հայ նորածիններու համամարդկային որդեգրութիւնը կը դառնայ զսպանակ ու մղիչ ուժ, որպէսզի այս կենդանի զոհերը խորհրդանշող Մարիամի ընդմէջէն այս յանձնառու հեղինակը կերտէ հայկական որդեգրութեան մէկ խօսուն յուշարձանը՝ բոսթիկ ու կիսամերկ սպիտակամորթ աղջնակէն մինչեւ յամառ ու տոկուն հայ պառուի իր հանգրուանը: Սիրոյ, զրկանքի, մարդկային վեհանձնութեան եւ հայկական կարօտի իրերայաջորդ հան-գրդուաններ, որոնց խորհրդանշային բովանդակութիւնը շեշտելու հա-մար, Ֆ. Յուրդուշ ամենայն հմտութեամբ գործի կը լծէ որդեգրումնե-րու, վերանուանումներու, տիտղոսներու եւ այլաբանական խօսքերու ներքին յուզականութիւնն ու կացութիւնները խտացնող ուժականու-թիւնը:

Կեսնքի գետը կը հոսի անսանձ: Անցեալէն թափ առած ալիքները կը գրաւեն ներկան ու անորոշ ապագան եւ հաւատալի ու անհաւա-տալի պատմութիւններ, Մեծ Եղեռնեան ահաւոր իրողութիւններ կ'ա-ռաջացնեն տարօրինակ ու բարդ աշխարհ մը: Կենդանի նահատակնե-րուն ներաշխարհային ալիկոծումները իրենց զրոյմով կը կնքեն գէմ-քերն ու գէպքերը եւ ընթերցողին մէջ կ'առաջացնեն այն խոր համո-զումը, որ արաբացած հայուն հերոսն անվերջակէտ կենսագրավէպը է՝ նաեւ «համառօտ պատմութիւն»ը անոնց արգանդին մէջ ձեւաւորուած կամ իրենց խնամքին վստահուած բոլոր պզտիկ փաշաներուն: Իրենց գութին յանձնուած հայ աղջնակները («Աղջնակս կը վստահիմ քու գու-թիդ, գաւկիդ պէս է: Դուն Աստուած կը ցանցմաս...»³³) հարազատ ազ-ջիկներէն զատորոշելու համար, ցեղասպանութեան զոհ «սպիտակ պուպրիկները» Մարիամ վերանուանած պետեւիններուն արարքը զուտ

33) Տես Ֆելսայ Թուրքուշ, «Պզտիկ փաշային համառօտ պատմութիւնը», Պէյրութ, 1991, «Ռիատ ալ-Ֆայէս գիրքեր» հրատարակատուն, էջ 43:

գրական լուծում մը չէ։ Մանօթ իրողութիւն է, որ բազմահարիւր հայ աղջնակներ վերանուանուած են Մարիամ՝ անոնց ցեղային պատկանելիութիւնը չեղտելու համար։ Ի մեծարումն Աստուածամօր կատարուած այս պատմական իրողութիւնը, փաստօրէն, ծանօթ է հեղինակին, որ «Պզտիկ փաշայիմ...» էջերուն լաւագոյնս կեանքի կը կոչէ նաեւ տրուած անուան խորհրդանշական բովանդակութիւնը։

Յատկապէս հետաքրքրական է Ֆ. Յուրդուշի ստեղծած խորհրդանշաններու խաղը, որ ներկայի մէն մի գէպքի եւ պատկերի մէջ ներկայէն աւելի ուժեղ տեսքաւ զկայակոչելով՝ վէպը կ'օժտէ բազմաշերտ բովանդակութեամբ եւ կուռ կառոյցով։ Օրինակ, հայ պառաւ իր կեանքի վերջին հանգրուանը կ'ապրի փլատակ ապարանքի մը մէջ, որ իր կեանքի ողիսականին ամէնէն պերճախօս պատկերն է։ Ան ա'լ Ըմ Ճամիլը չէ, ոչ ալ անպատուար հայ աղջնակը, այլ՝ կեանքի տաքուպաղին գէժ իր կուրծքը ամենայն վճռականութեամբ լայն պարզած տոկուն հայուհին, Ճեմիլի ալիքոծ կեանքին խաղաղութեան ափն ու ապաստանարանը, ուր ոճրագործութեան, ասպատակութեան եւ արկածախնդրութեանց կրակներէն անցած «պզտիկ փաշան» կ'այցելէ պարբերաբար, հակառակ զինք փախստական ասպատակի ճակագիրին մատնած առարկայական ու ենթակայական բոլոր պատճառներուն։

Փաստօրէն, հայուհի պառաւը իր մանկութեան առաջին պատկերն է եւ մայրական զգայարանքի ականադրելը։ Սրբացեալ պատկեր մը, որուն տառապեալ կերպարանքին դիմաց քաջագործ, բայց կարօտահար հերոսը կը ծնրադրէ ամենայն երկիւղածութեամբ։ Անդիմադրելի կախարդական ուժ մը, որուն մագնիսական զօրութեան շարունակ կը ձգտի Ճեմիլ, կը լիցքաւորուի անոր անբացատրելի կենսութեով՝ նետուելու համար նոր փախուստի մը արկածախնդրութիւններուն դիրկը։

Հայկական կարօտի եւ զօրութեան այս ուժեղ մթնոլորտը զարգացում կ'ապրի նաեւ «Գիշերուամ եւ յամիկիմ թերթերը» վէպի էջերուն։ Հայ պառաւին գիրկին մէջ դաստիարակութիւն ստացած պզտիկ փաշային պէս՝ պատանի խալիլ նաեւ երիտասարդ ու մարդ կը դառնայ որմնագիր Մկրտիչի ձեռքին տակ։ Փաշային ստուերը կարծես կ'երկարի խալիլի նկարագրին եւ անոր կեանքի ընթացքին վրայ։

Վէպը կը սկսի արկածով մը, երբ տուն մը կառուցելու աշխատանքին ընկած վարպետ Մկրտիչը վար կ'իյնայ տախտակէ լսատակէն եւ խալիլը, շտապ օգնութիւնը կատարելէ ետք, վնասուածքներ ստացած իր վարպետը կը փոխադրէ վերջինին տունը։ Գործաւորին ծնողքն ու հարազատները կը խրատեն, որ հրաժարի այս վտանգաւոր արհեստէն։ Սակայն, իր վարպետին պարտադիր բացակայութեան շրջանին, խալիլ աւելի կը կապուի իրեն արհեստին գաղտնիքները սորվեցուցած Մկրտիչին եւ կը ստանձնէ գործին ամբողջական պատասխանատուութիւնը։ խալիլ-Մկրտիչ այս անբաժան փոխադարձ մտերմութիւնն ու կապը աւելի կը խորանայ եւ կը վերածուի ահագնացող կարօտի, երբ Մկրտիչ կ'որոշէ կարճ ժամանակով մը այցելել իր աղջկան՝ Անահիտին։

Քաղաքի կը հոգայ իր վարպետին ընտանիքին առօրեայ կարիքները եւ աւելի խոր սիրով կը կապուի նաեւ Մկրտիչի ընտանիքի մէն մի անդամին:

Մեծ Եղեռնի յաջորդած տարիներուն, Հալէպ քաղաքի մէջ տունտեղ կազմած գաղթական հայութեան գոյապայքարը մարմնաւորող այս վէպը, ներկայացնելով յետադարձ տեղափոխութիւններով՝ կը կերտէ ամբողջական պատկերը դարասկիզբի առաջին երեք-չորս տասնամեակներուն: Գրական միեւնոյն հնարքները՝ վերյուշը, արթնութեան երազները, անակնկալներով հարուստ դիպաշարը, հոգեվիճակէ մը այլ հոգեվիճակ փոթորկալի անցումները, խորհրդանշային խտացումներն ու բովանդակութիւնը ընդգծող կեցութեան քերթը «Դիշերուամ եւ յաւմիկիմ քերթերը» հատորին էջերը նաեւ կ'օժտեն իւրաքանչիւր նկարագրով եւ համամարդկային տաք շունչով:

Այս խորացող աշխարհի կազմաւորման մէջ մեծ կ'ըլլայ նաեւ դերը ճշմարտութեան սիրահար եւ «Եփրատ» թերթի տէր ու խմբագիր Հալէմ էլ-Աթթարին, որ կը նախընտրէ աքսորը սուտէն եւ կը մերժէ ընթացք տալ ձեմալ փաշայի պահանջին: «Վաղը, քերթիդ ցականտին լսւիմ տառերով կը գրես...» «Հայերը պիտութեան դէմ կ'ապստամբին Զէյթունի եւ Այդեստանի մէջ»³⁴ ձեմալ փաշայի պահանջին ի պատասխան, Հալէմ էջֆենտին երբ կ'ըսէ, թէ ինք միայն ճշմարտութիւնները կը հրատարակէ եւ պատրաստ է մեկնել նշուած վայրերը եւ անձամբ ստուգել իրականութիւնը, «այդ մէկը կարելոք չէ», «այսօրուրմէ սկըսեալ կընաա դէպքերուն առանձինք հետեւիլ»³⁵ շնական պատասխանը ստացած խիզախ մտաւորականը արդէն կը հաշտուի, որ իր անդարձ մերժումը աքսոր կը նշանակէ: Այսպէս ալ կը պատահի եւ, արեւը չըծագած՝ Հալէմ էջֆենտին կը բռնէ աքսորի ճամբան եւ Ուրֆայի մէջ ականատես կ'ըլլայ հայ ժողովուրդի բնաջնջումը հետապնդող թրքական հրէշային ծրագիրին մանրամասնութիւններուն:

Պատմական վաւերական նիւթերը գեղարուեստական իրականութեան վերածելու ճէյսալ խորհրդի գրողական հմտութիւնը վիպագիրին խօսքը կ'օժտէ յաւելեալ ուժականութեամբ: Երեւակայութիւնն ու զգացական հոսքը կը շաղախուին փաստացի ճշմարտութիւններու եւ սպիտակ թուղթին վրայ ձեւաւորուող պահերն ու տեսարանները իրենց դադաթնակէտային շիկացումը կ'ապրին հոգեբանական վիճակներու ներգրաւող յուզականութեան կշռոյթներով:

1887-1914 տարիներուն Հալէպի մէջ «Յուրադ» («Եփրատ») օրաթերթը հրատարակած ծանօթ գրող Հալէմ էլ-Աթթարի իրական կեր-

34) Տես Յէյսալ Խըրդոշ, «Գիշերուան եւ յաւմիկին թերթերը», Աթէնք, 1994, «Տար էլ-Նաֆիզա» հրատարակչատուն, էջ 38:

35) Նոյն, էջ 38:

պարը կը յաջողի դառնալ գրական վաւերական տիպար, երբ անոր կենսագրութիւն վրայ հեղինակը կը գումարէ նոյնքան իրական այլ մտաւորականներու կեանքէն ու նկարագրէն քաղուած յատկանշական գիծեր ու երանգներ: «Գիշերուան եւ յասմիկին թերթերը» վէպի հերոս Հաշէմ էլ-Աթթարը վեր կը բարձրանայ նախապարտին իրական կերպարէն եւ իրաւամբ կը դառնայ օսմանեան աջսորն ու հալածանքը ճշակած եւ շրջանի ճակատագրական անցուղարձերուն մօտէն հետեւած արաբ յանձնառու մտաւորականները մարմնաւորող գրական ամբողջական տիպար:

Վէպի հերոսին ճակատագրին ենթարկուած սուրիացի անուանի մտաւորական եւ քաղաքական գործիչ Ֆայէզ էլ-Ղուսէյնի աջսորն ու յուշերը, ինչպէս նաեւ դէպքերուն օրը օրին հետեւած եւ հարկական կոտորածներուն արձագանգած արաբ այլ լրագրողներու (Ռալի Էտտին Եէկէն, Շուքրի Քնէյտէր, Փուաա Միտանի եւ այլք) տեղեկատուական ու հրապարակագրական էջերը Հաշէմ էլ-Ֆիենտի տիպարին կու տան վաւերական ուժ եւ նկարագիր: Վերեւ յիշուած անուններուն եւ փաստացի իրողութիւններուն նոյնացումը յաւելեալ անհատականութեամբ եւ հաւաստի գորութեամբ կ'օժտէ հերոսը եւ ան իրաւամբ կը դառնայ վերոնշեալ մտաւորականներու յուշագրութիւններուն, բայց ի մասնաւորի Ֆայէզ էլ-Ղուսէյնի պատմական յիշատակաբանին մէկ այլ եւ համապարփակ պատկերը, արաբական զօրակցութեան կենդանի եւ խորհրդանշական կերպարը, որուն գրչով այս քաջարի վիպագիրը կ'արտասանէ մարդկութիւնը զգաստութեան եւ հաշտութեան կանչող իր գեղարուեստական խօսքը:

Ըսինք արդէն, որ այս արուեստագէտ վիպագիրը չէզոք գրող մը չէ: Ընդհակառակն, ան կեցուածք ունեցող եւ Հայ Դատը անուղղակիօրէն պաշտպանող քաջարի մտաւորական մըն է նաեւ, որուն գործը, անկախ իր գեղարուեստական բարձր արժէքէն, անհանգիստ մտաւորականի մը տարօրէն մարդկային բողոքն է, մարդկութիւնը զգաստութեան եւ գիտակցութեան հրաւիրող ազնիւ կանչ մը:

«...ի վերջոյ՝ ինչպէս կը գրէ Հատիա Սա'իտ՝ «Գիշերուան եւ յասմիկին թերթերը» վէպին նուիրուած իր գրախօսականին մէջ, Մըկըրտիչը, իր կիժը՝ Մարուն, աղջիկները՝ Մանուշը եւ Ազնիւը սոսկական արարածներ չեն. անոնց միջոցաւ մեզ կը յաջողինք անշարժացնել այդ պատմական իրողութիւնը, որ մեզմէ կը պահանջէ չմոռնալ, չանտեսել կամ չխնդրել չարչարումներ, տարագրութեան եւ ողջ ժողովուրդի մը բնաջնջման պատմութիւնը...»³⁸,

38) Տես Հատիա Սա'իտ, «Գիշերուան եւ յասմիկին թերթերը» ...քննարկ խորագիր մը՝ վաղրագ վէպի մը համար» խորագրեալ գրախօսականը, «Այ-Շարգ ալ-Աուսաթ» արաբական միջազգային օրաթերթ, Լոնտոն, 3 Մարտ 1995, թիւ 5947, էջ 25:

Հայ ժողովուրդի գողգոթան մանրամասնութիւն առ մանրամասնութիւն տեղեկագրող Հալէմ Զֆենտին լայն կը բանայ վէպի ժամանակին ու վայրին շրջանակը: Հալէպը եւ տարագիրներու գոյապայքարը կը նահանջեն ներկան յիշողութեան մօտ յիշատակներու տակ առնող անցեալին դիմաց, եւ Հայ ժողովուրդի ողիսականը կը պարտադրէ իր անջնջելի ժամանակը՝ իր ամէնէն ահաւոր տեսարաններով ու դժոխային մանրամասնութիւններով: Վաւերագրական փաստաթուղթերէ քաղուած առատ ատաղձը վէպը կ'օժտէ ո՛չ միայն յաւելեալ ճշմարտացիութեամբ, այլեւ՝ բազմաշերտ տրամին ներքին ուժականութեամբ, յուզական անջրպետով եւ մարդկային ձայնաւոր համառուագի մը փրօմ ու վարակիչ կշռոյթներով:

Ֆէյսալ Խորդոշ կ'արթնցնէ Հայկական արեան յիշողութիւնը, եւ կորուստի, մահուան, վիշտի, մտատանջութեան, գաղթի եւ արթնութեան երազներու բազմաձայն միահիւստումով պատմական իրողութիւններն ու կենդանի տիպարները կ'առաջնորդէ իրենց ամբողջական հասունացման: Բարձրաձայն խորհրդածութիւնը, աւելի ճիշդ՝ անլուելի մեծ նախասութիւնը, արթնութեան երազները, անզուսպ պոռթկումներն ու տեսլահար արեան կանչերը պատմութեան զեղարուեստական վաւերագրումին դիմաց կը բանան լայն ու անվերջ հորիզոններ, որոնց շնորհիւ «Դիշերուամ եւ յասմիկիմ քնրթերը» կը յաջողի բարձրանալ վաւերական վէպի բարձր պատուանդանին:

Հեզասահ, պատկերաւոր, կայտառ ու խորհրդանշաններու թելադրականութեամբ յատկանշուող ոճը կը բերէ իր նպաստը: Ֆ. Խորդոշի խօսքը կ'ապրի իր իրերայաշնորհ եղանակներուն մազլցողական հոլովոյթը, կը դառնայ տազնապահար մարդկութեան ապրումները սղաքող ոսկի ձայնը եւ վէպը կը փակուի այս ազնիւ դրաքէտին ճառներու հրգճով:

Արաբական բանականիւրը կը մտնեն Հալէպ, կ'ազատագրեն երկիրը օսմանեան բռնակալութեան լուծէն, եւ տօնահանդէսներու ցնծութիւնը վէպը կ'երփնագրէ երջանկութեան եւ հաւատքի երանգներով: Բարձր տեղ մը իր բարձրագոյն տունը կ'առուցելու Հայ շինարարին անդադար կրկնուող երազը կը սկսի կերպարանք ստանալ: Մըինգը, բակուցեան ծիրանի փողը յիշեցնող կենդանութեան յաղթերէն կը հնչէ քաղցրաձայն եւ «Դիշերուամ ու յասմիկիմ քնրթերը» կը փակուի հետեւեալ իմաստալից տողներով.

«Յետոյ եկաւ այն օրը եւ պարոմ Մկրտիչ, Ղազարաք լերամ լանջիմ, կառուցեց իր տունը՝ ճիշդ իր երեւակայածիմ պէս, յար եւ մմամ Զէյթունի իր տամ, կամաչութեամ եւ կապոյտ երկիմէիմ քացուող տունը: Ան այլեւս միայն երկիմէիմ կապոյտը կը տեսնէր եւ կը լսէր իր արիմգիմ ձայնը, գոր կ'արձակէր ամէն գիշեր՝ որոնելու համար Մամուշի աչքերուն մէջ գարնամացող կամայը»³⁷:

37) Տես Ֆէյսալ Խորդոշ, «Գիշերուան եւ յասմիկիմ քնրթերը», էջ 192:

«Գիշերում եմ յասմիկիմ թեթեքը» հատորի յոյս ընծայումէն տարի մը հոգ, ընթերցողին քննութեան կը յանձնուի Ծէյսալ խուրդուի գրական աւելի քան 150-ամեայ կենսափորձը շուրջ 150 էջերու մէջ խտացուած «Զէյթուն խան»³⁸ վիպակը, ուր անգամ մը եւս իր ներկայութիւնը կը փաստէ հեղինակին այնքան փայփայած հայկական տիպարը, Նախորդ երկու հատորներուն, յատկապէս «Պզտիկ փաշա-յիմ...»-ի էջերուն յստակ նկարագիր ստացած միջնորոտային ու ոճային առանձնատկութիւնները, այսինքն՝ բոստութիւնն ու երազը, սովորականն ու արտասովորը, յատկանշական մանրամասնութիւնն ու ներքին թաքուն ճշմարտութիւնը կեանքի կոչող տարաշխարհիկ ժամանակն ու միջավայրը հոս նաեւ կը բացուին անկոխ հորիզոններու: «Զէյթուն խան»ը կ'անցնի սովորական աշխարհի մը սահմանէն անդին, երբ հեղինակը այս անգամ կը կարկառէ խոսքեալ համապատկերը Հալէպի հին թաղամասերուն՝ իրենց անտաշ ու լուսանցքային խոնարհ հերոսներով, բայց մանաւանդ տիպարներուն քայլերը առաջնորդող արեւելեան սէրերով, դաժան բարքերով, արտասովոր նախապաշարումներով, անհեթեթ վրէժխնդրութիւններով, անդիմադրելի ջրահարսերով, սարսափազու սատանաներով, չարխափան մատաններով, վտանգաւոր ու անհասկնալի ձեռագիրներով եւ եւայլն...

Վիպակը կը սկսի 5 Յունիս 1967ի արաբա-իսրայէլեան պատերազմի բռնկման լուրը ծանուցող ժայռափիւռի յայտարարութեամբ եւ իր աւարտին կը հասնի քանի մը օր հոգ, երբ արաբական բանակներու կրած պարտութեան յաջորդած լուսախարութեանց համաժողովրդային բեկումին հետ կ'իջնէ դառն իրականութեան թանձր վարազոյրը, զոր պատուելու կու գայ արեւելեան միսթիսիզմը՝ նահատակ հայ զինուորի մը (Նազօ) յուղարկաւորութենէն բարձրացող յոյսի խորհրդանշանով:

Այսպէս, երեք-չորս օրերու պայմանական ժամանակահատուածի մը անցուղարձերը ներկայացնելու մեկնակէտէն առաջնորդուած՝ «Զէյթուն խան»ը նաեւ կը բացուի մանկութեան յուշերու, անկատար երազներու եւ առասպելական դրուագներու ոլորտներուն: Վիպագիրը կ'ընտրէ անսովոր եւ անսպասելի ցնցումներով հարուստ այս քանի մը օրերու իրողական ժամանակը, որպէսզի ընթերցողը մասնակից դարձնէ ո'չ թէ քաղաքական բովանդակութիւն ունեցող վիպակի մը մանրամասնութիւններուն, այլ այս արտակարգ ժամանակահատուածի ֆոնին վրայ հիւսէ նոյնքան անսովոր դէպքերու, յուշերու, բախումներու, երազներու, պարզ խօսքով՝ անցեալը, ներկան եւ ապագան մէկ մարմինի վերածող դիրքին անսահմանելի ժամանակը: Սովորական ու պարզ դէպքերու առասպելացումը, որ կը հանդիսանայ Ծ. Խուրդուի գեղարւեստական խօսքին հիմնական նպատակներէն մէկը, որ կուռ եւ բաբախուն դիպաշարի մը շնորհիւ՝ «Զէյթուն խան»-ի էջերուն կը յաջողի

38) Տե՛ս Ծէյսալ Խուրդու, «Զէյթուն խան», 1995, Հալէպ, «Բարեկամութիւն» հրատարակատուն:

ջնջել ժամանակներն ու տարբեր աշխարհները իրարմէ բաժնող տրամաբանութեան սահմանները եւ կը հաստատէ սովորական դէպքերուն անսովոր ու բազմախորհուրդ ներքին ճշմարտութիւնը: Երեք տարբեր աշխարհներու՝ ողջերու, մեռելներու եւ երեւակայական աշխարհին օր-դանական միաձուլումով՝ դրուծիւնը փաստօրէն կը նուաճէ սահման չճանչցող իր ստեղծագործական ժամանակը, անտալ ու տակաւին չքաղաքայնացած տիպաւորները կ'անցնին իրականութենէն անդին գոնուող երազներու հեքիաթային աշխարհը, Ամէր կ'ապրի պատանութեան շրջանին զինք զիմացի գետափը տարած ջրահարսին յամեցող երանութիւնը, Սաղոյի սրինգը կը հնչեցնէ հայ նահատակներու անլուրի ողբերգութեան մահերգը, իսկ սուրիական հայրենիքի պաշտպանութեան ի խնդիր նահատակուած Նազոյի մեռելակառքը կը սկսի սաւառնիլ դէպի Արարատի ձիւները...

Ճէյսալ Խուրդոշ կը նախաձեռնէ ստեղծագործական արկածախրնդրութեան մը, որպէսզի նախ «իմէզիմէիմ հիացում պատճառէ, մոյմիսկ մեզ զարմացմելէ առաջ»³⁹: Եւ ճիշդ կը բնորոշէ հրատարակչատան գնահատական կուռ խօսքը, երբ կ'աւելցնէ. «Ճէյսալ Խուրդոշի այս մտրագոյն վէպիմ յատկանիշը կը կայանայ քրտութիւնը որսալու, տարամբատուող աշխարհէ մը երազը պոկելու, եւ այս բոլորը, վիպագիրի իր անքրպետիմ մէջ, մերթ մոլայտտի պէս տարաշխարհիկ ու հեզմադառն եւ մերթ ջուրի պէս վեհիտ աշխարհի մը վերածելու իր հմտութեամ մէջ»⁴⁰:

Եղեռնէն մազապուրծ ճողոպրած հայ գաղթականներու հիմնած հիւղականներէն մէկուն՝ Զէյթուն խանի անունը իբրեւ խորագիր ընտրելով՝ Յ. Խուրդոշ կը ձգտի մոռացութենէ փրկել այլեւս տխուր յուշ ու յիշատակ դարձած աշխարհ մը, որ հակառակ իր մռայլ գոյներուն՝ կը մնայ թախիծի ու սիրոյ մնայուն ներնչարան մը:

Փաստօրէն, սիրերգութիւն մըն է «Զէյթուն խան»ը՝ Ամէր-Նուր էլ Սապահ սիրոյ պատմութենէն մինչեւ Նազո-Արարատ իր վախճանը: Սէրն է՝ որ թէ՛ պատանի Ամէրի, թէ՛ Սաղոյի եւ հետագային՝ երիտասարդ Ամէրի քայլերը կ'առաջնորդէ դէպի գետափ, ուր ջրերուն խորքէն արեւու մը չփեղումեամբ ծագող ջրահարսը պատանի Ամէրն ու Սաղոն կը փոխադրէ երազներու աշխարհը: Հեքիաթը կը դառնայ աւելի իրական, քան չոր ու տրամաբանական իրականութիւնը եւ հայ պատանի հերոսը չարունակ կ'այցելէ գետափ, որպէսզի անգամ մը իր գոյութիւնը ապացուցած ջրահարսը իր շինած կարթով որսալէ հտք, բարձրանայ անոր վրայ, «որպէսզի իր կոնակը առած՝ ջուրներուն վրայէն գիմէ հասցնէ հո'մ» ուր իր ծնողքը կ'ապրէիմ, այն տունները՝ ուրկէ անոնք տարագրուեցան, առաջնորդէ դէպի այն երկիրը, ճաղաքներն ու

39) Տե՛ս Ճէյսալ Խուրդոշի «Զէյթուն խան» վիպակի կողքի չորրորդ էջիմ վրայ տեղ գտած հրատարակչական նոթը:

40) Նոյն:

գիւղերը՝ զորս երբեք չեմանցաւ եւ հասնի գիմեգոյն կղմիմտրմերով ա՛յն տուները՝ որոնց կղմիմտրմերը իր հարազատներուն արիւնով գու՝նաւորուեցան, ուր արիւնը խառնուեցաւ հողին, որպէսզի փնտռէ ոսկե՝րոտիքը անոնց՝ որոնք սպաննուեցան ու մորթուեցան եւ որոնց դիակ՝ մերով քուրերը լեցուցեան...»⁴¹։

Ամէր-Սաօ զետափին կայացած հանդիպումը կը վերածուի խոր բարեկամութեան։ Աւելի ուշ, երբ վտանգը կը սպառնայ Ամէրի, հոգե՝կան եղբայրութիւնը արաք պատանին քայլերը կ'առաջնորդէ դէպի Սազոյինց բնակարանը, Զէյթուն խան, Հայկական թաղերը իրենց թա՝խիծով ու հորիզոններէն անդին երկարող կարօտաբաղձութեամբ, կը բացուին արաք պատանին դիմաց, կը դառնան հարազատ ու սիրելի եւ ան Սազոյի մէջ կը գտնէ իր էութեան հայելին։

Աւելին. Սազոն հարազատ եղբօր մը չափ կը գրաւէ իր սիրտն ու հոգին, եւ ամէն անգամ, երբ վիշտը կը տիրէ Ամէրի սրտին վրայ, իր վիշտը փարատելու համար ան կը դիմէ իր հայ բարեկամին սփո՝ փարար սրինգին։

Վիպակի վերջին էջերուն, Սազոն եւ Հայկական թախիծը կրկին կը թանձրանան։ Ամէր իր հայ բարեկամը կը գտնէ զրասեղանի մը վրայ հակած, կողքին՝ ձեռագիրներու տրցակ մը։ Եւ երբ կը հետա՝քըրքուի, Սաօ իրեն կը պատմէ, թէ արձանագրած է պատմութիւնը նոր մահացած այն հայ ծերունիին, որուն հոգին սաւառնեցաւ դէպի Արարատ՝ հանգչելու համար Սրբազան Լեւոն զազաթին, զուր կը հա՝ւաքուին բոլոր հայ ննջեցեալներուն հոգիները», Սեւանի ջուրերուն մէջ մկրտուելէ ետք։ Ապա, ձեռագիրներու տրցակը Սաօ կը նուիրէ իր մանկութեան ընկերոջ՝ իբրեւ Հայկական ինքնութեան անժամանցելի մէկ կտակ։ Այս մէկը կ'ըլլայ Սազոյի երկրորդ թանկագին նուէրը, որ Դանիէլ Մարգարէի խորհուրդը պատմող առաջին ձեռագիր նուէրը կը հարստացնէ Հայկական երանգով ու խորհուրդով։

Այս խորհուրդին թելադրական ուժականութեամբ ալ կը փակուի հատորը։ Բազմութիւն մը խռնուած է Եա՛գուպ ալ-Արմանի տան առջեւ։ Ամէն մարդ կը սպասէ պատերազմի դաշտին վրայ նահատակ՝ւած Յակոբի որդիին՝ Նազոյի դադադին ժամանումին։ Քիչ անց, կը յայտնուի մեռելակառքը, զոր կը քաշեն երկշարք տասներկու սպիտակ ձիեր։ Պատկառազու Յակոբ յանկարծ կը կանգնի իր ողջ հասակով, մէկ ոտուամով կը բարձրանայ մեռելակառք, ափերուն մէջ պինդ կը սեղմէ ձիերուն սանձը եւ, ապշահար թաղեցիներուն լայնաբաց աչքե՝րուն դիմաց՝ կը վերապրի Սվազէն դէպի Տէր-Զօր, Հայէպ, Անտիօք, ապա դարձեալ Հայէպ չարչարազին ուղեւորութիւնը։ Դաժան պատկեր՝ները դարձեալ կ'ալեկոծեն սգահար հայ հերոսին ողջ էութիւնը։ Մըտ՝րակը կ'իջեցնէ ձիուն քամակին եւ նահատակ որդիին անշունչ մար՝

41) Նոյն, էջ 13։

մինը փոխադրող կառքը կը սկսի իր դանդաղեցած նոր ուղեւորութիւնը: Հայկական ուղեւորութիւնը: Եւ կառքը կը սլանայ...

«Այլանման մղուած՝ ռուսի կանգնած մարդիկ կանկածելի եւ անհասկնալի բառերով կը պոռան, թէ կրնա՞յ մմամ բամ պատահիլ: Այո՛, պատահեցաւ: Զինքը խոյացան ասֆալթապատ սեւ փողոցին վրայէն, յետոյ, յանկարծ, իրենց կառքով թռան դէպի երկինք, սլացան բարձրաթռիչ, ապա շրջեցան ձախ եւ սաւառնեցան մարդոց ու տուններուն վրայէն, իրենց ետեւէն ճաշելով պսպղուն աստղերու ժայռէն մը...»⁴²:

Ճապէր կը վերադառնայ տուն եւ պատահած հրաշքը կը պատմէ իր որդիին՝ Ամէրի: Հաւատքը կը գօտեպնդէ արաբական բանականութեան պարտութիւնէն խորապէս վիրաւորուած, պատրանաթափ Ամէրի եւ Ճապէրի ազգային արժանապատուութիւնը, կը ծագի խաւար իրականութիւնը ջնջող հայկական հրաշքին արեւը եւ Յակոբն ու իր որդին կը խոյանան դէպի Արարատի անբիծ ձիւները՝ հաւատքի, հաւատարմութեան ու գերազոյն զոհաբերութեան թելադրականութեամբ ալ փակելով Թ. Խուրդոշի այս տոկուն գործը:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ՝ ՓՈԽԱՆ ՎԵՐՋԱԿԷՏԻ

Տասներկու դարու պատմութիւն ունեցող հայ-արաբական մշակութային յարաբերութիւններու, փոխադարձ ազդեցութիւններու եւ գլոբալան անդրադարձներու նորագոյն արտայայտութիւններէն մին հանդիսացող սուրիացի արաբ գրողներու «հայկական գործեր»ը արժանի են համապարփակ եւ բազմակողմանի ընթերցման: Անշուշտ, խնդրոյ առարկայ թեման շօշափած բոլոր գործերուն մասին կարելի չէ ամբողջական խօսք ըսել ուսումնասիրութեան մը սուղ էջերուն մէջ եւ եւ ոչ ալ մօտենալ մեր ներկայացուցած ստեղծագործութիւններուն բոլոր երեսներուն: Անթերի եւ վերջնական աշխատանք մը կատարած ըլլալու մեծամտութիւնը չունինք, բայց, կը հաւատանք, որ շուրջ երկու տարուան վրայ երկարած ընթերցումներու, փնտռութիւններու եւ նութագրումներու արդիւնքը հանդիսացած մեր այս ուսումնասիրութիւնը կրնայ հանդիսանալ հաստատ մեկնակէտ՝ ապագայի ամբողջական աշխատասիրութեան:

Այս ժրէն ներս, մանաւանդ առատ եւ բազմակողմանի նիւթ կը հայթայթէ Ասատ Ֆախրիի «Նոնիմ հառայանքը...» խորագրեալ աշխատասիրութիւնը, որ կը բացուի մէկէ աւելի հորիզոններու եւ իր ընդգրկած ստեղծումները կ'ենթարկէ բազմակողմանի վերլուծման: Մը

42) Նոյն, էջ 136:

նաց որ, մեր ուշադրութիւնը գրաւած ծաւալուն թէ կարճ արձակ ըստեղծումները ինքնին անսպառ աղբիւր են եւ իւրաքանչիւր քննական մասնակցութիւն՝ թափանցելու այդ աշխարհներուն աներեւոյթ ոլորտներէն ներս, կ'ենթադրէ նորոյի մեկնաբանութիւն:

Տօքթ. Ապտէլ Սալամ էլ-Ռահման, Իպրահիմ ալ-Քալիլի, Նեպիլ Սուլէյմանի, Ապտէլ Ռահման Մուսիֆի, Ֆէյսալ Քուրդուշի, Նիհատ Սիրէսի եւ իրենց սերնդակիցներուն «Հայկական գործեր»ը արժանի են նման վերաբերումի: Հայն ու թուրքը իրենց յատկանշական գիծերով, ցեղային առանձնատկութիւններով եւ մարդկային ու հրէշային ինքնութեամբ կարկառած վերոնշեալ գործերուն ամբողջական ընթերցումը, անկասկած, ո՛չ միայն ամուր պատուանդանի վրայ պիտի բարձրացնէ այս իրաւ գրողներուն մարդկային մաքրամաքուր էութիւնը, այլեւ՝ թուրքին արիւնարբու հաւաքական կերպարը:

Թուրքը յաւելեալ մանրամասնութիւններով ճանչնալու համար:

Գրական բարձրարժէք այս ստեղծումները ըստ արժանւոյն գնահատելու նախանձախնդրութեամբ: Համաշխարհային գրադարանը համամարդկային միայուն գանձով մը հարստացնելու ապագային դառասիրութեամբ: Քաղաքակիրթ ժողովուրդներու վայել անանձանական լուռ երջանկութեամբ եւ գոյութենական արդար հպարտութեամբ:

(Շար. 3 եւ վերջ)

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՊՐԻԼ 24...

1300 ՄԱՐԴ ԵՒ
600ԻՑ ԱԻԵԼԻ ՄԱՐԴ...

Հայրենի թէ՛ Սփիւռքի մամուլի էջերուն, ինչպէս նաեւ մշակութային յայնաւարած միութիւններուն ու առանձին բլիթներուն մօտ համընդհանուր բնոյթ մը ստացած է Եղիշէ Զարենցի ծննդեան 100ամեակը նշելու տրամադրութիւնը:

Կարգ մը գաղութներու ու քաղաքներու մէջ արդէն տեղի ունեցան Հայրենցեան Հանդիսութիւններ եւ ուրիշներ կը պատրաստուին Համապատասխան շուքով մատուցել յարգանքի իրենց տուրքը մեծ բանաստեղծին նկատմամբ:

Լաւ երեւոյթ:

Քիչ անգամ կը պատահի, որ բանաստեղծի մը ծննդեան տարեդարձը եւ մահուան տարեյիցը զուգարդիպին կ'որ թուականներու:

Զարենցի պարագան Հոս եւս բացառութիւն կը կազմէ:

Նոյն պատճառով ծննդեան 100ամեակին Հետ կը յիշուի նաեւ անոր մահուան 60ամեակը, բայց այս մէկը կարծէք տեղի կ'ունենայ ի միջի ալիոց, շատ Հարեւանցիօրէն:

Մեր կարծիքով, սակայն, պէտք է ընդգծուի մահուան 60ամեակը եւս, որ ո՛չ միայն իր՝ «Հակայ պոետ»ին, այլեւ ընդհանրապէս Հայ դրականութեան համար միասնորոշ նոր վէրքի մը սեւ խորհրդանիշը եղաւ, երկրորդ Ապրիլ 24 մը, ինչպէս գնահատուեցաւ օրին ու կը կրկնուի յաճախ:

Դիտելի է, որ Ստալին-Բերիա ճիւղներուն սարքած Համատարած նախճիրին զոհ քանի մը կարկառուն դէմքեր միայն կը Հոյովուին մարդոց շրթներուն ու տեղ ունին յիշողութեանց մէջ, ինք Եղիշէ Զարենց, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց, Տիկին Զապէլ Ծալիսեան եւ Նուազ անուանի չորս-հինգ ուրիշներ, բայց 37ի սպանդին անդրադարձող յաւատեղեակ բայց 37ի սպանդին անդրադարձող յաւատեղեակ մտաւորականներու համաձայն, Հարիւրներու կը Հասանին «Կարմիր սարսափ»ին յաջած միայն մտքի ներկայացուցիչները՝ Հրապարակագիրներ, խմբագիրներ, դասախօսներ, իրաւաբաններ, ընկերաբաններ, եւ այլն, եւ այլն:

Հայաստանի Համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Աղասի Թանջեանի դաւադրական ապանութենէն ետք, իբր թէ նոյն կուսակցութեան հերթական լիազօրեալին ընտրուած, բայց իրականութեան մէջ ստալինեան հրամանագրով իշխանութեան գլուխ ընտրուած Ամատունիի եւ նոյնպէս դրածոյ իր արինաբարու կատարուածներուն գործունէութեան միայն առաջին տասը ամիսներուն ընթացքին, ըստ նոյն Ամատունիի պաշտօնական մէկ գեկուցումին՝

«...Հանրապետութիւնում մերկացուել ու ձերբակալուել է աւելի քան 1300 մարդ, որոնց մեծամասնութիւնը դատապարտուել է, իսկ 1937 թ. Յունուարից յետոյ, այսինքն՝ վերջին ամիսներին յայտնաբերուել է ու ձերբակալուել 600ից աւելի մարդ»:

Այս 1300 առաւել 600 մարդոց մէջ ամէնէն աչքառունները եղան գրողները եւ վերջ յիշուած մտքի միւս ներկայացուցիչները:

1937 թ. Մայիսի կէսերուն տրուած այս գեկուցումէն ետք, Ամատունիի եւ իր վարչախումբը դեռ չորս ամիս եւս պահուեցան իշխանութեան գլուխը, մինչեւ Սեպտեմբերի վերջին չարաթը, եւ իրենց ոչնչացումէն առաջ թիչ թիւով մարդ չհնձեցին այդ չորս ամիսներու ընթացքին:

Իսկ ի՞նչ պատահեցաւ իրենց շնորհազրկումէն ու ոչնչացումէն ետք: Դադրեցա՞ւ կամ մեղմացա՞ւ ոչընչացման հարուածային հտեմպը:

Ամատունիի վարչախումբին տնկումէն ետք, նորընտիր, իմա՝ նոր նշանակեալ առաջին քարտուղարին մէկ գեկուցման վրայ կռթնած, պատմութիւնը կ'ըսէ, թէ «Չորս ամսուան ընթացքում նա աւելի մարդ է «կոտորել», քան իր նախորդները մէկ տարուց աւելի ժամանակամիջոցում»:

Ի դէմս «կոտորել»ուն անշուշտ պիտի հասկնանք կուսակցութենէն «վտարուածներ»ուն պարագան, որ նոյնը չէ, եւ թէ եւ վտարումներով բոլորովին չբաւարարուեցան նոր մաքրագործումներու առաքելութեամբ պաշտօնի կոչուածները, բայց բուն «կոտորած»ները տեղի ունեցան Ամատունիի եւ իր գործակալներուն օրօք, 1936 Օգոստոսին ու 1937 Սեպտեմբերի միջեւ ինկած ժամանակաշրջանին, եւ ճիշդ այդ պատճառով երկրորդ Ապրիլ 24ը առաւելագոյն չափով մը կ'ընդգրկէ 1937 թ. չարաղէտ իրադարձութիւնները:

Յաջորդող էջերը կազմուած են ընթերցողին որոշ գաղափար մը տալու համար այդ սեւ թուականին կապուած ահարկու ոճերներուն մասին...

Քաղիւ 37Ի ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐԷՆ...

Մանօք իրողութիւն է, որ համայնախորհրդի մը լայնօրէն չարաշահեց տգեղ, տգէտ, ներքին թէ արտաքին արտօններով խոցուած արարածներուն մոխրանձի ու տուհալութեան լեռնակուտակ մթերմները, գանձնէ լարելով առողջ, գիտուն ու գործօն ուժերուն դէմ:

Այս ռը կիրարկուեցաւ կարմիր մակունին տակ ինկած բոլոր երկիրներուն, բայց մանաւանդ ու առաւելագոյն չափով մը մեր երկրին մէջ, սեւ գիծեր կուտակելով արդէն այժմայում անուններուն կեանագրութեանց մէջ:

Անբնական վարդապետութեան մը տուեղծած անբնական միջավայրին մէջ ոսկոր կազմած խեղներ աստճէ, արանէ, ա՛յլ գիտէ, թերեւս քան մը հաւատացին, որ արժանաւորներուն դէմ վայրահաշելով՝ երաշխիւ իմ կրնան արժէք դառնալ ու բարձրանալ իրենց յախումն քանադկութեանց առարկայ դարձուցած դէմքերուն պատուանդանին:

37Ի աղբերգութիւնը շարունակարող այս քաժմին մէջ մանչմանէ արուանկարմիրէն գոնէ քանի մը հատը...

✍

«Նացիոնալիստ տականքների հոգեւորդին՝ Ն. Դաշաենցը, մէկն էր այն երիտասարդ գրողներից, որոնց վրայ ոչ պատահական կերպով նացիոնալիստ գրչականները դրել էին իրենց մատու «Բոց»ում լպիրշութեան է հասնում հակայեղափոխական, բակունցեան... վերաբերմունքը... նա գովերգում է Արագածն ու Արարատը, որոնց ստուերները դրօշ են երիտասարդ նացիոնալիստի համար: Ու



առաջինով «Բողոք» վերածուել է յետադիմական ռեակցիոն գրական օջախում միացող աթաղի ծխի: ...Ապաշնորհ այս գիրքը տրոցկիստական-նացիոնալիստական գրական վիժումաժք է: ...Դաշտենցը պրոլետարիատի եւ մեր ժողովրդի թշնամիների բանակն է ընկել» («Գրական թերթ», 1937, թիվ 6):

ՀՐԱՉԵԱՅ ՔՈՉԱՐ



«Դու մոռացել ես, որ թո՛ւ այդ ժողովածուն սկըսում է Հայկական նացիոնալիզմի մի վիժումաժքի, մոլի հակայեղափոխական, նացիոնալիստ Չարենցի փառաբանութեամբ: Հիացմունքի փսիւնքը բերանիդ դու նրան «Հանճարեղ» ես անւանել եւ դասել ես Հանճարների շարքը՝ ձեռքն էլ սեղմելով՝ ենթադրելով, թէ դրանով ուղի ես հարթում քեզ համար դէպի հանճարների պանթէոնը...

Դու մոռացել ես, որ նոյն այդ ժողովածուի էջերում գտվելով ես այդ նոյն անձի ամբողջ սերունդին՝ չմոռանալով նոյնիսկ նրա հօրը... «Աբգար-աղային»...

Դու մոռացել ես, որ գրքիդ ճիշդ էջում համակրանքով խօսել ես նաեւ Հայկական նացիոնալիզմի մի այլ վիժումաժքի՝ գրական գուռնաչի, հակայեղափոխական Ալազանի մասին, գովելով նրա նացիոնալիստական գործունէութիւնը գրական ասպարէզում:

Նրանք՝ այդ սրիկաները, վաղուց արդէն մերկացուել են եւ ստացել իրենց արժանի պատիժը (Նաճակ՝ գրուած 11 Յունիս 1938ին):

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐԵԱՆ

Այս տարուայ Ապ-
րիլ-Մայիս ամիսներին տեղի
ունեցաւ գրողների միու-
թեան դիսպուտը-«Ֆոր-
մալիզմի եւ նացիոնալիզմի
մասին: Այդ առթիւ, Քանյ-
եանի մօտ հրաւիրուած կու-
սակցական խորհրդակցու-
թեան ժամանակ Բակունցն
արտասանեց հակաշրջափո-
խական-նացիոնալիստական
մի ճառ: Քանյեանը փոխա-
նակ արժանի հարուած տալու
երկերեսանուն, ներողամը-
տութեամբ Բակունցին ա-
սաց, որ այդ մտքերը չի կա-
րելի դուրսը՝ անկուսակցա-
կան գրողների ժողովում ասել:



Ինչ խօսք, որ լկտիացած Բակունցը, Քանյեանից
բազմիցս շոյուած այդ դաշնակցական սրիկան աւելի
եւս խրախուսուեց այդ ներողամիտ դիտողութիւնից-
նա հետեւեալ օրը իր թունոտ դաշնակցական տրոց-
կիստական ճառը կրկնեց գրողների բաց ժողովում, ի-
րաւացի գայրով առաջ բերելով կուսակցական եւ ոչ
կուսակցական բոլշեւիկ գրողների եւ արուեստագէտ-
ների շրջանում: Եւ այդ բանի համար Բակունցը ոչ
մի պատասխանատուութեան չկանչուեց («Գրական
թերթ», 1936, թիւ 21):

ՀԱՄԱՅԵԱԿ ՍԻՐԱՍ

Մերկացուած տրոցկիստ-հակաշրջափոխական գրական
խալտուրա վաճան թոթովները մինչեւ յղափոխութիւնը
հանդէս է եկել հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակ-
ցութեան քարոզարար նացիոնալիստական քաղաքականու-
թեան քատագովի դերում: Թոթովները եղել է խմբապետի,

յայտնի շովինիստ, Զորդարար Անդրանիկ փառալի համհարզը եւ «Հայաստան» նացիոնալիստական թերթի խմբագիրը ...: Թոթովենց գողոգիական նացիոնալիզմը եւ խորհրդային կարգերի նկատմամբ ունեցած գազանային ատելութիւնը, որ տարիներ շարունակ ստիպուած վարագուրել էր «Կենտրոն Բիւրո»-նոմէական ճանապարհի վրայ» գրական վիժուածքում» («Գրական թերթ», 1937, թիւ 29):



ԱՐՏԱՇԷՍ ՈՍԿԵՐՉԵԱՆ

•



Զապէլ Եսայեանը եղել է երկար ժամանակ Դաշնակցութեան ակտիւ անդամ: Նորա երկերեսանի, կեղծաւոր դիրքը, նրա բամբասանքները կոմունիստ եւ խորհրդային ազնիւ գրողների հասցէին այս բոլորը մեզ մօտ կասկած էին առաջացնում եւ մենք շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու այդ մասին, սակայն բաւականաչափ զգոնութիւն չունեցանք մերկացնելու այդ հակայեղափոխականին մինչեւ վերջը:

Զապէլ Եսայեանը ընդհանուր ֆրոնտ էր կազմել հակայեղափոխական Բակուեցի, Ալազանի, Մահարու եւ միւսների հետ ընդդէմ խորհրդային նուիրուած եւ կուսակցութեան գծի վրայ կանգնած գրողների: Յայտնի է, որ իր զինակիցների բանտարկութիւններից յետոյ էլ, մինչեւ վերջերս, զգուշի

եւ վարկաբեկիչ պրովակացիոն լուրեր էր տարածում խորհրդային զորողների մասին, յատկապէս այդ պարչիկ հակադաւիտականը իրեն նպատակ էր դրել վարկաբեկելու կոմունիստ զորողներին («Գրական թերթ», 1937, թիւ 22)։

ԳԵՈՐԳ ԱՐՈՎ

•

Ինչպէս եղաւ, որ այդ վոհմակը կարողացել է երկար ժամանակ բռնի դնել խորհրդային կազմակերպութեան մէջ։ ...Անկեղծ չեն այն ընկերները, որոնք պնդում են, թէ չեն նկատել հակադաւիտական սրիկաների գործունէութիւնը։ ...Նացիոնալիստները երկերեսանի խանջեանի հովանաւորութեամբ, գործել են գրեթէ բացառապէս, եւ ով որ յայտարարում է, թէ չի նկատել այդ բացառապէս նացիոնալիստների քայքայիչ աշխատանքները՝ ապա ինքն էլ տուրք է տուել նացիոնալիստական տրամադրութիւններին («Գրական թերթ», 1937, թիւ 11)։



ՆՈՐԱՅՐ ԴԱՐԱՂԵԱՆ

11

9

3

7...

Քաղիւ ՇՆՉԱԻՈՐ ՈՐՈՄՆԵՐ

Հայ գրականութեան Երկրորդ Ապրիլ 24ին անդրադարձող տեւեմն, մեղապարտներու ցանկը կազմած ատեն, Ստալինի, Բերիայի եւ վրացի ու ադրբեջանցի երկու-երեք այլ կատարածուններու կարգին չի կրնար մոռնալ եւ անպայման պիտի յիշէ ռուս գրագուններու միութեան անդամ Բննադատ Վալերի Կիրպուտինը, զոր 1937 թուականի Ապրիլի կեսերուն Ստալինն զրկեց Հայաստան, որպէսզի հայ գրողներուն վրայ Ամատունիի եւ իր վարչախումբին գործադրած բռնութեան նոր թափ մը տայ:

Եւ Վալերի Կիրպուտին լրիւ կատարեց իր ստանձնած չարանքնգ պաշտօնը, այն աստիճան, որ համբաւուեցաւ իբրեւ հայ գրականութեան դաշիմը:

Ապրիլ 17էն մինչեւ 21 երկարած հայ գրողներուն ընդհանուր ժողովի երկրորդ նիստին, Կիրպուտին հանդէս եկաւ *«Մտեղծագործական սգեւորութեամբ դէպի նոր յաղթանակներ գրական ֆրոնտում»* զեկուցումով, որ փաստօրէն հանդիսացաւ հետագայ նիստերուն խօսք առնողներուն ուղեմիջը:

Բանաստեղծներու պարագային, դուրսը մնացած էին գրական կշիռ ունեցող երկու դէմքեր—Աւետիկ Բաախանեան եւ Սիդը Զարեկը, եւ Կիրպուտին իր նիզակը ուղղած էր այս երկուքին դէմ, յատկապէս Զարեկի կուրծքին, երբ այս վերջինը արդէն կը գտնուէր տնային կալանքի տակ եւ կ'ողորար գրական իր ընկերներուն վիճակուած դժխեմ ճակատագիրը:

Հատուածներ Զարեկի մասին.

«...Նա ով կոնֆլիկտի մէջ է մտնում ժողովրդի հետ, ով գնում է նրա թշնամու բանակը —նա կանգնում է վտանգաւոր ուղու վրայ: Եւ ահա այդպիսի վտանգաւոր ուղու վրայ է գտնւում այժմ— այդ մասին պէտք է ասել ամբողջ ժայռով —Չարեկը»:

«...Բանաստեղծ Չարեկը գովարանելով յեղափոխութիւնը, նրա հետ ձուլուեց ոչ մինչեւ վերջ, նա ռատիկայ ինտելիգենտ էր, անցած յեղափոխութեան կողմը եւ ոչ թէ մի մարդ, որը լիովին ձուլուել էր պրոլետարիատի շարքերի մէջ»: Զարեկին հասնելէ առաջ, ուրիշ հատուած մը՝ նայն դաշիմին հարուածային ճառէն.

«...Միմոնեանը, Բակունցը, Ալազանը եւ ուրիշներ՝ գրականութեան մէջ գործելու են որպէս մասնաբաժիններ, որպէս հակալեղափոխականներ, որպէս տրոցկիստներ եւ դաշնակներ, որպէս միջազգային կապիտալի գործակալներ, որ»



պէսզի Հայ ժողովրդին շեղէին երջանիկ կեանքի ուղուց եւ վերադարձնէին անցեալում նրա ապրած բոլոր սարսափները: Հետագայում, Չարենցն ընկնում է Հակաիշխանական նացիոնալիստների ազդեցութեան տակ: Մենք անձնապէս դիտենք նրա «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրայ: Դրանք էին Բակունցը, Խանջեանը եւ ուրիշներ: Նա ստեղծում է մի գիրք՝ «Գիրք նամակարկի», որ ամբողջովին գրքւած է որպէս Հայ գրականութեան ճազգային խտկանիչների խտացման» թէորիայի իլլուստրացիան:

Նիստերում դոդ ի դոդ մասնակցող դոքտարները, լաւ եւս է լսել կարմրագեղատ մոլեռանդները, լաւ ըմբռնելով, թէ Վալերի Կիրպատինի բերնով խօսողը «արեգնացեալ կացիւն»ը աչ ու ձախ ու անխնայ փարտող միւսումն է, անմիջապէս սկսան բուքակել իր սանձարձակ գրպարտութիւնները:

Հրայեայ Գոյար-

«Խօսելով Չարենցի, Բակունցի եւ միւսների «նոյեմբեր» խմբակի փսիւն, ընկ. Գոյարը շեշտում է, որ այդ խմբակը տարել է նացիոնալիստական, սպեցիֆիկեան քաղաքականութիւն ոչ միայն հրապարակային ելոյթներում, այլ նաեւ գեղարւեստական գրականութեան մէջ: Նա գտնում է, որ շնայած իր մի շարք յեղափոխական պոեմներին, այնուամենայնիւ Չարենցը հետեւողական յեղափոխական գրող չի եղել: Չարենցը ոչ մի լուսաւոր էլ չի գտնում մեր ժողովրդի ողջ պատմութեան մէջ... Ընկ. Գոյարը բերում է մի շարք փաստեր Չարենցի գրքից, որոնք ցոյց են տալիս նրա նացիոնալիստական յանցանքները»:

Ահա եւ «վայրահազ դատարկագուխ» որակւած Արտաշէս Ոսկերչեանի կիրպատիւնեան բուքակումը-

«Խօսելով Չարենցի մասին, ընկ. Ռսկերչեանը գտնում է, որ ընկ. Կիրպատինը չափազանց ճիշդ կերպով տուեց Չարենցի գեղատականութիւնը: Չարենցը մեծ յանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ, նա մասնակից է եղել Հակաիշխանական նացիոնալիստների գործունէութեան»:

Եւ այլն:

Հայաստանի ամենէն մեայլ օրերում, Հայաստանի պարծանք Չարենցի հասցէին այսպիսի մեղադրանքներ դուրս տուած ու նոյնօրինակ գրպարտութիւններու հեղեղի մը պատճառ դարձած այս վարձկանը, Վալերի Կիրպատին, «հակալ պետք» ամբաստանելու անմօթութեամբ համագոր անմօթութեամբ մը դրական յուշեր գրեց անոր մասին, եւ աւելի զարմանալի ու առաւել ամօթալիմ, կիրպատիւնեան յուշերը տեղ գտան «Անուշ Հայաստան»ի պորտիմ ու հայ մարդոց խմբագրութեամբ լոյս տեսած «Յիշողութիւններ Յիշէ Չարենցի մասին» անուն հատորիմ մէջ (1961):

Աւելի ուշ, 70ական բուականներում, անցիտանալով 37ի բանտարկեալ թէ դուրսի ահաբեկիչ մթնայտութիմ մէջ գոյութիւն չաշէշող մեր պայծառանուն գրողներուն հասցուցած վիրաւորանքը, հայրենի բնադատներէն Լեւոն Մկրտչեան Կիրպատինի հետ ունեցաւ հարցազրոյց մը, որ խորագրուած էր «Իմ բարեկամութիւնը Հայաստանի հետ» եւ լոյս տեսաւ «Մովսէսական գրականութիւն» ամսագրիիմ (1971, թիւ 7) մէջ, վեց էջերու վրայ:

Այդ մասիմ անգամ մը խօսեք քացուած է այս էջերում (1971, թիւ 8) վրայ, «Անբարեկամ Հոգիին անհոգի կառույցը» խորագիրով:

Անցնիմք:

Ուրիշ անգամ մը եւս համոզեալ եմ անհոգի այդ մարդուն, դարձեալ երախտագիտակա՛ն տրամադրութիւններ յուզող պայմաններու մէջ, *«Աւետիք իսահակեանի եւ Յովնէ Զարենցի դիմակարները Հայաստանի ֆոնի վրայ»* երկարապատում խորագրի մը առնօք, դարձեալ *«Սովետական գրականութիւն»* ամսագրի (1984, թիւ 8) էջերուն, Ռաֆայել Աւագեան տառադրող մարդու մը անարատասանատու շարադրանքին մէջ: Թողածագիրը նպատակադրած է «ինչ-որ չափով ի մի բերելու ռուս գրողների գնահատականը» ի մասին խորագրին մէջ յիշած երկու բանաստեղծներուն՝ Իսահակեանին ու Զարենցիին՝ *«Մանաւանդ որ այդ Հայաստանի Հեղինակները ուսուսումնասիրողը կուտորայի եւ պոեզիայի անանդներով դաստիարակուած մարդիկ, ի մեծի մասամբ եղել են իսահակեանի եւ Զարենցի ժամանակակիցներ, անձամբ ճանաչել են նրանց, ճանաչել են նաեւ նրանց Հետը»*:

Իսահակեանն ու Զարենցը երանի՛ ճանչցած չլլային ու տեսած չլլային ստրկահանին յորձնաշուրթն ստրկամտութեան տակ տողանցած ռուս հեղինակներէն մանաւանդ այդ մէկը, Վսլերի Կիրպուտին կոչուած անհոգի արարածը, «եսայ գրականութեան դահիճը», որ իր խաչակրութիւնները առանցիկացոյն չափով մը շրջապագործեց մոյնիմէն Իսահակեանի եւ Զարենցի դէմ, երբ այս վերջինները մարդկայնական մտազագոյն վերաբերումի մը կարօտով կը առչդրէին:

Կարծես թէ բնաւ գոյութիւն ունեցած չէ Իսահակեանին ուղղուած «Իրերին խորհրդային աշխով» նայելու կիրպուտինեան մը՝ աստացոյցի պատուէրը, կարծես բնաւ տեղի ունեցած չէ «Ինտուզիւն» ուղին Զարենցի համար փակուած չէ՝ քառերով սկսած ու չարագոյնակ հետեւանքներով կիրպուտինեան սաստը, որ հայանուն մը պետք գցայ մոյն յեղեղակին քառերով արժևուրելի 37ի դժոխսէն կիսամեռ դուրս ելած Իսահակեանն ու մոյն դժոխսին կեր դարձած Զարենցը:

Ստալինեան մթնոլորտին մէջ միւս ու ռսկոր կազմած Ռաֆայել Աւագեան անուն ստրկահանն ու մամնները ե՛րբ արդեօք դուրս պիտի գան ստալինեան մթնոլորտէն եւ անդրադառնան այլեւս, որ գրականութեան մէջ ալ կայ քառայնական հասկացողութիւն ըստած բան մը եւ կարելի չէ սրբապիղծներու յեղեղով քառերով մտիրական անուններ մեծարել...



ԳՐՈՂՆԵՐՈՒ «ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ»...

Կամխոյ էջերում վրաց մատնանշուած գրիչ շարժող զազազածներում զազանութիւններէն ետք, դժուար չէ այլեւս պատկերացնել սուրեր շարժելու անսահմանական աղետօճաթիւներ ունեցող արիւնալորումները, որոնց խոշտան-գումներու եւ մահուան սպառնալիքներու տակ՝ քողորովին մայրամաշ եղած իրենց զոհերէն ստացան ճիշդ ու ճիշդ իրենց ուզած «խոստովանութիւններ»ը:

«Յայտնի է, - կը գրէ ամաքեկական ազդ մթնոլորտին քաջատեղեակ պատմիչներէն մէկը, - որ շատ դճպփերուժ ճանաչողներին» ուժով ստիպել են ստորագրել նախագէտ կազմուած ցուցմունքներէ տակ: Այն-պէս որ, հիմա, թերթերով աչդ տոնելը, հանրաժանապօ մէկը միւսի մասին ասուած կարծիքներին, պէտք է ժամանակի բարձրը եկտաի ունենալ, որը ոչ մի բարոյական ըմբռնում չէր ընդունում: Ն'նչ միջնադար, թ'նչ հասարակական Սա աւելին էր»:

Անատարկէի՝ հասարակութիւն: Իրաւամբ՝ ըմա տեղին է»...



ՀԱՐՑ. Հետաքննութեան կողմից պարզուել է, որ դուք եղել էք Հայաստանի գրողների Հակախորհրդային, նացիոնալիստական խմբի ղեկավարներից մէկը: Դրանում դուք ձեռք մեղաւոր ճանաչու՞ւմ էք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, ես ընդունում եմ, որ եղել եմ մինչեւ 1927 թուականը «Նոյեմբեր» ամսունը կրող, իսկ հետագայում իր գործունեութիւնը առանց յատուկ ան-ւան շարունակող Հայաստանի գրողների խմբի ղեկավարներից

մէկը: Մեր այդ խումբը, իր գործունեութիւնների մէջ կա-տարելով մացիոնալիստական մի քանի սխալներ, հետագայ զարգացմամբ, յատկապէս 1933 թուականից յետոյ, դուրս ե-կաւ գրական-ստեղծագործական խմբի շրջանակներից եւ վե-րանց հակախորհրդային քաղաքական խմբի... (էջ 44):

ԱԿՍԵԼ ԲԱՎՈՒՆՑ



ՀԱՐՑ.-Ներկայացուած մեղադրանքներով ձեզ յանցաւոր ճանաչու՞մ էք:

ՊԱՏԱՍԽԱՆ.-Այո՛, ես ինձ մեղաւոր եմ մանաչում: 1933ից գրողների հակայեղափոխական, մացիոնալիստական խմբի անդամ եմ: Որպէս հակայեղափոխական խմբի անդամ գրականութեան մէջ տարիների ընթացքում տարել եմ վնասարարական աշխատանքներ: Արտասահմանեան հետախուզութեան գործակալ եմ (էջ 84):

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

•

ՀԱՐՑ.-Ներկայացուած մեղադրանքով ձեզ մեղաւոր ճանաչու՞մ էք:

ՊԱՏԱՍԽԱՆ.-Ինձ մեղաւոր ճանաչում եմ նրանում, որ, ժամանակին Հայաստանում ներքաշելով գրողների հակախորհրդային աջ-որոցկիստական, մացիոնալիստական կազմակերպութեան մէջ, մի քանի տարիների ընթացքում գաղափարական պայքար եմ մղել գրական եակատում: Մեր կազմակերպութեան միւս անդամների հետ միասին կազմակերպական պրոպագանդիստական գործունեութիւն եմ ծաւալել խորհրդային իշխանութեան տապալման, ԽՍՀՄի քաղաքական ու ազգային հիմքի խարխուման ուղղութեամբ: Պրանով իսկ կանգնել եմ հայրենիքի դաւաճանութեան ուղու վրայ (էջ 59):



ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

ՀԱՐՑ.—Ձարեհնցի հետ ձեր մերձեցման հիմքերը եղել են ոչ թէ ընդհանրապէս մշակութային շինարարութեան հարցերը, այլ՝ ձեր հակադիմադրական հայեացքների ընդհանրութիւնը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այո՛, հաստատում եմ, որ իրօք մեր խումբը ամբողջութեամբ տանում էր հակախորհրդային մացիոնայիստական պրոպագանդա եւ հակախորհրդային աշխատանք մտաւորականութեամբ մէջ (էջ 25):



ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

•



ՀԱՐՑ.—Դուք մեղադրուում էք որպէս մի արտասահմանեան հետախուզութեան գործակալ, որի յանձնարարութեամբ եկել էք ինձ ՍՀՄ: Դուք ընդունո՞ւմ էք դա:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Այո՛, ընդունում եմ: Ես, իրօք, 1921 թուականից ֆրանսիական հետազոտութիւնների գործակալ եմ:

...Կիլիկիայում՝ ֆրանսիացիների հակահետազոտութեան պետը, ազգանունը չեմ յիշում, ինձ կանչեց եւ, իբրեւ ապացոյց ներանային իմ մտերմածու-

թեան, առաջարկեց մասնակցել ֆրանսիական հետախուզութեան աշխատանքներին: Ես տուեցի իմ համաձայնութիւնը եւ այդ ժամանակներից ֆրանսիական հետախուզութեան գործակալ եմ (էջ 93):

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ



Խոստովանում եմ, որ թափ-
ցրելի եմ իմ հակայեղափո-
խական, լրտեսական, տեռորիս-
տական գործունեությունը, ֆը-
րանսիական հետախուզության
գործակալ Սիմոնիկ Փիրումովին
ես հաղորդել եմ Չարենցի գլխա-
ւորութեամբ գործող հակայեղա-
փոխական, նացիոնալիստական
խմբի գործունեության մասին,
որի մէջ մտնում էին Բակունցը,
Մահարին, Թոթովենցը եւ ուրիշ-
ներ (էջ 127-128):

...Նախկին հարցաքննութիւն-
ների ժամանակ ես թափցրել եմ
ինչպէս իմ լրտեսական գործունեութիւնը արտասահմանի մի
երկրի օգտին, այնպէս էլ կազմակերպութեան միւս անդամներին,
չեմ յայտնել նաեւ իմ տեռորիստական գործունեութեան մա-
սին: Խորհրդային իշխանութեան օգնելու նպատակով պատրաստ
եմ մինչեւ վերջ մերկացնել հակայեղափոխական կազմակերպու-
թիւնը, որի անդամն եմ (էջ 130):

ՊՕՂՈՍ ՄԱԿԻՆՑԵԱՆ

•

...Տեւական յամառութիւնից
յետոյ ես որոշեցի անկեղծ ցուց-
մունքներ տալ իմ հակախոր-
հրդային, նացիոնալիստական
գործունեութեան մասին: ... Մեր
արտասահմանեան համարդու-
թիւնն ունեցաւ մեծ յաջողութիւն,
բայց դա բանուոր դասակարգի
յաջողութիւնը չէր (էջ 140):



ԿԱՐԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՐՑ.-Մեղադրեալ Չուբար
Եղիա, Հաստատո՞ւմ է՞ք 1-3-5.
Ո՞ր Յին ձեր տուած ցուցմունքները
Եթէ՝ այո՞, ապա Կարէն Միքա-
յէլեանի ներկայութեամբ պատ-
մէք նրա Հակայեղափոխական
գործունէութեան մասին:



ՊԱՏԱՍԽԱՆ.-Այո՛, ես՝ Եղիա
Չուբարս, պնդում եմ, որ Կա-
րէն Միքայէլեանը եղել է Մա-
կըւայի աջ-տրոցկիստական,
նացիոնալիստական հայկական
խմբի անդամ: Նա յայտնի է իր-
րեւ նացիոնալիստ, կապի մէջ
էր Տէր-Գաբրիէլեանի, Լուկա-
շիւնի, Ա. Յովհաննիսեանի հետ, որոնք 1926ին նրան մտցրին
ՀՕԿի պատուիրակութեան մէջ (էջ 141):

ԵՂԻԱ ՉՈՒԲԱՐ

ԸՆԿ. Մուղղուսուն,
Յայտարարութիւն
Հակադրութեան տակ գտնուելու
իմ տասնմէկ ամիսների ընթաց-
քում հետաքննութիւնից ես յա-
մառօրէն թափցրել եմ՝



1.1928ից իմ մասնակցու-
թիւնը Փրանսիական հետախու-
զութեանը,

2.Յանձնիմ Ջամալեանի դաշ-
նակցականների կողմից ինձ հա-
ւաքագրելու եւ յատուկ քաղաքա-
կան յանձնարարութեամբ ինձ
ԽՍՀՄ ուղարկելու փաստը,

3.Սեդուլի կողմից ինձ հա-
ւաքագրելու իրողութիւնը եւ տրոցկիզմի վերաբերեալ ինձ
տուած նրա յանձնարարութիւնները:

Խնդրում եմ ինձ հնարաւորութիւն ներկայացնել բոլոր
այս հարցերի վերաբերեալ տալու ընդարձակ պատասխան
(էջ 191):

25.06.37 թ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ ՏԵՐ-ՍԻՄՈՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

...Մեր մտանումների ազդեցութեան տակ իր դիրքերի հակա-յեղափոխականութիւնը խռատ-վանեց գրող Նղիշէ Զարեմցը: Հայաստանի Կ(ք)Կ Կենտկոմի ա-մուսնով ուղղուած իր նամակում նա յայտարարում է.-

-Ես մոյնիսկ չեմ կասկածում, որ իրօք իմ սխալներն ունեն մացիոնալիստական, հետեւաբար եւ (ստակում եմ ասել) հակայեղա-փոխական, ուրեմն եւ հակախոր-հրդային էութիւն («Նորայայտ էջեր», 1996, էջ 561):



ՆՂԻՇԷ ԶԱՐԵՄՑ



Քաղիւն

ԿՐԿՆԱԿ ԱՄՕԹ
ՎՇՏՈՒՆԵԱՆ...

Ատեն մը մեր ժողովուրդի ու մտաւորական մէկ խաւին, իսկ հիմա ընդհանուրին համար քացայայտ է այլեւս, որ երեսնական թուականներու Հայաստանի համայնավար կուսակցութեան առաջին Քարտուղար Աղասի Խանջեան ըստականութեամբ Թիֆլիսի մէջ, 9 Յուլիսին, ձեռնադրուեցաւ իւր օգնական Լաւրենդի Բերիային:



Խանջեանի նահատակութեան մէջ ուղիղ ամիս մը ետք, 9 Օգոստոսին, ձեռքաւորուեցան ու բանտ նետուեցան Խանջեանի բարեկամութիւնն ու հովանաւորութիւնը վայելող ամենէն գործօն տարրերը, Ակսել Բակունց, Վահան Թաթումցի, Գուրգէն Մահարի, Դրաստամատ Տէր Սիմոնեան եւ շարք մը ուրիշներ:

Ասանկ եւ դեռ դուրս մնացած Եղիշէ Զարեց ունէին իրենց գրական ու գաղափարական թշնամիները, Նալիի Զարեան, Հրաչեայ Բուշար, Նորայր Դաքոբեան, Թարուսի Մկրտչեան, Հայկ Գիւլիքեան:

Խեան, Գեորգ Արով, Ազատ Վշտունի:

Ի լուր իրենց գրչակիցներուն ձեռքաւորութեանց, այս վերջինները սկսան ապրիլ ցնծութիւն մը, որ Զարեց չափածոյով պատկերացուց, իսկ ցնծացողներէն մէկը, Ազատ Վշտունի, իր ցնծութիւնը նամակային զեղումով մը յայտնեց Աղասի Խանջեանին յաջորդած նմատունիին:

«Իմ առաջին ցանկութիւնը կատարեալ իրականութիւն է արդէն, այսինքն նախորդախառնակաւորողկառական վրէժակի դիմակազերծումը: Ես այժմ եւ ոգեւորութեամբ եւ ջանասիրութեամբ Հնարաւորութիւն ունեմ ստեղծագործելու»:


Ազատ Վշտունիի, բանաստեղծ Ազատ Վշտունիի հրճւանքը սկսաւ ուրեմն Բակունցի, Թաթումցիի եւ ասոնց բախտակիցներուն ձեռքաւորութեան օրը, 9 Օգոստոսին եւ այդ թուականին անեցաւ նաեւ ստեղծագործական ջանասիրութիւնը, այնքան որ նստաւ եւ ընդամենը մէկ ամսուան ընթացքին, 1937 Փետրուարին գրեց իր «Լուսադէմին» պոեմը, ուր բաշխուեցին պոեմական խունկ ծխեց մայիսեան խոնկութեան գլխաւոր յանցապարտներուն:

*Այսօր կը գրենք ինչ-որ բան,
Հարիւր ջանքերով՝ խիզախ ու խոկուն,
Մուսայէլեանին՝ կարմիր ապստամբ:*

Հայաստանի գրականութեան շողշողուն դեմքերուն յանդիմանի տրուած հարուածներով ոգեշնչուած եւ Հայաստանի անկախութեան դաւած դաւադիրներէն գրական հերոս սարքելու վշտունիական կրկնակ եռանդը կրկնակ ամօթի մը փաստն է, որ մեր նոր դպրութեան տարեգրութեան մէջ ցաւագիւորէն անջնջելի պիտի մնայ, անջնջելի...

Քաղին

ԴԺԲԱԽՏՆԵՐՈՒՆ ԸԱՄԲԱԽՏ ԿԻՆԵՐԸ...



Բռնակալությանց պատմութեան մէջ ըմբացիկ երեւոյթ եղած է մտածող կամ կեդրոնաժող կարողութիւններով ժողովուրդ տարրին չեզոքացումը: «Մեծաւորները չեն սիրում մեծիմ», պիտի ըսէր քանապոյտը: Եւ ճիշդ ասորը եամար յաճախեցէպ եղած են հալածումներ, բառաբարկութիւններ, ահաւորում ու գնդակահարութիւնները մշակուած քեւամշակ ժողովուրդներու սամարձակ պետութեանց վարձագիծին մէջ, քայց դժուար է յիշել երկիրի մը դիւր ստանձնած մեծատէր մը կամ խումտա մը, որ իր շողշուրտն հալածակներուն համըեպ ճեղմարկած դաժանութիւնը կիրարկած ըլլայ մանաւանդ կիներուն նկատմամբ:

Կարմիր բռնակալութիւնը, որ պատմութեան չերկրմանիւ սկզբումը իր վարդապետութեան գլխաւոր գիծը ըրաւ: Բոյլ տուաւ ինքն իրեն մանաւանդ քրտութիւնը, անմարտութեան միւս բռնարարներուն կարգին հագար ու մէկ չարչարաններու ենթարկեց, տմայիմ կալանքի տակ առաւ: «Գրկեց ամբամ դժմի հացից», հալածեց, բանտարկեց ու ահարեց իր սրածած դժբախտներէն ումանց դժբախտ կիները:



ԱՂԱՍԻ ԽԱՆՋԵԱՆԻ ԿԻՆԸ

Մի այլ անգամ Միշային տարել էին կանանց բաժին՝ փայտ կտրելու, որտեղ մա հանդիպել էր Աղասի Խանջեանի կնոջը՝ Ռոզա Վինգրերգին, որը Միշայի միջոցով մի նամակ ուղարկեց ինձ եւ Համօ Յովհաննիսեանին, որում մեզ յուսադրելով ասում էր. «Արի մնացէք եւ տոկացէք բոլոր դժուարութիւններին, շուտով կը գայ այն օրը, որ կուսակցութիւնը մեզ բոլորիս կ'արդարացնի եւ հայրենիք կը վերադարձնի»: Եւ իսկապէս իրականացան Ռոզայի մարգարէական խօսքերը («Գարուն», 1989, թիւ 6, էջ 43):

ՎԱՀՐԱՄ ԱՂԱԶԱՆ

ԱՎՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԿԻՆԸ

Հակաքակտնացեան արշուն անկի մեծ քափ ա-
ռաւ, երբ 1936 թ. Օգոստոսի 9ին գրողին ձերբա-
կալեցին:

Բակունցը յայտարարեց թիւ մէկ ժողովրդի
քշմամբ: Գիւղի ազգականներն աւ բարեկամներն
անգամ չէին համարձակուիմ Բակունցի անունը դը-
րական առումով տալ: Նրա ընտանիքը բոլորովին
լճուեց, իսկ մի տարի անց կնոջն էլ ձերբակալեցին,
որդին՝ Սեւադան, նախ հօրեղբօր տանը մնաց, ապա
ընկաւ որբանոց («Նորհրդային Հայաստան», 24
Յունիս 1989):

ՌԱՖԱԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ



ԵՂԻԾԷ ԶԱՐԵՆՑԻ ԿԻՆԸ

...1937 թ. Սեպտեմբրի 25ը նշակեալ է, որովհետեւ
այդ օրը Զարենցին ազատագրելու յայտով նրա կինը
նամակ է յղում ՀԱՀՄ Ժողկոմիտեի նախագահի
տեղակալ Անաստաս Միկոյեանին: Յոյսն այն էր, որ
տապալուել էր Ս.մատունու վարչակարգը, իսկ
Մուղղուսին եւ նրա համհարգները ընդամենը մի
քանի օր յետոյ «յատուկ կարգով» պիտի գնդակահար-
ւէին: Բայց Զարենցին ազատելու փոխարէն կնոջն
էլ են ձերբակալում («Փակ դռների գաղտնիքը»,
էջ 35):

ՂԱԻԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ ԿԻՆԸ

Թոթովենցին արդարացնելու յոյսով, կինը՝ Լ. Յովսէփեան-Արեղեանը, 1954 թ. Հոկտեմբերի 12ին դիմել է ԽՍՀՄ գլխաւոր դատախազին եւ խնդրել գործը վերանայել: Դիմումից պարզոււմ է, որ 1937 թ. Դեկտեմբերի 30ին որպէս հակայեղափոխական մացիոնալիստի կին ձերբակալել են մանւ մրան եւ ազատել 1939ի Յունուարի 15ին: Նա մանւ գրում է, որ իրեն յայտնել են, թէ Թոթովենցը աւտորուել է («Փակ դռների գաղտնիքը», էջ 86):

ԴԱԻԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ



ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆԻ ԿԻՆԸ

Մարօ Ալազանը մէկն էր մրանցից, որոնք 37 թուականը կրել էին ոչ թէ սոսկ մաշկի, այլ իրենց մէջքի ու ոսկորների վրայ՝ բանտի չոր յատակին լինելով, դէպի Սիրիոյ ուղարկուող անլուսամուտ վագոնում նստելով, յիսուն աստիճան սառնամանիքից սրբարթալով... Վերջիններից մէկը՝ յիրաւի ողբերգական այդ սերնդից («Գարուն», 1992, թիւ 3, էջ 40):

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

Քաղաքի ՄԵԻ ՅՈՒՅԱԿԻՆ ՄԷՋ...



Կամխոդ էջերում հեղ մը յիշատակուեցաւ ձերբակալուած ու դատապարտուած «Քշմամիներում» մարդահամարը կազմած Ամատումիի հաշուետըութիւնը, որ, կ'ենթադրենք, ունի յուր շարժառիթ մը եւ, ստալինեան մաքրագործումներում ամառուի հոգիով իր մասնակցութիւնը քերած մեղսակիցը մատնանշելէ առաջ, կ'արժէ հարեանցի ակնարկ մը մետեւ անոր վրայ:

Ում Կ. Եմոքեան, հաւամարար Զեկայի անդամներէն կամ կատարածումներէն մէկը, Համամիութեան կեանքովի եւ Ստալինի մուղղուած մամակով մը կը մեղադրէր Հայաստանի յետ-Նազիստական իշխանութիւնները, այն յանցանքով, որ անոնք կը հովանաւորեն հակայնդադիսական ճակատակցութեան ու տրոցկիստները:

17 Մայիս 1937-ին Կ. Եմոքեանի մամակը կ'երևի «Պրաւդա» պաշտօնաթերթին մէջ, որ պէտքը զգացած է իր մոյմ համարին մէջ տեղադրել ման եարուածային խմբագրական մը, որ մոր իշխանութեանց առաջին ամիսներու կատարած մերկացումները խտորէ՛ն գնահատելով հանդերձ, խտորէ՛ն կը բնադատէ վերջին ամիսներում Հայաստանի մէջ թագաւորող «վնասակար ինքնահանգստացումը»: Ուղղակի իր րառերով՝

«Նոր դեկաւարութիւնը իր աշխատանքի առաջին ամիսներին իրօք մերկացրեց այն մարդկանց, որոնք կապուած էին խանջեանի հետ, կամ փորձում էին նրա ճանապարհը բռնել: Մական կամ թոյլ է մարդկանց յիշողութիւնը, կամ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կենտկոմի քարտուղարներ Ամատումիին սակցութեան կենտկոմի քարտուղարներ Ամատումիին եւ Ակոպովը գտան, որ կազմակերպութիւնն արդէն մաքրուած է խորթ, թշնամի տարրերից, կամ՝ աւելի վատ է, կորցրել են բոլորէկեան զգաստութիւնը, յամենայնդէպս բաւական շուտ եւ չգիտես ինչու Հայաստանը:

տանում թագաւորեց վնասակար ինքնահանգստութիւնը («Պրաւդա», 17 Մայիս 1937)։

1937ի ահաբեկիչ մթնոլորտի կէսերում Կ. Եմոքեանի ազդարար մամակը, ապա եւ՝ «Պրաւդա» թերթի ահաբեկիչ դիտողութիւնները երեւի խումապահար կացութեամբ մատնած են Ամատունիին, որ փութացած է Հայաստանի Կենտկոմի անունով հերքելով մամակին հաստատումները եւ զգալով անշուշտ մահն ելոյթներու ետին կեցող մեքենայութիւնը, փութացած է հաշիւ տալ «Համամիութեան Կենտկոմին եւ ընկեր Ստալինին», թէ Եմոքեանի մամակը՝ «Որը փաստօրէն ՀԿ(Բ)Կ. Կենտկոմին ու քարտուղարներին մեղադրում է տրոցկիստներին ու հակալեզափոխական նացիոնալիստներին հովանաւորելու մէջ... Կենտկոմը յայտարարում է, որ հեղինակի այդ հաստատումը սխալ է»։

Պատահական չէր կրնար ըլլալ Կ. Եմոքեան կոչուածին մամակը, պատահական մամակի մը տեղ չէր կրնար տալ «Պրաւդա»-ն, պատահական մամակի մը հիմամբ «Պրաւդա»-ն այդքան ինքնավստահ խմբագրական մը չէր կրնար ելուել, Ստալին անպայման աւարտած չէր համարեր Ամատունիի եւ անոր գործակից կարգած վատասերածներուն վստահած կոտորածի պաշտօնը եւ ասոնց կոտորածով մոր կոտորած մը կը միւթէր։

Համայնավար գործելակերպին, մեքենայութիւններուն, ռեկորուն ու ռեկորուններուն քաջատեղեակ Ամատունիին ու միւսները չէին միայն, որ կը զգային վերահաս աղէտի մը մղձաւանջը, այլ՝ Հայաստանի ողջ ժողովուրդը, որ խանգեանին յաջորդած ու թրջացած իշխանութիւններուն անհետացումը կը քաղար թէեւ, քայքայ մոյմ ատեն կը սարսափէր հերթական խորշակի մը հաւանականութենէն։ Ու փրկութեան լաստի մը հրամայականը ապրելով, իր յոյսը առաւելագոյն չափով մը կապած էր միմչեւ Կրեմլին մագլցած իր ազգակիցին, Ստալինի գործակից Ամաստա Միկոյեանին։

Համայնավար կուսակցութեան «Պրաւդա» պաշտօնաթերթին վերոյիշեալ «ախտաճանաչումներէն» ետք, Ստալին դեռ չորս ամիս եւս իշխանութեան գլուխ պահեց Ամատունիին եւ իր վարչախումբը՝ Ակոպովը, Մուղդուսին, Եղրայր Նիկողոսեանը, Վահան Ձիթունիին, իսկ չորս ամիս ետք, Սեպտեմբերի սկիզբները, Մալեմկովի հետ՝ Հայաստան դրկեց Ամաստա Միկոյեանը, որ, ինչ խօսք, համատարած մղձաւանջը թեթեւցնելու փոխարէն, ըստ ստացած պատուերին, գարկ տուաւ ստալինեան արիւնտ մաքրագործումներուն։

Յօդուածագիր մը, Անդրանիկ Հասրաթեան, «Գարուն» ամսագիրի 1990 տարեշրջանի թիւ 10ին մէջ կը գրէր այդ մասին.

«Հայաստան եկաւ Անաստաս Միկոյեանը: Ես չատմեմ յոյսեր կապում էի նրա հետ, կարծելով, որ արդարութիւնը կը վերականգնի: Հազարաւոր ընտանիքներ դիմել էին Միկոյեանին, սակայն նրա այցը ոչինչով չօգնեց»:

Զօգնելը՝ իր կարգին:

Գիտնալ պէտք է սակայն, թէ որքան վնասեց:

Մալեմկով-Միկոյեան գործակալներու խմբակին գլխաւորութեամբ՝ 16 Սեպտեմբերին սկսան Հայաստանի համայնավար կուսակցութեան նիստերը եւ աւարտեցան մոյմ ամսու 25ին:

Տուեալ միստերում աւարտէմ առաջ, Մոսկուայէն առաւելած ստալինականները վերջ դրին Խանգեանի յաջորդներում իշխանութեան: Ամատումին յանձնուեցաւ կուսակցութեան դատին, իսկ իր վարչախումբին վերոյիշեալ արիւնկականները կարճ ժամանակ մը ետք առանց դատավարութեան գնդակահարուեցան:

Փակագիծ մը:

Վերոյիշեալ քննչութեաններում մէջ ամէնէն տխրահոյակը, 26 Յուլիս 1937ին Նդիշէ Զարեմցի ձերբակալութեան հրամանագիրը ստորագրած, ապա հարցաձնուութիւնները վարչապետէն վարած, ապա քանաստեղծը անորակելի մուստուրիւններու ենթարկած դահիճը՝ Մուդուսին, «յատուկ կարգով», այսինքն՝ առանց դատավարութեան գնդակահարուեցաւ 23 Նոյեմբեր 1937ին:

Զարեմցի մահէն ուղիղ վեց օր առաջ:

Գոցեմք փակագիծը, ու երկու ամիս ետ երթանք, ու պահ մը կանգ առնենք Զարեմցի-Միկոյեան փոխարարութեան վերջին փուլին դիմաց:

Պատմութիւնը կ'ըսէ, թէ Զարեմցի կինը, Իզաբելլա Զարեմցի, իմանալէ ետք, որ իմ ամուսինը յանձնաւ թանտարկած նախկին իշխանաւորները հետաքննած են իրենց «գրադեցուցած» պաշտօններէն, մետուած են քանտ կամ յանձնուած դատին, իր կարգին փրկչական մեծ յոյսեր կապելով Անաստաս Միկոյեանին: Ուստի մը կը դիմէ անոր, քանտին մէջ չարչարուող քանաստեղծին արդարութիւնը ընող աղերսով: Իզաբելլա Զարեմցի փրկչական նախաձեռնութիւններու չի հանդիպիր սակայն, ընդհակառակէ, իր աղերսագրին վրայէն շատ ժամանակ չանցած, կը ձերբակալուի նաեւ ինք, որով՝ ո՛չ միայն դոյզմ չափով չի կրնար այլեւս օգտակար ըլլալ ամուսնոյն, այլեւ երկու եւ չորս տարեկան աղջնակները եւս կը մնան մօրեմական պաշտպանութենէն քոյրովին գորկ:

Իսկ մտի դժոխային պայմաններու մէջ տուայտող Զարեմցի մահէն երկու ամիս առաջ այս եղաւ Միկոյեանի վերաբերումը Զարեմցի եւ անոր պարագաներուն հանդէպ...

1937 Սեպտեմբերին Միկոյանի հայաստանում գործունեությունը մեծապես գնահատուեցաւ պատկան մարմիններում կողմէ եւ համայնավար կուսակցութեամբ պաշտօնաթերթ *«Խորհրդային Հայաստան»*-ի մէջ համդիսաւորապէս արձանագրուեցաւ մոյմիսկ, թէ՛

«Միկոյան հանճարեղ առաջնորդի ցուցումներով ջախջախելու հողմացրիւ է արեւ հայ ժողովրդի ամենակատաղի թշնամիներին», եւայլն:

Նոյն տարուան Դեկտեմբերի սկիզբը, ընտրական նպատակներով, Միկոյան դարձեալ Հայաստան եկաւ, բայց երբեք փորձ չըրաւ հերքել ջախջախումներում իր բերած մասնակցությունը, ընդհակառակն, իր արտասանած ճառերում մէջ գտվէ եիւսեց ջարդարարներում, եւ աւելի՛մ. կոչ ըրաւ շարունակել կոտորածը:

Ամգամ մը եւս կարդանք իր յայտարարութիւնը եւ մոյմ առիթով խմբագրուած մշմարիմ ամփոփումը.

«Հայկական ԽՍՀ-ն զարգանում է արագօրէն. նա կը կարողանար զարգանալ է՛լ աւելի, եթէ նրա զարգացումը չարգելակէին հայ ժողովրդի թշնամիները-դաշնակները, տրոցկիստները, բուխարինական վնասարարները, որոնց բուն արդէն հիմնականում ջախջախուած է, բայց թափթիւկները որոշ տեղերում դեռ մնացել են եւ նրանց հարկաւոր է արմատախիլ անել եւ անողորմար ոչնչացնել»:

«Անշուշտ, Հայաստանի ժողովուրդին սղասածը այս չէր Գերագոյն Խորհուրդներու երէկի անդամ ու այդ օրուայ թեկնածու իր արեւակիցէն, մարդկայնութեան շունչն էր սղասուածը եւ ո՛չ թէ քառասուն տարեկաններու մէջ պաւակ, ամուսին, կին, սրտակից, բանաստեղծ, գրագէտ եւ ուսուցիչ կորսնցուցած սարսափահար մարդոց հիւծած սրտերուն վրայ նոր ամողեր կուտակող մարտաշունչ ճառ. «բայց թափթիւկներ որոշ տեղերում դեռ մնացել են եւ նրանց հարկաւոր է արմատախիլ անել ու անողորմար ոչնչացնել»:

«1937ի վերջին ամիսներուն, դեռ Երեւանի եւ այլ վայրերու բանտերուն մէջ էին ձերբակալուած անմեղներէն շատերը, խոշտանգուած կամ հիւսիսի ճամբարներուն չէին դատադարտուած տակաւին, եւ Միկոյան փոխանակ անմեղօրէն ոչնչացուողներուն թիւը շրակսեցնող ճիգեր ի գործ դնելու, գոհերուն ցանկը աճեցնելու ջանքեր մը բերաւ Մոսկուայէն ու նախամեծար համարեց մեղսակից դառնալ մեր հայրենիքը իմացադէս ու հողային առումով կոտորակող վրացական բացայայտ դաւին:

«Ու այդ օրերու «անհամար» ցաներէն ետք, ցաւ մըն ալ այն՝ հայ ժողովուրդի սրտին, որ Գերագոյն Խորհուրդի ղիրքերուն հասած իր արեւակիցին հանդէպ երախտագիտական պզտումներ փայփայելու փոխարէն՝ ստիղունցաւ փոքրագոյն փաստեր արձանագրել անոր անունին դիմաց»:

Շատ ուշ, չափազանց ուշ, երբ հովերը սկսան ուրիշ ուղղութեամբ փչել, Միկոյեան զգաց իր մեղսակցութեամբ յետադարձ ցաւը: Թուշագիր-յօդուածագիրներու կողմէ եղան ճշմարիտ արձանագրութիւններ այդ մասին: Ահա՛ ասիկ մէկը.

«Արդարութիւնը պահանջում է յիշել, որ Անաստաս Իվանովիչը, քանական թուականների վերջերին դեռեւս, մտերմական շրջանում քանիցս ասել էր, թէ հոգով պատրաստ է ամէն պատիժ կրել 1937ին Ստալինի հետ գործակցած լինելու համար, բայց որ եւ այն ժամանակ երա պահանջով Հայաստան դալիս է՛լ, ինքը լաւ գիտակցում էր, որ եթէ (ասենք, իր հրաժարելու դէպքում) մի ուրիշը գար իր փոխարէն, գուցէ շատ աւելի վատ կարող էր լինել»:

Գուցէ շատ աւելի:

Գուցէ՛...

Բայց չհաշուած քանի մը հաշուեխնդիր գրիչներու գեղումները կամ պարզամիտ մարդոց հաւատքը, Հայաստանի թէ Սփիւռքի զանգուածներու ապրումին, գիտակցութեամբ ու կշիռներում մէջ երբեք մնան չմեղանքի մը արժանի չէ համարուած Անաստաս Միկոյեան:

Միկոյեան այնպէս մը ճեւացուցած է եւ իրմով տարած պարզամիտները կը փորձեն իր հաշուոյն ձեւացնել այնպէս, որ կրնա՞ր հրաժարիլ ու Հայաստանի սիրոյն չէ հրաժարած, յօգուտ հայ մտաւորականութեան չէ հրաժարած, որպէսզի՝ Ստալինի կազմած արիւնոտ ծրագիրին հետեւանքները մուս՛կ ծանրակշիռ քլլան:

«Բացի այդ, -կը շարունակէ յուշագիր-յօդուածագիրը,-նա ունէր մի իսկական «երթացուցիչ դէպք յանցանաց», քանանէ՛կ հոգու ցուցակ էր թողել անդկովկասեան, Հայաստանեան մարմիններին՝ պարտաւորեցնելով «ոչ մի դէպքում ձեռք չտալ որեւէ մէկին ալդ մարդ» կանցից, բոլորն էլ մեր մշակոյթի անկախ դէմքեր, որոնց կորուստն է՛լ աւելի խորն ու անբուժելի վէրք էր լինելու մեզ համար» («Գարուն», 1987, թիւ 11):

«21 հոգու ցուցակ»իմ քսանմէկ անձնանշաններով եւրէրը, «որոնց կորուստն է՛լ աւելի խորն ու անբուժելի վէրք էր լինելու մեզ համար», անունով ու մականունով չեն յիշատակուած գրութեան մէջ, հետեւաբար բոլորովիմ անձանք կը մնան ըմբերցողիմ, իսկ եթէ այդ անձանք զանազանները իրապէս գոյութիւն ունեցած են եւ իրա-

պէս փրկուած են Միկոյեանի շնորհիւ, ուրիշ բան չի մնար անշուշտ հայ մարդուն, եթէ ոչ այդ ձեռնարկին համար երախտագիտական զգացումներ տածել իր յիշատակին դիմաց:

Բայց այդ քսանմէկ անծանօթները շա՛տ աւելի կշիռ ունէին արդեօք մեր մշակոյթին համար, քան քաջածանօթ Նդիշէ Զարեանը, որ Հայաստանի տուած Միկոյեանի այցելութեան օրօք դեռ բանտին մէջ կը հեծէր:

Քան Վահան Թոթովենցը, որ դեռ չէր գնդակահարուած:

Քան Տիկիմ Զապէլ Յսայեանը, որ դեռ չէր ահաբերուած: Եւ այլն, եւ այլն:

Շատ յայտնիներում ու հանգամանաւորներում մակառօգիւրը ոչինչով չբարեկամած մարդն է Ամաստաս Միկոյեան եւ անծանօթներում առիթով իր հաւաստիացումները երբեք հաւաստի չեն թուիր եւ քնաւ ճիշդ չէ աւելորդ պատկերներ գետնի վրայ անարժան ճակատին:

Ուղիղ 17 տարի ետք, երբ աշխարհի այդ մասը դժոխքի վերածած Ստալինը դարձած էր միւս դժոխքը եւ ըստ իր պատկերին պատրաստած ճիւղերը գնդակահարուած էր, քաղաքական ներքինիութեան հաւատարիմ պալատականը այն ատեն միայն անդրադարձաւ, որ Հայաստանի մէջ օր մը Նդիշէ Զարեան անունով քանաստեղծ մը յայտնուած է եւ ժողովուրդին ճշմունքը այլապէս ապահովելու մտքով յայտարարեց.

«...Սովետական ժամանակաշրջանի հայ տաղանդաւոր բանաստեղծ Նդիշէ Զարեանին իր ստեղծագործութիւնը մուրհիւ է մասսաների յեղափոխական գործունէութեան գովերգմանը եւ մեր կուսակցութեան ու սովետական պետութեան հիմնադիր մեծ Լենինին: Զարեանի երկերը, որոնք աչքի են ընկնում բարձր վարպետութեամբ, տագորութեան են յեղափոխական պարօտով ու սովետական հայրենասիրութեամբ, պէտք է դառնան սովետական ընթերցողի սեփականութիւնը»:

Հասկացողութեան, գնահատմանի եւ տիրութեան ի՞նչ փութկոտութիւն...

Սակայն այն միակ անհերքելի փաստը, որ Նդիշէ Զարեանի փրկութեան օգտին աղերսագիր ներկայացուած է իրեն եւ աղերսագիրը ստորագրած կինը իր մեղսակցութեամբ աւելի մեծ դժբախտութեան ենթարկուած, պիտի բաւէր, որ Ամաստաս Միկոյեան անունը անջնջելի մնայ 37ի մեղապարտներուն սեւ ցուցակին մէջ...

Անջնջելի'...



Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԻՄ ԾՆՈՒԱԾ ԹԻՒԸ (Նախերգի փոխարէն)

Դաւեր եմ եղել,
 ծաւեր եմ եղել
 Իմ ծնուած թուին:
 Մէկը իր մի բոլ աղանձի համար
 Հրի է մատնել արտը ուրիշի,
 Մէկը սին փառքի, նախանձի համար
 Անդունդն է նետել բախտը ուրիշի,
 Մէկը իր սուտն է ճշտի տեղ ծախել,
 Մէկն իր աթոռը դարձրել չարիք,
 Մէկն իր գլուխն է առել ու փախել՝
 Թողած մայր ու տուն, թողած հայրենիք:
 Լոկ դուք մնացիք ձեր սուրբ դիրքերում
 Անյաղթ, աներեր,
 Մարդի՛կ անվեհեր:
 Դուք, որ շեշտի տեղ եւ ստորակէտի՝
 ձեր մէջքն էք ծռել,
 Դուք, որ բանտերում, մահուան խցերում կռել էք,
 կռուել,
 Դուք, որ տարել էք կարմիր գնդերը կարմիր գրոհի
 Եւ Աւրորայի զարկերը կիսել սրտի թրթրոտով,
 Չէի՞ք մտածում, թէ կը գայ մի օր, եւ ձեր գնդերի
 Դրօշը կարմիր պիտի որ ներկի նա ձեր արիւնով:
 Նա՛, որ ամէնուր՝ թէ՛ գիւղ, թէ՛ քաղաք
 Բռնակոչել էր լոկ իր անունով,
 Նա աստուածներին հանեց կախաղան,
 Որդուն խողխողեց իր հօր դաշոյնով...
 Երեսունեօթ թիւ...
 Հրաժարում եմ իմ ծնուած թուից,
 Մակարդէք իմ մէջ արիւնն այդ թուի,
 Ի՞նչ մեծ պատիժ է բախտը տուել ինձ,
 Ի՞նչ սեւ պիտակ է դա իմ սերնդին:
 Բոլոր գրերում,
 Անձագրերում
 Սեւ թանաքին է դա սոսկ արժանի,
 Միայն այդ թիւը ունի սեւ ժանիք,
 Իմ ծնուած թիւը,
 Իմ ծնուած տարին:

18.11.62

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Քաղիկ ...«ԱՐԺԷ ԳՐԵԼ»...

«Գրականագետին» ուղղուած հետագայ մամակը, իր կարգին, վկայութիւն մըն է ի մասին այն սահմոյցացիչ մթնոլորտին, երբ համայնավարութիւնը, իր մտնուածքով ծայրագոյն քեւեռներուն՝ քոյլ բնաւորութեամբ ուսանողները հանեց իրենց մեծավաստակ դասախօսներուն դէմ ու գործել տուաւ անոնց արարքներ, որոնց մամուլները գուցէ արձանագրուած չեն կրթական մարզերէն որեւէ մէկուն մէջ:

«Հատընտիր» այդ ուսանողներէն երկուքը ընթերցողին ծանօթ են Մահարիի «Մաղկած փշալարեր»էն:

Նոր «հատընտիր»ը մանչնալէ առաջ, քարմացմեմք փըշալարային *փուշերուն* փշաճաղիչ վարէր:

«Երբ *«Կապիտալ»*ի առաջին թարգմանչին, ազմիւ սոսկեական դասախօսին ընկիւնները ծածի են քաշել, դասախօսը փորձել է ուշի բերել իր նախկին ուսանողներին, դիմելով նրանց զգաստացնող խօսքերով. «Ի՞նչ էք անում, տղաներ, ինչո՞ւ հեռու չէք նայում, ախր, պատմութիւն կայ, պատասխանատւութիւն կայ» ...Քննիչներից մէկը ծխախոտը հանգցրել է՝ սեղմելով պրոֆեսորի նակատին ու ասել. «Քանի մեմք կամք, պատմութիւն չի լինի, իսկ երբ պատմութիւն լինի, մեմք չենք լինի»:

Փշալարային փուշերը՝ այսպէս:

Մարդ կրնա՞ր մտէն անցընել սակայն, որ անոնց շարքին կրնայ գտնուիլ ուրիշ մը, որ իր մեծամուն դասախօսները մահացու մեղքերով զրպարտելու չափ ապականեալ խառնուածք մը ցուցաբերելէ ետք, յանդգնի օր մը զրադիւ նրբամուրք զգայնութիւններով յատկանշուող Վահան Տերեանի կեանքին ու գործին ուսումնասիրութեամբ:

Այդ է պարագան բանասէր Վաչէ Պարտիզանիի, զոր քիչ անդին ուրուագրուած կը գտնէք եղբարայտ բանաստեղծին դատեր՝ Նուարդ Տերեանի կողմէ:

Իր չարագործ արարքներուն չար պտուղները հեղ մը վայելելէ ետք, «*Աւանդարդ*»ի հաւաքածոներէն անոնց հետքերը ընթելով երկրորդ անգամ իր ձեռքերը աղտոտած այս «կարմրագոյն» վարէր անծանօթ չէր Սփիւտի մտաւորականութեան որոշ մէկ խաւին, մինչ այսօր, Նուարդ Տերեանի գրիչով մայրը կը տրուի մեզի արձանագրեալ, զոր «*Փարոս*» ամսագիրը չէ վարանած ներկայացնել ընթերցողին:

Հաս փակագիծ մը բանալով դիտել տանք, որ 1936-38 թուականներու իրադարձութիւններուն դիմաց կան երկու տեսակետներ:

Մէկում կողմակիցները կը հանդիսանան վիպագիր ու հրապարակագիր Անահիտ Սահինեան եւ իր համախոհները, թէ՛ պէտք չէ գրել խնդրոյ առարկայ թուականներում թաւալած «սահաւոր դէպքերի մասին, չրի երես չհանել հայ գրողների թատմանի արարքները այդ տարիներին», իսկ հակառակ տեսակետին վրայ կանգնած են քաղմաթիւ մտաւորականներ:

Նայիրի Զարեան առաջիններէն մէկն էր, որ 37ի սղ-րերգութիւնը չորրեւոցելու սկզբումն մը սկսաւ պաշտպանել, մասնաւորաբար իր *«Միջնորոտային մտորումներ»* անուն գրութեամբ, ա՛յն տրամաբանութեամբ, որ *«Եթէ մենք փորձենք հաւատացնել, թէ այդպիսի վէճք չի եղել եւ չկայ, ապա ընթերցողները մեզ չեն հաւատայ, եւ մենք դաւաճանած կը լինենք ռեալիզմի ոգուն, կոմունիզմի ճշմարտութեան ոգուն»*:

Հիմա արդէն ամէն ոք գիտէ, թէ «կարմիր գծից» մերս ինչ վարկ կը վայելէր ռեալիզմի ոգին եւ որքան ճշմարտութիւններ եւ ճշմարտներ զոհ գացին «կոմունիզմի ճշմարտութեան ռզուն», բայց կարեւորը այդ չէ հիմա, կարեւորը յանուն «կոմունիզմի ռզուն» զործուած ռեի-րներուն քացայայտումն է, որուն կողմակիցները, առանց ազդուելու մոր խաչակիրներու խաչակրութիւններէն, ճշմարտութեան ծառայելու պապական իջած են հրապարակ ու կը քաղմանան հետզհետէ:

Պատահածը քացայայտելու կորովն ու պատասխանատը-ւութիւնը տւելի զգացուեցան մահաւանդ համայնավար աշ-խարհի երկրորդ ձնհալին, գորրաշովեան հրապարակայնու-թեան տարիներուն, երբ համայնավար կուսակցութեան Ա-ռաջին քարտուղարը ինք քանաձեւեց իր կարծիքը 1937-1938 թուականներուն մասին.

«Ես կարծում եմ, որ մենք երբեք չենք կարող մո-ռառալ եւ չպէտք է ներենք կամ արդարացնենք այն, ինչ եղել է 1937-1938 թուականներին: Երբեք: Դրա համար պատասխանատու են այն մարդիկ, որոնք իշխանութեան գլուխ էին կանգնած այն ժամանակ»:

Պատասխանատուները դիմակազերծելու գործը ծաւալե-ցաւ գորրաշովեան հրապարակայնութեան օրերուն, բայց այդ աշխատանքը մեր մէջ թափ առաւ եւ ստացուած ար-դիւնքը գնահատելու տրամադրութիւնը ընդհանրացաւ ան-կախութեան շրջանին:

Ողբացեալ Ռաֆայել Իշխանեան հնգամեակ մը առաջ կը գրէր.

«37 թուի զոհերի ու «հերոսների» մասին մանաւանդ արժէ դրել, քանի որ բացառուած չէ, որ նոյնը կրկնուի մի նոր տարբերակով: 37ի բոլոր ծախքերը պէտք է բացա-

յայտնել, այդ թւում այն օրերի լրտեսներին ու բանասարկուներին պէտք է լոյս աշխարհ հանել: Փուցէ դա մեղմի ժամանակակից լրտեսների ու բանասարկուների ախորժակները» («Գարուն», 1992, թիւ 6):

Պատահածը, զգացումը, ներկայ թէ ապագայ սերունդներուն համար անհրաժեշտը արձանագրելու հրամայականը նոյնպէս ուժգին հնչեղութիւն մը ունեցած է Սիլվա Կապուտիկեանի մօտ եւ շահեկանութենէ զուրկ չէ մատնանշել ամոր ապրած թէ՛ դառնութիւնը եւ թէ գրիչ բռնելու մղումը:

«...Չէ՞ որ հիմա լռում ու լռեցումն են ամէն բան, ինչ վերաբերում է 37 բուականին, ճիշդ այն երեխայի միամտութեամբ, որը փական է իր աչքերը՝ արպեսզի իրեն չտեսնեն... Սակայն ես գրեցի Արտօ Նդիազարեանի, հօրեղբորս եւ միւսներին վերաբերող էջերը, պիտի գրեմ նաեւ այս էջը, որովհետեւ մենք՝ որ եթէ ոչ ապրել, ապա ապրել ենք սկսել այդ տարիներին, զգացել ու հասկացել ենք այն, ինչ չեն կարող հասկանալ ու զգալ ո՛չ ճշգրիտ փաստաթղթերն ու արխիւները իրենց պատմաբանները եւ ոչ էլ հետուից հետու անէծք եւ դատապարտութիւն կարդացողները... Եւ մենք, միայն մենք կարող ենք եւ պէտք է գրենք այս ամէնը՝ եթէ ոչ ներկայի, ապա ապագայի համար» («Փարուն», 1992, թիւ 3):

Ճիշդ կ'ըսէ Սիլվա Կապուտիկեան, երբ կը պնդէ, թէ «Մենք, միայն մենք կարող ենք եւ պէտք է գրենք այս ամէնը»:

Բարեբախտաբար, ինչ թիւով անձեր չի հաշուեր «Փակ գործընկերը» բանալու հրամայականը ապրող «մենք»ը:

Դեռ այս տարուան սկիզբը, հայ եկեղեցականութեան վրայ գործադրուած ստալինեան սպանդին անդրադարձող մտաւորական մը, Արմենակ Մանուկեան, ոչնչացուած եկեղեցականներուն մարդաստամարդ կազմած իր գրութիւնը կ'եզրափակէր վերջիշեալ մտաւորականներուն կատարած առաջադրութիւններուն յար եւ նման առաջադրանքով:

«...Անհրաժեշտ է գիտենալ եւ յիշել անցեալը, որպէսզի ապագայում չկրկնուեն նախկինում թող տրուած ճակատագրական սխալները» («Գարուն», 1997, թիւ 1, էջ 69):

«Բաց նամակ»ին առիթով կատարուած այս մատնանշումները կարճ կապելու համար պիտի ըսէինք, որ հայ մարդը երբեք պիտի չուզէր, որ վաչէ Պարտիզանի գործած արարքներուն պէս արարքները շատ ըլլային հայ գրականութեան մէջ, ու ի սրտէ պիտի յուզէր, որ ինչ ըլլային Նուարդ Տերեանի կատարած մերկացումներուն պէս անամօք մերկացումներ...

&

ՆԱՄԱԿ ԳՐԱԿԱՆԱԳԷՏԻՆ



Թերեւս ոչ մէկն այս աշխարհում այնքան քաջածանօթ չէ Ձեր բարոյականին եւ մարդկային կերպարին, որքան ես: Ձեր ողջ կեանքն ու գործունեութիւնը լի են փաստերով, որոնք ստիպեցին որոշակի եզրակացութիւններ յանգել, եւ որոնց ճշմարտացիութեանը կասկածել չի կարող ստիպել ինձ ոչ ոք, ի հարկէ, Ձեզանից բացի: Եթէ Դուք կարողանայիք խոստովանել եւ քաւել Ձեր մեղքերը... Խոստովանել հրապարակաւ (քանաւոր կամ գրաւոր) եւ քաւել գործուն կերպով:

Ձեր արիւնայի գործունեութիւնը սկսուեց մեր ժողովրդի համար ողբերգական 1937 թուականին (իսկ գուցէ եւ աւելի վաղ): Այն ժամանակ, լինելով Երեւանի պետհամալսարանի ուսանող, Դուք ձեռք բարձրացրիք Ձեր պրոֆեսորների վրայ, որոնք եթէ խոշոր գիտնականներ էլ չլինէին (ոմանք համաշխարհային հռչակ էին վայելում), միայն այն բանի համար, որ Ձեզ գիտելիքներ էին հաղորդում, պէտք է, որ Ձեր ակնածանքին եւ յարգանքին արժանանային, ինչպէս նորմալ մարդկանց պարագայում է: Այդպէս է եղել, այդպէս է, եւ այդպէս կը լինի՝ ուսանողները յարգում են իրենց պրոֆեսորներին: Նրանք, որոնց վրայ յարձակուել էիք, խոշորագոյն գիտնականներ էին Հրաչեայ Աճառեանը, Գրիգոր Ղափանցեանը, Կարօ Մելիք-Օհանջանեանը եւ ուրիշներ: Նրանք կիրթ եւ զարգացած անձնավորութիւններ էին: Միայն նրանց լինելութեան փաստը հայ գիտութեան եւ մշակութի հպարտութիւնն էր: «Թշնամին» պրոֆեսորի դիմակի տակ» եւ «Մաքրել համալսարանը թշնամական տարրերից» վերնագրերով Ձեր յոգուածներում («Աւանգարդ», 2 եւ 6 Սեպտեմբերի, 1937 թիւ) Դուք հրապարակաւ զրպարտեցիք երկու տասնեակից աւելի գիտնականների, գրողների եւ հասարակական գործիչների: Դուք նրանց անուանում էիք սրիկայ, դաշնակ-ֆաշիստ, հայ ժողովրդի երդ-

ւեալ թշնամի, եւայլն՝ պահանջելով հաշուեյարդար տեսնել նրանց հետ: Եթէ Դուք գրէիք անանուն զրպարտագրեր, ապա գուցէ պետական գույքերու մարմիններում գտնուէր մի հայրենասէր մարդ, որը պարզապէս կը պատուէր Ձեր այդ խօսքները եւ դէն կը նետէր: Բայց, հաւանաբար, կանխատեսելով այդ, հանդէս եկաք հրապարակայնօրէն, որպէսզի այդ մարդկանց հանդէպ միջոցներ անպատճառ «ձեռք առնուեն»: Եւ Դուք չսխալուեցիք: Ձեր նշած գրեթէ բոլոր անձինք հալածանքների ենթարկուեցին, աքսորուեցին, եւ քչերը մնացին կենդանի: Ինչպիսի տականք պէտք է լինել իր մշակոյթին այդքան նըւիրուած եւ նրա համար այդքան գործ կատարած Արշակ Չօպանեանին հայ ժողովրդի երդուեալ թըշնամի եւ գրչակ անուանելու համար: Ինչ անյուսալի սրիկայ պէտք է լինել՝ խոշոր գիտնականներ Հր. Աճառեանին եւ Գ. Ղափանցեանին՝ չակերտաւոր պրոֆեսորների անուանելու համար: Կասկած չունեմ, որ եթէ Վահան Տէրեանն ապրէր մինչեւ 1931 թրւականը, նրա անունն էլ կը յայտնուէր Ձեր կողմից հալածուողների ցուցակում:

Եւ այդ բոլորը Դուք կատարել էք, երբ Ձեր քրտան տարին նոր էր լրացել: Այն ժամանակ Դուք գեղջուկ, կիսագրագէտ մի տղայ էիք, ոչինչ չգիտէիք եւ միայն նրանցից կարող էիք ինչ-որ բան սովորել: Բայց, Դուք սովորել էիք կամենում: Դուք որոշեցիք, որ ոչինչ չիմանալով, կեղտոտ եղանակներով կարելի է գրաւել այդ գիտնականների տեղը:

Այո, ծանր ժամանակներ էին: Հայ գիտութեան ու մշակոյթի սերուցքը ոչնչացուած էր, եւ Դուք էլ Ձեր մասնակցութիւնն էիք ունեցել, բայց դա միայն սկիզբն էր: Բռնելով կեղծիքի, հեղինակութիւնների զրպարտելու, ոչնչացնելու ուղին, Դուք կանգ չառաք, ինչպէս կարող էր պատահել սխալուած մարդու հետ: Դուք շարունակեցիք Ձեր «գործունէութիւնը», բայց այդ «գործունէութեան» մասին պատմելուց առաջ ցանկանում եմ նշել այն, որ Դուք հանրապետական գրադարանում պահուող 1931 թրւականի «Աւանգարդ» թերթի բոլոր հաւաքածուներից կտրել, հանել էք Ձեր վերը նշուած թղուածները, ցանկանալով ներկայիս ընթերցողներից թաքցնել Ձեր գրական առաջին «ստեղծագործութիւնները» («Գարուն», 1990, թիւ 8-նստում):

ՆՈՒԱՐԴ ՏԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Դ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

37Ի ԶՈՀԵՐԻՆ

Եւ հայրերի համար՝ անմեղօրէն զոհուած,
Եղբայրների համար՝ կորած անյայտ ճամբին,
Ղօղանջում են բառեր մոռացումից փրկուած՝
Ի պատասխան նրանց անլուր տառապանքի:

Եւ հայրերին ստոր՝ մատնութեան մէջ թաղուած,
Եղբայրներին դաժան՝ եղբօր արին խմող,
Նոյն վախճանի սիւնին անմեղօրէն գամած՝
Հունցում էին իբրեւ գաղափարի խմոր:

Նեղ խուցերում բանտի Լոռիւնն էր նստել,
Տիրութիւն էր անում Կամքը ստրկամիտ:
«Ո՞վ էր, այդ ե՞րբ, ինչպէ՞ս, ինչո՞ւ համար տարան...»
Պատասխանը նոյնն էր, իսկ հարցերը՝ անմիտ:

Եւ նեղօրէն թափուած անմեղ արեան համար,
ՍԱՐԴՈՍԱՅՆԻ համար՝ պահած հազար դաւեր,
Կանգնած ենք մենք հիմա ապշած ու դիւաճար,
Հոգիներում մեր՝ վերք, խղճի դատ ու աներ...

ԴԱԻԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բագին

«ԱՌԱՍՊԵԼ»Ի ՄԸ
ԱՌԱՍՊԵԼԸ...

Ճ

Ստալինի պատկազերծումէն ետք, խորշնեան Զինհային խորհրդային աշխարհին մէջ տիրեց յարաբերական ազատութիւն մը, երբ, շնորհիւ հայրենի մտատրականներուն ճիգին՝ ընթերցողը շատ բան իմացաւ «Երկաթէ վարագոյր»ին նոյն թաւալած ահաբեկչական մթնոլորտին ու անոր դառնադառն հետեւանքներուն մասին:

Խորշնեի Զինհային յաջորդած պրեծնեան տասնամեակներուն, սակայն, իրադրութիւնը նոյնը չմնաց, սկսաւ «Փափուկ ճնշման» շրջանը եւ ստալինեան երեսնամեայ մը-նային գործուած ոճիրներուն ու անիրաւութիւններուն վրայէն քողը վերցնելու բանաւոր թէ գրաւոր ձեռնարկները հաշտ աչքով չդիտուեցան այլեւս «Ստալինի ժառանգորդներ»ուն կողմէ:

Եւ որովհետեւ ստալինեան անել շրջանակէն անգամ մը դուրս եկած էին մարդիկ եւ պաշտօնական կարծիքը անառարկելիութեան ճախկին վարկը չէր վալել, բախումները սկսան յաճախակի դառնալ:

Նայիրի Զարեան մէկն էր անոնցմէ, որոնք ծառացան ճշմարտութիւնները ծածուկ պահելու մտադրութեան դէմ եւ այդ մասին ունեցած իր կարծիքները յայտնեց Հայաստանի գրողներու ճիգ համագումարին եւ անի տշ հրատարակութեան տուաւ զանոնք «Սովետական գրականութիւն» հանդէսին մէջ, «Մթնոլորտային մտորումներ» խորագրին տակ:

Նայիրի Զարեանի «Մտորումներ»ուն մէջ ընթերցողը ի միջի ալլոց կարդաց.

«Վերջերս մեր բննադատներն ու հրատարակիչները, մեղմ ասած, չեն բաշխեր մեր գրողների հակումը վերադարձելու այն մեծ տղերգութիւնը, որ տեղի ունեցաւ մեր կեանքում երեսնական թուականներին: Որքան եմ նրանք իրաւացի: Սարսփ է գրականութիւնը այժմեական բեմատիկայի հարցերը վնասել՝ չանդրադառնալով երեսունեօթ թուականի իրադարձութիւններին...: Գրականութիւն չի կարող չարտայայտել ժողովրդի վերքը» (1967, թիւ 4, էջ 99):

Անդրադառնալով նոյն հարցին եւ կանգ առնելով քննադատներուն ու հրատարակիչներուն հասցէին ուղղած Զարեանի դիտողութիւններուն, Վազգէն Մնացականեան ստորագրող շարքային քննադատ մը, «Գրական թերթ»ին մէջ

իր լույս ընծայած «Գրական Բնագրադասարան մասին» գրութեան մէջ կը յայտնէ ճիշդ հակառակը: «Նախ, ինչո՞ւ միայն 30ական, իսկ 40ականը: Յետոյ այդ ո՞ր Բնագրատն է լռութեամբ մատնել Զարեանին աւելի քան ծանօթ պաշտամունքային տօնակատարութիւնները մերկացնող երկերը: Ոչ մի»:

Վազգէն Մնացականեան, որ ճիշդին ու ճշմարտին հանդէպ յարգալից ընկալու շատ փոքր ընող գրիչի մը վարկը չի վաւելեր, կը կարծենք, թէ իր հերթական հաշուեկատարութիւններէն մէկը արձանագրած է հոս նա: Որովհետեւ, ճիշդ է, որ 37ի ողբերգութեան մասին քառական քան զըրեցաւ, քայց «Մթնաբոսայի մտորումներ»-ուն (1967) օրօք նա նոյնիսկ անկէ շատ առաջ արդէն սկսած էր 37ին անդրադարձող գրութիւններուն վրայ դրուած արգելքը զգացնել ինքզինք: Ան այդ՝ փաստերը «ոչ մի» չեն ըսեր, այլ կ'ըսեն թազում մի: Բաւարարուինք երկրորդ օրինակով մը.

«Մեր սերունդը, կ'ըսէ Սիլվա Կապուտիկեան, որ աւելի բախտաւոր էր, քան մեր մայրերը, քանզի իր ճանապարհին հանդիպեց նաեւ «ձմեռներին», այնուամենայնիւ, չկարողացաւ իր միջից ի սպառ հեռացնել այդ մեղքին խմբագրին: «Ընճանկար հոգու եւ քարտէսի գոլներին» գիրքը գրելիս, այսինքն՝ 1974 թուականին, խառնուրդով յառաքերական ազատութիւնները դարձեալ շնչահեղձ էին եղել լմացման տիդմի մէջ: Գրաճնշութիւնը մտից իր տարերէն մէջ էր: Ձմայած դրան, եւ ինձ խօսք էի տուել գրել ինչքան կարելի է անկաշկանդ: Շարադրանքի օրագրային ձեւը ինձ հնարաւորութիւն էր տալիս քացել հոգուս միմջ այդ փակ մնացած ծալերը, բէռ մախօրօք գիտէի, որ գրածիցս շատ քան պիտի դուրս գայ գրէից. այդպէս էլ եղաւ: Մի շարք գլուխներ հանուցին հէնց առաջին խմբագրական ընթերցումից յետոյ՝ դեռ գրաճնշութիւն չհասած: Խմբագիրը մեղք չունէր. այդ տարիներին վերից եկած յատուկ կարգադրութեամբ արգելումն էր 37 թուի անունը տալ, իսկ գրէից հանուած օրագրութիւնները առընչում էին այդ սեւահամբաւ թուականներին...

«Ըս ահա մօտ 20 տարի յետոյ ես տպագրութեան եմ յանձնում այդ հատուածներից երկուսը...» («Գարուն», 1992, թիւ 3, էջ 40):

Զարեանի, Կապուտիկեանի եւ ասոնց փորձառութիւններուն պէս տասնեակ ուրիշներ անպայման ծանօթ էին Վազգէն Մնացականեանին, քայց ան, ինչպէս ակնարկուեցաւ անգամ մը, իրականութիւններուն շատ յարգ ընծայող մը չէ եղած, այլ միշտ գործած է ըստ կամս, իր հաշիւներուն ցուցմունքով, այս կամ այն առիթով իր ներսը եռացող քինախնդրութեան սլաքին ներքեւ:

«Գրական թերթ»ին մէջ լոյս ընծայած «Գրական բնագոյն»-ը անուի խնդրոյ առարկայ իր գրութեան մէջ, ակնարկելով դարձեալ Նայիրի Զարեանի «Մտաբանական»-ը ոմանց եւ ուղղակի Նայիրի Զարեանին, ան կը գրէ.

«30ական թուականներ ասածը վերացական հասկացաբան չէ, կենդանո մարդիկ են ու նշմարելի կենդանո աւարտներ: Ունեն գտել են արդէն իրենց արդարացումն ելքը, ասելով, ժամանակներն էին այդպիսին: Ո՛հ: Դռն է՞ ժամանակին այդպիսին եղել: Սա է ճշմարիտը, որին դեռ պիտի անդրադառնայ մեր գրականութիւնը» (1967, թիւ 29):

Իր հասցէին եղած ակնարկութենէն մեկնած, Նայիրի Զարեան ստորագրեց ընդարձակ թուղթ մը, որ պարագայական այս մեկնակէտը ունենալով հանդերձ, կ'ընդգրկէ ընդարձակ ժամանակի մը վրայ տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնը ու զարմուած է բառական թիով ցաւոտ հարցերու:

Հոս խնդիրը կը փոխադրուի արդէն ուրիշ գետիցներու: Ռուրուզները:

Խորուշեան Զինհալի թուոն օրերուն ի լոյս իմացած ենք եւ երբեմն առանձին գրութիւններու մէջ հանդիպած, որ Հայաստանի գրողներու մէկ նիստին Նայիրի Զարեան անձամբ պատասխանատուութեան կանչուած է՝ 37 թուականներուն իր գրչակիցներուն դէմ ունեցած թշնամական արարքներուն համար եւ ինք ճգնած է արդարացնել ինքզինքը:

Վազգէն Մնացականեանի արտայայտութիւններուն մեկնաբանութեան հետ՝ Զարեան այս թղթը իրադարձութիւնները առած է իր թուղթին մէջ, զոր ուղղած է Հայաստանի համայնավար կուսակցութեան այն օրերու կենդանական կոմիտէին, որ, ըստ երեւոյթին, հարկ եղած ուշադրութիւնը չէ ընծայած անոր ու մամուլ օրգաններուն արգիլած է հոն կատարուած խորհրդածութիւնները հիւրընկալել, որով՝ հեղինակը բազմազրած է գրութիւնը ու դրկած տարրեր հասցէներու:

Խնդրոյ առարկայ թուղթէն օրինակներ անցան նաեւ արտասահման, որոնցմէ մէկը տեղ գտաւ «Նայիրի» շաբաթաթերթի 1969 տարեշրջանի 24, 25 եւ 26 յաջորդական երեք թիւերուն մէջ, պարագայական խորագիրի մը տակ՝ «Մասյի առասպել»:

«Նայիրի» շաբաթաթերթին մէջ լոյս տեսած Նայիրի Զարեանի «Մասյի առասպել»-ին վրայէն անցած է տեղի քան թատրոյ դար:

Մեր գրականութեան Երկրորդ Ապրիլ 24-ին ի յուշ կազմուած այս բաժինին մէջ, կանխող էջերուն մատնանշուած տարրեր վկայութիւններու կողքին, նպատակադրմար թուեցաւ այդ մասին թարմացնել 70ական թուականներու ընթերցողներուն յիշողութիւնը եւ նորերը հաղորդ դարձնել հոն շօշափուած հարցերուն:

Ն. ԶԱՐԵԱՆ

ՄՌԱՅԼ ԱՌԱՍՊԵԼ

Աւելի քան տասն տարի է, ինչ Վազգէն Մնացականեանը եւ ուրիշները ժողովրդի մէջ տարածում են դաշնակցական մամուլի այն կեղատոյս յերկրանքը, թէ Եղիշէ Չարենցը եւ միւս գրողները 1938-37 թ.թ. ձերբակալուած են եղել այն մատերիայներով, որ իբր թէ եւ տուել եմ Պետական պաշտպանութեան օրգաններին:

Նրանք լաւ գիտեն, որ դա բացարձակ սուտ է, բայց եւ այնպէս այսօր, երբ հանրապետութիւնը պատրաստուած է տօնել մեծ բանաստեղծի յոբելեանը, «Գրական թերթ»ը Վ. Մնացականեանի յղուածով հրապարակեց այդ անհոգի գրող-պարտութիւնը՝ վէճքը թարմացնելու, ժողովրդին իմ դէմ գրգռելու նպատակով:

Նրանք իմ դէմ անցան հրապարակային դրպարտութեան, որովհետեւ համոզուած են, որ այդ բանը կարող են անել անպատիժ կերպով: Տարիներ շարունակ եւ իմ դէմ ուղղուած այդ բանասարկութիւնը հրապարակով չեմ հերքում, տարիներ շարունակ եւ մտածել եմ, որ կուսակցութիւնը, իմ անմեղութեան մէջ հաստատ համոզուած, ինձ կը պաշտպանի դաշնակցական մամուլի գրպարտութեան դէմ, բայց կենտրոնը տարիներ շարունակ չի քննում իմ գրաւոր ու բանաւոր դիմումները, հակահարուած չի տալիս Մնացականեաններին, դրանով իսկ խրախուսում է նրանց:

Ուստի զարմանալի չէ, որ նրանք անկիւնային բանաւոր բանասարկութիւնից անցան հրապարակային գրաւոր բանասարկութեան:

Գրական եւ այլ շրջանակներում վաղուց յայտնի է, որ Չարենցի ակրոստիքոսը («Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է») բաց են արել նրա այն ժամանակուայ գրական «բարեկամները», որ եւ գաղափար չունէին եւ չէին կարող ունենալ այդ ակրոստիքոսի մասին, այդ ակրոստիքոսի կապակցութեամբ Չարենցին, որքան եւ գիտեմ, ոչ ոք էլ չի մեղադրել: Բայց այդ բոլորը չի խանգարում դաշնակցական «Ասպարէզ» թերթին իր 1962 թ. Յունուարի 19ի համարում գրելու:

«Մարգարէաշունչ այդ պատգամին տառերու վերոյիշեալ կերտուածքին բանալին Զարենցը կը վստահի գրող Նայիրի

Զարեանցին: Ու Զարեանցի միամիտ վստահութիւնը հանդէպ Նալիի Զարեանի, ճակատագրական կ'ըլլայ իրեն համար: Չարեանցը կը ձերբակալուի»:

Կարիք չկայ բացատրելու, թէ ինչքան անճարակ է դաշնակ թերթի այս չփոթ յերևրանքը: Կարիք չկայ նաեւ մէջբերումներ կատարել դաշնակցական մամուլի միւս օրգաններից, որովհետեւ բոլորն էլ ինձ վրայ գրպարտիչ հայհոյանքների հեղեղ են թափում վերոյիշեալ «Ասպարէզ»ի ոգով ու ոճով: Առաջին գրպարտիչ յօդուածը իմ դէմ եւ կարդացել եմ Ա. Մառուկեանի խմբագրած «Նալիի» թերթում 1941 թուականին: Դաշնակցականների գրպարտութեան հեղեղն իմ դէմ առանձնապէս ուժեղացաւ 1962 թուականին, երբ ես իրարեւաշարհաշրջիկ մեկնեցի Միացեալ Նահանգները: «Ասպարէզ»ը հանրագումարի բերեց դաշնակցական մամուլի այդ յորձնաշուրթ մարդահաջը:

«Նալիի Զարեան մեկն է անոնցմէ, որոնցմէ հաշիւ պետք է պահանջել»:

Եւ ահա վաղգէն Մնացականեանը իր վրայ է վերցրել Նալիի Զարեանից «հաշիւ պահանջելու» դերը: 20րդ համադոմարից յետոյ նա սկսեց ամէն անկիւնում յայտարարել, թէ Զարեանցին եւ միւս գրողներին բանտարկել է տունը Ն. Զարեանը: Այս բանասարկութեան առթիւ ես դիմեցի Կենտկոմ, խնդրեցի բացալստել գրողների բանտարկութեան ճշմարտութիւնը եւ սանձահարել գրպարտիչներին: Կենտկոմի այն ժամանակուայ առաջին քարտուղար Ս. Թովմասեանը յայտարարեց. «Նալիին ոչ միայն որեւէ մատերիալ չի գրել Պետական Անվտանգութեան օրգաններին որեւէ գրողի դէմ, այլ եւ չի կանչուած եղել մինչեւ իսկ բանաւոր վկայութեան»:

— Ես այդ չգիտէի, բացառաւից վ. Մնացականեանը՝ ճշմարտութիւնը յանկարծ խնայած մարդու տոնով:

Բանից պարզուեց, որ Մնացականեանն այդ գիտէր եւ աւելի լաւ խմանալուց յետոյ էլ ահա տաս տարուց աւելի է, ինչ «հաշիւ է պահանջում» Ն. Զարեանից: «Գրական թերթ»ում տպագրուած ամբաստանագիրը իր ոգով ու ոճով վիշեցում է 1936–37 թուականները: Նա դիմում է թափանցիկ մի խորամանկութեան. Մկ. Արմէնին նոյն յօդուածում մեղադրում է Մարտի Մարգարեանի պոեզիան քաղաքական մեղադրանքների ոգով քննադատելու մէջ, իսկ ինքը նոյն ոգով գրում է իմ դէմ՝ նմանուելով այն մարդուն, որ հարեւանին յանդիմանում է տուն կողոպտելու համար այն պահին, երբ ինքը գրադուած է մէկ ուրիշ տուն կողոպտելով:

Նրա յօդուածի այն մասը, որ ուղղուած է իմ դէմ, համարեա՛ չի տարբերում դաշնակցական մամուլի թշնամական ոճից: Դաշնակցականների թշնամութիւնը հասկանալի է ինձ համար: Իմ գրական գործունէութեան ամենասուր կողմերից մէկը ուղղուած է նրանց դէմ: Նրանք իմ մէջ տեսնում են կուսակցական հակառակորդ, որին ձգտում են վարկաբեկել ու չէզոքացնել:

Հապա ինչ նպատակ են հետապնդում Մնացականեանները, որոնք հանդիսանում են իմ կուսակցական ընկերները, ծառայում են (թոււմ է ինձ) նոյն հասարակական իղէալներին, ինչ որ ես: Ուրեմն որտեղից է գալիս այս թշնամութիւնը: Այս հարցի պատասխանը թաղուած է շատ խճճուած խորքերի մէջ, գրական նախանձի, մրցութեան եւ մարդկային ուրիշ կրքերի բեմաետեւում: Ես այստեղ առանձնացնում եմ միայն Վ. Մնացականեանի թշնամութեան հարցը եւ անմիջապէս պատասխանում: Նա ինձանից լուծում է անձնական վերջժ: Բոլորը գիտեն, որ ես տարբեր առիթներով սուր քննադատութեան եմ ենթարկել մի շարք մարդկանց, որոնք գրտնրում են Վ. Մնացականեանի հետ ազգակցական եւ այլ կապերի մէջ: Պարզաբանելու կարգով բերենք միայն մի օրինակ: 1957 թուականին Կենտկոմից հարցրին, թէ ինչ է իմ կարծիքը Արշաւիր Դարբնու (Մնացականեանի եղբայր) «Ոգնի» ամսագրի խմբագիր նշանակելու իրենց մտադրութեան մասին: Ես պատասխանեցի բացասաբար: Դրանից մի քանի օր յետոյ Վ. Մնացականեանը գրողների կուսկազմակերպութեան ժողովում յայտարարեց, - «Հայաստանում միայն մի մարդ է քարոզել Բերիայի եւ Բաղիրովի պաշտամունքը եւ դա Նալիի Զարեանն է»:

Նա այսօր էլ արխիւներ է քրքրում, որպէսզի ժողովրդի մէջ ինձ անուանարկի իբրեւ «բերիական», բոլորովին հաշուի չնստելով այն փաստի հետ, որ երեսնական թուականներին ինձ վրայ բարդած կուսակցական մեղադրանքներից մէկն էլ այն էր, որ ես ատում էի Բերիային:

Իմ թշնամիները «պաշտամունքի» եւ Յոակն թուականների ամբողջ պատասխանատուութիւնը Հայաստանում ձգտում են բարդել ինձ վրայ: Նրանց յաջողուել է ժողովրդին իմ դէմ պղտորել եւ Սովետական Հայաստանում, եւ Սփիւռքում: Կրկնում եմ, ես բազմաթիւ անգամներ գրաւոր եւ բանաւոր դիմել եմ Գրողների Միութեան կուսկազմակերպութեանը, Կենտկոմին, խնդրել եմ քննել Զարենցի եւ միւսների բանտարկութեան պատմութիւնը, պարզել այդ ողբերգութեան իսկական պատկերը եւ իմ անմեղութիւնը: Բայց իմ բոլոր դիմումները մնացել են ձայն բարբառոյ յանապատի: Ինչո՞ւ չօշափել վտանգաւոր հանգոյցները, ինչո՞ւ անախորժ լոյսեր սփռել սրբութիւնների վրայ, քանի որ արդէն գտնուած է քաւութեան նոխազը: Ահա սա է տիրող անբարբառ «տրամաբանութիւնը»:

Բայց ես համաձայն չեմ այդ անհոգի տրամաբանութեան հետ, ես չեմ կարող ապրել իմ դէմ յերիւրուող բանաարկութիւնների ծանրութեան տակ: Ուստի նորից եմ Զեզ դիմում իմ հետեւեալ բացատրութիւններով ու պահանջով:

1.— Ես չեմ գրել ոչ մի մատերիալ.

Շրեանական թուականներին Գրողների Միութեան մէջ գործում էին երկու խմբակ, որոնցից մէկը կոչւում էր «Չարենց-Բակունցի» խմբակ, միւսն անուն չուներ, բաղկացած էր մասամբ քննադատներից եւ յենում էր գլխավորապէս իմ ստեղծագործութեան վրայ:

Չարենցի խմբակում առաջին էլ ասել էին. «Քանի որ մեր հակաակորդները յենում են Ն. Չարեանի վրայ, եկէք Չարեանին մեր կողմը գրաւենք եւ դրանով իսկ վերացնենք նրանց խմբակը»: Այդ նպատակով ինձ հետ բանակցութիւններ վարեցին Գ. Վանանդեցին, Ա. Բակունցը եւ անձամբ Չարենցը: Ես նրանց ընդառաջ դնալ չէի կարող, որովհետեւ նրանց գրական տեսակէտները չէի բաժանում: Իրականում ես մենակ էի. ինձ պաշտպանում էին մի քանի երիտասարդ գրողներ (Քոչար, Վահունի), որոնք այն ժամանակ դեռ կշիռ չուներին:

Այսօրուայ «չարենցագէտները» աւելի պարզ, ազնիւ կիրառման արժանի եռանդով տարածում են այն վարկածը, որ ես այն ժամանակ իբր թէ հալածում էի Չարենցին եւ միւսներին: Նրանք լաւ գիտեն, որ ես չէի կարող ոեւէ մէկին հալածել, որովհետեւ միայնակ էի եւ բոլոր հանգուցային վէճերի ժամանակ ես էի դառնում բոլոր հարուածների նշանակէտը: 1930 թուականին սխեմատիզմի դէմ ուղղուած գրական դիսպուտները ուղղուած էին իմ դէմ: Իբր ես էի մեր գրականութեան գլխավոր սխեմատիկը: Մինչեւ իսկ ամսագրում ծաղրանկար տպեցին, որտեղ Ալազանը եւ միւսները եռանդով սղոցում էին իմ (այսինքն՝ սխեմատիզմի) թեւերն ու ոտքերը: 1934 թուականին մի քանի ամիս տեւող լեզուական բանավէճը ուղղուած էր իմ դէմ: Իբր ես էի մեր գրական լեզուի զարգացման գլխավոր արգելակը իմ «Ռուսացի քարափ»ով: Ա. Բակունցը ամբիոնից իջեցրեց եւ Գրողների տրեւից բառացիորէն վռնտեց հանգուցեալ քննադատ Վահրամ Թերզիպաշեանին միայն նրա համար, որ նա իր ելույթում շփոթեցրեց ասաց. «Ընկերներ, մի՛ յուզուէք, այդ կարգի թերութիւններ ես կարող եմ ցոյց տալ մինչեւ անգամ Ն. Չարեանի ստեղծագործութեան մէջ»:

Ես նրանցից պաշտպանում էի՝ իմ ստեղծագործութիւնը, ես նրանց հետ վիճում էի գրաւոր ու բանաւոր, հրապարակով, Գրողների տանը, մամուլում եւ մեր մտքով իսկ չէր անցնում, թէ մեր գրական տեսակէտների համար կարող են մեզ բանտարկել:

Ես նրանց հետ վիճում էի հրապարակով եւ իմ մտքով երբեք չի անցել նրանց գէմ պայքարել գաղտնի, Պետական պաշտպանութեան մարմնի դիմելով: Ես այդ հիմնարկի հետ գործ չեմ ունեցել երբեք, ինչպէս վկայեց իր ժամանակին ընկեր թովմասեանը: Ես Չարենցի կամ ոեւէ այլ գրողի մասին ոչ մի գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւն չեմ տուել Պե-

տական Անվտանգության մարմիններին: Ես նորից եմ պահանջում այդ ստուգել եւ յայտարարել ի լուր ամէնքի:

2.— Ի՞նչ Բամար Ռեշտ էր Ռաւտալ:

Վ. Մնացականեանը Հասարակական միտքը պղտորելուն պատակով գրում է. «Ոմանք գտել են արդէն իրենց արդարացման ելքը, ասելով, ժամանակներն էին այդպէս: Ոչ, դուք էք ժամանակին այդպիսին եղել»:

Այդ «դուք»-ը ըստ էութեան հասցէագրում է ինձ: Դուրս է գալիս, որ «Ժամանակները» (այսինքն՝ Յմական թուականների ստալինեան կարգերը) միանգամայն անբասիր էին, եւ միայն մի քանի «դուք»-եր կարողացան ստեղծել համատարած օրինազանցութիւնների այդ անլուր որքերգութիւնը:

Հապա մի փորձէք տեսնել «Ժամանակներին» եւ «դուք»-երի փոխարարներութիւնը: Հայաստանի ԿԿ Կենտկոմը այն ժամանակուայ առաջին քարտուղար Ա. Խանջեանի գլխաւորութեամբ մտնում է ժամանակ ասած հասկացողութեան մէջ: Եւ ահա, «Ժամանակի» այդ գլխաւոր հեղինակութիւնը 1934 թուականին ընդունել ու հրատարակել է հետեւեալ որոշումը.

«Կենտկոմը դիտողութիւն է անում Կազմկոմիտէի (Գրողների Միութեան —Ն.Զ.) կուսխմբակին, որ այնտեղ չի եղել կուսակցական զգաստութիւն ու անհրաժեշտ պայքար նացիոնալիզմի արտայայտութիւնների եւ Չարենցի եւ ուրիշների գլխաւորած խմբակայնութեան դէմ, որ կուսխմբակը չի կարողացել ժամանակին մերկացնել մի խումբ գրողների ու քննադատների (Ոսկերչեան, Ջարեան, Էսայլն) «ծախ» ելոյթները» (19 Յուլիսի 1934 թ. «Գրական թերթ»):

Դուք տեսնում էք, որ «Ժամանակը» եղել է միանգամայն անաչառ, մերկացրել է ո՛չ միայն «նացիոնալիզմի արտայայտութիւնները», այլ «ծախ ելոյթները»:

Վերցնենք «Ժամանակի» մի այլ փաստաթուղթ. Տեսնենք, թէ ի՞նչ է ասել Ա. Խանջեանը Գրողների Միութեան առաջին համագումարում.

«Մեր գրողներից ոմանք մեր իրականութիւնից կարծես փախուստ են տալիս դէպի անցեալը: Երբեմն իդէալականացնում են անցեալի ամենամոայլ էջերը եւ օրէնկտիօրէն նոյնիսկ նսեմացնում են մեր այսօրը: (Բակունց — «Միջինի փող»): Չափազանց յատկանշական է Չարենցի «Գիրք ճանապարհին»: Գեղեցիկ, յուզող մնայուն կտորների կողքին այստեղ կան առանձին գործեր, որտեղ արտայայտուած գաղափարները մերը չեն: Սխալ է Չարենցի մօտեցումը դէպի մեր անցեալը («Պատմութեան քառուղիներով»): Մեր ժամանակի ամբողջ անցեալի մէջ նա չի գտնում ոչ մի լուսաւոր գիծ, նրա պոեմը վերածնունդ է մի նոր «ողբի» եւ որ ամէնից զարմանալին է ու պախարակելին՝ նրա «ողբը» տարածում է ո՛չ միայն մեր անցեալի, այլեւ որոշ

չափով ման մեր ներկայի վրայ: Այստեղ արդեն այնքան լուրջ է Չարենցի կատարած սխալը — ըստ էության նացիոնալիստական շեղումը — որ նա պետք է շատ լուրջ մտածի եւ անյապաղ ուղղի այն»:

Խանջեանը սիրում էր Չարենցին եւ հազիւ թէ ցանկանար նրան արքան «մերկացնել», եթէ այդ չպահանջէր «Ժամանակը»: Վ. Մնացականեանը երեւի յանդգնութիւն չի ունենալ Խանջեանին եւս համարել «այդպիսին»:

Աւերորդ չէր լինի դիմել «Ժամանակի» մի այլ վկայութեան՝ անտեղեակ մարդկանց համոզելու համար, թէ մի քանի «ոմանք» չէին «այդպիսի», այլ «Ժամանակը»: «Գրական թերթ»ի 1936 թուականի Սեպտեմբերի 10ի համարում կարելի է կարդալ «Ժամանակի» հետեւեալ ցիտատը:

«Գրողների Միութեան ընդհանուր ժողովը բուռն զայրոյթով անարգանքի դատապարտեց հակայեղափոխական տրոցկիստ Ստեփանեանին եւ Գրողների Միութեան մէջ թոյն դրած նացիոնալիստ-տրոցկիստ հակայեղափոխականներին: Ժողովում արտայայտուեցին գրողներ՝ Դ. Դեմիրճեանը, Մ. Արմէնը, Ա. Վշտունին, Միրասը, Արագին, Յ. Մելիքեանը, Գ. Արուլը, Զ. Եսայեանը, Գ. Յովնանը, Արաքը, Գ. Ղազարեանը, Դաշտենցը, Տարօնցին եւ շատ ու շատ ուրիշները:

«Ժողովում արտայայտուող գրողները բազմաթիւ փաստերով ցոյց տուին, թէ ինչպէս Հայաստանի Գրողների կազմակերպութեան մէջ բուռն դրած մի խումբ նացիոնալիստ-տրոցկիստներ՝ Սիմոնեանի եւ Բակունցի գլխաւորութեամբ իրենց հակայեղափոխական գործունէութեան շնորհիւ ջանացել են արգելակել մեր գրականութեան արագ աճումը, այլանդակ վարչական միջոցներով ետ են մղել գրական կազմակերպութիւնից լաւագոյն խորհրդային գրողներին եւ իրենց գրուածքներով ձգտել են նացիոնալիզմի թոյն սրսկել աշխատաւորութեան գիտակցութեան մէջ:

«Գրողների Միութեան ընդհանուր ժողովը որոշեց վտարել Հայաստանի խորհրդային Գրողների Միութիւնից նացիոնալիստ-տրոցկիստ հակայեղափոխականներ Դր. Սիմոնեանին, Ալազանին, Ա. Բակունցին, Գ. Մահարուն, Վ. Թոթովեցին, Գ. Վանանդեցուն եւ Վ. Նորենցին: Ժողովը դատապարտեց եւ փտած լիքերիւ հաշուողական այն վերաբերմունքը, որ ցուցաբերել է վերոյիշեալ հակայեղափոխական նացիոնալիստ-տրոցկիստների խմբակի նկատմամբ միութեան քարտուղար Յ. Մըկըրտչեանը եւ հետագրեց Մկրտչեանին միութեան քարտուղարի, վարչութեան անդամի եւ «*Խորհրդային գրականութիւն*» ժուռնալի խմբագրի աշխատանքից»:

Ահա թէ ինչպիսին էին «Ժամանակները»:

Ես այդ ահաւոր ժողովին, ինչպէս տեսնում էք, ներկայ չեմ եղել: Բայց եւ այնպէս գտնում եմ, որ ժողովին մասնակցած գրողները հազիւ թէ հանդուրժէին այդ «խու վէժքի-նական» սոսկալի զառացանքը, եթէ նրանց ուղղակի չհարկադրէր «Ժամանակը» բազմած պետական բարձրագոյն մարմիններում եւ խմբագրական աթոռների վրայ:

Իսկ Վ. Մնացականեանը բղաւում է--«ոչ, ժամանակներն այդպիսին չէին, դուք էք ժամանակին այդպիսին եղել: Այս «կոնցեպտան» վատ քողարկուած մի քծնանք է «ժամանակների» առաջ, մի ժառանգական պատրաստակամութիւն Յմական թրւականների ողբերգութեան մեղքը պաշտօնական անձերից վերցնելու եւ առանձին մտաւորականների վրայ բարդելու:

3.—Եւ ես Բաւատացի.

Ես չէի կարող չհաւատալ մեր պաշտօնական մարմիններին, մեր կենտրոնական մամուլին, որի էջերն այն ժամանակ լիքն էին ժողովրդի թշնամիներին յայտնաբերելու եւ «հողմացրիւ» անելու կոչերով: Ես ամէնից առաջ, հաւատում էի Ստալինին: Եթէ իմ այդ հաւատքը ինքնին յանցանք է եղել, ապա ես պատրաստ եմ այսօր այդ հաւատքի համար պատժուել, եթէ արդէն չեմ պատժուել տարիներ շարունակ, եթէ ծանր պատիժ չէ ամէն օր լսել նոյն ստալոյ վարկածը, թէ՛ «Ն. Ջարեանն է կործանել Չարենցին»: Եթէ անագորոյն պատիժ չէ այն, որ իմ կատարած բարի գործերը վերագրում են ուրիշին, ուրիշների կատարած չար գործերը վերագրում են ինձ:

Այո, ես մի պահ հաւատացի, որ Չարենցը եւ միւսները մեր ժողովրդի եւ կուսակցութեան հանդէպ կատարել են ինչ-որ, ինձ համար անյայտ, յանցանքներ: Ես նրանց հետ մշտական գրական վեճերի մէջ էի, մեր վեճերը յաճախ վերջանում էին անձնական վիրաւորանքներով: Եւ այդ շիկացած մրթնոլորտում, երբ մեր պետական իշխանութիւնները իմ գրական հակառակորդներին ձերբակալում էին ու յայտարարում թշնամի, ապա ինձ համար հոգեբանօրէն հեշտ էր հաւատալ, որ նրանք, իրօք, թշնամիներ էին: Սկզբում ես այդպէս էլ հաւատացած էի: Դրանով պէտք է բացատրել այն ժամանակաւ իմ յօդուածների սուր, յախուռն տոնը:

Այդ յօդուածներից առաջինը կոչւում էր «Գրական լեզուի անցիճանայտական աղտաղումների դէմ», երկրորդը՝ «Նացիոնալիստը Խորհրդային գրողի դիմակով»: Առաջին յօդուածը փաստօրէն իմ կողմն էր հայ գրողների միութեան առաջին համագումարում (1934 թ.): Ես այնտեղ քննում էի լոկ լեզուի հարցերը: Այդ յօդուածը տպագրուեց միայն 1936 թուին գրողների ձերբակալումից յետոյ, երբ արդէն հնարաւոր չէր նրանց անունները տալ առանց այդ օրերին շրջող տրաֆարետային ածականների, «Նացիոնալիստ-տրոցկիստ», «հակա-յեղափոխական», եւ այլն: Տարիներ յետոյ ես մեծագոյն ցաւով եւ ափսոսանքով կարդացի իմ այդ յօդուածը, որտեղ Չարենցի եւ միւսների սխալները քննադատել եմ շիկացած մթնոլորտում, խռովայոյզ դիրքերից...

Իմ այդ յօդուածի մէջ կան տրաֆարետային սխալ որակումներ եւ սխալ դատողութիւններ (որոնցից ես վաղուց եմ հրաժարուել), բայց կան նաեւ ճշմարտութիւններ, որոնք

մինչեւ այսօր էլ մնում են ուժի մէջ: Ես իրաւամբ էի քննադատում Ջարենցի «Տիեզիւմէն», որով նա մեր գրական լեզուի զարգացման մայրուղուց դուրս էր թողնում Յովհաննէս Թումանեանին, մեր մեծագոյն գրողին ու լեզուաշինարարներին, ինչպէս նաեւ ամբողջ արեւմտահայ գրականութիւնը: Ես իրաւամբ էի քննադատում ազգային յատկանիշների, որոնք հնանում են եւ արգելակում ազգային մշակութիւն զարգացումը, որոնց դէմ պայքարել են (օրինակ, գրաբարի դէմ) մեր մեծագոյն լուսաւորիչները՝ Աբովեանը, Նալբանդեանը եւ ուրիշները: Ես իրաւամբ էի պնդում, թէ Ջարենցն ի զուր է ժխտում Նարեկացու եւ միջնադարեան միւս հսկաների ստեղծագործիւնը, նրանց հակադրելով «Մարտար ճորտեր»ի մշակութիւնը: («Գովք խաղողի, գինու եւ գեղեցիկ դպրութեան»), եւայլն:

Երկրորդ յօդուածը ես գրել էի Բակունցի մասին: Այդ յօդուածը գրելիս բանտարկուած գրողների վերաբերեալ իմ այն ժամանակուայ պատկերացմանն աւելանում էր նաեւ այն գիտակցութիւնը, որ յանձին Ակսել Բակունցի գործ ունեւ կուսակցական քողարկուած հակառակորդի հետ: Ես Բակունցի մասին տպագրել եմ սուր յօդուած նրա ձեռքակալումից լետով, երբ նա իշխանութիւններէ կողմից արգէն որակուած էր որպէս «թշնամի»:

Իմ այդ յօդուածում կային սխալ դիրքաւորումներ մեր ազգային հարցի տեսակէտից: Այդ սխալներից ես վաղուց եմ հրաժարուել եւ այդ արտացոլուած են իմ ստեղծագործութեան մէջ «Արշակ եւ Ծապուհ» պոեմում (1940 թ.), «Ջալմ Բայրենական»ում (1947 թ.), «Արա Գեղեցիկ»ում (1944 թ.), «Հացաւան»ում (1947 թ.), «Պարոն Պետրոսն եւ իր նախարարները» վէպում (1955 թ.), «Աւք էութեան» պոեմում եւ բազմաթիւ այլ գրուածքներում, բանաստեղծութիւններում, ուղեգրութիւններում, հրապարակախօսական յօդուածներում:

Իրողութիւնն այս է: Մինչդեռ դաշնակցական թիրթիւն արտաւայում են աւելի քան երեք տասնեակ տարի առաջ Բակունցի մասին իմ յօդուածը եւ ներկայացնում են ընթերցողներին իբրեւ կոչ Բակունցին բանտարկելու: Այդ նոյն յօդուածն այստեղ ինչ-որ մարդիկ դաշնակ մամուլից արտաւայում են եւ մեքենայի վրայ բազմացնելով տարածում են ժողովրդի մէջ նոյն դաշնակցականների մեկնաբանութեամբ: Առհասարակ վերջերս սկսել են մանրակրկիտ ուսումնասիրել իմ կենսագրութիւնը եւ 30-40 տարի առաջ կատարած իմ սայթաքումները ի մի են բերում, ուռեցնում են եւ չարամիտ մեկնաբանութիւններով ներկայացնում բանից անտեղեակ ընթերցողներին՝ ջանալով ստեղծել այն տպաւորութիւնը, որ ես բաղկացած եմ միայն այդ սայթաքումներից: Նրանք ձրգտում են ինձ անուանարկել յատկապէս Ջարենցի յորելեանի օրերին, մեծ բանաստեղծի յորելեանը նրանք ուզում են դարձնել Ն. Ջարեանին պսակազերծ անելու միջոցառում:

4.—Եւ Չարենցին միշտ բարձր եմ գնահատել:

Յօական թուականներին եւ Չարենցի մասին արտայայտուել եմ շատ անգամ, 1932 թ. «Գրական թերթ»ի Մարտի 10ի համարում տպագրուած իմ «Բաց նամակ ընկեր Եղիշէ Չարենցին» յօդուածում եւ բանաստեղծին կոչ էի անում մօտենալ կեանքին, մխրճուել մեր սովետական իրականութեան մէջ, «արտայայտել գործարանների եւ կոլտոգների, քաղաքի եւ գիւղի պայքարը», եւայլն, եւ աւելացնում էի. «Դու վատ ես վարում քո փայլուն տաղանդի ղեւտ, որովհետեւ այդ տաղանդը ոչ միայն քո սեփականութիւնն է... Եւ այստեղ հանդէս չեմ գալիս որպէս քննադատ, այլ խօսում եմ որպէս գրող, որ բարձր է գնահատում իր ընկերոջ ստեղծագործական հնարատրութիւնները»:

1936 թ. «Գրական սերունդ» ամսագրի թիւ 3ի առաջնորդող յօդուածում եւ գրել եմ. «Վարպետ է Չարենցն իր «Երկիր Նայիրի» վէպում, «Խմբապետ Ծաւարչ», «Ուկրաինի երգը» եւ այլ բազմաթիւ բանաստեղծութիւնների մէջ»: Այդ հայ դաշնակիցի դիմակը պատռելու, հայ խմբապետի գարշելի դիմանկարը կերտելու, լեղափոխական ուժգին պոռթկումներ արտայայտելու վարպետութիւն է...»: «Երկիր Նայիրի»ն մնում է մեր խորհրդային արձակուրդ որպէս չգերազանցուած որակ:

Նոյն թուականին «Խորհրդային գրականութիւն» ամսագրի մէջ (թիւ 3-4), տպագրուած իմ *Ձեզ արդէն յայտնի յօդուածում եւ ասել եմ*. «Յոյց տալով Եղիշէ Չարենցի սխալ եւ անընդունելի տեղեկները («Ռեզիմէ»ն-Ն. Զ.) մեր գրական լեզուի զարգացման ասպարէզում, մենք բնաւ չենք ծխտում այն դրական աշխատանքը, որ նա մեր խորհրդային միւս գրողների հետ միասին, կատարել է խորհրդային գրականութեան լեզուի զարգացման ասպարէզում»:

Այս տողերը գրուած են այն ժամանակ, երբ Չարենցի խմբակի բոլոր անդամները արդէն ձերբակալուած ու յայտարարուած էին «ժողովրդի թշնամիներ»:

Չնայած մեր գրական տարածաշրջաններին, եւ միշտ բարձր եմ գնահատել Չարենցի ստեղծագործութիւնը եւ շատ առիթներով նրան յիշատակել եմ իմ ուսուցիչների շարքում: Այդպէս էլ վերջանում է 1960 թ. գրած իմ անտիպ ոտանաւորը.

Քո մահն իմ կորուստն է դառնակէզ:
Եւ ողբացել եմ քեզ հազար անգամ,
Հազար ափսոս, որ դու կենդանի չես,
Իմ ախոյեան, վարպետ եւ իմ բարեկամ:

Չարենցն էլ ինձ էր գնահատում:
Բոլորը գիտեն, որ 1932 թուականին իր հրապարակային գեկուցման մէջ մեծ բանաստեղծը «Ռուշանի քարաւի»ի մասին յայտարարեց. «Ահա մեր պոեզիայի զարգացման ուղին»:

Իմ եւ Չարենցի փոխյարաբերութիւնների մէջ աւելի շատ բարեկամութիւն կար, քան տարածայնութիւն:

Չարենցի բանտարկութեան հարցում ինձ բանասարկող մարդիկ լաւ գիտեն, թէ ինչպէս տեղի ունեցաւ այդ բանտարկութիւնը: Ես այդ մասին պատմել եմ մեր կուսակցական ժողովում սրանից տաս տարի առաջ, եւ թոյլ տուէք այստեղ կրկնել այդ համառօտ պատմութիւնը:

Այն ժամանակ կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին մի շարք մարդկանց (նաեւ ինձ) ասել էր, թէ չի ուզում Չարենցին բանտարկել: Բայց նա չկամեցաւ կամ չկարողացաւ կատարել իր այդ խոստումը: Չարենցն այդ օրերին խիստ գրգռուած վիճակում էր եւ պատրաստ էր բռնկուելու ամենափոքր առիթից: Եւ այդ առիթը նրան ներկայացաւ: Նրա ընտանիքն ապրում էր Մաղկաձորի հանգստեան տանը երկու սենեականոց մի կոտտէջում: Չարենցի ընտանիքը հանել էին այդ կոտտէջից, որովհետեւ այնտեղ պէտք էր տեղաւորել ադրբեջանական թերթի խմբագրին: Չարենցն այդ առիթով սաստիկ հարբել էր, Մաղկաձորում կառք նստած անցուղարձ էր անում փողոցում եւ բարձրաձայն հայհոյում էր Աբովին ու Սիրասին: «Ինք թուրքին պաշտպանում էք, հալ գողոյին հալածում»: Այնուհետեւ գնում է Ախտա, դա հանրայայտ պատմութիւն է արդէն, չուրջը ժողովուրդ է հաւաքում, գլխարկը հանում է եւ փող է խնդրում: Երբ ես այդ միջադէպը պատմում էի մեր կուսակցական ժողովին, Հր. Քոչարը տեղից բացապանչեց:

«Երկրորդ օրը, պարզ չէ, թէ ովքեր, Չարենցի այդ առաձների մասին մանրամասն զեկուցագիր են ներկայացնում»:

—Այդ բոլորը յայտնի է (ասացի ես, —Ն.Զ.) եւ դրա համար էլ ես պահանջում եմ, որպէսզի պաշտօնապէս յայտարարուի, որ ամէն մարդ իմանայ»:

Ինչպէս տեսնում էք ես այն ժամանակ (ոչ մէկ անգամ) պահանջել եմ, որ քննեն եւ պարզեն Չարենցի բանտարկութեան ամբողջ ճշմարտութիւնը: Բայց իմ դիմումները չքննուեցին, որովհետեւ ճշմարտութիւնը ձեռնառու չէր այն մարդկանց, որոնք պարտաւոր էին յայտարարել:

5.—Արդեօ՞ք մեր ցրական վեճերն էին գրողներին քանտարկելու պատճառը: Այս հարցին ամէն մի քիչ—շատ իրազեկ մարդ կարող է պատասխանել —ոչ:

Բանասարկուն սպառնում է, թէ վէպեր կը գրուեն Չարենցի ու Բակունցի մասին եւ ցոյց կը տան «նւ օղորտի ծանր վերքերը, եւ նրան վերք հասցնողներին»: Երեւակայում եմ, թէ բանասարկութեան ինչ հեղեղ պիտի ներկայացնեն այդ վէպերը, եթէ գրուեն նրա «կոնցեպցիա»ով:—«Ժամանակներն այդպիսին չէին, դուք էիք այդպիսին»:

Իրողութիւնն այն է, որ «Ժամանակներն այդպիսին էին» եւ նրանք մէջտեղից վերացրին ո՛չ միայն Չարենցին եւ նրա գրական համախոհներին, այլեւ իմ գրական այն ժամանակուայ համախոհներին՝ Հայկ Գեորգիքեանին եւ ուրիշներին։ Ինձ երկու անգամ (1937-38 թ-թ.) հեռացրին կուսակցութիւնից եւ մտադիր էին բանտարկել։ Ես երկու անգամ, ընկեր Միկոյեանի, երկրորդ անգամ ընկ. Եարոսլաւսկու միջնորդութեան շնորհիւ ազատուեցի։

Ինչի՞ մէջ էին ինձ մեղադրում։

Նոյն յանցանքի մէջ, ինչո՞ւմ որ մեղադրում էին Չարենցին եւ նրա խմբակը։ 1937 թուականի Յունիսին կայացած կուսակցական 10րդ համագումարի ամպիոնից Գրողների Միութեան այն ժամանակուայ ղեկավար Գ. Աբովն ասում էր. «Չնայած այն Ռազամանքին, որ Ն. Ջարեանը գրել է մի շարք գրական լաւ երկեր, բայց նա եւս զերծ չի եղել նացիոնալիզմի թոյնից, նա կատարել է նացիոնալիստական սխալներ»։

Սա արդէն մասնաւոր յօդուած չէր գրուած 1936 թուին, սա համագումարում արուած պաշտօնական յայտարարութիւն էր, որ կարող էր հնչել իբրեւ ինձ շարքից հանելու ազդանշան։ Արդէն դրանից առաջ Եղիա Չուբարը խանջեանի արխիւից հանել էր իմ գուռ գրական նամակները եւ ինձ հռչակել «Խանջեանական»։ Ապա՝ Հայկինոյի արխիւից յայտնաբերեցին զօրավար Անդրանիկին «իբրեւ հայ Չապաւելի» նկարահանելու իմ առաջարկը, որը Ակսել Բակունցը որակել էր որպէս նացիոնալիստական առաջարկ եւ գումարեցին իմ դէմ յարուցած մեղադրանքների վրայ։ Յետոյ քրքրեցին իմ ողջ կենսագրութիւնը (ինչպէս անում են այսօր ոմանք) եւ յերկրեցին իմ դէմ քսան մեղադրանք, որոնցից ամէն մէկի մէջ կար «նացիոնալիստ-տրոցկիստ», «հակակուսակցական» եւ այլ որակումներ, որոնցից իւրաքանչիւրը բաւական էր ամէն մի կոմունիստի շարքից հանելու համար։ Կարծես այս բոլորը քիչ էր, Գ. Աբովը մատնիւղ տուեց կուսկոլիեգիային, որտեղ ինձ մեղադրում էր կուսակցական ղեկավարին վարկաբեկելու մէջ։ Աբովն արդէն վախճանուած է։ Ես չէի ցանկանայ հանգուցեալ ընկերոջ յիշատակն անհանգստացնել, եթէ դա անհրաժեշտ չլինէր հարցի լուսարանութեան համար։

Մենք տեսանք, որ Աբովը գործը տանում է ինձ կուսակցութիւնից հեռացնելու ուղղութեամբ։ Այդ ժամանակ իմ գրական ընկերները՝ Հր. Քոչարն ու միւսները նրա դէմ գրեցին մի յօդուած, որտեղ նրան մեղադրում էին «Ժողովրդի թշնամիներին» հետ մտերմական կապեր ունենալու մէջ։ Քոչարը բացատրեց, որ, եթէ մենք նրան մեղադրենք այն բանում, որ նա Ժողովրդի նորանոր «թշնամիներ» մերկացնելու «պլան» է կատարում, այսինքն՝ այն բանում, ինչով նա իրօք զբաղուած էր, դրանով կ'ամրացնենք նրա դիրքերը այն օրերին այդ ջարդը ղեկավարող մարդկանց աչքում։ Ուստի պէտք է լիջեցնել Աբովի մօտիկութիւնը արդէն ձերբակալուած եւ «թշնամի» յայտարարուած ընկերների հետ։ Միայն այդ

կերպ կարելի էր մեղամացնել նոր «նացիոնալիստ-տրոց-կիստներ» մերկացնելու նրա եռանդը: Քոչարի բացատրությունն ինձ համոզեց եւ ես նոյնպէս ստորագրեցի այդ յօդուածը: Սակայն դա միամիտ եւ սխալ մի տաքտիկա էր, որ հեղ-տութեամբ կռահեց Ամատունին եւ հէնց այն ժամանակ էլ մեզ «հողմացրիւ» կ'անէր, եթէ նրան չբանտարկէին:

Ամատունուց յետոյ էլ, այնուամենայնիւ, շարունակուեց ինձ «հողմացրիւ» անելու կամպանիան: Ինձ կուսակցութիւնից հեռացրին (ոչ թէ դրողների կուսկազմակերպութիւնը, այլ կուսկոլլեգիան), ինչպէս վերելում ասացի, երկու անգամ եւ իմ գրքերը յայտարարեցին արգելուած: Ես կրկնում եմ, բանտարկուելուց ազատուեցի պատահաբար: Երեք տարի շա-րունակ ես ծանր տանջալից պայքար էի տանում ապացուցելու համար իմ անմեղութիւնը: Այդ ոգով ես գրեցի բազմաթիւ դիմումներ կուսակցական ղեկավար մարմիններին: Այդ ո-գով ես գրեցի ոտանաւորներ, որոնք յոյս տեսան 1937 թուա-կանին: Այդ օրերին ես գրեցի նաեւ մի պոեմ «Ընկեր Չալ-պիճ Չալպիկեանի երազը» վերնագրով (1937 թ.), որտեղ ես նշաւակում եմ 31 թուականի ոգին, մի ուսկիմի հրահանգչի, որը գրադուած է կոմունիստներին կուսակցութիւնից հեռա-ցրելու եւ բանտարկել տալու անարգ «գործունէութեամբ»: Այդ պոեմը ես յանձնեցի «Սովետական Հայաստան» թերթին, սակայն չտպագրուեց: Այդ օրերի իմ կեանքը բարեխղճօրէն ուսումնասիրողն իսկոյն կը նկատի, որ ես 31 թուականի գո-հերից եմ, մէկն եմ եղել այդ օրինազանցութիւնների դէմ պայքարողներից, այլ ոչ թէ «այդպիսին» ինչպիսին այսօր տքնում են ինձ պատկերացնել դաշնակցականներն արտասահ-մանում, Մնացականեանները՝ մեզանում:

Հիմա էլ ես այս դիմումը գրում եմ գայրոյթի եւ ցաւի զգացմունքով: Մի՞թէ ես պէտք է մինչեւ կեանքիս վերջը դիմումներ գրեմ՝ ապացուցելու համար, որ այն չեմ, ինչ-պէս ինձ ուզում են պատկերացնել:

6.—Իմ կատարած բարի գործերը վերագրում ուրիշներին, ուրիշների կատարած չար գործերը վերագրում եմ ինձ: Վերջերս մինչեւ անգամ իմ բարեկամները ինձ խորհուրդ են տալիս որեւէ կերպ նորից խօսել այն սխալների մասին, որոնք ես ուղղել եմ սրանից երեսուն տարի առաջ: Կայ սխալն ուղ-ղելու երկու տեսակ: Առաջինն է՝ կուրծք ծեծել եւ ասել, թէ սխալուել եմ, եւ մի կերպ դուխն ազատել, երկրորդ եւ ամե-նաազնիւ տեսակը —այդ սխալներից հանել ներքին եզրա-կացութիւն եւ դրանք ուղղել կենդանի գործերով: Ես այդ սխալներից ուղղել եմ ամէնից առաջ իմ գրական ստեղծա-գործութեան մէջ, որ բազմիցս արժանացել է հասարակութեան բարձրագոյն դնահատականին:

Թոյլ տուէ՛ք յիշատակել մի քանի փաստ (բազմաթիւ փաստերից) այն մասին, որ ես ժամանակին ուղղել եմ երես-

նական թուականների սխալ պատկերացումները հայրենասիրութեան եւ մարդկանց մասին:

ա) 1938 թուականին, երբ կրեմլում ինձ ընդունեց Ա.Ի. Միկոյանը, ես նրա մօտ բազմակողմանի փաստարկումներով պաշտպանեցի Ջարինցին, Իսահակեանին եւ ուրիշներին: Ընկ. Միկոյանի թույլտուութեամբ ես մեր խօսակցութեան բովանդակութիւնը յատուկ նամակով հաղորդեցի իմ այն ժամանակուայ ընկերներից Հր. Քոչարին եւ մի ամիս յետոյ ստացայ Ա. Իսահակեանի նամակը:

«Սիրելի Նայիրի,

«Վաղուց է՝ սպասում եմ քո վերադարձին Երևան, քայց լսում եմ, որ դեռ մնալու ես:

«Մի պարտք ունեմ հատուցելու քեզ, եւ լաւ է ուշ, քան երբեք. — Ընկեր Հրաչ. Քոչարը կարգաց ինձ այն մամակը, ուր խօսում էիր իմ մասին: Քո գրույցը մեր շատ սիրելի ու յարգելի ընկեր Ա. Միկոյանի հետ, նրա՝ իմ հանդէպ յայտ քերած այն րարձր ուշադրութիւնն ու գնահատմանը, որ արել է մեր սիրելի ընկերը:

«Խորապէս շնորհակալ եմ քո ընկերակալ ազնիւ վերաբերմունքի համար, որ մեր Երևանի ճղճիմ իրականութեան մէջ քացառիկ երեւոյթ է: Ես միշտ այն մտածումն ունեմ, թէ իրեն գնահատող մարդը կը գնահատի եւ ուրիշին: Եւ իսկական տաղանդը կ'աւելանայ իսկական մի այլ տաղանդի գոյութեամբ»:

Սա 1938 թուականն էր, երբ ես նոր էի վերականգնուած կուսակցութեան մէջ եւ մի քանի ամիս յետոյ պէտք է նորից հեռացուէի...

բ) 1939 թուի գարնանը, Մոսկուայում, երբ ես երկրորդ անգամ հեռացուած կուսակցութիւնից եւ ՀԱՄԿԿ կուսկուլեկզիայի յատուկ նիստով նոր էի վերականգնուած իմ կուսակցական իրաւունքների մէջ, թերթում կարդացի «Սասունցի Դաւիթ» հպոսի 1000ամեակի կառավարական կոմիտէի ցուցակը, որտեղ իմ անունը կար, սակայն բացակայում էր Իսահակեանի անունը: Դա ինձ վրայ ցնցող տպաւորութիւն թողեց: Եթէ Իսահակեանին չէին դարձրել յորեանական կոմիտէի անդամ, նշանակում էր, թէ նրա վիճակը ծանր էր (քաղաքական առումով): Իմ այդ կասկածները հաստատեցին Երևանից նոր եկած ընկերները: Ես անմիջապէս նստեցի եւ յօդուած գրեցի «Սասունցի Դաւիթ» հպոսի մասին՝ շատ բարձր գնահատական տալով Ա. Իսահակեանին իբրեւ բանաստեղծի եւ իբրեւ հպոսի ճիւղերից մէկը մշակողի: Իմ յօդուածը միւս օրը լոյս տեսաւ «Պրաւդա»ում:

Նոյն օրերին Մոսկուայում տեղի ունեցաւ «Սասունցի Դաւիթ» համամիութենական յորեանական յանձնաժողովի նիստը, որի անդամներից մէկն էլ ես էի: Այդ նիստում նոյն պէս ես պաշտպանեցի Իսահակեանի հեղինակութիւնը: Իմ

արխիւումն է այդ նիստի արձանագրութեան պատճէնը, որից չէր խանգարի կատարել մի փոքրիկ մէջբերում հայերէն թարգմանութեամբ:

«Որոշուած էր տալ երկու բացման խօսք պլենար Ընդհանուր (Երեսնու մ Գումարունիք -Ն.Ձ.): Մէկը Ֆադէեիմ, միւսը՝ Արագուն:

«ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ.—Այդ բոլորը շատ լաւ է, բայց ինչ վերաբերում է երկրորդ բացման խօսքին, ապա շատ անելի լաւ կը լինէր, եթէ այն ասէր Իսահակեանը, խոշորագոյն իմ գրողը, բանաստեղծ, որին ժողովուրդը բոլորից անելի շատ է սիրում: Կարծում եմ, որ ընկերները, որոնք եղել են Հայաստանում, բոլորն էլ դրանում համոզուել են: ...Իսահակեանը խորապէս գիտի էպոսը, նա էպոսի ճիւղերից մէկը մշակել է բոլորից լաւ եւ տրամաբանական ու արդարացի կը լինէր, եթէ նա ասէր երկրորդ Երեսնու մ Գումարունիք:

«ՆԱԽԱԳԱՀ.—Ես ուզում եմ լինել ուղղագիծ եւ ուղղակի կ'ասեմ: Ես շատ բարձր եմ գնահատում Իսահակեանին, ինչպէս մեծագոյն բանաստեղծի: Ես կարծում եմ, որ մենք այս պահումում նրան ցոյց կը տանք ամենայն յարգանք, հնարաւորութիւն կը տանք ելոյթ ունենալու: Բայց մենք չպէտք է մոռանանք, որ սա համամիութենական քաղաքացիին գործ է, եւ այնքան էլ նպատակաւորմար չէ Երեսնու մ Գումարունիք լանձնարարել մի բանաստեղծի, որը ամբողջ կեանքն անց է կացրել էմիգրացիայի մէջ: Մենք ՍԱՀՄ-ի քաղաքացիներ ենք, մեզ պէտք է, որ երեսպ, որ այդ բոլորը մենք ենք բարձրացնում, որպէսզի չստացուի այն տպաւորութիւնը, որ եթէ չլինէր Իսահակեանը, ապա չէր ճշդի այդպիսի իրադարձութիւն...»

«ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ.—Իսահակեանն արտասահմանում շարունակ պրոպագանդ էր անում յօգուտ Սովետական Միութեան:

«ՆԱԽԱԳԱՀ.—Նախ՝ դա այնքան էլ ճիշդ չէ, իսկ բացի դրանից մենք ուզում ենք էպոսի հետ կապել մի շարք նոր անուններ: Ես հարցը դնում եմ զուտ քաղաքականապէս: Ես համարեմ՝ հաստատացած եմ, որ կուսակցութեան Կենտկոմը նրան չի հաստատի:

«ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ.—Ես հաստատացած եմ, որ կը հաստատի: Նա մեր յեղափոխութեան ոգով մշակել է էպոսի ճիւղերից մէկը»:

Եւ այս ոգով մեր վէճը շարունակուեց բաւական յամառ ու երկար:

Սրանք իրողութիւններ են, փաստաթղթեր, որոնց ցոյց են տալիս, թէ այն ժամանակ, երբ ես շարքի մէջ դեռ նոր էի վերականգնուած, ինչ յարաբերութիւն կար իմ եւ «ժամանակներէ» միջեւ:

գ) 1944 թուականին, երբ ես դարձայ Գրողների Միութեան նախագահ, առաջին նիստը, որ գումարեցի, նուիրուած էր աքսորուած գրողներին վերադարձնելու եւ վերավարկաւորելու հարցին: Ես զնացի Կենտկոմի այն ժամանակուայ քարտուղար Գ.Ա. Արուտինովի մօտ եւ թոյլտուութիւն ստացայ Չարենցին տպագրելու հայ գրականութեան «Ընտիր

էջեր» ում եւ քննելու միւս գրողներին աքսորից վերադարձնելու հարցը: Սա նույնպէս փաստ է, որի արձանագրութիւնը պահ-
ւած է Գրողների Միութեան արխիւում:

դ) 1954 թուականին եւ Ա. Ա. Ֆադէեւին գրեցի մի շարք
նամակներ, որոնցով խնդրում էի նրա միջնորդութիւնը հայ
գրողներին աքսորից վերադարձնելու: Այդ նամակներից
մէկում ի միջի այլոց ասուած է (բերում եմ թարգմանաբար)․

«Հայաստանի գրողները աշխատեցին թոյլտուութիւն ստա-
նալ վերականգնելու այդ անմեղ տեղ պատժուած մարդկանց
իրաւունքները Գրողների Միութեան անդամութեան մէջ եւ տալ
նրանց ստեղծագործական աշխատանքով զբաղուելու հնարաւո-
րութիւն: Բայց բան չստացուեց: Նրանց անգամ զոկեցին թարգ-
մանելու իրաւունքից ... 1948 թուին նորից աքսորեցին Հայաս-
տանից Կրասնոյարսկի մարզը, այս անգամ արդէն անորոշ ժա-
մանակով ... Ես ոչ մի կասկած չունեմ, որ Ալազանն ու միւսները
երկրորդ անգամ աքսորուած են նորից ատանց որեւէ հիմքի ...
Սովետական արդարութիւնը պահանջում է նրանց աքսորից
վերադարձնել տուն, հանել նրանց վրայից դատաւարութիւնը,
ընդունել նրանց Գրողների Միութեան մէջ եւ նրանց համար
ստեղծել ստեղծագործական աշխատանքի հնարաւորութիւն»:

Մրանք եւ փաստերը: Փաստերը ցոյց են տալիս, որ եւ
1938 թուականից մինչեւ 1954 թուականը բազմաթիւ փորձեր
եւ կատարել գրականութեան անմեղ մշակներին հայաժանքից
ազատելու եւ անմեղ տեղ դատաւարութեան գրողներին աք-
սորից վերադարձնելու համար: Աւելին: Ես աշխատել եմ նը-
րանց բանտարկութիւնները կանխել, ինչքան որ դա կախուած
է եղել իմ ուժերից:

Այսպէս՝ 1936 թուականի ամրանը հրանքիանի ողբերգական
ինքնասպանութիւնից յետոյ, մենք մեր կուսակազմակերպութեան
ժողովում քննեցինք Ալազանի կուսակցական հարցը, նրան
մեղադրում էին խանջեանականութեան մէջ: Ժողովին ես
էի նախագահում: Իմ առաջարկով մեր կուսակազմակերպու-
թիւնն Ալազանին կուսակցութիւնից չհեռացրեց (հեռացնել
այդ օրերին՝ կը նշանակէր հիմք տալ բանտարկելու), այլ բա-
ւականացաւ միայն ընդհանուր խրատներով զգոնութեան
մասին: Այդ ժողովից երկու օր յետոյ Ալազանը ձերբակալուեց,
ինձ կանչեցին Կենտկոմ եւ աստիկ յանդիմանեցին, թէ
ինչո՞ւ եմ ես առաջարկել, որ ժողովրդի թշնամուն պահեն
կուսակցութեան մէջ:

7. -- Նեղզափոխում եմ իմ կենսագրութիւնը, ինձ ներկայացնում
եմ իբրեւ իմ հակապատկերը:

Իմ թշնամիները լաւ գիտեն իմ կենսագրութիւնը: Գիտեն,
որ ես Չարենցի եւ միւսների հետ ունեցել եմ զուտ գրական
վէճեր եւ չառ յաճախ ինձ վտանգի ենթարկելու գնով աշ-

խատել եմ նրանց վերականգնել իրենց իրաւունքների մէջ, նրանք այդ բոլորը գիտեն, բայց եւ այնպէս շարունակում են նենգափոխել իմ գործերն ու մտքերը, իմ իւրաքանչիւր արտայայտութեան մէջ տեսնել այնպիսի գիծ, որով հնարաւոր լինի ինձ կապել իմ շուրջը տարածուած մռայլ առասպելին: Եթէ փաստերը չեն համընկնում նրանց բանասարկութեան հետ, աւելի վատ փաստերի համար:

«Սովետական գրականութիւն» ամբազրի այս տարուայ հրդ համարում տպագրուած իմ «Մթնոլորտային մտորումներ»ը անաչառ ուշադրութեամբ կարդացողը հեշտութեամբ կը նկատի, որ ես այնտեղ ոչ ոքի ոչ մի քաղաքական մեղադրանք չեմ տալիս, այլ խօսում եմ Գրողների Միութեան մէջ առաջացած «եղբայրութեան» («կոլլեկտիւ») մասին, որ բաղկացած է իրարից ոճով ու համոզմունքով տարբեր գրողներից: Ես իմ յօդուածում չեշտում եմ, որ այդ գրողներից շատերը տաղանդաւոր են եւ ինձ համար համակրելի եւ միայն իրար հետ փոխադարձ երաշխաւորութեան մէջ մտնելով, իրենց «եղբայրութեան» շուրջը պտտուող հեղինակներին բարձրացնում են, ուրիշներին անտեսում կամ նսեմացնում եւ այդպիսով գրական կեանքում ստեղծում են լարուած մթնոլորտ: Հէնց այդ իմաստով էլ ես նրանց «եղբայրական» վարկագիծը համարում եմ վնասակար: Ես իմ յօդուածում յատկապէս ընդգծում եմ, որ սովետահայ գրականութեան մէջ ազգայնական տրամադրութիւններ չկան, եւ հայ ժողովրդի անունից ամբողջապարտութիւն անող առանձին մարդիկ ոչ թէ հայրենասէրներ են, այլ՝ եասէրներ եւ փառամոլներ: Ուշագիշտ ընթերցողը կը նկատի, որ իմ «Մթնոլորտային մտորումներ»ը երեսնական թուականների հետ ոչ մի կապ չունի: Բանասարկուն չի քաշում գրելուց:

«Այն երեսնական թուականները, որոնցից սկիզբ առնող ինչ-ինչ երեւոյթներ Ջարեանը հասցնում է միջնեւ մեր օրերը: Հէնց այդպէս էլ սկսուել են ... Այդպէս էր երեկ, նոյնը Ջարեանը շարունակում է նաեւ այսօր»:

Երեսնական թուականներում սկիզբ առած «ինչ-ինչ երեւոյթների» ոգին նենգափոխութիւնն էր, մարդկանց մտքերը նենգափոխելը եւ նրանց այս կամ այն հակապետական մեղքեր վերագրելը: Մնացականեանը, ինչպէս ես հէնց սկզբում էլ ասացի, գործում է երեսնական թուականների ոգով: Նա նենգափոխում է իմ յօդուածի բոլոր մտքերը, ինձ վերագրում է «ինչ-ինչ երեւոյթներ» շարունակելու յատկութիւն, այսինքն՝ իր սեփական յատկութիւնը եւ տքնում է ապացուցել, որ Ն. Ջարեանը եղել է «այդպիսին» եւ շարանակում է մնալ «այդպիսին»:

Եւ ես հիմա հարկադրուած եմ բացատրել, որ «այդպիսին» չեմ եղել եւ «այդպիսին» չեմ. անկասկած եւ ծանր մի դբադմունք, եթէ նկատի առնենք այն պարագան, որ միամիտ մարդիկ հեշտութեամբ են հաւատում գրպարտիչներին: Գոնշարովը պատմում է, որ էբլոմովկա գիւղում բաւական էր, որ մէկն ասէր, թէ Մարֆան վհուկ է: Բոլորը կը հաւատային, թէ այդ իրօք այդպէս է՝ առանց մտածելու, թէ այս Մար-

Ֆան ինչո՞ւ պէտք է վհուկ լինի Բանասրկուն իր առաջ խրնդիր է դրել «ապացուցելու», թէ Ն. Ջարեանը «վհուկ» է: Ես պէտք է նրանից պաշտպանուեմ: Մեր «պալքարն» անհաւասար է: Ես զբաղուած եմ ստեղծագործական աշխատանքով եւ ժամանակ չունեմ ինքնապաշտպանութեան համար: Ափսոս է իմ ժամանակը: Իսկ Բանասրկուն իր «աշխատանքի» համար ուղղակի ստեղծուած է: Նախ՝ նրա բնաւորութիւնը: Պատճառ է աղմկելով յարձակուել բոլոր նրանց վրայ, ում դէմ, որ անկիւնախօսում են իրենից աւելի ուժեղ եւ աւելի խելօք ամբոխավարները: Եթէ ուրիշները ասում են «ա», նա շարունակում է մինչեւ «բ»: Նա իր մասնագիտութեան բերումով յատուկ սէր ու ժամանակ ունի արխիւներ քրքրելու եւ փաստաթղթեր ներկայացնելու արագէս, որ մէկը հրեշտակ երեւայ, միւսը՝ վհուկ: Նա ընդունակ է առանց այլեւայութեան իր իսկ խօսքերով ասած «անուանի գրողին» յայտարարել «վհուկ» եւ «անուանի գրողը» դժուարանում է նրանից պաշտպանուել: Այդ դժուարութիւնը լաւ է բացատրել հանճարեղ Թելեմակին:

«Արիկաները Ռէնց Գրա Ռամար էլ յաջողութիւն ունեն գործերի մէջ, որ ազնիւ մարդկանց Ռետ վարում են, ինչպէս արիկաների Ռետ, միւնչդետ ազնիւ մարդիկ Գրանց Ռետ վարում են ինչպէս ազնիւ մարդկանց Ռետ»:

Ես Վ. Մնացականեանին չէի կամենայ յիշեցնել իր այն «մոլեռանդութիւնը» 1949 թուականին, երբ նա իբրեւ «Գրական թերթ»ի խմբագիր առաջարկում էր «Վախճանի եւ դուրս նետել էսթետացող ֆորմալիզմը», այսինքն՝ Վահրամ Թէրզիպաշեանին, Բ. Ջարեանին, Խ. Սարգսեանին, Ս. Մելիք-սեթեանին, Ա. Արաքսմանեանին եւ ուրիշներին: Նրանք, ի հարկէ, Ջարեաններ չէին, սակայն մարդիկ էին, մշակոյթի աշխատող գործիչներ: Ես Մնացականեանին, ի հարկէ, չեմ մեղադրում նրա համար, որ նրա այդ «մոլեգին» յողուածից յետոյ Վ. Թէրզիպաշեանին աքսորեցին Ալտայ: Ես գիտեմ, որ այդ աքսորը կապ չունէր Մնացականեանի «վհուկներ» որսալու գովական եռանդի հետ...: Ես ժամանակ ու հակումներ չունեմ քրքրելու Վ. Մնացականեանի անցեալը, ոչ այնքան հեռաւոր անցեալը եւ փաստաթղթերով ջոյց տալու, թէ «ինչպիսին» էր նա այն ժամանակ եւ ինչպիսին է այսօր:

Իմ դէմ ուղղուած այս տոտալ հալածանքի նպատակն է հարկադրել, որ ես լռեմ, չխառնուեմ գրականութեան գործին, ամբողջ ասպարէզը թողնեմ իրենց: Ոմանք ապրում են այն հաշիւներով, որ իմ կորցրածը իրենք պիտի գտնեն: Մինչեւ անգամ այնքան մեծ անուն հանած մի բանաստեղծ, ինչպիսին է Յովհ. Երրազը, քաղաքի բոլոր խաչմերուկներում տարիներ շարունակ ամէն օր յայտարարում է, թէ «Ն. Ջարեանը կերել է Չարենցի գլուխը, այժմ էլ ուզում է իմ գլուխն ուտել», եւ ոչ ոք այս անխիղճ բանասրկութեանը չի առարկում, չնայած, որ մարդկանց յիշողութիւնը լի է բոլոր հայ տաղանդաւոր գրողներին, եւ ամէնից աւելի՝ Հէնց իրեն՝ Երրազին, ջոյց տուած իմ բազմակողմանի օժանդակութեան փաստերով: Մէկ այլ անուանի բանաստեղծ Գրողների տանը մասնաւոր

գրողի ժամանակ, Մնացականեանի յօդուածը դատապարտելուց յետոյ, աւելացրեց.

«Եթէ կ'ուզենաս լսել իմ, կրտսերիս խորհուրդը, դու, այո, մի քանի հարցերի շուրջը կարծիք չպիտի յայտնես, որովհետեւ...

Շարունակենք նրա միտքը. «Որովհետեւ քանադկուները ժողովրդի մէջ տարածել են այն, թէկուզ եւ ստալոյ վարկածը, թէ դու եւ կորստեան մատնել Չարենցին, ապա դու այլեւս չը պետք է կարծիք յայտնես գրականութեան զարգացման հարցերի մասին եւ պետք է թողնես գրականութիւնը»:

Այս եւս պահանջում ինձանից ումանք:

Ես արդէն 87 տարեկան եմ եւ բաւականին չատ եմ գրել: Բայց ես իմ մէջ դեռ անսպառ ուժ եմ զգում ստեղծագործելու, մասնակցելու մարդկանց, ժողովրդի հոգեւոր առաջընթացին: Ես գրական ծրագրեր ունեմ, որոնք պէտք է կենսագործուեն: Հրապարակի վրայ կան հրատապ հարցեր, որոնց լուծմանը ես կ'ուզենայի բերել իմ համեստ մասնակցութիւնը: Ես մըտադիր չեմ գրական ասպարէզից հեռանալ:

8.-Ինձ հետ այսօր վարում են այնպէս, ինչպէս, իրենց կարծիքով, ուրիշները վարուել են Չարենցի հետ:

Իմ ֆիզիքական գոյութիւնից անկախ ես մասնակցում եմ ժողովրդի դատաւարականութեան գործին: Տարիներ շարունակ զպրօցներում հարիւր հազարաւոր պառանդներ կարդում են դասագրքերում տեղաւորուած իմ երկերը, աւարտական շարագրութիւններ են գրում իմ գրքերի մասին, բազմաթիւ գիտական աշխատողներ իմ ստեղծագործութիւնը դարձնում են դեւերտացիայի նիւթ, բազմաթիւ թատրոններ բեմադրում են իմ ողբերգութիւններն ու կոմեդիաները, միլիոնաւոր ընթերցողներ ինձ կարդում են ընթացիկ մամուլում:

Իմ ամբողջ ստեղծագործութեամբ ես արտացոլում եմ դարաշրջանը, մեր ժամանակի ազգային ու համամարդկային իդէալները, մարդկային բարձր մորալը:

Եւ ահա դաշնակցականներն արտահայտւում, Մնացականեանները մեղանում տարիներ շարունակ բանաւոր ու գրաւոր բանասարկութեամբ ժողովրդին ներարկում են այն միտքը, թէ այդ բարձր մորալ քարոզող մարդը ինքը անմորալ է, չարասիրտ, անցեալում կորստեան է մատնել իր գրական ընկերներին եւ պատրաստ է նոյնը կատարել այսօր:

Որտե՞ղ է տրամաբանութիւնը:

Դաշնակցականների տրամաբանութիւնը հասկանալի է, նրանք ինձ համար կուսակցական թշնամիներ են: Հապա ի՞նչ են Մնացականեանները, ինչո՞ւ իմ դէմ գրելիս նրանց ոճը համարեալ չի տարբերում դաշնակցականների ոճից: Որտեղի՞ց են նրանք ստացել այդ արտօնութիւնը տարիներ շարունակ ինձ բանասարկելու եւ անուանարկելու: Մինչեւ ե՛րբ պէտք է շարունակուի այս բոլորը:

Այս հարցերը ես ապիս եմ Հէկ կենտրոնին, իմ կուսակցութեան բարձրագոյն մարմինն: Ինչո՞ւ իմ դիմումները չեն քննուած: Տարիներ առաջ ես նորից դիմեցի կենտրոն, պահանջեցի քննել Գորգէն Հայկունու գրաւոր յայտարարութիւնն այն մասին, թէ «Զարեանցը բանտարկուել է՝ Ն. Զարեանի մատերիայներով»: Ընկեր Զարոբեանն այն ժամանակ ասաց. «Շուն է՝ թող հաջի»: Մինչեւ ե՞րբ չները պէտք է անպատիժ հաջեն ինձ վրայ:

Դրանից իմ թշնամիներն աւելի են քաջալերուած, իմ բարեկամներն ահաբեկուած են եւ չեն յանդգնուած ինձ պաշտպանել: Տարիներ շարունակ դաշնակցական մամուլն ինձ սանձարձակ գրպարտուած է եւ ո՛չ սովետահայ մամուլում, ո՛չ արտասահմանի պրոստիտուական հայ թերթում չի գրուած մի տող դաշնակցականների գրպարտութեան դէմ ինձ պաշտպանելու համար: Իմ շուրջն ստեղծուած է թշնամական միջնորդատ ընդհանուր անտարբերութեան հողի վրայ: Այսպիսի դէպքերում մարդիկ, մանաւանդ արուեստագէտները, հարցը լուծում են ակոհորով կամ ինքնասպանութեամբ: Ես մտադիր չեմ դիմելու ոչ մէկին եւ ոչ միւսին: Ես թշնամիներին այդ հաճոյքը չեմ պատճառի, ես ստեղծագործական շատ ծրագրեր ունեմ կենսագործելու:

Բաւական է: Ես երկար գրեցի:

Մանր է ինձ համար թողնել գրական գործերը եւ ամբողջ մի վիպակի ծաւալով դիմումներ գրել՝ ապացուցելու համար, թէ ես «վհուկ» չեմ: Ես իմ կեանքի ընթացքում այսպիսի դիմումներ, դժբախտաբար, շատ եմ գրել: Ինձ շարունակ մեղադրում են զանազան մեղքերի մէջ: Ես մէկ դարձել եմ «աջ», մէկ՝ «ձախ», մէկ՝ «դուրմատիկ», մէկ՝ «ռեւիզիոնիստ», մէկ՝ «նացիոնալիստ», մէկ՝ «ապագայական», նայած ինձ մեղադրողի ընկալական ապարասին:

Ծայտարարում եմ նորից ամբողջ պատասխանատուութեամբ: Ես Զարեանի եւ միւս գրողների դէմ ոչ մի մատերիալ չեմ տուել պատժիչ մարմիններին: Ես նրանց դէմ չեմ գործել գաղտնի մեթոտներով, ես նրանց հետ ունեցել եմ գրական վեճեր, իմ տեսակետները պաշտպանել եմ հրապարակով:

Սրանով նորից եմ դիմում Ձեզ, յարգելի ընկերներ, իմ կուսակցութեան բարձրագոյն մարմինն, եւ խնդրում եմ քննել Վ. Մնացականեանի գրպարտական յողուածը, այդ անիծուած հարցն ընդհանրապէս - եւ պատժել մեղաւորին, վերականգնել իմ վարկը միլիոնաւոր ընթերցողների առաջ: Ես այլեւս չեմ կարող հանդուրժել անտարբերութիւնը: Ես կը շարունակեմ բոլոր ազնիւ միջոցներով պայքարել յանուն իմ քաղաքացիական անբասիրութեան:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Քաղիւն «Ի ԼՈՒՐ ԱՄԷՆՔԻ»...

Եւ Չարենցի կամ ուրիշ այլ գրողի մասին ոչ մի գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւն չեմ տուել Պետական Անվտանգութեան մարմիններին: Եւ նորից եմ պահանջում այդ եւ յայտարարել ի լուր ամէնքի:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Կանխող էջերում ստորագրած Նայիրի Զարեանի «Մը-ռայլ առասպել»-ին ամէնէն մոայլ հաստատումը հաւանաբար վերի տողերում մէջ անմեղ ձեւացող իր համարձակութիւնն է, ինքզինքն եւ ուրիշները խաբելով մօր մեղքեր կուտակելու իրականութենէն չվախճալու մեծաբարբառ յայտարարութիւնը:

Բացուած են սակայն «Փակ դռները»: Պահ մը մերս նայինք:

Հայրենի կարգ մը մտաւարականներու՝ Ռաֆայել Իշխանեանի, Ամատուն Վիրապեանի, Պետրոս Դեմիրճեանի, Բայց մանաւանդ Դաւիթ Գասպարեանի հետեւողական միգրանվ յայտնաբերուած վաւերագրերում լռելիք տակ՝ դեռ ապրող զրպարտիչներէն ուրիշ մէկը կամ մահացած մեղապարտներում արդարացման պատճառներ փնտռողները որեւէ պատրանք չեն կրնար ունենալ այլեւս, վասնզի կամաւոր կոյրերէն զատ ամէն ոք կրցաւ տեսնել ենթականերում հարազատ դիմագիծը:

Իր տարբեր աշխատասիրութիւններում մէջ հատուածային եղանակով բաւական լոյս մետելէ ետք 37ի ռդրերգութեան վրայ, Դաւիթ Գասպարեան «Փակ դռների գաղտնիքը» անուն 728 էջերու վրայ արխիւային անոտք միութեամբ օգտագործումով լայն իրացաւ գաղտնիքներում դուռները, շօշափելի դարձնելով 1938ի վերջին ամիսներէն սկսեալ մինչեւ խռատական թուականներու վախճանը երկարած արիւնտ աւցուդարձերը:

Կիսածանօթ, ենթադրաբար կռահելի ու բոլորովին մութ մնացած իրադարձութեանց այս բացայայտումը ու մանց կողմէ բշտամարտի դիմաւորութեան, իսկ նշմարտութեան համդէպ յարգալիր ուրիշներ դառնօրէն թեւեւ, Բայց ուշադրութեամբ հետեւեցան բացայայտուած գաղտնիքներում: Խնդիրը առաւելաբար Նայիրի Զարեանի շուրջ կը դառնայ:

digitised by A.R.A.R.@

Բացառությամբ չէ, որ գրականէն զատ Նայիրի Զարեան ուրիշ ու դրական երեսներ եւս ունեցած ըլլայ:

Քառասնական թուականներուն գրականութեան մէջ մտաւ գործած երիտասարդները, այդ թէ կին, կը թուի, թէ երախտագիտութեան պատճառներ ունին իրեն հանդէպ, անպայման վայելած են անոր հովանաւորութիւնները, քաջախիղճը, գործած քարիքները, քայց ատենք հիմա չեն տար իրենց, որ բոլորովին անգիտաման անոր քննադատութեան մայր գիծերէն մէկը, գրչակիցները կուսակցական ակնացով թիրախ դարձնելու թուութիւնը, որ արթուն մնաց մէջը ու գործեց ամբողջ բանամեակ մը, 1937էն մինչեւ 1957, նշանակալից աշխատեց, երբ իր կուտը դարձուցած ճիւղող գերեզմանէն անգամ վտարուած էր եւ ճիւղալից եղանակներով դիտեցուցած ձեռնաստուգներէն Լաւրենտի Բերիա կոչուած աւագ արիւնարբուն շատուց գնդակահարուած:

Բնորոշ է, օրինակ, *«Տոբիոր ժիվաք»*-ի հեղինակին «դաւանանական վարմունքը» դատաւարտողներուն հետ ձայն բռնելու Զարեանի փութկոտութիւնը, որուն արձագանքը ընթերցողը իմացաւ դարձեալ շատ ուշ, *«Փրակաւ թերթ»*-էն, Բնադատ Սուրի Խաչատրեանի վկայութեամբ:

«Ելլիք եւ ունենում աւելի քան երեք տասնեակ գրողներ, որոնք բոլորը դատաւարտում են Վերջին Հմիկ-բանտ» Բորիս Պաստեռնակին եւ պահանջում նրան հեռացնել Փրոդների միութիւնից: Այդ նիստում առաջիններեց մէկը ելլիք է ունենում Նայիրի Զարեանը» (1991, թիւ 1):

Գրական դեմքերը ստալինաբար շարժեն դուրս բերելու Նայիրի Զարեանի քննադատութեան այս գիծը միայն մէկ անգամ եւ միայն մէկ գրողի առիթով չդրսեւորուեցաւ: Թիւ չունին անոր մամօրից Եղայրները, մանաւանդ Ակսել Բակունցի հանդէպ, մէկը՝ տաղանդաւոր գրագետին քանտարկութեան վաղորդայնին:

1992ին, *«Գարուն»* ամսագիրի էջերուն իր լայն ընծայած *«Հիշեր փակ գրողներից»* անուն գրութեան մէջ, Սիլվա Կապուտիկեան կը պատմէ, որ Նայիրի Զարեանի այրին՝ Աննիա Ստեփանեան, ցոյց տուած է իրեն գրառումներ, որոնցմէ մէկուն մէջ Զարեան կը գրէ.

«Բակունցի նկատմամբ ես կատարել եմ մի սխալ, շատ կոպիտ մի սխալ, եւ դրա համար ամաչում եմ ինքս ինձանից: Դա 1936 թուականին դրած իմ յօդուածն էր նրա մասին...: Իմ սխալն այն էր, որ ես այդ յօդուածում ժխտում էի Բակունցի գրական տաղանդը: Այդ արգէն տեսակէտից, որ ես այն գրեցի Բակունցի ձեռքակալութեանց յետոյ, երբ նա այնքան անզօր էր պաշտպանուելու: Այդպիսի փոքրոգութիւն եւ կեանքումս միայն մէկ անգամ եմ կատարելով:»

տարի՝ Ահա թէ ինչու ես ամաչում եմ այդ յոգուածի համար» (1992, քիւ 3):

Ձղջահար հոգիի մը գրաւոր այս խոստովանութիւնը պատիւ կը բերէ եմքակային, սակայն իցի՛ւ քէ այս միայն եղած ըլլար Նայիրի Ջարեանի գործած բակումցեան մեղէնը եւ հոս վերջնաւ մեղէին քաւութիւնը, ինչպէս կը վարձէ մերկայանալ ինձ եւ Սիլվա Կապուտիկեան կը ճգնի հաւատացնել ընթերցողը: Բակումցի բանտարկութենէն առաջ եւ անոր դէմ մոյմ օրերուն գրուած համրածամօք *զրպարտագիր* ընէմ առաջ, Նայիրի Ջարեանի կողմէ ու գլխաւորութեամբ տարիներ շարունակ յարձակման թիրախ դարձաւ *«Միտանի փող»* ին ծիրանաւոր հեղինակը, զրպարտուեցաւ՝ տիրող կարմիր կարգերուն կողմէ մահացու համարուող բազում ու բազմապիսի մեղքերով:

Կարելի չէ այդ մասին արձանագրուած սեւ գրականութեան ամբողջութիւնը մերկայացնել հոս, բաւարարուիմք հետեւաբար ճնշողաւոր Հրամս Թամրազեանի ակնարկային մէկ ամփոփումով, որ լոյս տեսաւ *«Գրական թերթ»* ի էջերուն:

«Տարիներ շարունակ նրանք Բակումցին մեղադրում էին դասակարգային խորթութեան մէջ, համարում նացիոնալիստ, օպիտակ գվարդիական, արեւնարբու խմբապետ, որը գիմակ է հազել եւ խորհրդային դրականութեան մէջ մտել ուղղակի դաշնակցութեան պատուէրով ու պահանջով՝ չունենալով գրական ձիրք: Զրպարտանքի այդ սեւ հեղեղի մէջ մի օր, մի պահի նա գայրացած ապտակեց գրական դիրքի համար անազնիւ կռիւ մղող ոչ անյայտ մի զրպարտի» (1990, քիւ 52):

Գրական դիրքի համար անազնիւ կռիւ մղած եւ «զըրպարտանքի» սեւ հեղեղի մէջ» ապտակ ստացած «ոչ անյայտ մի զրպարտիչը» շատ յայտնի է այսօր եւ կը կոչուի Նայիրի Ջարեան, իսկ ինչ կը վերաբերի ստացուած ապտակին հանգամանքներուն պարզաբանման, այդ մէկը դուրս կ'իյնայ այս էջերուն սահմաններէն:

Հեռաւոր օր մը Նայիրի Ջարեանի հովանաւորութիւնը վայլած եւ այսօր անոր պաշտպանութիւնը ստանձնած դէմքերը, գրիչ բռնել առաջ, պէտք է հաշուի առած ըլլալին վերի փաստերը եւ ամօր մը հանդէպ նրախտագիտական ճամբով «արդար» ըլլալու իրենց ճիգին մէջ չմոռնալին *արդար* ըլլալ ընթերցողին ու պատմութեան հանդէպ...

Երեւի Նայիրի Ջարեան ինքզինք խաբելու երաւայակաւ մով փարձած է անմեղութեան առասպելներ հիւսել եւ մոյմ ցանկութեամբ իր բարեկամները եւս օրօրել, ա՛յն վստահութեամբ անշուշտ, որ Պետական Անվտանգութեան օրգաններուն հասցեագրած իր «մատերիալները» մոյմանման

թուղթերու շնորհակայտին մէջ կը չհամամ եւ ձեռէ մէկը եր-
բուիցէ իրագեկ չի կրնար ըլլալ ամենց մէջ կատարուած
սահմանկեցուցիչ «Ես մերկացրեցի»ներուն եւ, հետեւաբար,
մտքներուն մէջ դիւրութեամբ հող կը գտնեն սարժուած
հեջիաթները:

Ռոբիշ քացատրութիւն դժուար է ճարել թէ՛ «Մուսլի ա-
ռասպէլ»ին մէջ առասպելած իր անմեղութեան եւ թէ իր
օգտին անմեղութեան հղամիտներ հանդերձող անձերուն:
Դաւիթ Գասպարեանի եւ Ամատուն Վերապեանի միաց-
եալ ճիգերով «Գարուն» ամսագիրի 1990 տարեշրջանի թիւ
8ին մէջ լոյս տեսաւ ընդարձակ գրութիւն մը, որուն աւելի
քան քսան էջը կը կրէ Նայիրի Զարեանի ստորագրութիւնը:
Աւելի ուշ, ամբողջութիւնը երեւցաւ Դաւիթ Գասպարեանի
«Փակ դռներէ դադարեալ» անուն հատորին մէջ (էջ 646-
674):

Նայիրի Զարեանի բաժինը թուագրուած է 2 Դեկտեմբեր
1937:

Խմբագրուած է ռուսերէնով:

Խորագրուած է «Մ'ի հմ ես»:

Ունի «Իմ աշխատանքի, իմ սխալների եւ իմ թշնա-
միների մասին» փակագծեալ քացատրութիւն մը:

Եւ հասցեագրուած է, ինչպէս ակնարկուեցաւ վերը, Պե-
տական Անվտանգութեան օրգաններուն:

Սրկընորդ աղբիւրէն, աւ իր շատ հալոված «Ես մերկաց-
րեցի» քառերուն տակ՝ կ'արտագրենք քանի մը հաստատած,
որոնք, ամբողջութեանը հետ, ինչպէս կը ճշէ պատմիչը,
կը համդիսանան «Ժամանակի եւ հեղինակի համար բնորոշ
մի վաւերագիր»:

Հոն կատարուած «մերկացումներէն» հետագայ էջե-
րուն կ'արտագրենք այն մասերը, որոնք քացառաբար կը
վերաբերին Նայիրի Զարեանի հասակակից գրողներուն:

Անշուշտ, ոչ մէկ հայ պիտի ուզէր, որ հայ գրող մը
ուրիշ հայ գրողներու մասին մամլոյ պայմաններու մէջ մը-
ման թուղթեր ստորագրած ըլլար, քայց երբ պատահած
են մամլոյ քաներ, բնաւ ճիշդ պիտի չըլլար շարունակ «փակ
դռներէ» ետեւ «փակի տակ» պահել գտնումը:

Ընթերցողը անգամ մը եւս, աւ ի հարկէ խոր ցաւով,
պիտի հաստատէ, որ «Մթնոլորտային ճնշումը» ծայրագոյն
չափով ճնշիչ եղած է մասնաւորաբար «Անվտանգ» ազատ
աշխարհ Հայաստանի մէջ, այն աստիճան, որ ոմանք ֆի-
զիքապէս ոչնչացուց անիկա եւ ուրիշներ քարոյապէս
կեղեքեց, ափսոս...





«ԵՍ
ՄԵՐԿԱՑՐԵՑԻ»...

Այս բոլոր գրքերի համար ես վաստակել եմ նացիոնալիստական մտաւորականութեան, հակայեղափոխական քննադատների ու գրողների թշնամանքը: Այսպէս, հակայեղափոխականներ Սուրխաթեանը, Մակինցեանը, Վանանդեցին, Զարեցը, Բակունցը, Արմէնը, Ալազանը եւ նրանց թնոթները տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով, իսկ յանախ առանց որեւէ առիթի, ջանում էին ապացուցել, որ ես բանաստեղծ չեմ, այլ միայն բոլշեիկեան ագիտատոր:

(Էջ 654)

1934 թուականին, երբ հակայեղափոխական գրողները հանդէս եկան մի առանձնաշատուկ լկտիութեամբ եւ աշկարաբարձում էին իրենց նացիոնալիստական-տրոցկիստական գաղափարները, երբ նրանք Լինչի դատաստան տեսան բոլոր նրանց հետ, ովքեր կուլտուրայի, յատկապէս գրականութեան հարցերում փորձում էին պաշտպանել լեւինեան-ստալինեան գիծը, կատաղի խանջեանականութեան այդ օրերին ես գրեցի հենց իր՝ Խանջեանի եւ նրա վռնակի դէմ ուղղուած պոեմների ու բանաստեղծութիւնների շարք: Այդպէս, «Վաչական Հատորունի» (երգիծանք) պոեմն ուղղուած է հակայեղափոխական գրչական Թոթովեցի, Ալազանի, Բակունցի, Մահարու. «Վէպի Հերոսները» երգիծական պոեմը՝ Ալազանի, «Յիրդուսի» պոեմը՝ Զարեցի, «Երկու հանճարեղ դուրս» պոեմը՝ Խանջեանի եւ նրան թնոթների, «Իմ երիտասարդ մայրը» պոեմը՝ Բակունցի ու Զարեցի եւ, ընդհանրապէս, դաշնակցութեան դէմ:

Բոլոր այդ պոեմներն ու բանաստեղծութիւնները տպագրուած են իմ «Ամբոց» ժողովածուի մէջ:

(Էջ 655)

Այսպէս, 1925 թ. դիսպուտում եւ մերկացրեցի այժմ ձեր-
բակալուած հակայեղափոխական Մահարու մի պոեմի մացիո-
նալիստական բնոյթը եւ Ե. Չարեմցի հակասեմիտական տրա-
մադրութիւնները:

(Էջ 656)

Այդ մոյն տարում եւ մերկացրեցի մոյն Մահարու հա-
կախորհրդային ալեգորիկ բանաստեղծութիւնը եւ հարց
դրեցի Գրողների միութիւնից մրան վտարելու մասին: Բայց
մրան իրենց պաշտպանութեան տակ առան ներկայումս մեր-
կացուած հակայեղափոխականներ Արիսեանը, Գիւլիֆելիսեանը,
Ալազանը եւ ուրիշներ:

(Էջ 657)

1933 թ. Լենինականի գրական խմբակներում եւ դասա-
խօսութիւններ էի կարդում եւ մերկացնում գրչակներ Ալա-
զանի, Նորեմցի, Տարօնցու, Չարեմցի եւ ուրիշների յետադի-
մութիւնը, անբարեխղճութիւնը եւ մացիոնալիզմը:

Նոյն այդ տարում դաշնակ Բակունցը գրողների կոմֆը-
րակցիայի ժամանակ մարդկանց վրայ նետեց քանաքանակ:
Խանջեանը, Աշրաֆեանը, Վահանեանը, Ջուրարը սկսեցին
յանդիմանել ինձ եւ միւսներին այն քանի համար, որ մենք
մեր պահուածքով Բակունցին հասցրել ենք յուսահատութեան:
Այդ ժամանակ եւ երգիծարար ասացի. «Ի զուր Բակունցը
ռեվոլվէրը ձեռքին չի գալիս ֆրակցիայի, քանի որ կենտրոնը
ներում է մրա հակայեղափոխական խուլիգանութիւնը եւ մեզ
է մեղադրում»: Այդտեղ եւ մերկացրեցի ներկայումս ձերբա-
կալուած Վահանեանին, որն այն ժամանակ, օգտագործելով
«*Նորհրդային Հայաստան*»ի խմբագրի սաշտօնը, ամէն կերպ
պաշտպանում էր հակայեղափոխականներ Չարեմցին, Բա-
կունցին, Արմէնին եւ ուրիշներին:

1934 թ. երիտասարդ գրողների յամառ պահանջով ինձ նշանակեցին «Գրական սերունդ» ամսագրի խմբագիր: Առաջին իսկ համարից ես կրակ բացեցի գրականության մեջ նացիտնալիզմի եւ տրոցկիզմի արտայայտութիւնների դէմ՝ յօդուածներ տպագրելով ընդդէմ Արմէնի, Տարօնցու, Գ. Բեսի եւ ուրիշների: Խանգեանիմ քծնողներից մէկը՝ Վ. Անանեանը, խմբագրութիւն ուղարկեց մի ակնարկ, որի մէջ նա մեծարում էր իր տիրոջը՝ Խանգեանին: Ես ակնարկից ջնջեցի Խանգեանի անունը եւ յանձնարարեցի իմ տեղակալ ընկ. Քոչարիմ՝ ակնարկը վերափոխել այնպէս, որ նրանք չկարողանային որեւէ պատրուակ բռնել: Այդ ամէնի հետեւանքն այն եղաւ, որ ինձ ազատեցին աշխատանքից, վռնտեցին խմբագրութեան ամբողջ կազմը եւ ամսագիրը տուեցին դաշնակ լրտեսներ Դ. Սիմոնեանի եւ Գ. Յովնանի ձեռքը:

(Էջ 658)

Այդ օրերին Զարեանցի-Ալազանի հակայեղափոխական խումբը Դ. Սիմոնեանի գլխաւորութեամբ գրական լեզուի մասին կազմակերպեց դիսպուտ: Մի քանի անկուսակցական գրողների չեզոքութեան պայմաններում (Արագի, Մանուէլեան եւ ուրիշներ) նրանք դիսպուտը կազմակերպուած ձեւով ուղղեցին իմ դէմ՝ նպատակ ունենալով ինձ վերացնել որպէս գրող: Իմ դէմ դիմագոգային պրովոկացիոն ելոյթներ ունեցան այնպիսի «մարդիկ», ինչպէս Զարեանցը, Բակունցը, Ալազանը, Մ. Արմէնը, Լ. Արիսեանը, Վանանդեցին, Խ. Սարգըսեանը, Ս. Տարօնցին, Աղաւնին, Զ. Եսայեանը, Ս. Յարութիւնեանը, Դ. Սիմոնեանը, Ն. Ստեփանեանը, Գ. Բեսը, Գ. Մանարիմ եւ ուրիշներ: Այս գարշելի «ծաղկեփնջի» մեծ մասը վաղուց ձերբակալուած է: Դիսպուտը տեւեց մի ամբողջ ամիս: Ես բառացիօրէն միայնակ էի հանդէս գալիս այդ հակայեղափոխական բանդայի դէմ, որին ակնյայտօրէն պաշտպանում էր սրիկայ Խանգեանը: Մի շարք ելոյթներում ես մերկացրեցի այդ «գրողների» քշմամութիւնը, նացիտնալիզմը, խալտութեան:

(Էջ 659)



Այն ժամանակ իմ ձեռքում ընկաւ «լուծարուող» դաշնակների համագումարի սղագրական հաշտութեան խաղաղութիւնը: Գիրքը լոյս է տեսել 1924 թ.: Այդ գրքից եւ իմացայ, որ մեր կուսակցութեան այն ժամանակուայ անդամ Ա. Բակունցը դաշնակցութիւն կուսակցութեան անդամ է ոչ թէ ընդամենը երեւի ամիս, ինչպէս ինքն էր մեզ համոզում, այլ 1916 թուականից մինչեւ 1924 թ. եղել է Զանգեզուրի դաշնակցական կոմիտէի անդամ: Այդտեղ եւ տեսայ Ա. Բակունցի «լուծարուող», այսինքն՝ վերագրեցուած գաղափար: Բակունցն իր գաղափարներէն եւ այն դաշնակների հետ, ովքեր կարծում են, թէ խորհրդային իշխանութեան պայմաններում կարելի է լեզուաբանի դաշնակցական կուսակցութիւնը եւ առաջարկում է «լուծարուել» ու գործել կոմունիստական կուսակցութեան շարքերում: Կոմիտէականի առաջին իսկ նիստում եւ մերկայացրեցի Բակունցին: Նա ինձ պատասխանեց իր դաշնակցական սովորութեամբ... բռնակցեալ:



Իմ ելույթի մէջ եւ բողոքեցի Խանջեանի այդօրինակ հարցի դէմ եւ բառացիօրէն յայտարարեցի. «Բանի դեռ դասակարգային թշնամի Ա. Բակունցը եւ նրա ընկերները տէր ու տիրական են գրողների միութեանում, մեր գրականութեան մէջ բոլշեւիկեան հիմքի վրայ չի կարող լինել ուժերի համախմբում»:

(էջ 660)



...Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարում եւ հանդէս եկայ հարուստ եւ բազմաթիւ փաստերի վերլուծութեան հիման վրայ ցայց տուցի Զարեմցի, Բակունցի, Ալազանի, Մահարու, Թոթովեցի, Արմէնի, Սուրխաբեանի, Պ. Մակինցեանի, Ա. Կարինեանի եւ միւսների գրքերում եւ յօդուածներում առկայ նացիոնալիստական-տրոցկիստական գիծը:

(էջ 661)

...Հայ գրականության մեջ առկայ մացիոնայիզմի դեմ ջախջախիչ հաղթով (ընդդեմ Զարեմցի, Բակունցի, Ալազանի եւ միւսների) եւ հանդէս եկայ Մոսկուայում՝ գրողների առաջին համամիութենական համագումարի ամբիոնից: Ճանաչու գանգերով ընդհատում էր իմ ելույթի ժամանակ դիտաւորեալ կերպով նախագահով Դ. Սիմոնեանը:

(Էջ 661)

...Ժողովին նախագահում էի եւ: Ներկայ էին ընկ. ընկ. Ա. Մկրտչեանը, Գ. Յովնանը, Ա. Սարգսեանը, եւ այն ժամանակ դեռեւս կուսակցութեան անդամներ Ալազանն ու Նորենցը: Ես ստիպեցի նրանց՝ Ալազանին ու Նորենցին խօսել Ստեփանեանի հետ Բակունցի ունեցած կապերի, իրենց կապերի մասին: Նրանք ինչ-որ բան խոստովանեցին եւ իմ առաջարկութեամբ ժողովը միաձայն որոշեց կուսակցութիւնից Բակունցին հեռացնել: Դա եղել է դեռեւս Խանջեանի օրօք: Յաջորդ օրը, գործն արագացնելու համար, Բակունցին վերաբերող նիւթերով եւ գնացի Ամատունու մօտ եւ պահանջեցի հեռացնել նրան կուսակցութիւնից: Ամատունին ինձ յանդիմանեց Բակունցի հանդէպ խմբակային-անձնական վերաբերմունքի համար:

Խանջեանի եւ միւսների մերկացումից յետոյ Ամատունին ստիպուած էր ժողովրդի բշնամիներին մի մասին ձերբակալել՝ միւս մասին փրկելու համար:

(Էջ 662)

1936 թ. հակայեղափոխական Խանջեանի ինքնասպանութիւնից անմիջապէս յետոյ եւ գրեցի մի ժանի յօդուած, որում մերկացրեցի Զարեմցի, Բակունցի, Ալազանի, Մահարու, Արմէնի եւ միւս հակայեղափոխականների մացիոնայիզմը, տրոցկիզմը, հակաժողովրդականութիւնը, «ստեղծագործութիւնների» կեղծութիւնը:

(Էջ 663-664)

1935 թուականին Հայկինոյի թեմատիկ խորհրդակցութեան ժամանակ եւ իմ ելոյթի մէջ այսպիսի միտք յայտնեցի. «Մենք պարտաւոր ենք հայ աշխատաւոր ժողովրդի դեմակրատական-յեղափոխական շարժումը հակադրել դաշնակցականութեանը, այդ նպատակի համար մենք պէտք է ի յայտ բերեմք պատմական անհատականութիւնների, որոնք կարողանային մի կողմից արտայայտել ժողովրդի ազատագրական շարժումը, իսկ միւս կողմից, ցոյց տալ, թէ ինչպէս են դաշնակները իրենց հակայեղափոխական նպատակների համար օգտագործել ժողովրդական շարժումը»: Եւ գիտէի, որ Դզնունին, Բակունցը եւ ուրիշներ մինչ այդ խօսել են դաշնակ խմբապետ Անդրանիկի մասին: Այդ իսկ պատճառով եւ սաացի, որ տուեալ նպատակի համար Անդրանիկը պիտանի չէ, քանի որ նա ուժեղ կապի մէջ էր դաշնակցութեան հետ, թէեւ երբեմն իրեն հակադրել է դաշնակցական կառավարութեանը, այդտեղ էլ աւելացրեցի, որ եւ ընդհանրապէս չեմ գրադուել Անդրանիկով եւ չգիտեմ՝ իրօ՞ք նա իրեն հակադրել է դաշնակներին, թէ՞ դա պարսպ խօսակցութիւն է, եւ եւ կայ այն հետեւութեան, որ մենք պարտաւոր ենք պատմութեան մէջ յայտնաբերել այլ դէմքեր, ովքեր կապուած չեն եղել դաշնակների հետ: Իմ ելոյթից յետոյ խօսք առաւ Ա. Բակունցը, նա պրովոկացիոն կերպով շուտ տուեց իմ մտքերը, գործը ներկայացրեց այնպէս, թէ եւ իբր առաջարկում եմ Անդրանիկին պատկերել սխալ լուսաբանմամբ. իսկ ինքը՝ Ա. Բակունցը, անհրաժեշտ է համարում Անդրանիկին պատկերել այլ պլանով, եւայլն: Եւ բազմեցի Բակունցի այդ խուլիգանական պրովոկացիայի դէմ, մերկացրեցի դաշնակցութեան պատմութիւնը դաշնակցութեան տեսանկիւնից պատկերելու նրա կոմտրաբանդիստական ցանկութիւնը, իմ առաջին ելոյթը յայտարարեցի սխալ, քանի որ Բակունցն այն օգտագործեց իր պրովոկացիայի համար, յանդիմանեցի Դզնունուն այն բանի համար, որ նա ամբիմն է տրամադրում դաշնակ Բակունցին եւ հետագայ խորհրդակցութիւնից:

(Էջ 669-670)

Իմ դէմ նիւթեր են յերկրել՝
Գ. Աբովը՝ Ամատունուն քննողը, մերկացուած է որպէս
դաշնակ եւ հետագուած է կուսակցութիւնից,

Զ. Սալյանը՝ մերկացուած է որպէս լրտես եւ հեռացուած է կուսակցութիւնից ու չգիտես, թէ ինչու առ այսօր ազատ չըջում է,

Մխիթար Դաւթեանը՝ հեռացուած է կուսակցութիւնից, Գ. Յարութիւնեանը՝ Ամատունուն բժնողը, հեռացուած է կուսակցութիւնից,

Ամարեանը՝ կասկածելի տիպ, հակայեղափոխական Ս. Յարութիւնեանի մերձաւոր ազգականը, որին եւ բազմիցս մերկացրել եմ,

Սամուէլ Պօղոսեանը՝ բրէական տիպ, դաշնակ, կոմունիստ Մ. Խուշոյեանին սպանած բանդիտի եղբայրը, Գ. Սահակեանի վանդեր-Լեուրէն,

Պետեանը՝ տրոցկիստ Արիսեանի բժնողը, որին եւ բազմիցս մերկացրել եմ,

Աղաւնին՝ վայ բանաստեղծուհի, ճացիոճալիստներին բժնողը, բանաստեղծութիւններ եւ մի ամբողջ պոեմ է նշուի-րել Խանջեանին, Ամատունուն, Զուրարին, Ալազանին, Մահարուն, Զարեմցին:

Ահա թէ անհատապէս ո՛վ է բռնաւորում ինձ:

(Էջ 671-672)

Քաղի ԱՆՁՈՐ ՅԱՐԱԼԵԶՆԵՐ...

«Նա մերկացրեցի» պարագայական խորագիրի մը տակ կամխոդ էջերում արտագրուած պարբերութիւնները, կրկնեմէ՛ք, Քաղուած են «Ով եմ ես» անուն զարեանական փաստաթուղթէն, որ առաջին անգամ լոյս տեսաւ «Գարուն» ամսագիրի էջերում (1990) եւ ապա անցաւ Դաւիթ Գասպարեանի «Փակ գռների գաղտնիքը» անուն հատարին մէջ։

Որքան ծանօթ է մեզի, այդ փաստաթուղթը դուրս բերուեցաւ լեռնակուտակ արխիւներու մէջէն ու դարձաւ համրութեան անփականութիւնը։

Յենրաւ միշտ չէ այս հաստատումը։ Որովհետեւ իր տպագիր վիճակին մէջ անգամ յաճախ անտեսուեցաւ անկաւ որոշ խաւի մը կողմէ։

Այնպէս կը թուի երբեմն, որ մեր մտաւորականները եւ մտաւորականներու մօտիկ-մերձաւոր անձները զիրար չի՛չ կը ճանչնան, կամ կը մոռնան իրենց ճանչցածները, կամ չեն ուզեր յիշել զանոնք։

Ընթերցողը այդ տպաւորութիւնը կ'առնէ, երբ օրինակ, «Մովհեսական գրականութիւն» ամսագրին մէջ կը կարդայ Գուրգէն Մահարիի այրիին՝ Անտոնիմա Մահարիի սա հաստատումը։

«Գուրգէնի համար շատ թանկ էր մաւել Նայիրի Ջարեանին վերստին գտնելը» (գրական ինչ-որ վէճեր հետաքրքիր էին նրանց)։ Նայիրի Ջարեանը եւս նրա համար «հայրենի տան մասունք» էր, մանկութեան եւ ծերութեան ընկեր» (1988, թիւ 8, էջ 100)։ Միայն գրական ինչ-որ վէճերը չէին հարկաւ Մահարիի եւ Ջարեանի միջեւ ստեղծուած հեռացման պատճառները, պատճառները աւելի խոր էին, ու պատճառներում մէջ զաղափարական երանգները բացառուած չէին, բնատուրութեան յարմարութեան հետեւ ինչ-որ յարմարութեան գիծերն ալ դեր ունէին երկուէին միջեւ բացուած յարամատին մէջ, հոս զեր աւելին մաւել խառնուածքային հակադիր մղումները, որոնք հիմնովին կը հերքեն երկու գրողներու միջեւ մտերիմ կապեր տեսնելու Անտոնիմա Մահարիի փոյթը։

Անտոնիմա Մահարի առաջինը ի՛նչ զգացած պէտք է ըլլար այդ յարամատին առկայութիւնը, Գուրգէն Մահարիի վերջին բանաստեղծութիւններէն մէկուն հիմամբ, «Զգոյշ եղէ՛ք, մարդիկ», որուն ղեկարարական հերոսը մոյմիմէն Ջարեանն է ու Նայիրի Ջարեանն է մարդոց ուղղած Մահարիի զգուշութեան յորհորդը, այն Նայիրի Ջարեանն է, որ Մահարիի մտքին փոքր ներքն էր, նեո էր մոյմիմէն 80-70ական թուականներու կեսերուն, հետեւաբար եւ շատ թանկ չէր, չէր կրնար եղած ըլլալ «անմեղ մեղաւոր»ին համար միւսին մօտիկութիւնը, որով՝ Անտոնիմա Մահարիի հաղորդածը կարելի է համարել ոչ-միշտ տպաւորութիւն մը։

Մենք չենք կարծեր տակալին, որ Անտոնիմա Մահարի պիտի համարձակէր Մահարիի համար այնքան թանկ համարել «Նայիրի Ջարեանին վերստին գտնելը», եթէ ծանօթ եղած ըլլար այս վերջինին «Ով եմ ես»-ին, ինչպէս Մարո Ալազան այնքան սանձադա՛սակ պիտի չըլլար իր գեղումին մէջ, եթէ «Նա մերկացրեցի»-ի մէջ եօթը անգամ մերկացուած տեսներ վահրամ Ալազանը։

Մեզի անլի գարմամալի կը թուի Սիւվա Կապուտիկեանի վերաբերումը, երբ իր մանչցածին պէս կ'ուզէ ըմբերցողին մանչ-ցընել Նայիրի Զարեանը, վկայութեան կանչելով անգամ մերկացուած Ալազանի մայմէան դժբախտ այրին, ա'յդ՝ եւ արդէն ծանօթ գարեանական միւս մերկացումներէն երկու տարի ետք, մայմ ամսագրի էջերուն (*«Փարոս»*, 1992, թիւ 3):

Մատնանշեմէ Նայիրի Զարեանի ապրած ողբերգութիւնը ըստ էութեան մանչցած եւ անոր մարդկային բարեմասնութեան օգտին Մարօ Ալազանի հիսսէմնչ քացագանչութիւնը ուշադրութեան յանձնող Սիւվա Կապուտիկեանի յուշը.

«...Այդ ամբողջ սերնդի մէջ կայ մէկը, որի ողբերգութիւնը, թերեւս, անլի մեծ էր, քան այդ բանտ ու աքսորում իրենց լաւագոյն տարիները մաշողները, քան նոյնիսկ այդ բանտ ու աքսորից չվերադարձողները Դա Նայիրի Զարեանն էր... Այդ կարող են հասկանալ միայն նրանք, որոնք Նայիրին լաւ էին ճանաչում, եւ մէկ էլ նրանք, որոնք տեսնում են ոչ միայն երեսօթների կեղեւը, այլ խորքը իսկ Մարօ Ալազանը Նայիրին լաւ էր ճանաչում:

«Ալազանի մէջ է նրա ձայնը, որ հիւանդանոցային լուռութեան մէջ թուաց առանձնապէս բարձր.

«Նայիրին մարդ էր, մարդ, քացագանչեց Մարն, «մարդ» բառին մէջ դնելով իր մէջ մնացած ողջ արմնն ու կիրքը:— Ես ասելու կ'ստեմ, մա ամենից ազնիւն էր...» (*«Փարոս»*, 1992, թիւ 3, էջ 40):

Հարց է գիտնալ, թէ ո՞ր ազնիւներում մէջ ամենաազնիւն էր արդեօք Նայիրի Զարեան, Հրաչեայ Փոյարի՞ն, Ազատ Վշտումի՞ն, Գեորգ Աթովի՞ն, Արտաշէս Ոսկերչեանի՞ն, Յարութիւն Մկրտչեանի՞ն, Նօրայր Ռեքոնեանի՞ն, ո՞ր: Մարօ Ալազանի ալմարկը Նայիրի Զարեանի շնչացուած հասակակիցներում չի վերաբերի հարկաւ, այլ ալ «սառցաշխարհի» մէջ հիւծած ու հիւծողներում, կը վերաբերի վերոյիշեալ գործօններում, որոնց հետ շնչեց ու գործեց Նայիրի Զարեան ամբողջ երեսնամեակ մը, ստալինեան մոսայիկ:

Աստ՞նց մէջ ամենէն ազնիւն էր ինձ:

Մարօ Ալազան ծանօթ էր կրնար ըլլալ Զարեանի «Ես մերկացրեցի»ներում, հետեւաբար ձեռով մը հասկնալի է ըմբացիկ կապերու հիմամբ Զարեանին շուսլած իր տուրքը, դժուար է սա-կայն հասկնալ, թէ ի՞նչ է Սիւվա Կապուտիկեանի հետապնդածը, որ *«Փարոս»* ամսագիրի լոյս ընծայած *«Ո՞վ եմ ես»*էն երկու տարի ետք, մոյն *«Փարոս»*ին մէջ կը յանդգնի պաշտպանութեան տակ առնել իր ընկերները մերկացուցած ըլլալու յոխորտանքով «մատերեայ» գրած Զարեանը, երբ գրական խղճմտամէր կը պահանջէր արդարութիւն ընել ստալինեանական ահարկու գրպարտութեան ենթարկուած անմեղներում, մահատակեալ Զարեանին, Բակունցին, Թոթովենցին, Կիսամեռ Զապէլ Սալեանին եւ միւսներում:

*«Փարոս»*ի խնդրոյ առարկայ *«Ո՞վ եմ ես»*ը կը թուի, թէ Սիւվա Կապուտիկեանի պէս կարդացած չէ մասն Գեորգ Էմին, կամ կարդացածը մտցած է ընդփայտ, եւ կամ մոյն «մատերեայ»ին անծանօթ ըմբերցողները օրօրելու միտք մը փայփայած է գարծեալ *«Փարոս»*ի մէջ, քայց Էիչ մը անլի ուշ, գրելով՝

«...Նա վերստին հասկացայ, որ Նայիրի Զարեանը մեր ոսկաւաթիւ սկզբունքային բանաստեղծներից մէկն էր եւ նրա վէճերը— Պաստեռնակի հետ յինչէն, Զարեանցի թէ մի ուրիշ— գրական-ստեղծագործական վէճերն են եղել, պա-

տաճակն չէ որ Ջարենցի «1937 թ. մեղադրական գործում»,
 ի տարբերութիւն նրա շատ «մօտիկ ընկերների», ի սպառ-
 անացական է Ն. Ջարենցի անունը (1906, թիւ 6, էջ 8):

Սիրվա Կապուտիկեանի պէս, Գեորգ Էմիլ իմէ եւս պէ
 տէ է գիտնար, որ իր գրութիւնները հիւրընկալող «Գաւառ»ի
 լոյս ընծայած «Ով եմ ես»ին անողով յայտնաբերւմներն ետէ,
 դժուար է այլեւս Ջարենցի առիթով անմեղութեան պատկերներ հիւ-
 սել Նայիրի Ջարենցին, որ՝

Հակայեղափոխականներու շարքը դասած էր Ջարենցը,
 Դատաւիտած էր «Ս. Ջարենցի հակասեմիտական տը-
 րամադրութիւնը»,

Ջախջախիչ ճառով հանդէս եկած էր Ջարենցի դէմ,
 Ուրիշներու կարգին ցոյց տուած էր Ջարենցի մացեմալիս-
 տական-որոշակիստական գիծը,

Գրչակներու շարքին դասած էր Ջարենցը,

Գարշնի «Ժողովակներ» մէջ գետնդած էր Ջարենցը,

Սւ այս բոլորը «հակալ պոետ»ին կենդանութեան օրօք, իր
 խոստովանութեամբ, առանձին գրութիւններու մէջ, պաշտօնական
 նիստերու ըմբացիւմ, քէ հրապարակային ելոյթներով:



Յ. ՇԻՐԱԶ

ԱՆՄԵՂՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՉԱՆ

Ո՛վ գուշակ, ասացի չես գալու ինձ վրայ՝
Ընդդէմ եմ քաղցրախօս քնարիս,—
Թէ աֆից չեմ գալու, չեմ լալու ինձ վրայ՝
Լոկ թողն է սգալու սնարիս:

Թող չգան, թող ինձ էլ չիշեն,
Ումի՞ց եմ ես աւել, էլ ումի՞ց,
Երբ անհայր թաղութիւն յայտնիներն իմ անքէն,
Ապշոպուած այն գազանի սամումից:

Ումի՞ց եմ ես աւել, երբ քիւրեր թաղութիւն
Երեսունեօթ թուին ափաւոր,
Երբ մարդկանց փոխարէն ամպերը գողացին,
Սգացին պապանձուած սար ու ձոր:

Եւ ամէն գիշեր ափաւոր ամէն տուն,
Ամէն սիրտ, ամէն դուռ կը սպասէր,
Թէ թիմա կը մտնեն, կը տանեն իր որդուն,
Իր թօրը, կամ իրեն կը տանեն...

.....

Ու դարձաւ Սիբիրը գերեզման քիւրերի՝
Այն իրաւ փոքրամարդ մեծ դարում,
Երբ դարը նմանուեց աչքաքաց կոյսերի՝
Զրպարտման սարսափը աչքերում:

Եւ թիմա էլ ոչ մի գանգրաթեր պատանի
Չի գտնի գերեզմանն այն կողած,
Ուր պոռն է մեռեալ՝ մոռցում կենդանի՝
Նոցա թետ որ ընկան վախտորում:

Ու կորան զրպարտում, ինչպէս որ զրպարտուն
Ծաղկունքը՝ թէ աչքեր եմ օձի,
Թէ ձկներն իրենց մայր ծովին էլ կը դաւեն,—
Թէ պարիսպն ընդդէմ է ամրոցի...

Թէ՛ «Արագ երագողն ընդդէմ է Վոլգային»,
Թէ՛ «Մասիս Ռառաչողն է... Հակա»,
«Ահագանգ է գազանի երագանքն ազգային»,
Էլ ինչ Ռայ, Վանայ ծով, Սեւան կայ:

Ո՛րմ քոյնը չքանդեց գաղտնիքը զրպատման,
Անհատի կոյր կամքը խելայել,
Գաղտնիքն էլ այժմ քաց, ո՛վ Ռման,
Մեղաւորը մէ՛կն էր, թէ՛ սաղրանքն անել:

Քանգի դեռ որ սարում որ քարն էլ վերցնես՝
Ծառ գանկեր դուրս կը գան իր տակից,
Բոլորն էլ մաքրախիղճ՝ Մասիսի ձիւնի պէս,
Բայց ողջն էլ զրպարտուած մի գանկից:

Ու մեր քիւր մայրերի աչքերը թաց են դեռ,
Բաց են քիւր աչքերը քոյրերի,
Բարձրացի՛ր, յուշարձան զոհերի մեր անմեռ,
Բաց աչքերն աչքաքաց կոյրերի:

Օ՛ր, խօսիր, որպէս լուռ Արարատն իմ գերի,
Երեսունեօթ թուի յուշարձան,
Թող յառնեն նահատակ Ռազարներն ազգերի՝
Ծով էին՝ կաթիլին զոհ դարձան:

ՅՈՎ ՀԱՆԷՍ ԾԻՐԱԶ

«ԲԱԳԻՆ»Ի 1997Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Ծ. ՆԱԴԻՐՆԻ	Գովասանութիւն	1
Վ. ԹԵՔԵԱՆ	Վիկտոր Համբարձումբանի	1
» »	Կաղանդի ծառ	2
ՎԱՐԱՆԴ	Մարեմիներ	1
» »	Կրկներեւոյթ	4
Կ. ՀԵՔԻՄԵԱՆ	Կարօտներ	1
Հ. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ	Բանաստեղծութիւններ	1
Ն. ԳԱՍՊԱՐԵԱՆ	Յունիսը ասեղի ծայրին	1
Ժ. ԲԵԳԼԱՐԵԱՆ	Բանաստեղծութիւններ	1
Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Բանաստեղծութիւններ	2
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Հառաչանք	2
Յ. ՊԵՂՊԵՐԵԱՆ	Ի լուր	3
» » »	Բանաստեղծութիւններ	4
Մ. ԶԱԽԱԽԲ	Աշնան կերպարանափոխումները	3
Մ.Ռ.Ա.ԲՈՒՍԷՅԵԱՆ	Ահեղ դատաստան	3
» » »	Աղբկանս՝ Լուսինէին	4
Ա. ԳԱՌՕՆԷ	Տարիքս	3
Կ. ԶԱՐԵԱՆ	Երիտասարդական	3
Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Բանաստեղծութիւններ	4
Դ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Իմ ծնունդ թիւը	4
Յ. ԾԻՐԱՋ	37ի զոհերին	4
	Ամենդուրեան յուշարձան	4

ԱՐՁԱԿ

Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ	Անդենակամին պատը	1
» » »	Առաջին լեզուն	4
Թ. ԶԻՖԼԵԱՆ	Թռուներու համար	1
» » »	Գրաւապահը	4

Գ. ԱՔԵԼԵԱՆ	Պէյրուք	1
» »	»	2
» »	»	3
Մ. ՈՐՆ	Պասեանս՝ ծաղկեփնջով	1
Պ. ԶԷՅԹՈՒՆՅԵԱՆ	Մնաւել է ու մեռել	2
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Վերջին ողիսականը	2
Ս. ԱՆԹԱՔԻ	Թակօրը եւ անապատի մարդը	2
Ն. ՍՈՒԼԷՏՄԱՆ	Արեւելքի ծիրերը	2
Վ. ԹԷՔԵԱՆ	Աշխարհ մը եւ	3
	ժամի մը տիեզերք	3
Ա. ՍԱՄԱՐԱԳԻՍ	Կը մերժեմ	3
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	Ըլհաւանի...	4

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

Վ. ՕՇԱԿԱՆ	Նոր արմատ	1
» »	» »	2

ԻՄԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Մարդ մը, որ Արարատ չունի իր հագույն խորը	1
» » »	» » »	2
» » »	» » »	3
» » »	» » »	4
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Վէպից յղացելը	1
» »	» »	2
Գ. ԱՆԱՆԵԱՆ	«Զոր ասեմ, ասեմ եւ ոչ ամաչեմ»	2
Ս. ՍԻՍԵՈՒԵԱՆ	Համաստեղի Տէր-գօրեան այցելութիւնը	2
Պ. ՅԱԿՈԲԵԱՆ	Անապատի յայտնութիւն	2
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Մեծ Եղեռնը եւ սուրիական արձակը	3
» »	» » »	3
» »	» » »	4

Պ. ՄԱՊԵԱՆ	«Ես իմ անուշ»ի ռդիսականը	3
Մ. ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ	Անտոնիս Սամարագիս	3
Զ. ԲԷՇԻՇԵԱՆ	Հարցազրույց՝ Երուանդ Երկանեանի հետ	3
Վ. ՄԱՏԹՅՈՍԵԱՆ	Կաստան Զարեան եւ Բենիամին Նուրիկեան. Նամականի	3
Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Նիկողոս Սարափեան քանաստեղծը	3
»	»	4
Թ. ՕՇԱԿԱՆ	Սիրելի Սասունի	4
Ն. ՏԵՐԵԱՆ	Նամակ գրականագետին	4
Ն. ԶԱՐԵԱՆ	Մոայլ առասպել	4
»	»	4
	«Ես մերկացրեցի»...	4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

***	Աստղերէն վար...	1
***	Ջէնէին առընթեր՝ գիրքը	1
***	Շնորհումներ...	1
***	Գրագետ հիւրը	2
***	Պերն Զէյթունցեան Լիրանանի մէջ	2
***	Վերցնենք վարագոյրը...	2
***	Վերստին յաւելուած	2
***	Սկսելէ առաջ...	3
***	Ջրիավարժ պատկադիրներ...	4
***	Երկրորդ Ապրիլ 24	4
***	Շնչաւոր շրջաններ	4
***	Կրկնակ ամօք վշտանեան...	4
***	Սեւ ցուցակին մէջ...	4
***	...«Արժէ գրել»...	4
***	«Առասպել»ի մը առասպելը...	4
***	«Ի լուր ամենքի»...	4
***	Անգոր յարալեզներ...	4

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

Լ. ՇԱՌՈՑԵԱՆ	«Գեղարդ». Սուրիահայ տարեգիրք-Ս. հատոր	1
Լ.Գ. ՄԻՆԱՍԵԱՆ	«Եջեր հայ գաղթավայրերի պատմություն»	1

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

* * *	«Հին, հի՛մ քաներ» (Հեղինակ՝ Լեւոն Վարդան)	3
* * *	«Միրանի գոտի» (Հեղինակ՝ Արին Արմենյան)	3

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաչեայ Քոչար - Ասատուր Ասատրեան - Հմայակ Սիրաւ - Արտաշէս Ոսկերիչեան - Գեորգ Աբով - Նորայր Դաքաղեան - Ակակ Բակունց - Վահան Թոթովեանց - Դուրգէն Մահարի - Մկրտիչ Արմէն - Զապէլ Ծալեան - Պողոս Մակինցեան - Կարէն Միջայելեան - Եղիա Զուրար - Դ. Տէր-Սիմոնեան - Եղիշէ Զարեանց - Վահրամ Ալազան - Ռաֆայէլ Իշխանեան - Դաւիթ Գասպարեան - Սիլվա Կապուտիկեան

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

1, 3,

«ԲԱԳԻՆ»Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹ

Տեղի անճկութեամբ պատճառով՝ յաջորդ թիւի մ յետաճգեցինք շարունակելի եւ այս համարին համար պատրաստուած գրութիւններէն ռմանք, ինչպէս նաեւ «Լոյս տեսան» եւ «Մշակութային լուրեր» քաժիմները:

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

- Կը սկսինք հրատարակել Վազգէն Շուշանեանի անտիպ գործերէն մէկը «Յիւրուցան էջեր»:
- Եւսմեայ Յակոբ Օշականի անտիպ բանաստեղծութիւններուն առթով Վահէ Օշականի պատրաստած ծաւալուն գրութիւնը:
- Սիկմըմտ Ֆրեօյտի կեանքը թատերգութեամբ վերածած Փոլ Գէնթէնի «Կարմիր թերթ»ին առաջին արարը:
- Հարցազրոյց մը՝ հայերէն գրող պարսիկ բանաստեղծ Ահմատ Նուրիզատէի հետ:
- «Ես իմ ահուշ» շարունակութիւնը:

ՅԱԶՈՐԴ ՏԱՐԻ

Մեր մնայուն աշխատակիցներու այլազան գրութիւններուն կարգին, ընթերցողը «Բազին»ի ետագայ համարներուն մէջ պիտի կարդայ հայրենի մտաւորականներու ստորագրութեամբ արժէքաւոր ստեղծումներ, ինչպէս նաեւ լիբանանցի գրական դէմքերէն Սաիտ Ազլի, Միխայիլ Նաիմէի եւ այլոց հետ մեր աշխատակիցներուն ունեցած դերակատարութիւններուն ամփոփումը:

ՎԱՐՉԱԿԱՆ

«Բազին»ի վարչութիւնը չեմօրէն կը խնդրէ իր յարգոյ քաժանորդներէն, որ բարի ըլլան փակելու հոսմանային հետ ունեցած իրենց առկա ինքնաշնորհները:

ԼՈՅՍ ՏԵՄԱՆ

ՄԱՐՏ

—Գրական ուսումնասիրություններ—
Ֆեդինակ՝ Գրիգոր Պրլտեան
Հրատարակություն՝ Գեորգ Մելիտինեցի
գրական մրցանակի, թիվ 29
Անթիպաս, 1997, 590 էջ

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

—Բանաստեղծություններ—
Ֆեդինակ՝ Վահե Օշական
Անթիպաս, 1996

ՀԱՄԱՐՈՅՐ

—Բանաստեղծություններ—
Հեդինակ՝ Վահե Օշական
Սիտնի, 1996

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՅԱՅՄԱՆՈՒՐ

—խորհրդածական էջեր—
Հեդինակ՝ Պողոս Սնապեան

ԼՐԱՆԱՆ

Հատվածաճառ 10.000 Լ.Ո.
Տարեկան բաժնեգիր 40.000 Լ.Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգիր 40 Ամերիկեան տոլար

بأكيه
مجلة شهرية ، أدبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամ
ԱՍՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bourj Hammoud — Liban